

ՄԻԶԱՅԵԼ
ԶԱՎԱՐՅԱՆ

ՈՒՐՎԱԳԾԵՐ

ՀԱՅ-ՎՐԱՅ

ԳՐԱԿԱՆ-ԿՈՒՆՏՈՒՐԱԿԱՆ
ԿԱԴԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

Հայպետհրատ

80

2-32

ՄԻՔԱՅԵԼ ԶԱՎԱՐՅԱՆ

Ուրվագծեր
 Հայ-փրայ
 գրական-կուլտուրական
 կապերի պարմունքան
 XIX - XX ր

1381 16827



ՀԱՅՊԵՏԿՐԱՏ

Երևան ~ 1959

Սույն աշխատությունը ընդգրկում է հայ-վրաց գրական-կուլտուրական կապերի պատմությունը, որանց հանգամանորեն խոսվում է 19—20-րդ դարերում հարևան ժողովուրդների գրական-կուլտուրական փոխհարաբերությունների մասին

75404

ЗАВАРЯН МИХАИЛ САРИБЕКОВИЧ

ОЧЕРКИ ПО ИСТОРИИ АРМЯНО-ГРУЗИНСКИХ
ЛИТЕРАТУРНО-КУЛЬТУРНЫХ СВЯЗЕЙ

(На армянском языке)

Армянское государственное издательство
(Айпетраг), Ереван, 1959

ՀԵՂՈՒԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ամեն անգամ, երբ որևէ առիթով խոսակցություն է բացվում հայ-վրացական անցյալ ու ներկա գրական ու կուլտուրական կապերի ու փոխհարաբերությունների շուրջը, օտիպված ենք լինում մեր հիշողության մեջ արքեպեոսկոպիտական մամուլում և պարբերականներում, ինչպես և առանձին հրատարակություններով, այլևայլ առիթներով ապագրված բազմաթիվ նյութերի ընթերցումից ստացած ապավորությունները: Եվ այդ այն պատճառով միայն, որ առ այսօր մենք, ինչպես նաև մեր հարևանները, չունենք այդ հարցերն ու պատասխաններն իր մեջ ամփոփող որևէ ծավալուն ուսումնասիրություն: Առանձին հարցեր, ինտերվյու, ուսումնասիրված ու հրատարակված են: Մեր խոսքը այդ ամենը մի գրքի մեջ առնելու ցանկությունն է վերաբերում:

Ներկա աշխատությանը մենք հավակնություն չունենք ամբողջովին լրացնելու այդ բացը: Պեռևս շատ հարցեր և առանձին պրոբլեմներ (մասնավորապես հին և միջին դարերի, մասամբ էլ նոր շրջանին վերաբերող) կարող են առանձին, երկարատև և լուրջ ուսումնասիրությունների:

Այնուամենայնիվ մենք մեր ուժերին ներածին շափ բնդ-ջրկել ենք ներկա ղեպքում մեզ նետաճրեղող դարաշրջանների հայ-վրացական գրական-կուլտուրական կապերի պատմության նշանակալից էջերը:

Հայ և վրաց պարբերական մամուլի գոյությունը Անդրկով-
կասում մեկ հարյուրամյակից ավելի պատմություն ունի: Իսկ
մեր բեմային վերաբերող նյութերը գերազանցապես սփռված
են այդ պարբերականների էջերում: Հասկանալի է, այն դժվա-
րին գործը, որ կապված էր մամուլի մանրակրկիտ ուսում-
նասիրության և այդ միջոցին երևան հանած և բնարած
նյութերի բիրտագրաֆիան կազմելու հետ:

Ի վերջո այդ ամենին գումարվում են աներամեշտ այլ
աշխատանքներ. հայ և վրաց հեղինակների ստեղծագործու-
թյունների, նրանց արխիվային նյութերի, մարտիզմի կլա-
սիկների համապատասխան աշխատությունների լրջորեն
ուսումնասիրությունը:

Տակավին ավարտված չենք համարում մեր ուսումնասի-
րությունը, քանի դեռ այն չի կրում «Հայ-վրաց ժողովուրդնե-
րի գրական-կուլտուրական կապերի պատմություն» վերնա-
գիրը և չի բնորոշում սկզբից մինչև մեր օրերն ընկած ժա-
մանակաշրջանը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամական համագոր-
ծակցությունը նույնքան հին պատմություն ունի, որքան հին
է «երանց» աշխարհի այդ հնագույն ժողովուրդների թվին
պատկանող հայերի ու վրացիների պետականությունը:

Հայերի և վրացիների բաղձադարյան պատմությունը շա-
բունակական աղետների, ներքին ու արտաքին թշնամիների
կողմից զործած անվերջ ասպատակությունների, բնակչու-
թյան կրած բազմապիսի թշվառությունների մասին վկայող
պատմություն է: Թվով շատ ու բազմաչիղու թշնամիներ են
տեսել պատմականորեն հարևան հայ ու վրաց ժողովուրդնե-
րը. Հոտ, Իրան, Թյուրքանդիոն, արաբներ, սելջուկ-թաթար-
ներ և այլ անուն կրող նվաճողներ են ավերի ու կոտորածի
ձատենել հայոց ու վրաց աշխարհները, սակայն միշտ էլ հան-
դիպել են տեղական բնակչության հերոսական դիմադրու-
թյանը: Կենաց և մահու ճակատամարտերում փայլուն կեր-
պով զբաղվել է տեղական բնակչության ազատասիրական
ուզին, հարևանների միասնական ջանքերի փրկարար ուժը:

Հայ և վրաց ժողովուրդների պատմությունը միաժամա-
նակ երանց ներդաշնակ համագործակցության, միացյալ գո-
րարանակներով մղած հայրենասիրական հերոսամարտերի,
թշնամիների դեմ տարած փառավոր հաղթանակների մար-
տարաշար մի պատմություն է: Դարեր շարունակ կողջ-
կողջի ապրել, պայքարել ու ստեղծագործել են հայերն ու
վրացիները, սակայն պատմությունը չի հիշում որևէ զեպք

նրանց գծովելու, միմյանց նկատմամբ թշնամական արարք թույլ տալու մասին:

Օտար նվաճողների զրկմամբ կամ թշնամաբար տրամազրկված իշխանական տների (վերնախավերի) զինված հաղվազեայ ընդհարումները միմյանց նկատմամբ բարեկամաբար արամադրված ժողովուրդների սզում խորթ երևույթներ են եղել և որևէ շափով չեն արտահայտել նրանց բուն ցանկություններն ու ձգտումները: Ընդհակառակը, պատմությունը լի է փաստերով, փաստեր, որոնք շարահյուսում են հայ և վրաց ժողովուրդների, բայց ոչ նրանց առանձին թագավորների կամ իշխանական տների, իրական, ճշմարիտ և անառարկելի պատմությունը, որոնք պատմում են այն մասին, թե ինչպես նրանց բարեկամությունը խախտելու, միասնությունը թուլացնելու կամ միմյանց դեմ Պարելու բոլոր փորձերը, որ ձեռնարկվել են նվաճողական նպատակներ հետապնդող այլ տերությունների կողմից, ուժեղ դիմադրություն են հանդիպել բարի դրացիական հարաբերությունների և համադրծակցության կարևորությունը գիտակցող երկու ազատասեր ու հայրենասեր ժողովուրդների կողմից:

Անթիվ ու անհամար փաստեր է պարունակում պատմությունը սահմանակից երկու հարևանների օտար քոնակալների դեմ մղած համատեղ պայքարի մասին:

Այդ փաստերը պերճախոս ասպոցոյցներ են դեռևս մեր թվարկությունից շատ առաջ հայ և վրաց ժողովուրդների համատեղ պայքարի պատմության:

Գեոևս 6—4-րդ դարերում (մեր թվարկությունից առաջ) հայերն ու վրացիներն միացյալ ուժերով համառ պայքար են մղել Գարեհ Առաջինի և այնուհետև Ալեքսանդր Մակեդոնացու հրոսակախմբերի դեմ¹:

Պարթևական թագավորության դեմ Տիգրան II-ի մղած պատերազմում Իրերիան (Վրաստան) որպես դաշնակից օգնական զորք էր տալիս հայոց թագավորին²:

¹ Այս մասին տես՝ Լ. Մելիքսիթ-Յեկի հոդվածը «Իտալա-սովետական Մարտի»-ում, 1945, № 25:

² «Հայ ժողովրդի պատմություն», 1 մաս, Երևան, 1951, էջ 47:

Հռոմեացիների արշավանքների ժամանակ նույնպես արտահայտվել է հարևան և բախտակից ժողովուրդների միացյալ զինված ուժերի պայքարը նվաճողների դեմ¹:

Համառոտ պայքարի վառ օրինակների ենք հանդիպում 5-րդ դարում, երբ հայ և վրաց զինված ուժերը ծանր պատերազմներ էին մղում պարսից նվաճողների դեմ: Մի երկրում ծագած ժողովրդական ապստամբությունը աղղանշան է հանդիսացել մյուս հարևանի զինված ելույթի համար:

Հայտնի է, որ հայ ապարապետ Վարդան Մամիկոնյանի զորքանակներում կռվել են նաև վրաց զինված ջոկատներ, իսկ վրաց Վախտանգ Գորդասար թագավորի խնդիրքով, Վահան Մամիկոնյանի և Մահակ Բաղրատունու ղլխավորությամբ, հայկական զորախումբը օգնության է հասել ապստամբված վրաց ժողովրդին: Արարական ախրապետության դեմ նույնպես երկարատև ու ծանր պատերազմներ են մղել հայ և վրաց ժողովուրդները:

9-րդ դարում Աշոտ Բագրատունին հայ զենքի ուժով ստատել է Կովկասյան լեռնականներին, որոնք պարբերաբար ասպատակել են վրաց երկիրը:

Հայ-վրացական քաղաքական դաշինքը վճռական դեր է խաղացել արաբական զավթիչների ջախջախման և արաբ էմիրների հետագա ստանդարտություններից տեղական բնակչությանը փրկելու գործում:

Հետագա դարերում նույնպես հայ և վրաց ժողովուրդները մշտապես զգացել են փոխադարձ օգնության կարիքը՝ նոր նվաճողների դեմ մղած դաժան ու երկարատև պայքարի մեջ: Հիշենք թեկուզ 1123 թվականին Գալիթ 4-րդ թագավորի կողմից Անին սելջուկներից մաքրելու փաստը կամ հայ և վրաց կառավարող շրջանների սերտ համագործակցությունն ու փոխադարձ հովանավորությունը, Գեորգի 3-րդի և Քիմար թագուհու ժամանակներում:

Պատմությանը հայտնի են նաև փաստեր հայ և վրաց իշխանական տների խնամիրական-ամուսնական կապերի մա-


¹ Տե՛ս Լ. Մանանդյան, Տիգրան Բ և Հռոմը, նույնի «Բնական և պատմական հայ ժողովրդի պատմություն», 2, Ա.:

սին: Այդ կապերը երբեք էլ պատահական դիպվածների ար-
դյունք չեն եղել, այլ ստեղծվել են նորմալ բարեկամական
հարաբերությունների պայմաններում, որպես պայման և ար-
դյունք կուլտուրական ու քաղաքական համագործակցության,
դավանանքի նույնություն:

Հայերը Թրիլիսիում և Վրաստանի այլ բնակավայրերում
սկսել են ապրել շատ հին ժամանակներից սկսած, և գնա-
լով նրանց թիվը բազմապատկվել է: Քանի ղևա և՛ Վրաս-
տանը, և՛ Հայաստանը ունեցել են իրենց անկախ պետակա-
նությունը, նրանք ուժեղ են եղել, թիկունք-թիկունքի աված
պաշտպանել են միմյանց, դժվարին փրձակել, գտնված ժա-
մանակ օգնություն ձեռք մեկնել մեկը մյուսին, իսկ երբ Հա-
յաստանը դադարել է այլևս անկախ թագավորություն լինե-
լուց, պատանա-պատան է եղել և հռչակվել սահմանակից և
այլ ուժեղ տերությունների կողմից: Այդ ժամանակից սկը-
սած, Վրաստանը, կորցնելով իր սերբեմնի անջրպետը հա-
րավիցք շարունակել է իր գոյությունը անվերջ հարձակում-
ների և խաշտանգումների պայմաններում, միայնակ, առանց
հայ պետականության գործարար օգնության: Այդ ժանր
պայմաններում անգամ վրաց ժողովուրդը չի մոռացել իր
հարևան հայությունը, որին նա սիրով շարունակել է պա-
տրասպարի ամեն անգամ, երբ պարսից կամ թուրք ասիմիլ-
յատորների հալածանքներից փախած հայերը օգնություն են
փնտրել համեմատաբար ինքնուրույն և ուժեղ վրացիների
մոտ:

Դարեր շարունակ հագարավոր հայ ընտանիքներ գաղ-
թել են Վրաստան և մշտապես հաստատվել այնտեղ: Վրաս-
տանի բազմաթիվ քաղաքներում (Թրիլիսի, Գորի, Քուբախի,
Թելավի, Սիղնախի և այլն) և բնակավայրերում նրանք ազատ
ու անկաշկանդ կերպով շարունակել են իրենց զբաղմունքը,
գերազանցապես արհեստներն ու վաճառականությունը:

Պատմությունը ճշգրտորեն չի հիշատակում հայերի առա-
ջին անգամ Վրաստանում և, մասնավորապես, Թրիլիսիում
հաստատվելու ստույգ թվականը և դրդապատճառները: Ըստ
Ռեխտանես պատմագրի վկայության, հայերը դեռևս 6-րդ
դարի վերջերին կազմել են Թրիլիսիի (նախկինում Թիֆլիս)



Շոքա Ռուսթավելի
Նկար՝ Ի. Թոմեի

բնակչութեան մի մասը: Ամենայն հավանականութեամբ հա-
փոքր զօրութիւնը Վրաստանում ավելի հին ժամանակների
հետ է կապվում, սակայն մի բան պարզ է, որ նրանց թիվը
չաօ ավելի մեծ շափերի է հասել հետագա և առավել քան
մեզ ավելի մոտ ընկած ժամանակներում, մասնավորապէս
17—18-րդ դարերում: Թրիլիսիի պատմութեանը վերաբերող
նյութերի ուսումնասիրութեանից ելնելով կարծում ենք, որ
հայ զաղթականները սկզբնապէս պատսպարվել են մայրա-
քաղաքում և ապա հետո միայն վերաբնակվել վրացական
այլ քաղաքներում և բնակավայրերում: Թրիլիսին իր մեծ ու
հերոսական պատմութեամբ, իր էկոնոմիկայով ու գեղատե-
սիլ բնութեամբ մշտապէս եղել է ոչ միայն վրացու, այլև
թրիլիսաբնակ հայութեան սրտաբուխ սիրո ու զօրգորան-
քի առարկան: Ամենահին ժամանակներից սկսած հայ մա-
տենագրութիւնը բաղմամբիվ էջեր է նվիրել Թրիլիսին, նրա
բազմադարյան հերոսական պայքարին, նրա կրած անթիվ
տառապանքներին ու հաղթանակներին:

Վրաստանում բնակված հայերը իրենց երբեք չեն զգա-
ցել օտարութեան մեջ. մշտապէս ապրելով վրաց միջավայ-
րում, համակերպվել են, տիրապետել լեզվին և իրենց երկ-
րորդ հայրենիքը համարելով այն, ահա իմ կերպով մասնակ-
ցել են երկրի պաշտպանութեան հզորացմանը, ինչպէս նաև
անտեսութեան ու կուլտուրայի զարգացմանը:

Պատմութիւնը հարուստ է փաստերով, որոնք պատմում
են այդ երկու ժողովուրդների եղբայրական համակեցութեան
մասին: 10-րդ դարի արար վաճառական և աշխարհագետ
Իբն Հատուալ Արուլըասիմը իր «Ճանապարհների գիրք» աշ-
խատութեան մեջ պատմում է այն մասին, թե ինչպէս «Վու-
րիշա» (Վրաց) թագավորը իր «Քյաֆիրներին» (ու մուսուլ-
ման — դաուր — բնակչութեան) հետ հոգ է տանում ժողո-
վրդի մասին և նրան պաշտպանում ամեն տեսակի վտանգ-
ներից: Նույնիսկ մուսուլմանական ծիսավայրերը, ինչպէս
զարմանքով նկատում է արար Ճանապարհորդը, պահպան-

1 Տե՛ս, Վ. Ս. Նալբանդյան, Թրիլիսին հայ մատենագրութեան մեջ:

վել են նույնուրիցամբ, ինչպես նրանք եղել են անցյալներում, և ոչ ոք չի փորձել լսեցնել բարձրաձայն հնչող աղաներ¹։ Այսպիսով մենք իմանում ենք, որ ոչ միայն քրիստոնյա հայերը, այլև մուսուլման ազդուությունները նույնպես վայելել են վրաց ժողովրդի հովանավորությունն ու հարգանքը։

Այնուհետև, 13-րդ դարի վեներաբիլ և հռչակավոր ճանապարհորդ Մարկո Պոլոն նույնպես պատմում է Քրիլիսիի մասին և հատկապես ընդգծում, որ քաղաքի բնակչությունը կազմված էր վրաց և հայ քրիստոնյա ազդուություններից²։

Ճրանսերեն լեզվով, Փարիզում, 1797 թվականին հրատարակված անտարազիր մի գրքի մեջ հանդամանորեն խոսվում է Քրիլիսիում բնակվող հայերի մասին և մասնավորապես այն մասին, որ հայերը այդ քաղաքում զարգացնում են այն արհեստները, ինչով նրանց հայրենակիցները հռչակված են Պարսկաստանում³։

Ավերի ու կոտորածի հետևանքով հայերի արտագաղթը իրենց մայր հողից զնալով ավելի է ուժեղացել, մասնավորապես 18-րդ դարի վերջին տասնամյակներում և 19-րդ դարի առաջին քառորդի ընթացքում։ Ահա թե ինչ է գրել այդ մասին Քրիլիսիում հաստատված ֆրանսիական կոնսուլ Գամբան. «Քրիլիսիի բնակչությունը մշտապես աճում և աճում է հայերի խառն բազմությունից, որոնք այստեղ ապաստան են փնտրում թուրքերի բռնություններից և պարսիկների հարբստահարություններից»⁴։

Նույն բանը հաստատում է նաև Պուշկինը⁵, նկատելով, որ ռուս-պարսկական պատերազմի հետևանքով հայերի դադար դեպի Արաստան (առաջին հերթին, իհարկե, Քրիլիսի) շատ ավելի մեծ մասշտաբներ է ընդունել։

Մեր ձեռքի տակ եղած բոլոր վկայություններն էլ խոսում

են հայերի անկաշկանդ գործունեության մասին Արաստանում և այն մտերմության ու համակեցության մասին, որ գոյություն է ունեցել Քրիլիսիում հայերի և վրացիների միջև։ Տարբեր ժամանակներում և տարբեր մարդկանց կողմից ստացած տղավորություններից ավելորդ չենք համարում հիշատակել մի քանիսը՝ պատկերը շատ ավելի պայծառ ու որոշակի դարձնելու նպատակով։ Այսպես օրինակ, հիշատակենք ռուս գրող Պլատոն Զուրովի 1833 թվականին գրած և 1834 թվականին Մոսկվայում հրատարակած «Վեց նամակ Արաստանի և Կովկասի մասին» գիրքը¹, որի մեջ ի միջի այլոց նկարագրում է հայուհիներին և վրացուհիներին, որոնք մեծ հաճույքով լողանալու են դնում բազնիքները և այնտեղ մնում 10 և ավելի ժամ։ Գրողին հատկապես դուր է եկել նրանց սիրալիք ու մտերմական զրույցը, ինչպես նաև կենսուրախ դեմքերը, դեղնցիկ հագուստներն ու վարակիչ ծիծաղը։

Կամ մի այլ նկարագրություն², որտեղ պատկերվում է Քրիլիսիի «հայկական շուկան» («армянский базар»), գործարար ու աղմկուտ իր առօրյայով։ Այնուհետև մենք իմանում ենք հայ արհեստավորների բարձր որակի և նրանց օգտակար գործունեության մասին։

Այս բոլորը, ինչպես նաև կյանքի փաստերը, որոնք Արաստանում բաղձաթիվ տասնամյակներ բնակված հայության դեռ քիչ ուսումնասիրված պատմությունն են կազմում, պերճախոս կերպով վկայում են հայ և վրաց ժողովուրդների դարերի փորձություններով անցած և ամրապնդված եղբայրական բարեկամությունը։ Մ'չ արտաքին և ո'չ էլ ներքին սրև ուժ երբեք չի կարողացել սեպ խրել երկու հարևան, եղբայրական ժողովուրդների միջև։ Ավելին, պատմությանը հայտնի են բազմաթիվ փաստեր ոչ միայն հայ և վրաց ղինված ուժերի ներդաշնակ գործունեության, այլև վրաց արքունի-

¹ «Старый Тифлис в известиях современников», ГИЗ Грузии, 1929, стр. 2.

² Նույն տեղը, էջ 7։

³ Նույն տեղը, էջ 59։

⁴ Նույն տեղը, էջ 70։

⁵ Նույն տեղը։

¹ «Старый Тифлис в известиях современников», ГИЗ Грузии, 1929.

² Նույն տեղը։

քում ազնվորեն ծառայած և վրաց ժողովրդի կողմից մեծարված աղոթությամբ հայ բազմաթիվ գործիչների մասին: Թեկուզ դրանցից հիշենք Թամար (1184—1213) Թագուհու արքունիքում մեծ հեղինակություն վայելող Սարգիս Մխարբեր-ձեյուն և նրա որդիներ՝ Զաքարիա ու Իվան ևղբայրներին և ուրիշների, որոնք Վրաստանը համարելով իրենց երկրորդ հայրենիքը, մեծապես օգնել են վրաց պետականության ամրապնդման գործին: Նրանց կատարած դրական գործը, միաժամանակ, անուղղակի ձևով օգնել է նաև հայ ժողովրդին¹:

Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության լավագույն արտահայտություններից մեկը գրական-կուլտուրական կապերն են ևղևի Մեղ հասած գրավոր հիշատակարաններից պարզվում է, որ դեռևս 7—9-րդ դարերում հայ մատենագիրներից բավականաչափ էջեր են թարգմանվել վրացերեն: Այդ թարգմանությունների շնորհիվ Ագաթանգեղոս, Փավստոս, Խորենացի, Փարպեցի և այլ պատմիչներ սիրով ընդունվել են վրաց ժողովրդի կողմից և նրբմն էլ վկայակոչվել վրաց պատմիչների գործերում: Այնուհետև 9—10-րդ դարերում դարձյալ տեղի են ունեցել թարգմանություններ ինչպես հայերենից վրացերեն, նույնպես և վրացերենից հայերեն: Հայերենից վրացերեն թարգմանված վարձագրական հուշարձաններից հիշատակենք՝ «Վկայարանութիւն սուրբ Հայրապետաց Հայոց Արիստակիտի, Վրթանիսի, Յուսկան, Գրիգորիսի, Գանիւլի», «Պատմութիւն սրբոյն Ներսիսի Հայրապետին և Խաղայ Եպիսկոպոսին», «Կատարումն սրբոյն

Սահակայ Պարթևի»: Այդ նույն շրջանում է թարգմանված պարսկերենի կողմից նահատակված զոհերի մասին «Վկայարանութիւն սրբոյն Շուշանկայ» մարտիրոսազրույթունը, ինչպես նաև արտաքին տիրապետության շրջանին վերաբերող «Վկայարանութիւն սրբոյն Իավթի, սր ի Գուին կատարեցաւ ճշմարիտ խոստովանութեամբ» մարտիրոսազրույթունը:

Նույն դարերում վրացերենից հայերեն են թարգմանվել՝ «Կեանք Գիոնեսիոսի որդւոյ Սոկրատայ և գլխաւորի Աթենացոց, որ կոչի քաղաք իմաստասիրաց» և «Վկայարանութիւն սրբոյն Շուշանկայ-Յակոբ Յուրտաւելու» գործերը¹:

Հաղպատ-Սանահինյան գրական դպրոցի և նրա ճյուղավորությունների (Հաղարծին, Գետիկ, Խորանաշատ և այլն)

1 Փաստերը քաղել ենք Ի. Աբուլաձեի «Վրաց և հայոց գրական կապերը 9—10-րդ դարերում» աշխատությունից: Պարսից սիրականների դավանափոխական քաղաքականությունը Հայաստանում և Վրաստանում հանդիպել է այդ ժողովուրդների ամենամեղ դիմադրությանը: Ոչ մի բանություն և հարածանք չի օգնել նվաճողներին հասնելու իրենց նպատակին: Ժողովուրդները հասկացել են այդ քաղաքականության իրականացման կործանարար հետևանքները, աշտեղից էլ հասկանալի է զգուժում կրակապաշտության տարածման դեմ ուղղված նրանց կատարի դիմադրությունը:

Թե՛ պարսից և թե՛ արաբական տիրապետությունները Հայաստանում և Վրաստանում նպատակ են ունեցել սկզբնական շրջանում դավանափոխությունը ամրացնել իրենց դիրքերը և այնուհետև այդ ժողովուրդներին՝ ասիմիլացիայի միջոցով զրկել ինքնուրույնությունից:

Հայ և վրաց ժողովուրդների նահատակությունների պատմությունները շատ կողմերով նույնպես համահնչյուն են և դազափարական նույն նպատակներն են հետադիզել: Հիշենք թեկուզ մեկական նահատակություն հարևան ժողովուրդների մարտիրոսազրույթուններից: Հայ աղբյուրը պատմում է, քն ինչպես Վահան Գոթթնացին մանուկ հասակում զերվել է և մահմեդական զարձկել Հայաստան զուրոց հետո վերադարձել է նախկին հայտափն: Նրկար շարլարանքներից հետո Շամ Խալիֆի հրամանով մահապատժ է ենթարկվել 737 թվականին:

Վրաց աղբյուրից իմանում ենք, որ աղոթությամբ արար երկաթաբղ Աբու (Աբու Փրիլիլի) Վրաստան զայրով և մոտիկից Խանթաւայով վրաց ժողովրդի կյանքին ու կենցաղին, դավանափոխ է ևղև և ընդունել է քրիստոնեություն (8-րդ դար): Ե՛վ խոստովաները, և՛ սպանալիքները չեն աղկել Աբուի վրա: Ի վերջո արար իշխանի հրամանով նա նույնպես զլխատվել է:

1 Անվիճելի է, որ Վրաստանում ապրող հայերը հարգանք են վայելել վրաց հասարակայնության մեջ և կառավարող շրջաններում՝ իրենց հավատարմությամբ և գործարար հատկանիշներով: Այդ վերաբերմունքը տարածվել է նաև ողջ հայության վրա: Ուշագրավ պատմական փաստ է, որ իմանալով Նրեանի խանի (Հուսեյն Ալի-Խան) կամայականությունների և բռնությունների մասին, Էյնիլը 2-րդ թագավորը 1779 թվականին հարձակվել է նրա վրա, պարտություն մատնել և հայերին հետագա բարբոսություններից փրկելու նպատակով, նրանց մի զգալի մասը իր հետ բերել է Վրաստան և բնակեցրել Հավարարում (Փրիլիլիի թագավոս, անցյալներում՝ արվարձան), Գորիում և Սղնախիում: (Այս մասին հանգամանորեն տե՛ս Գ. Կուկոզե, *Ираклий Второй*, изд. «ЗВ», 1948, էջ 104):

շանքերով բաղմամբիվ աշխատութիւններ են թարգմանվել վրացերենից հայերեն, ինչպես որ «Տաշք-Կղարջյան»՝ զրպ-բոցը՝ հայերենից վրացերեն: Եվ չնայած հայ ու վրաց եկեղեցիների բաժանմանը (607—609) և այդ եկեղեցիների փոխադարձ թշնամութիւններին, նպաստավոր պայմաններ են ստեղծվել այդ դպրոցներում հայերի և վրացիների մերձեցման և փոխադարձ ճանաչման համար:

Հայ, ինչպես նաև վրացի բաղմամբիվ պատմիչների գործերում կան Երկու հարևան ժողովուրդների կյանքն ու պայքարը պատկերող նկարագրութիւններ ու գառադութիւններ: Մխիթար Անեցու, Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու, Ստեփանոս Օրբելյանի և ուրիշների վկայութեամբ 12-րդ դարում վրացերենից հայերեն է թարգմանվել վրաց տարեգրութեան («Քարթլիս ցխովրեբա») հնագույն խմբագրութիւնը: Միանգամայն ուշագրավ երևույթ է, որ մի շարք պատմիչներ նույնիսկ «Քարթլիս ցխովրեբան» հիշատակում են հայատառ գրութեամբ: Ուշագրավ է նաև մի այլ համագումար, որ վրաց պատմիչներից ոմանք (Արսեն Սամբարացի) ոչ միայն անդրադարձել են հայ ժողովրդի պատմութեանը, իրենց խոսքն ասել նրա կյանքի ու հերոսական ճակատամարտերի, ինչպես նաև Երկու ժողովուրդների համատեղ պայքարի մասին, այլև գնահատել են նախորդ և ժամանակակից մի շարք հայ պատմիչների (Նորենացի):

Նույնիսկ այն դարերում (սկսած 7-րդ դարից), երբ հայ և վրաց հոգևորականութիւնը (եկեղեցիները) ճզնել է կրոնական խելացնոր վեճերով թշնամական հարաբերութիւններ ստեղծել հայ և վրաց ժողովուրդների միջև, բարել միմյանց զեմ, թշնամացնել, նույնիսկ այդ դժվարին պայմաններում եկեղեցուն ոչ միայն չի հաջողվել պառակտել նրանց,

Այս գեղջում և՛ արար, և՛ հայ մարզկանց անձնագր՝ օրինակը հրաշալի միջոց է ծառայել տատանվող ու թուլամորթ մարզկանց ազգային ինքնազիտակցութեան ամրապնդման և նենդ թշնամու գեմ պայքարի հանելու ապետաջողի համար:

1 Այս մասին տե՛ս, «Գեղարվեստ», 1921, № 7, 1. Մեյիբոսթ-Քեկի-հոգվածք:

այլև թուլացնել հարևան ժողովուրդների դարերի պատմութիւն ունեցող բարեկամութիւնը՝ Իսկ այդ ամենին հակառակ, պատմիչների մտա մենք հանդիպում ենք վրաց թագավոր Դավիթ 4-րդ Շինարարին վերագրված Հաոսի և Քարթլոսի (հայ և վրացի) եղբայր լինելու մասին բաղմանշանակ արտահայտութիւնը:

Վրաց պատմագրութեան մեջ մի շարք անգամներ ուղղակիորեն հիշատակվում է Հաոսի և Քարթլոսի եղբայր լինելու փաստը:

Ե՛վ պատմիչ Լեոնտի Մրովելին (11-րդ դար) և՛ պատմիչ Վախուշտի Բագրատիոն արքայազնը և այլ պատմիչներ վրաց ժողովրդի պատմութիւնն սկսում են Հաոսի և Քարթլոսի եղբայրութեան շրջանից:

Այս իմաստով որպես օրինակ բերենք Վախուշտի Բագրատիոն արքայազնի (18-րդ դարի կեսեր) «Վրաստանի պատմութիւն» աշխատութիւնից մի հատված.

«Քարթլոսը Նոյի որդի Հարեթի սերնդիցն էր, քանի որ Հարեթը ծնեց Ավանանին, Ավանանը ծնեց Թարջին, Թարջը ծնեց Քորդոմին (Քարգամոսին), Քորդոմը (Քարդամոսը) ծնեց ութ հականերին, որոնք են Հալի (Հաոս), Քարթլոս,

1 Հայ և վրաց եկեղեցիների բաժանումը չէր կարող իր արձագանքը լզանել հարևան ժողովուրդների մէջ: Թարթը հոգևորականութեան շրջաններում ծախարկում անիմաստ ու անսկզբունք կրոնական վեճերը հայ և վրաց ժողովուրդների դիտակցութեան ու սրտին չեն հասել, ազդելու նրանք՝ այդ ժողովուրդները դավանաբանական խելացնոր վեճերի ընթացքում ոչնչով չեն խախտել իրենց բարեկամութիւնը: Դրանով միայն և ոչ այլ կերպ պիտի բացատրել հետագա այն փորձերը, որոնք նպասակ են ունեցել միանգույնու հայ և վրաց եկեղեցիները: Այսպես է պատմում Վոսնուշտին «Վրաստանի պատմութեան» աշխատութեան մեջ.

«...Մի ժամանակ ցանկութիւն կար հայերին վրացիների հետ դավանութեամբ միացնել և հավաքվելին Քարթլիի կաթողիկոս Իոաննե, եպիսկոպոսները և անապատականները և հայերն էլ իրենց բոլոր (դիտուններով) և սկսեցին վեճը (որ տեճը) մինչև իններորդ ժամ, քանի որ նրանք թանում էին անանցանելի (գործերի ընթացքում մեջ) և զժխարութեամբ էին (այնտեղից) դուրս գալիս: Թագավորը՝ նկատելով այս սկսեց վեճել նրանց հետ և նրանց բերանը փակեց, և նրանք ասում էին, «Աբբա, մենք կարծում ենք, որ սրանց աշակիրան ենք, իսկ այժմ իմացանք, որ դուք սրանց վարդապետն եք (եղել)»...»:

Քարդոս, Մովսէս, Լեւոնոս, Լեւոնոս, Լեւոնոս, Կովիասոս և Էգրոս, Նոյի որդիք բաժանվեցին ի սկզբանէ աշխարհի 1758, հունական 2785, վրացական 221 թվին: Թորգոմին բաժին ընկավ երկիրը հետևյալ սահմաններում՝ արևելքից Գուրգանի ծովը, արևմուտքից Պոնտոսի ծովը, հարավից Օփրեթի կամ Քուրթի լեռը, հյուսիսից Կովիասի լեռը. և հնագանդ էր նա ներքոթին: Ապա Թորգոմը (Քարգամոսը) բաժանեց իր երկիրն իր որդվոց միջև և ավելի նրանց հասանելիքը. և ութ եզրայրներն այլևս չուզեցին հնազանդվել ներքոթին, քանի որ իրենք հսկաներ (հերոսներ) էին: Կետով այս և վերափորվելով ներքոթը հարձակվեց նրանց վրա, և պատերազմը երկար ժամանակ տևեց:

Իսկ երբ ներքոթը նետով սպանվեց Լաչիկից Աբարատ լեռան վրա ի սկզբանէ աշխարհի 1829, հունական 2856 և վրացական 292 թվին, եզրայրներն ազատագրվեցին ստրկութունից: Ազատվելուն պես Թորգոմը բաժանեց իր որդոց միջև երկրներն ու սահմաններն:

Լաչիկին (Լաոսին) ավելի Լայն երկիրը, որի՝ արևելյան սահմանն էր Կասպից ծովը, հարավից՝ Օ(փ)րեթի լեռն, հյուսիսից՝ այն լեռը, որ՝ սկսվելով Պոնտոսի ծովից՝ պատում է

Նույն պատմիչի հիշյալ աշխատության մեջ հանդիպում ենք մի այլ նկարագրության, որը լավագույն ձևով բնութագրում է ոչ միայն հասարակ ժողովրդի, այլ նույնիսկ պատմական բարձր պաշտոնյայի. ներկա գնացում Զաքարիա Երկանարազուկի վրդովմունքը, դավանական տարբերության անթիվ Ահալտսիկ այդ հատվածը.

«Երբ Բոանե կաթողիկոսը պատարագ (ժառուցեց և) ավարտեց (այն) Զաքարիա ամրապատարը ցանկացավ նշտար վերցնել, մինչդեռ կաթողիկոսը չավեց այն, քանի որ նա հայադավան էր: Զաքարիան տրամեց և հանդիմանեց կաթողիկոսին: Իսկ վերջինս ոստակ մերկացնում էր նրան, և նա չկարողացավ պատուխանել, այլ բերել ավելի Լայտասանի կաթողիկոսին և նրանց կրոնագետներին (դավանարաններին), որոնց հետ տեղի ունեցավ երկար վիճարանություն... Եվ մնաց Զաքարիան անվրատահություն մեջ այսպես ասելով. «Թող պատուխանատու լինի աստծուն նա, ով սերմանեց (առաջ բերեց) հերձվածքը: Իսկ նրա եղբայր Բոանեն խստովանեց հշմարեանս:

1381
16872
45409
17821

Բասենի (Բասիանի) գոնով, հասնում մինչև Պարտավ (Քարգա) և Արազ. իսկ արևմուտքից՝ Պոնտոսի ծովը»:

«Նոր պատմության հեղինակ Դավիթ Բագրատիոն արքայազնը պատմում է, թե երբ 1799 թվականին մեծուում է Գուկաս 1-ին կաթողիկոսը, վրաց վերջին թագավոր Գեորգի 12-րդը այդ պաշտոնի համար Խուսառտանից բերել է տալիս Արղուսյան Լուսնակի վերագալտին: Այդ նույն աղբյուրից իմանում ենք, որ թագավորի և կաթողիկոսացուի միջև համաձայնություն է եղել հայ և վրաց եկեղեցիների միացման հարցի շուրջը: (Այս մասին ավելի հանգամանորեն տես՝ պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները..., հ. Գ., էջ 43, 47 և 203):

Լաոսի (հայ) և Քարթլոսի (վրացի) ավանդական եղբայրությունը՝ կոնկրետ ու ճշմարտ սցի դրսևորումներով իր բազմապիսի արտահայտությունն է գտել: Հայ և վրաց փոխհարաբերություններում: Մեզ ավելի մոտ ընկած ժամանակաշրջանի վրաց պատմիչները տարբեր առիթներով արձանագրել են պարսից և թուրք նվաճողների տիրապետության սահմաններում առասպող հայ բնակչության իրական վիճակըն ու վրաց պետականության ունալ օգնությունը հայերի այդ ծանր դրությունը թեթևացնելու ուղղությամբ: Թեև ուղ հենց օրինակի համար դիմենք Դավիթ Բագրատիոն արքայազնի Եպիստոլաները:

18-րդ դարը, ինչպես մենք նշել ենք նախորդ էջերում, շատ ավելի աղետալի ժամանակաշրջան է հանդիսացել հայության համար: Դրանով է բացատրվում նաև շատ ավելի մեծաքանակ հայերի գաղթը իրենց բնակավայրերից:

Ըստ Դավիթ արքայազն պատմիչի 1748 թվականին Մահ-Մադ-խան-Ղաչարը մեծաթիվ զորքով հարձակվել է Երևանի բերդի վրա՝ այն գրավելու, թալանի ու ավերածության մատնելու նպատակով: Երևանցիք օգնության համար դիմել են վրաց թեմուրազ թագավորին: Վերջինս զորքով օգնության է հասել երևանցիներին, պարտության է մատնել Մահադ խանին և Երևանը փրկել անխուսափելի ավերումից:

1 Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները..., հ. Գ., էջ 31:



Մեկ տարի անց Շուշվա Փանահ-խանը իր գործով շրջապատում է Գլանշան: Վրաց Քելմուրազ թագավորը այս մասին տեղեկանալով, իր որդի էրեկլեի հետ օգնություն են դնում: Իմանալով այդ, Փանահ-խանը հրաժարվում է Գլանշան գրավելու մտքից և շտապում է Ղարաբաղ: Վրաց թագավորն ու արքայազնը գործով հետապնդում են Փանահ-խանին և Ղարաթափա կոչված վայրում նահատամարտ տալիս ու պարտության մատնում Շուշվա խանին:

Դարձյալ մեկ տարի անց Ազատ-խանի հրոսակախմբերը շարժվում են դեպի Նրևան: Այս անգամ նույնպես երևանցիները օգնության են կանչում վրաց թագավորին: Էրեկլե աբրադրդին իր գործով շտապում է Նրևան և Ղըրիբուպխում հանդիպում պարսից 18 հազարից բաղկացած զորքին: Վրաց երեք հազարանոց պարսկանակը ջարդում է պարսից զորքը և փախուստի մատնում:

Գարեթի ընթացքում բաղձաթիվ գերիներ են տարվել պարսից և թուրք նվաճողների կողմից, և այդ գերիների մեջ հայերն ու վրացիները մշտապես դիտվել են որպես նույն ժողովրդի գավաղներ: Հայ մտավորական Գալուստ Շերմազանյանը անցյալ դարի սկզբներին Պարսկաստանում գտնված ժամանակ բաղձաթիվ առիթներով նկատել է, որ պարսից ժողովուրդը և նույնիսկ խաներն ու մեծամեծ պաշտոնյաները հայերի կամ վրացիների մասին խոսելիս «անզանազանաբար» էրմենի (հայ), և երբեմն Գյուրջի (վրացի) բառերը կցում էին նրանց անուններին: «Երբ ես հարցնում էի նրանց,— շարունակում է հեղինակը,— թե՛ այդ հիշյալ անձրն ի՞նչ ազգից է, նրանք չէին կարողանում վճարաբար պատասխանել ինձ, այս միայն էին ատաղ բերում՝ թե նրանքի այն կողմից պերի բերած են, և կամ յուր կամքով եկած են, ի՞նչ ազգից էլ որ լինի, մենք այստեղ նրան հայ էլ կասենք, վրացի էլ»¹:

Նույն Շերմազանյանը այս կապակցությամբ զրույց է ունենցել նաև «Կաշարների պատմության» հեղինակ Ալբան-

Ալ-Մուլք» Միրզա Քաղիի հետ և մոտավորապես նույն պատասխանն ստացել: Նույնիսկ «Կաշարների պատմության» առյալ հեղինակը դժվարացել է տարբերել Վրաստանում բնակվող հայերին և վրացիներին: «...Ինչ զանազանություն ունի հայ գրած կամ վրացի,— ասել է Միրզա Քաղիի,— աշխիշ էրկուան էլ խաշապաշտ (խեշ փերեստ) են և մեկ երկրում, միասին խանն բնակվում են...»²:

Վրաց պատմագրության մեջ հետաքրքիր տեղեկություններ կան նաև այն մասին, թե ինչպիսի ծանր վիճակի մեջ են ընկել հայերն ու վրացիները Աղա-Մահմադ խանի կոտորածների ու դերեվարության շրջանում և հատկապես այն մասին, թե ինչ կերպ և ինչ միջոցներով է հաջողվել կենդանի մնացածների մի մասին փրկել ստորացուցիչ ու կործանարար գերությունից:

Ահավասիկ մի օրինակ: Դեպքերին ժամանակակից ու ժամանակից պատմաբան Դավիթ Բագրատիոնը վկայում է, որ Ռուսաստանի հայոց առաջնորդ Նիբեմը, որը հետազոյում գարձավ կաթողիկոս, «իր սեփական արծաթն զբաժնով տեղացի գերիներին աղատեց մինչ հարյուր հոգի, ինչպես հայերին, նույնպես և վրացիներին»:

Ոչ միայն արտաքին թշնամին, այլ նաև այլ կարգի արհավիրքներ՝ երաշտ, համաճարակ և այլն նույնպես միավորել են հայերին ու վրացիներին՝ շարիքի դեմը միացյալ ուժերով առնելու համար:

Այս իմաստով հետաքրքիր են վրաց պատմիչների տեղեկությունները 1769 և 1798 թվականներին Վրաստանում բնակված ժանապարտի մասին: Եվ մեկ և մյուս դեպքում էջմիածնի վանքից բերել են տալիս Հիսուս Քրիստոսի գեղարդը և զրա շնորհիվ, ինչպես հեղինակներն են հավաստում, «ժանապարտը արագ շքացավ...»³:

Հայ և վրաց ժողովուրդների բարի դրացիական հարաբերությունների, ինչպես նաև օտար նվաճողների դեմ մղած նրանց համատեղ պայքարի մասին կարևոր հիշատակու-

¹ Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության համար, Ռուստով, 1890, էջ 7:

² Գ. Շերմազանյան, Նյութեր ազգային պատմության համար, Ռուստով, 1890, էջ 10:

Յյուզմներ մենք դանում ենք ոչ միայն մեզ հասած գրավոր վնասներս, այլև բանավոր հյուսած ու ավանդարար հետազս սերունդներին ժառանգած մեծարժեք ստեղծագործությունների մեջ:

Հայ և վրաց ժողովուրդները բազմաթիվ առասպելական գրույցներ են հյուսել պատմական կոնկրետ դեպքերի շարժառիթներով, սակայն այդ գրույցները որոշակի իրադարձությունների ծնունդ չեն եղել, հետադարձ հրկումների ու մշակումների ընթացքում ընդունելով դիցաբանական բնույթ և աստիճանաբար թուլացնելով բովանդակության պատմականությունը կոնկրետ շրջանակները, տարածվել են ամենուրեք, երբեմն էլ անցել հարևան ժողովուրդներին, նոր անուն կամ գունավորում ստացել և բոլոր դեպքերում դիտակցվել որպես ժողովրդի (կամ ժողովուրդների) լավագույն երազանքներն ու պոետնեցիալ ուժերը գրսևորող առասպելներ:

Այս առումով շատ հետաքրքիր է վրաց Ամիրանի և հայ Արտավազդի մասին հյուսված գրույցների համեմատական բնութագրությունը:

Այդ նրկու առասպելական գրույցների միջև շատ ընդհանրություններ ու նմանություններ կան: Այսպես օրինակ, թե՛ Ամիրանը և թե՛ Արտավազդը բանտարկվում են բարայրների մեջ: Նրկուսն էլ դամած են երկաթյա անխորտակելի շղթաներով: Ինչպես Ամիրանը, նույնպես և Արտավազդը մենակ չեն, նրանց մոտ են հավատարիմ շները (հայկականում դույզ շուն, վրացականում՝ մեկ), որոնք կրծելով (հայկականում) կամ լիզելով (վրացականում) շղթաները, փորձում են շղթաները խորտակել և աղատել իրենց տերերին: Սակայն դարբինները խփում են սալին, ամբացնում նրանց շղթաները և Ամիրանին ու Արտավազդին թողնում գարձյալ բարայրներում շղթայված վիճակի մեջ:

Հայ ժողովրդի հանճարեղ ստեղծագործության՝ «Մասունցի Դավիթ» էպոսի զաղափարական էությունը հազեցված է այլ ժողովուրդների նկատմամբ ունեցած հարգանքի, մարդասիրության ու բարեկամության ոգով: «Մասունցի Դավիթ» վիպերգության մեջ հայ և վրաց ժողովուրդների բարեկամության անքակտելի կապը գրսևորված է Դավիթի և Գորգի-

լի (Գեորգի) սանահեր և քավոր լինելու փաստի մեջ: Բոլորովին էլ պատահական դիպվածի արդյունք չէ այն, որ Դավիթը փահլեամների համար հարսնացուներ գտնելու նպատակով մեկնում է վրաստան: Այս նույնպես պայացուցում է հայ և վրաց իշխանական տների խնամիրական կապերով կապված լինելու փաստը: Հայ և վրաց ժողովուրդների փոխադարձ սիրո ու նվիրվածության զգացմունքներով են առգործված Դավիթի խոսքերը, երբ նա դիմելով Գորգիլին ասում է.

Քավոր Գորգիլ, արի մտնեք ներս,
Տուն մնաց մեզի, բակ մնաց հավերուն:

Պատմությունը մեղ հասցրել է միայն իշխանական տների խնամիրական կապերի առանձին փաստեր: Հասկանալի է, որ թագավորական կամ հոգևոր բարձրախավ ծնունդի տեր, նրանց միջավայրում գործող, կամ նրանց պատվերով պատմությունը գրող անձինք չէին կարող անդրադառնալ հասարակ, մարդկանց կյանքին ու պայմաններին, նրանց, այդ ժողովուրդ կոչված, մարդկության փոխհարաբերություններին, կապերին ու կենցաղին: Բայց, որ նրանք՝ հայ և վրաց հասարակ մարդիկ ամենասերտ կապերով կապված են եղել միմյանց հետ, անստարկելի է: Նրանք՝ հայերն ու վրացիները չեն տարբերել միմյանց մինչև եկեղեցիների բաժանումը, իսկ դրանից հետո դարձյալ շարունակել են համատեղ գոյությունը: Հարս են տվել և հարս են առել, ապրել են գուռ գուռ կից՝ առանց խտրականության ու թշնամանքի: Հայ և վրաց հարևանները փոխադարձաբար օգնության են հասնել զժբախտության օրերին և մի սեղանի շուրջ կենաց բաժակներ բարձրացրել քեֆի ու ուրախության ժամանակ:

Հայ մեծանուն բանաստեղծ Ավետիք Իսահայանը, վրաց գրողների տանը իր կյանքի 65-ամյակի պատվին կազմա-

1 Պատմությունը հայտնի է հարս տալու և հարս առնելու փաստը հայ և վրաց իշխանական տների միջև երբեմն այդ կատարվել է պետական-բարձրական նկատառումներով: Ինչ նպատակ էլ հետապնդեր խնամիրական կապը, այնուամենայնիվ այն դրական դեր է խաղացել ժողովուրդների բարեկամության գործում:

կերպոված երկկոչին, իր խոսքի մեջ, ի միջի այլոց, նշում է այն մեծ ու անխախտելի բարեկամությունը, որ դարեր ի վեր գոյություն է ունեցել երկու ժողովուրդների միջև: «Հայանի է,— նշում է բանաստեղծը,— որ գոյություն է ունեցել երկու ժողովուրդների միջև մի սրբազորոված սովորություն, ազգերի պատմության մեջ մի հուզիչ եզակի սիմվոլ: Որպեսզի ավելի ամրապնդեն եղբայրությունը, շատ տեղերում, ուր խառն են ապրել վրացի ու հայ, վրացի մայրերը կաթ են տվել հայ երեխաներին, և փոխադարձաբար»¹:

Քրիլիստոմ և այլ քաղաքներում ու վայրերում բնակություն հաստատած գաղթական հայերը այլևս իրենց նախնիքն քնակավայրերը (հայրենիք) վերադառնալու մասին չէ, որ մտածել են, այլ այն մասին, թե ինչ ճանապարհով և ինչ միջոցներով օգնեն տեղացիներին (վրացիներին) ամրապնդելու երկրի հզորությունը և այդ կերպ անտրիկ ու անմատչելի դարձնեն իրենց երկրորդ հայրենիքը՝ Վրաստանը նվաճողների ոտնձգությունների դեմ:

Այս մասին նույնպես պերճախոս փաստեր է արձանագրել վրաց պատմագրությունը:

Ահա, թե ինչ է պատմում Վախտանգ 6-րդ թագավորի ժամանակակից Բերի էպիստառչիլիի պատմաբանը.

«... Ղրիմեցիք եկան հասան Դոնս: Երբ որ նրանք հասնում էին (այդտեղ), զորեցի մի տերտեր (տերտերա) մենմենակ ոչինչ չզգալով՝ դալիս էր Գորուց: Եվ այս ու այն կողմըն նայելով՝ (հանկարծ) նկատեց, որ Դոնսը և նրա դաշտերը զորքով են լցված: Ասլա տերտերը գլխի ընկավ, որ նրանք վրացիներ չէին: Տերտերը զգաց, որ նրանք անօրեններ են և երկիրն ավերողներ: Եվ այն տերտերը շտապ վերադարձավ և վազեց Գորու ուղղությամբ, անցավ Կուրի կամուրջը և հանեց կամրջի բոլոր տախտակները, որ և ջուրը թափեց, և կամուրջը քանդեց: Իսկ երբ Ղրիմեցիք ուղղակի կամրջին հասան, տեսան այն քանդված, նեղ տեղն ընկան և չկարողացան կամրջովն անցնել»²:

Այս դեպքի մասին համառոտակի նշել է նաև Վախտանգին իր Քարթլիի պատմության մեջ:

Դեպքը, ինչպես Քարթլիս ցիտովրեբայում է հիշատակվում, տեղի է ունեցել վրաց կուսարաք 2-րդ թագավորի օրոք: Քարթլիս ցիտովրեբան աչ իրողության համառոտ նկարագրությունը տալով հանվերձ լրացուցիչ կերպով հաջորդում է նաև, որ այդ հայ քահանան «...հաղորդեց վերին Քարթլիի երկրին, զորք ճարեց, բոլորը տեղահան եղան և քնացին թաքնվելու. եթե տերտերն առաջ չընկներ,— ավարտում է իր խոսքը տարեգրությունը,— անմտաբար կանցնեին զեան, և երկիրը կփշանար...»:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության արտահայտություններից մեկը պետք է համարել գրական կապերն ու հարաբերությունները, որոնք անընդմեջ շարունակվել են դարերի ընթացքում: Սակայն ոչ բոլոր հուշարձաններն են մեզ հասել օտար նվաճողների վայրագությունների ու ասպատակությունների հետևանքով³: Մասնավորապես մոնղոլական փրապիտություն շրջանում բազմաթիվ ձեռագիր վավերաթղթեր (թե՛ պատմական և թե՛ գեղարվեստական) հրի ճարակ են դարձել, որոնց մի շնչին մասի ձեռագիր արտագրություններն են հաջորդ սերունդներին փոխանցվել: Այդ կերպ անճեռացել է նաև Վաղդենավոր-ի բնագիրը և շատ ուրիշ մեծարժեք ստեղծագործությունների բնագրեր: Թագավորի ու

¹ Պատմական և գեղարվեստական շատ արժեքներ վերականգնվել են հայրենների կողմից անցյալներում թաղված և պահպանված ձեռագրերի վերաթարգմանություններով: Այդ կերպ, ստեղծ, հայերեն թարգմանությունից կատարած վերաթարգմանությամբ է վերականգնվել «Շուշուրի նահատակությունը» վրաց բնագիր ագիոգրաֆիան: Հայ և վրաց գրավորները անցյալ և ժամանակակից դեպքերը նկարագրելիս մեծապես շեշտել են նաև հայրեն ժողովրդի պատմությունը: Այս տեսակետից կրանց բազմաթիվությունները, ոչ միայն իրենց, այլև ճարակ ժողովրդի հանդեպ կենսականորեն անհրաժեշտ բազմաթիվ փաստեր են պարունակում: Թարգմանություններով ոչ միայն փոխադարձաբար միմյանց ճանաչելու, այլև սեփական ժողովրդի պատմությունը լիարժեք փաստերով ու նկարագրություններով ամբողջացնելու աշխատանքը դարերի պատմություն ունի և այդ կատարվում է շատ ավելի նպատակասլաց ու մեծ հաջողությամբ նաև մեր օրերում:

² Ամբողջը տես՝ «Մովսեսական Վրաստան», 1941, № 36:
³ Կ. Մեկիցանի-Քեկ, Վրաց աղբյուրներ..., Կ. Գ., էջ 13:

բաղմանուն գրիչների շնորհակալ գործունեության հետևան-
քով մեզ են հասել պատմական ու գեղարվեստական նշա-
նավոր երկեր: «Վազրենավորի» գրիչների մեջ պատկանելի
թիվ են կազմում նաև ծաղոմով հայ մարդիկ, որոնք ապրել
ու գործել են վրաց աշխարհում:

Պատմությունը չի մոռացել Աղմուրենց Բաղդասարի որ-
դի Գասպարի՝ անունը, որի աշխատանքը լավագույն ձևում
գիր օրինակներից մեկն է «Վազրենավորի» մեջ հասած ձե-
ռագրերի մեջ: Արտագրությունը կատարված է 1671 թվակա-
նին: Մյուս գրիչը՝ Գիրգի 11-րդ թագավորի գիվանադպիր,
բանաստեղծ Բեգթաբեզն² է, նրա աշխատանքը նույնպես լա-
վագույն ձևադրերից մեկն է և գրված 1680 թվականին: Այս
ձևագրերից առաջինը, որ ամենահինն է, շատ ավելի հա-
րազատ է բնագրին իր բովանդակությամբ, իսկ երկրորդը
աչքի է ընկնում իր գեղեցիկ արտաքինով:

Հայտնի են նաև ինչպես պատմական, այնպես էլ գեղար-
վեստական արժեք ներկայացնող աղբյուրներից, թե որքան
զածան են Աղել օտար նվաճողները իրենց անկախությունն
ու ազատությունը սիրող հայ և վրաց ժողովուրդների նկատ-
մամբ: Հայտնի են նաև բաղմամբով փաստեր այն հերոսա-
կան ճակատամարտերի մասին, որոնք հաղթանակով են պսա-
կել՝ հարևան ազատատենչ ժողովուրդների միասնական ջան-
քերը՝ իրենց երկրները բռնակալ զավթիչներից մաքրելու գոր-
ծում: Երբեմն այդ հաղթանակները վեր են ածվել համաժո-
ղովրդական ցնծության՝ ու տոնախմբությունների և տարիներ
շարունակ հիշվել ժողովուրդների կողմից: Մյուսպիսի մի հե-
տաքրքիր պատմություն ունի նաև Թրիլիսիում մինչև վերջին
ժամանակներս կատարվող «Ղեկնորա» կոչված տոնախմբու-
թյունը: 1617 թվականին պարսից տիրակալ Շահ-Աբրահա

¹ Մուշրի Գասպարի ձեռագիր հիշատակագրում կարդում ենք, «Երբ
որ ես, Աղմուրենց Բաղդասարի որդի, մուշրի (հարկաճան) Գասպարու,
գրում էի այս ընձենավորը, այն ժամանակ աստված ողորմություն արած
ինձ և ծնվեց իմ զավակ Գավթը»: Այս տեղեկությունը ջաղված է
պրոթ. Լեոն Մելիքանթ-Բեկի ասումնասիրություններից:

² Բանաստեղծ Բեգթաբեզի արձանիքների մասին հիշատակություն կա
նաև Դ. Գուրամիշվիլու «Ղավթիթանի» կոչված գրքում:



Մաթա-Նովա
Նկար՝ Լ. Ռուխկյանի

մեծարանակ զորքով արշավելով Վրաստան, մեծ ավերածու-
թյուններ է գործում, թալանում և գերելարում է տեղական
վրաց և հայ բնակչությանը: Անվերջ հալածանքներն ու բռու-
նությունները անասման ատելություններն ան լցնում ժողովրդի
հոգին հանդեպ նվաճողները, և 1635 թվականին, բնակչու-
թյունն ազատամբվելով դուրս է շարժում Վրաստանի սահ-
մաններից պարսկական շարդված ու խուճապի մատնված զո-
րաբանակներին: Այդ փառավոր հաղթանակը, որին մասնակե-
ցում է նաև տեղի հայ բնակչությունը, իրականանում է 1635
թվականի Մեծ պատի առաջին երկուշաբթի օրը: Ահա այդ
օրից սկսած ամեն տարի Քրիստի վրացիներն ու հայերը մեծ
շուքով նշել են այդ տոնը՝ Վեյնորա՝ անունով:

Այդ առնախմբությունը՝ նույնպես դրսևորում է հայ-վրաց
ժողովուրդների եղբայրական կապերն ու նրանց շահերի նույ-
նությունը:

Բազմաթիվ են հայ և վրաց մտավորականների համագոր-
ծակցության, միևնույն կրթական օջախներում աշխատելու և
միմյանց երկասիրություններն օգտագործելու փաստերը
18-րդ դարում:

Անտոն 1-ին կաթողիկոսը (Բաղրատիոն արքայազն,
1720—1788) նշանակալից դեր է կատարել վրաց գրականու-
թյան պատմության մեջ: Ունի երկու տասնյակից ավելի ինք-
նուրույն և թարգմանական աշխատություններից կազմված
հատորներ: Իր մի շարք գործերում, հետաքրքիր տեղեկու-
թյուններ է հաղորդում Հաչաստանի և հայերի մասին: Առանձ-
նապես հետաքրքրական են նրա տված գնահատականները
հայ այն մտավորականների մասին, որոնք զործել են Վրաս-
տանում: Իսկ այդ մտավորականների մեջ առանձնապես մեծ
դեր է կատարել Փիլիպպե քահանա Ղալթմաղաշվիլին, որի

¹ Ղեյնորա (վրացերեն ვეინორა) կոչված տոնը Քրիստի
բազմազգ բնակչության կողմից շատ սիրված փոփոխյալին երթն է — Մադ-
րաթափորը: Առջևից դնում է (տարով կամ ուղտի վրա) դարչնի Շահ-
Աբրահիմ գերն ստանձնած, դույներով դեմքն ալյանդակած, շրջված ռո-
րերը հագին ծիծաղելի արտաբնով մի մարդ, իսկ նրա ետևից հոծ բազ-
մություն՝ նվագի, ուրախության և հայհոյախառն ծաղր ու ծանակի բու-
ցականություններով՝ ուղղված պորտից շահի և նրա զախարիված բու-
նակների հասցեին: Այդ, բուս էություն, ոչ միայն երթ է սովորական

օգնութեամբ և ակտիվ մասնակցութեամբ միայն հաջողվել է Անտոն 1-ին կաթողիկոսին հաղթահարել քերականութեան բարդ բնագավառը:

Փիլիպպե Ղայթմազաշվիլու օգնութեամբ վրաց կաթողիկոսը հայերենից քարգմանել է երկու գործ՝ «Ծմբեսոսի պատմությունը» և Կյուրեղ Ալեքսանդրացու «Գանձը»: Իր վարքաբանական-վկայաբանական աշխատություններում մեծ տեղ է հատկացրել ինչպես հայ-վրացական, նույնպես և հայոց վկաների կենսագրություններին:

Փ. Ղայթմազաշվիլու օժանդակությամբ վրաց կաթողիկոսի կազմած քերականագիտական երկերից նշանավորը՝ բառացի քարգմանությունն է Մխիթար Սեբաստացու 1730 թվականին Վենետիկում հրատարակված «Քերականություն»:

Ստորև բերում ենք Անտոն 1-ին կաթողիկոսի աշխատություններից մի քանի հատված, որոնք մեծ նկատարարություն են ներկայացնում և լուսարանում ինչպես հեղինակի, նույնպես և նրա հայ աշխատակիցների գործունեությունը:

«... Մանթապա Լովհան Օձնեցու, Պողոս Տարսեցու, Ստեփանոս Մյունեցու, Գոշիկ Վանականի, Վարդանի, Սարգսի, Մաշտոցի, Լովհան Ռոտանցու, Գրիգոր Տաթևացու... հայոց վարդապետների գրքերի հետ Սրանցից ոմանց գրություններին լիովին համաձայն եմ, իսկ ոմանց գրություններից... խոցումվեցավ սիրտս...»:

«... Ինձ օժանդակում էր Փիլիպպե հալազի երեքը՝ քարգմանություններ կատարելով հայերեն գրվածքներից... քանի որ ես, բացի վրացերենից, ուրիշ ոչ մի լեզու չգիտեի, իսկ հայերեն գիրը թեև գիտեի, սակայն, շատ թույլ և թուուցիկ կերպով...»:

«... Անտի (Ահոնի) որդի՝ Վախտանդ թագավորն կամեցավ դունել այսպիսի մի գիրք... և նրա օրոք կար մի վանական

իմաստով, այն բնագրություն, որը ներկայացնում է Քրիստի բնակչություն անտանձան արարությունը պատմական հաղթանակի ստիժի վրաց մամուլը անցյալներում տարբեր ժամանակների հետ է կապել այդ տանի ծագումը Սմանր նույնիսկ հիշատակում են 7-րդ դարը:

Այս մասին ան՝օ «Военный Сборник», 1867, №№ 6—7, «Кавказский Календарь», 1855 г. «Կվալի» (վրացերեն), 1893, № 6, Գ. Սերեթիսու հոդվածը:

Օրբելյանի տոհմից Սաբա անունով, որը իմաստ (ասիրություն) հետևող էր... Ոչ նվազ չափով քերականությունը որոնում էր մանավանդ իմ ազգական Վախտանի: Եվ քանի որ այդ (քերականությունը) չգտնվեցավ... դիմեցին Քրիստի քաղաքացիներից մեկին, որին այժմ Ջաքարիա վարդապետ են կոչում, և աղերսեցին, որ օգնի եմ համաձայն նրանց աղերսանքին, ես (Ջաքարիան) ձեռնարկեց քերականության քարգմանելուն (հայերենից)»:

«... Մի քանի տարուց հետո ես հանդիպեցի ոմն քահանայի, որ ազգով էրմանյան, այսինքն հասցան էր, ազգանունով Ղայթմազաշվիլի Փիլիպպե և աջնվական ծագումով՝ մեծ իշխան Օրբելյանների իշխանության սահմաններից: Եվ մենք երկուսով օրըստօրե պրպտումներ էինք կատարում, և ես շատ մանրամասն նրա հետ Մենք նախ և առաջ քարգմանեցինք հայերենից Արիստոտելից...»:

Իրար հետ խորհրդակցելով՝ մտադրվում էինք քերականության փոխադրությունն ևս սկսենք, սակայն ինձ գաղում էր այն, որ իմ միտքը քերականագիտական կրթություն չէր ստացել. իսկ այն Փիլիպպե քահանան խիստ հմուտ էր քերականական արվեստին, և ապովիսելով աստվածային իմաստությունը՝ Թեյմուրազ թագավորի և նրա սրբու հրամանով ձեռնարկեցինք այս կործրը:

Նախ Փիլիպպեն ծանոթացրեց ինձ, թե՛ ի՞նչ է մասունք քանին և ապա քերականության սահմանների, տառերի, վանկերի, բառերի և խոսքի էություն հետ, հետագայում մասունք քանիի ու նրանց հատկությունների, այսինքն պարագաների հետ, և աստիճանաբար մտքրեց ինձ իմաստության դուռն: Սակայն ես և այն Փիլիպպեն հայերեն քերականությամբ չէինք բավականանում, այլ կարգում էինք և լատիներեն քերականություններն ևս... և՛ հայերենի հետ համեմատելով՝ նմանապես քարգմանում էինք:

Իսկ համաձայնությունը (սինտաքսի [ս]), որ է շարահյուսություն... նույնպես բացատրեց մեզ այն գովելի անձնավորությունը, մեզ կարեկից բարեկամ Փիլիպպեն...»:

Հայ գիտնականի մասին ուշագրավ տեղեկություն է հայտնում նաև վրաց վերջին թագավորի որդի արքայազն Դավիթ

Քաղաքատիրոնր: Ըստ այդ տեղեկության Անտոն 1-ին կաթողիկոսը հայ քահանա Փրիլուպե Ղայթմազազվիլուն նշանակում է դասատու Քելայիի դպրոցում ըսպես մեծ գիտնական և փրիլուստիա՝ «ինչպես հին փրիլուստիայության տեղյակ, նույնպես և նորում հույժ փորձված...»:

Հայտնի է նաև, որ Քրիլուստիում բացված սեմինարիայի (1755) առաջին սեկտորը կամ «սրոլայետն» է եղել նույն Փրիլուպե Ղայթմազազվիլին:

Քեյմուրազ Արքայազնի աշխատության՝ «Հայ դիտնականները Քրիլուստում» վերնագիրը կրող բաժնում հիշատակվում են Ջաքարիա վարդապետը, Փրիլուպե քահանան և շատ ուրիշները: Ջաքարիա վարդապետ Մանդինյանցը (Մանդինազվիլի) հիշվում է որպես փրիլուստիա, աստվածաբան, բժշկական արվեստին տեղյակ անձնավորություն, ինչպես նաև ոմն Քեհրուսթյան, որը հայերենից վրացերենի է թարգմանել Օրբելիան տոհմի պատմությունը:

Չենք կարող չհիշատակել նաև վրաց հռչակավոր առակախոս և բառարանագիր Սուլխան-Սարա Օրբելիանիի (1658—1725) անունը, որը իր հայտնի «Լեկսիկոնին» գրելիս, ի թիվս այլ աղբյուրների, ինչպես ինքն է հիշատակում, ձեռքի տակ է ունեցել նաև հայերեն «Բառագիրը»:

Սուլխան-Սարա Օրբելիանի բառարանի առաջարկում (անդերձ — նամակի) այսպես է պատմում օգտագործած գրականության մասին.

«Ես, Սուլխան-Սարա Օրբելիանս, պատանեկության և ջահելությանս պահին, շատ աշխատանք թափեցի այս գրքի վրա, քանի որ վրացերեն լեզվով բառարան այլևս չկար [և] քանի որ այն, որին վախտանդ հինգերորդ թագավորը վրացերեն բառարանը (սիազվիսկոնա) կոչեց, ժամանակի ընթացքում անհետացել էր: Քանի որ այս պատմական գիրքը կորել էր, վրացերեն լեզուն [և] ըստ իրենց քահանայիցի ալլանդակել էին. [այդ] վախտանդ թագավորի ընդհին՝ Գեորգ (Գեորգի) թագավորը հրամայեց ինձ ձեռնարկել սրան. և ես մի փոքրիկ բառարան տեսա, որը նրանց (հայերեն) լեզվով բառագիրը է կոչվում, և ես էլ նրանց օրինակով ձեռնարկեցի [սրան] և կազմեցի, որքան էլ ուժս ներում էր...»

... Աշխատեցի, որքան էլ ուժս ներում էր [օգտվել] հելլեն, լաթին, հայերեն (սոմբուրի), ռուսերեն և արաբերեն գրքերից և քաղվածքներ անել այնպեղից...»¹:

Վրաց արքունիքի դիվանագիտական հարաբերությունների մեջ անգամ նշանակալից դեր են խաղացել առանձին հայեր, որոնք ամենայն ազնվություններ կատարել են վատահավատ հանձնարարությունները: Այսպես օրինակ, հայտնի է, որ Ջաքարազի հայ Գուրգեն էնիկոլուսովը², որպես արտակարգ դեսպան, էրեկըն 2-րդ թագավորի կողմից ուղարկվել է Կոստանդնուպոլիս՝ վրաստանի և Ռուսթիայի միջև եղած թշնամական հարաբերությունները լավացնելու նպատակով: Նույն աղբյուրից իմանում ենք նաև, որ այդ դարաբաղցի հայր իմացել է՝ բաղմաթիվ լեզուներ և հմտորեն տիրապետել դիվանագիտական դործի նրբություններին³:

Քրիլուստ են կրկար տարիներ ապրել և ստեղծագործել մեծ թվով հայ նկարիչներ, աշուղներ, բանաստեղծներ: Մասնավորապես 18-րդ դարը նշանակալից դար է եղել աշուղական վրաց դպրոցի բեղմնավոր գործունեության համար:

Նաղաշ Հովնաթանից սկսած մինչև Սայաթ-Նովան ընկած ժամանակաշրջանում բաղմաթիվ հայ երգիչներ են իրենց հայերեն և վրացերեն երգերով հանդես եկել Քրիլուստի արհեստավորական-աշխատավորական լայն շրջաններում:

Քրիլուստի քաղաքը իր արևելյան էկզոտիկ դուրանգեղություններ, ինքնատիպ ու հետաքրքիր աղբյուրակերպով, դերագանցապես արհեստավոր բնակչությամբ, փարթամ բուսական

¹ Այս, ինչպես նաև վերը բերած քաղվածքները, նույնպես և տեղեկությունները շարադրելիս օգտվել ենք պրոֆ. Լ. Մելիքանթ-Քեյի «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» եռահատոր աշխատություններից:

² Ըստ Գ. Ենթադանյանի տված տեղեկությունների Գուրգեն էնիկոլուսովը նախապես կրել է Մամիկոնյան ազգանունը, հետագայում վրաց արքունիքում ծառայելու շրջանում բաղմաթիվ լեզուների տիրապետելու համար վրաց թագավորի կողմից կոչվել է էնիկոլուսի, այսինքն սուրբ լեզվի (վրացերեն): Վրաց պատմագրության մեջ բաղմիցս հիշատակվել է նրա անձնավորությունն ու գործունեությունը՝ Միրզա Գուրգենս էնիկոլուսովի անունով:

³ Г. Кикодзе, Ираклий Второй, изд. «ЗВ», 1948, стр. 105.

նությամբ ու մեղծ կլիմայով սիրվել ու երգվել է այն մարդկանց կողմից, որոնք իրենք բերումով բնակություն են հաստատել, կամ ի ծնն աղբյուր են այնտեղ և ստեղծագործել:

Նաղաշ Հովնաթանը, ուրախության ու խորախճանքի նույր երգիչն ու բանաստեղծ-նկարիչը, շուրջ տասներեք տարի ապրել է Վրաստանի մայրաքաղաքում, ունեցել է իր «քյարխանան» և նկարել է «գոգալներու» պատկերները: «Քիֆլիզ քաղաքն պատուական» ուրախ սրտով զովերգող տաղանդավոր երգիչը կյանքի, ուրախության և սիրո գովքն է արել իր տաղերում: Նաղաշ Հովնաթանը ոչ միայն լավ ընդունելություն է դասել վրաց աշխարհում, այլև, իր երկրորդ հայրենիքը համարելով այն, իր որդուն ևս (Նաղաշ Հակոբին — Սայաթ-Նովային ժամանակակից, նկարիչ և բանաստեղծ) պարտավորեցրել է ապրել այնտեղ:

Մեծ տաղասացի երգած «Քիֆլիզը» առարկաբացած է, կոնկրետ ու ջերմ: Քիֆլիսիին նվիրած խոսքերը բխել են անմիջականորեն այնտեղ ապրած մարդու՝ այդ քաղաքի ու նրա բնակիչների նկատմամբ ունեցած ջերմ զգացմունքներից: Երբն ու ուրախությունը, զինին ու, մանավանդ, «Վրաստանու արմազները» բանաստեղծ-երգչի տաղերում հնչում են բարձրարվեստ երանգավորումներով, և ոչ ոք, ո՛չ նրա նախորդներից և ո՛չ էլ ժամանակակիցներից, այնքան դրավիչ ու երաժշտական շի ներկայացրել կանացի սեռն ու նրա հմայիչ բարեմասնությունները ժողովրդին հարազատ ու հասկանալի պարզություններ, որքան գողալների սիրով վառված մեր տաղասացը:

Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների անգուղական բանաստեղծ-երգիչ Սայաթ-Նովան նույնպես իր ստեղծագործական կյանքն անց է կացրել Քիֆլիսիում: Թեև նրա կյանքի ու ստեղծագործությունների շուրջը բազմաթիվ վեճեր ու տարաձայնություններ են եղել¹, մի բան, սակայն, ամեն կատկա-

ծից վեր է, որ նա հավասարապես ընդունված ու սիրելի է եղել թե հայ, թե վրաց և թե ազդեցմանական արհեստավորական-աշխատավորական լայն շրջաններում:

Սայաթ-Նովան միջնադարի հայ պոեզիայի վերջին և ամենանշանավոր դեմքն է: Նա իր սքանչելի երգերը հորինել է հայերեն, վրացերեն և ազդեցմաներեն լեզուներով՝ մեկը մյուսից ղեկավարանց վարպետություններով՝ ի ղեկավարման համար նաշափ է, որ Սայաթ-Նովան իր պատվավոր տեղն է գրավել ոչ միայն հայ, այլև վրաց գրականության պատմության մեջ: Մեծ և անգնահատելի է Սայաթ-Նովայի դերը հայ, վրաց և ազդեցմանական նոր պոեզիայի զարգացման բոլոր էտապներում: Սայաթ-Նովայի բանաստեղծական նորարարությունը բազմաթիվ գրողների է ոգևորել և ստեղծագործական թափ հաղորդել վրաց տաղանդավոր գրողներ Քևսիկին (1750—1791), Սյեքսանդր Ճավնավաձեն (1786—1846) և Գրիգոր Օրբելիանին² (1800—1883) իրենց վրա կրել են հայ մեծ բանաստեղծ-երգչի ազդեցությունը: Սայաթ-Նովան ստեղծագործական մեծ զիտապալունի տեր, իր ժամանակի հասարակական-պետական իրադարձություններին լավատեղյակ այն մեծարվեստ բանաստեղծն էր, որի հորինած խոսքն ու երաժշտությունը՝ աշխատավորական-արհեստավորական աշխարհից ծագելով՝ բախվել են ֆեոդալ արխիտոկրատիայի ստեղծած մոռյլ իրականության հետ, «նայսի նաբար» բանաստեղծը՝ ամենայն իրավամբ այդ նույն «խալսի» որդին էր և իր ամբողջ կյանքն ու ստեղծագործությունները ի սպաս դրեց ժողովրդի բարօրության ու երջանկության գործին:

Նովայի կյանքն ու ստեղծագործությունը կարող են մենագրական լուրջ ուսումնասիրությունների վրաց իրականության մեջ ստացին անգամ նշանավոր գրականագետ Ա. Խախանովն է գրադրել Սայաթ-Նովայի և իր հեղինակած վրաց գրականության պատմության քառահատոր ձեռնարկում առանձին բաժին հատկացրել նրան: (ՏՆՍ, А. Хаханов, Очерки по истории грузинской словесности, Москва, 1901 г.)

Հետազոտում հրատարակվել են Ի. Գրիշաշվիլու, Կ. Գեկիժձեի, Լ. Մելքսեթ-Մեհի, Գ. Լեոնյանի, Գ. Լեոնիձեի, Մ. Մկրչանի, Մ. Լուարսբյանի և շատ ուրիշների հոդվածներն ու ուսումնասիրությունները:

¹ Մասնավորապես Ա. Ճավնավաձեն և Գրիգոր Օրբելիանին շատ երգեր են գրել Սայաթ-Նովայի երգերի նմանությամբ: Նրանք ոչ միայն չեն

¹ Սայաթ-Նովայի կյանքի և ստեղծագործությունների հետ կապված հարցերը մշտապես եղել և մնում են հայ և վրաց գրականագիտության ուշադրության կենտրոնում: Եվ անցյալում, և առավելապես մեր օրերում բազմաթիվ հոդվածներ և ուսումնասիրություններ են գրվել այդ մեծ ստեղծագործողի մասին, սակայն ցավով պիտի նկատենք, որ Սայաթ-

Վրաց հին գրականության վերջին ներկայացուցիչը՝ տա-
ղանդավոր բանաստեղծ Բեսիկին նույնպես Սալթ-Նովայի
նման հասարակական ու անձնական ծանր ապրումներ է ու-
նեցել, սակայն դրանք հայ և վրաց ստեղծագործողների մոտ
ընթացել են տրամագծորեն հակառակ ուղղությամբ: Սալթ-
Նովան և Բեսիկին դասակարգային տարբեր դիրքերից են
վշտագատել հասարակական երևույթները և, հասկանալի է,
տարբեր կերպ էլ պատկերել մարդկային զգացմունքները և
արձագանքել հասարակության պահանջներին: Բեսիկին ցա-
վում է այն ամենի համար, ինչից հեռացել էր Սալթ-Նո-
վան, և վերջապես, եթե մի րան նրանց աչքսսս թի այնպես
կապում էր, զա վրաց պետականությունն էր և հանդեպ հայ-
րենիքն ունեցած նրանց անվիճելի սերը, սպա այդ էլ (խոսքը
վրաց ֆեոդալական պետականության է վերաբերում) իր
մայրամասն էր ապրում:

Իրապես Բեսիկին փորձել է հեռեկի Սալթ-Նովային, բայ-
չի նրա ստեղծագործական ճանապարհով, ուսանել նրանից
աշուղական արվեստի նրբությունները, սակայն չըմբռնելով
հայ երգչի զեմոկրատական աշխարհայացքը, զնայել է դի-
մադրության թույլ ճանապարհով՝ թեյմուրազների և Մերձա-
վոր Արևելքի արդեն անկում ապրած պոեզիայի տրադիցիոն
ճանապարհով: Բեսիկիի Սալթ-Նովայից կրած ազդեցություն-
ըր զուտ ձևական բնույթ է կրել և չի արտահայտել հայ երգչի
ստեղծագործական արվեստի էությունը:

Նույն րանը կարելի է ասել Ալեքսանդր Ծավճավաձեի ու
Գրիգոր Օրբելիանիի մասին, այն տարբերությամբ, որ վերջին-

թաքրել Սալթ-Նովայից կրած ազդեցությունը, այլ նույնիսկ իրենց եր-
գերից մի բանիսը տպագրել են «Սալթ-Նովայի նմանությամբ» խորագրի
տակ: Այսպես օրինակ, «Թիսկարի» ամսագրի 1863 թ. № 9-ում (էջ 71—
72) լույս է տեսել Գրիգոր Օրբելիանիի «Սալթ-Նովայի նմանությամբ»
վերնագրով բանաստեղծությունը: Միաժամանակ ժամանակակիցները հի-
շում են, թե ինչպես Գ. Օրբելիանին ամեն ինչ թողած վազում էր այն
աշուղին լսելու, որը ամենից լավ էր կատարում Սալթ-Նովայի երգերը:
Առնուսարակ պիտի նկատենք, որ Սալթ-Նովայի հուշեր տարածված է
ևղի ոչ միայն Օրբելիանի արհեստագործության մեջ (որ միանգամայն
հասկանալի է), այլև վրաց ազնվականության մտավորական շրջաննե-
րում:

ներս իրենց դադափարական ու ստեղծագործական ակունք-
ներով շատ ավելի կապված են Եղեյ 19-րդ դարի առաջին
կեսի հասարակական-քաղաքական իրադարձությունների
հետ: Եթե Բեսիկին վրաց ֆեոդալական միապետության կոր-
ծանումն ազդարարող երգիչն էր, ապա Ծավճավաձեն և Օր-
բելիանին՝ վրաց նոր շրջանի ուսմանտիկ պոեզիայի այդ եր-
կու նշանավոր դեմքերը՝ մի կողմից ցավով են նկատում
Վրաստանի ազգային անկախության կորուստը, իսկ մյուս
կողմից՝ ողջունում ուսական առաջավոր գաղափարների
մուտքը հայրենիք: Այս բանաստեղծները նույնպես գրել են
Սալթ-Նովայի նմանությամբ, բայց նմանությունը դարձյալ
ձևական է:

Քյունը կաշկանդող շղթաները և անհրաժեշտ պայմաններ ապահովեց կապիտալիզմի զարգացման համար:

Այստեղից էլ պարզ ու հասկանալի է դառնում մարքսիզմի կլասիկների այն սրտշակի գրույթը, ըստ որի Ռուսաստանը Արևելքի վերսարժմամբ քաղաքակրթող ու առաջադիմական դեր է կատարել¹: Անդրկովկասի քաղաքական-տնտեսական միացումը Ռուսաստանին միաժամանակ լայն դռներ է բացում ուսանական առաջավոր կուլտուրայի համար, որը, ներս մտնելով Անդրկովկաս (նախ Վրաստան և այդա Հայաստան), լուսավորում է հասարակական կյանքի բոլոր անկյունները և կյանքի կոչում ազգային ինտելիգենցիայի առաջավոր ներկայացուցիչներին:

Ռուսական առաջավոր կուլտուրան Անդրկովկաս է մշտնում երկու ճանապարհով. հակացարական տրամադրություններ ունեցող մարդկանց «հարավային Սիբիր» կամ «տաք Սիբիր»² Անդրկովկաս և առաջին հերթին Թբիլիսի՝ «այդ ցարական իշխանության կենտրոնական կայանը Ասիայում»³ արտաբերու և անդրկովկասյան ժողովուրդների երիտասարդության մի մասի սուսական բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու և ապա նոր, բարձր գաղտփարներով զինված հայրենիք՝ վերադառնալու ճանապարհներով:

Այդ կերպ կովկաս են արտաբերել Պ. Բեստուվեր, Ն. Օրժիցկին, Բողոսյան, Ա. Պետելը, Բեստուվե-Մարչինսկին, Ա. Օգոնսկին և շատ ու շատ ուրիշները: Այդ ժամանակ Վրաստանում է գտնվել «Նեկից պատահախ» անմահ հեղինակ Ա. Գրիբոյեդովը, կովկաս են եկել նաև Ա. Պուշկինն ու Մ. Լեբնոստովը: Այս բարձր գաղափարների ու կուլտուրայի տեր մարդկանց, մասնավորապես ուս մեծագույն զորդների անձնական ծանոթությունն ու զաղափարական մերձեցումը Թբիլիսիի առաջավոր մտածողների հետ հակալական նշանակություն է ունեցել Անդրկովկասի քաղաքական-կուլտուրական վերածնունդի գործում:

¹ Մարքս-Էնգելս, Պետերստ, 1936, էջ 69:

² К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. XXIV, стр. 206.

10-րդ դարի առաջին տասնամյակներում վերջնականապես իրականանում է անդրկովկասյան ժողովուրդների դարավոր իղձը. Անդրկովկասը անքակտելիորեն կապվում է Ռուսաստանի հետ: Այդ կենսականորեն անհրաժեշտ մերձեցումը հայ, ադրբեջանցի և վրաց ժողովուրդներին ոչ միայն փրկում է ֆիզիկական ոչնչացումից, այլև լայն հնարավորություններ տալիս ծալք ատոմիանի քաջքայման գուռը հասած ժողովուրդներին՝ բուժելու թուրք և պարսից նվաճողներից ստացած վերքերը, և ուղիներ նշում տնտեսական-կուլտուրական կյանքի հետագա վերելքի համար:

Թուրք և պարսիկ ասիմիլյատորները դարեր շարունակ ապառառակելով Անդրկովկասը, սարկացնելով հայ և վրաց ժողովուրդներին, ամենավայրենի միջոցներով ցանկացել են բնաշնչել նրանց, ոչնչացնել այդ՝ աշխարհի հնագույն ժողովուրդների դարավոր կուլտուրան, վտանգի տակ դնել այդ ժողովուրդների ոչ միայն ֆիզիկական գոյությունը, այլև ոչնչացնել նրանց ստեղծագործական բեղմնավոր մշակույթը կիսադղ անմահ կաթոնները:

Անդրկովկասի շուրջը գտնվող երեք տերություններից (Ռուսաստան, Իրան, Թուրքիա) միայն Ռուսաստանն էր այն փրկարար ուժը, որ իր հովանավորության տակ առնելով անզոր կովկասյան ժողովուրդներին, միավորեց մասնատված երկրամասերն ու հույները, փշրեց ֆեոդալական փակ տնտեսու-

Հայտնի փաստ է, որ Պետերբուրգում գտնվող մի խումբ վրացիներ (Ա. Գանգբերով, Մ. Բարաթևա, Պ. Յիցիանով) պատասխանատվության են կանչվել ղեկարարի սաների զործով: Փաստեր կան այն մասին, որ Պուշկինը սերտ կապերի մեջ է եղել Պետերբուրգում ապրող վրացական մի շարք ընտանիքների հետ¹: Մոսկվայում բնակվող, ազգությամբ վրացի, պոետ Պյոտր Շալիկովը (Շալիկաշվիլի) նույնպես սերտ հարաբերությունների ու մտերմական կապերի մեջ է եղել Պուշկինի հետ²:

Պուշկինին անձամբ ծանոթ վրաց գործիչներն թվին են պատկանում նաև Փ. Յիցիշվիլին (1801—1832), Գ. Էրեստովը (1797—1858), Ն. Մերեթելեր (1798—1868) և այլն:

Քրիլիսիում ապրող ուսուցիչները միմյանց հանդիպել և հավարույթներ էին կազմակերպել Գանգբերովի կամ Ալեքսանդր Ճավճավաձեի բնակարաններում: Հայտնի է նաև այն, որ վրաց Խոսեանտիկ պոեզիայի սյուններից մեկը՝ Ա. Ճավճավաձեն բարեկամական կապերի մեջ լինելով Գրիբոյև-զովի հետ (Գրիբոյևզովը Ա. Ճավճավաձեի դստեր պնուսինն էր), միաժամանակ անձամբ ծանոթ է եղել Պուշկինին, Լերմոնտովին և Չապայեին: Այս ծանոթությունները և հաճախակի հանդիպումները ուղեկցվել են հասարակական-քաղաքական և ստեղծագործական փոխըմբռնումներով և ազդեցություններով: Բոլորի համար պարզ է, որ վրաց նոր պոեզիան (Ա. Ճավճավաձե, Գ. Օրբելիանի, Նիկոլայ Բարաթևաշվիլի) ծնունդ է առել, ոտքի կանգնել և ընթացել ուսուցիչական աշխարհում: Այն միայն պոեզիան, այլև արձակը, ինչպես նաև մա-

թույր իրենց գոյությունը ու հետագա զարգացմամբ պարտական են ուսական առաջավոր կուլտուրային և այդ կուլտուրայի մեծածնուն գործիչներին³:

Ռուս և Անգրկովկասի ժողովուրդների առաջավոր մարդկանց միավորել է անձնուրաց հայրենասիրությունը, խավորի ու ադիուսության, ցարական բռնակալական իշխանության դեմ պայքարելու նրանց ազատասիրական ոգին: Միաժամանակ նրանց գաղափարական մերձեցումը էլ ավելի պայծառ ու որոշակի է դարձրել ինքնատիպության, ինչպես նաև սեփական կալվածատիրության կողմից ճնշված ժողովուրդների ազգային ազատագրական պայքարի հետագա ուղին:

Ռուս մեծ ժողովրդի օգնությամբ ու ղեկավարությամբ ղեպի կոմունիզմ գնացող հայ ստեղծագործ ժողովուրդը երախտագրություններ է հիշում պարսից ստորացուցիչ լծից նրանեն ազատագրող ուսական զորքին ու նրա շարքերում կոլոզ գեկաբրիսներ Մ. Պուշկինի, Պ. Կոնովնիցինի, Պ. Քեստուժեի և շատերի անունները: Այդ մարտերին անձնական մասնակցություն են ունեցել նաև Ա. Գրիբոյևզովը և 1812 թվականի հայրենական պատերազմի ակտիվ մասնակից հերոս-պարտիզան Գենիս Գավիզովը:

Ուշագրավ է այն, որ ուսուցիչական առաջավոր մարդիկ այդ պատերազմը, ինչպես նաև այդ պատերազմի հետևանքով հայ ժողովրդի ազատագրումը, համարել են մարդասիրական, առաջադիմական գործ: Այսպես օրինակ, Ա. Գրիբոյևզովը իր «Եվգենի Օնեգինի» 1-ին դրուբը Այգաեղ հանդիպում ենք այսպիսի մի երկտողի՝

Пускай их Шаликов поет,
Любезный баловень природы.

Ինչպես հայտնի է, հետագայում Պուշկինը այդ երկտողը վերանայել է և դարձրել

Пускай их юноша поет,

և այլն:

1 Քրիլիսի կուլտուրական կյանքի համար նշանավոր երևույթ է հանդիսացել «Тифлиссские ведомости» թերթի հրատարակությունը, որի 1-ին համարը լույս է ածել 1828 թվականի հուլիսի 4-ին, Այդ թերթի փաստաթուղթ հիմնադրող Ա. Գրիբոյևզովն է (տես՝ Ի. Ենիկոլոպով, Пушкин в Грузии, Тбилиси, 1950, стр. 101):

¹ Տես «Իստորիա Պուշկինի», 1937, № 5, Գ. Լեոնիձեի հոդվածը:

² Շալիկաշվիլին Պուշկինին գրած (1836) նամակում արտասուք է հայտնում, որ մեծ պոետը եկել է իր սուս (Մոսկվայում) և իրեն սանք չի գտել: Ահա այդ նամակից մի հատված. «Жена и дочь моя разделили бы живейшее удовольствие моего сердца, разделяя со мной все чувства относительно бесценного и, присовокупляю, редкого для всех гостя!»:

Ս. Պուշկինի և Պ. Շալիկաշվիլու փոխադարձ մտերմության աստիճանը որոշող մի հետաքրքիր փաստ է, 1825 թվականին լույս է ածել

օրագրում նշել է, որ ռուսները, ազատելով հայ գյուղացի-ներին, վարում են մարդասիրական պատերազմ:

Պուշկինի ուղևորությունը ռուսական բանակի ետևից դեպի էրզրում նույնպես շատ բան է ասում այն անսահման հետաքրքրության մասին, որ ռուս առաջավոր մարդիկ տա-ծել են հանդեպ նոր ազատագրած երկրամասերն ու բնակչու-թյունը:

Այսպիսով, Կովկասը դառնում է ռուս ժողովրդի աստիճան դավանների ստեղծագործական լիցքի, բովանդակալից հե-տաքրքրության և ազատասիրական զգացմունքների հորդ ազ-բյուրը: «Թե՛ն դու գնաս Կովկաս,— գրել է Մ. Լեյնստրոմը իր ընկերոջը՝ Ռակակոն,— դու պե՛տա կվերադառնաս» նույն-պիսի մարեր են արտահայտել նաև Քելինսկին, Գոգոլը: Քե-լինսկին Կովկասը համարել է տաղանդների օրբան, նրանց պատեհկական հայրենիք:

Ահա այսպիսի պայմաններում, նոր հասարակական հա-րաբերությունների և ռուս առաջավոր գաղափարների Անդրը-կովկաս թափանցելու պայմաններում է սկսվում հայ և վրաց ժողովուրդների նոր գրականության ծնունդն ու զարգացման նոր էտապը: Հասարակական-քաղաքական ընդհանրությունը, երկու ժողովուրդների նույնանման պայմանները զարգացման նույնանման ուղիներ են նշում հարևան ժողովուրդների կուլ-տուրական վերելքի համար: Զարմանալի չէ Բարաթաշվիլի և Արովյան, այդ երկու մեծությունների ոչ միայն կյանքի, այլև գրական-ստեղծագործական գործունեության ընդհանրությու-նը: Ս'վ Արովյանը, և՛ Բարաթաշվիլին մտամոլորապես նույն միջավայրի, նույն հասարակական հարաբերությունների ծնունդ լինելով հանդերձ, պատահական զուգահեռություններ մտամոլորապես նույն կերպ էլ ավարտել են իրենց կյանքը: Առաջինը (ևս Արովյան, 1805—1848) դուրս է եկել տնից և այլևս չի վերադարձել՝ անորոշության մեջ թողնելով իր կո-րրուտյան պատճառները: Երկրորդը (Ն. Բարաթաշվիլին, 1817—1845) մահացել է Փյանջալում՝ շճանաչված, շքանհատված: Երկուսն էլ չի գործելու, պայքարելու և ստեղծագործելու կրք-ըով, նոր սուր գնելով հասունություն շրջանը, ընկնում են ան-հավասար պայքարի մեջ:

Հայ և վրաց ժողովուրդների առաջավոր մարդկանց հե-տաքրքրել և մտահոգել է ոչ միայն իրենց, այլև հարևան ժո-ղովրդի պատմական անցյալը, ներկան ու ապագան:

Փափառի կառավարչի օգնականի պաշտոնում գտնված ժամանակ Ն. Բարաթաշվիլին երկու անգամ եղել է Հայաս-տանում (Իրիչանում): Պետք է ենթադրել, որ Թբիլիսիում գտնված տարիներին նա իրեն շրջապատող մարդկանց մեջ ճանաչել է նաև հայերի, թեկուզև Արովյանին: Արովյանի՝ Զուբալաշվիլու հետ ունեցած ծանոթությունը որոշակի հիմք է տալիս այդ ենթադրությունն անելու: Զուբալաշվիլին հայտ-նի դեմք էր ճանաչված վրաց նշանավոր գործիչների կող-մից: Այս ենթադրությունները շատ ավելի հավանական են թվում, երբ ուշադրության ենք առնում Զուբալաշվիլու՝ Արով-յանին դրած երկտողի մտերմական տոնը:

Վաղագույն պարոն Մադիստրոս,— գրել է Զուբալա-վը,— արտակարգ բախականություն արտաճանց ինձ այս գեղեցիկ ոտմանի ընթերցումը: Որքան ինձ կպարտավո-րեցնեք, եթե կարճ ժամանակով նույնանման մի՛ բան ուղարկեք ինձ:

Մնում եմ Ձեր խոնարհ ծառա

դ-ր Զուբալաշվիլի:

ևս Արովյանը ճանաչել է Ա. Ծավճավաձեին և այս կաս-կածից վեր է, քանի որ «վերք Հայաստանի» վեպի ձեռագրի 102 ր էջի լուսանցքում մտախոտով նշել է «չավչաված» բա-ռը¹: Ինչ մտադրությամբ է ավելացված մեծ գործի ու պոե-տի ազգանունը, դժվար է հաստատուպես ասել: Ամենայն հավանականությամբ ցանկացել է նրա մասին գրել իր անմահ վեպի մեջ, օտկայն հասկանալի նկատառումներով զորուացել է այդ բանը անելուց: Ա. Ծավճավաձեն գեոևս 30-ական թվա-կանների սկզբին ցարական կառավարության կողմից լուրջ քաղաքական մեղադրանքով բանտարկվել և արտօրվել է Տամ-բով: Մինչ այդ էլ և հետագայում ցարական կառավարության

¹ Արովյանի Արթիվ, № 153:

² նույն տեղը, № 2:

կողմից կասկածելի կամ վտանգավոր ճանաչված մարդկանց (հիմնականում գեկաբրիստների) հետ ունեցած ճավճավաձեի մտտիկ հարաբերությունները պետք է որ հայտնի լինեն նաև Աբովյանին: Այս կերպ միայն կարելի է բացատրել Աբովյանի դրուշուիցները: Ար Աբովյանը ճանաչել ու գնահատել է Ա. Ճավճավաձեին, դա կասկածից վեր է, միաժամանակ, որ գրաքննչական նկատառումներով չէր կարող իր դիրքը վտանգի ենթարկել, այդ նույնպես պարզ է և հասկանալի ինչ վերաբերում է Ա. Ճավճավաձեին, այսպես հանրահայտ փաստ է, որ նրա օջախը նշանակալից դեր է կատարել ոչ միայն վրաց, այլև Անդրկովկասի առաջավոր մտքի կազմակերպման գործում: Այդ օջախում են իջևանել Գրիբոյեդովը¹ և շատ նշանավոր գեկաբրիստներ: Հաստատված է, որ Պուշկինը նույնպես 1829 թվականին հանդիպել է Ճավճավաձեին: Այն մասին, թե ինչպես երկու շաբաթ նա մնացել է Քրիլիսիում և շփվել վրաց հասարակության հետ, Պուշկինը խոսում է իր «Ճանապարհորդություն գնպի երգրում» աշխատության մեջ: Հասկանալի է, որ Քրիլիսիում գտնված օրերին նա չէր կարող չհանդիպել վրաց հասարակության այնպիսի մի նշանավոր անձնավորություն հետ, որպիսին Ա. Ճավճավաձեն էր: Ա. Ճավճավաձեի ժամանակակից ոմն Ֆադեև գրել է. «Все, что приезжало в Петербурга порядочного и сановитого, молодого и старого, составляло принадлежность гостинной князя»². Իր, ինչպես նաև հարևան ժողովրդի ցավով տառապող Աբովյանը չէր կարող անմասն մնալ այն ամենից, ինչ կատարվում էր իր շուրջը Քրիլիսիում գտնված տարիներին: Մասնավորապես ինքը՝ Ա. Ճավճավաձեն, պետք է որ հետաքրքրեր և նրա օջախում որոճվող հուզիչ հարցերը պետք է որ հուզվեին նաև Աբովյանին: Ահա թե ինչու լիապես համոզված ենք, որ մեծ լուսավորիչը անպայմանորեն ոչ միայն տեղյակ էր իր շուրջը դործող մարդկանց գաղափարներին, այլև անձնական մաս-

¹ Հետաքրքրական է նաև այն փաստը, որ «եկեղից պատահասի» առաջին բնագրությունը վրաց իրականության մեջ տեղի է ունեցել Ա. Ճավճավաձեի ստանդ:

² «Русский архив», 1891, т. III, стр. 256.

նակցություն է հանդես բերել Քրիլիսիի առաջավոր մտավորականության դործունեությանը:

Աբովյանը հայ ժողովրդի փրկությունը հարևան, ժամանավորապես վրաց ժողովրդի բախտից անջատ չի պահեցրացրել: Աբովյանի լայնախոհ հայրենասիրությունը իր մեջ է առել նաև հարևան բախտակից ժողովրդի պատմական անցյալը, ներխան ու ապագան: Այս իմաստով շարժանց ուշագրավ է այն հանգամանքը, որ Աբովյանը իր բաղձաթիվը տեղափոխություններին մեջ Հայաստանի և Վրաստանի մասին խոսում է նույն ջերմությամբ ու սիրով: Հաճախ է նա գործածում «ձեր աշխարհքից», «ձեր հայրենիքը», «մեր խալխը» և բոլոր գեպտերում աչքի առաջ ունենալով ոչ միայն Հայաստանը, այլև Վրաստանը:

«Հաղարիեշեն» երգիծական պոեմում Աբովյանը վրացիների մասին խոսել է այնպիսի հարազատությամբ ու զգացմունքներով, ինչպես նա կարող էր խոսել իր հարազատ ժողովրդի մասին.

Անտես, անճամալ տուն էլ որ մտես,
Սուփրի դլխին դու կնտես, կբազմես
Մեկ այթղ այթին, երեսդ երեսին
Ասեղիս՝ կուզեն տան իբանց հոգին:

Եթե Աբովյանը արյուն արցունքով է նկարագրել հարևան ժողովուրդների ապրած դառն փորձությունները պարտիզ և թուրք նվաճողների տիրապետության շրջանում, ապա այդ մեծ հումանիտան ու հայրենասերը ոչ պակաս շարժով վշտացել ու վրդովել է տեսնելով իր հայրենակիցների ու սերերացիների մարդկային իրավունքների և նրանց ազգային արժանապատվության ամենախոպիտ ձևերով ստնահարումը չեղող նոկնիկական ու զինվորական բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից: Նա իր «Հաղարիեշեն» պոեմում նկարագրել է այն արհամարհանքն ու թալանը, որ պաշտոնական անձիք թույլ էին տալիս բնիկների նկատմամբ:

¹ Ե. Աբովյան, Նրկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 169:

Ատաշի մարդն զսկսն ի՞նչ դիտի,
Որ քեզ հետ խոսա կամ համարձակի
Ի վսիսն անոր, դրազին կանգնիր, քե՛ք արա,
Զերդ լցրու, քո երկիրը զնա:

Տնքացի հայն ու վրացին, ըստ Արուվյանի, միամիտ են, «զգալօ՞ն» չգիտեն, կենսուրախ են ու հշտուրասեր, բայց կուշին գնում բիրտ ուժին և կառավարողների քմահաճույքներին: Ուրախությամբ է նկատել նրանց մարդկայնությունը, իսկ վիրավորված արժանապատվության պահին նաև նրանց գորեղ դիմադրությունը:

Լենց պատիսները լցրին ուշունցով,
Դուռակն ու շեյմա՝ եկան ձեն ատրով,
Մեր հայի մուշտին, մրտացու քացին
Կնպես թունդ դիպով նրանց զխի՛ն, փարին,
Որ ամեն մեկը հազար տեղ շարեց
Թխկաց, զրխկաց, հազաց ու պատկեց:

Այսպիսին են հայն ու վրացին, Արուվյանին հավասարապես սիրելի հարևան ու բարեկամ ժողովուրդները:

Կամ մի այլ տեղ ուղղակի գրել է. «Էլի մեր նաչար բարի վրաստանցիք»¹: Այս դեպքում «նաչար» բառը պետք է այնպես հասկանալ, ինչպես Արուվյանն է ցանկացել արտահայտելու Այդ բառով մեծ հումանիտար իր անկեղծ ցավակցությունն է հայտնել բազմաշարժար, հայ ժողովրդին բախտակից վրաց ժողովրդի նկատմամբ: Վերջին արտահայտությունը պերճախոս կերպով վիշտում է նրա մարդասիրությունը, նրա մեծությունը:

«Վերքի» մեջ մեծ լուսավորիչը շափազանց պատկերավոր է ներկայացրել հայ և վրաց միավորված ուժերի օգնությունը առաջին գորքին: Նրասխ, Զանգու, Գառնի և ապա Քուր դեաերք, խանութիցով և մի հզոր ուժ գարձած, թափվում են Կասպից ծովը, ջրարդ ու փշուր են անում պարսից նափերը...»:

Այդ նույն վեպում Արուվյանը խոսում է նաև այն մասին, թե որքան մեծ է եղել հայ ժողովրդի օգնությունը Վրաստա-

նին և հատկապես պատմական այն ժամանակաշրջանում, Լրբ հայերի փոքր ինչ հապաղումը կարող էր կործանարար հետևանք ունենալ վրաց ժողովրդի համար: Հեղինակը գրում է. «Ինչ որ պարսից կռիվ ժամանակ հայք արին, աստուծո է հայտնի... Քող բողի հիմար, անասոված մարդ հայոց սուր ձգի, թե մարդ չի՞մանա, բարերը վկայություն կտան: Հալրաթ որ մեկ օր մեկ արդար, անաշառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի. էն ժամանակը կեքի, թե հայք ի՞նչ արին, ինչ հավատարմություն են ցույց տվել տերությունը, ի՞նչ արին են վերածել:

Ով չգիտի, որ էս հազադին, ինչ ժամանակ Հասան-խանը արևմտից, Աբաս-միրզեն արևելից՝ ավազակի պես հանկարծ եկան, մեր սահմանը (սնոը) կոխեցին, մեր կողմը ամենևին խարար չունեին: Ընչանք աուք իրանց գորքը կհավաքեին, զգլբաշը կարող էր սաղ Վրաստան ոտի տակ տալ, եթե հայք չէին ամեն տեղ նրա ճամփեն կտրել»¹:

Բազմաթիվ անգամներ է Արուվյանը անգրադարձել Վրաստանին և վրաց ժողովրդին և միշտ էլ սիրով ու հարազատի շերմություններ արտահայտվել հարևանների ու նրանց հիասթափելի կերպի ու բարիքների մասին:

Վրաց երկրի փառաբանությունը շատ վշեր է գրավել հայ գրականության մեջ. Արուվյանի գործագրում խոսքերը, սակայն, նշանակալից տեղ են գրավում: Արուվյանն այն հաստատ համոզմանն է եղել, որ Վրաստանի բարեշին վիճակը, նրա ամբարների առատությունը, այգիների հարուստ բերքը, բնակչության կենսուրախ ու ապահով կյանքը հարևանի՝ հայ ժողովրդի բարեկեցության ու երջանկության հրաշխիքն է միաժամանակ:

Այդ արամադրությունն է արտահայտված մի բանաստեղծություն մեջ, որը Կախեթի փառաբանությունն է նվիրված.

Աստված Կախեթը շեն պահի հաստատ,
Նա մեզ տալիս է տրախ սիրտ, զվաթ:

¹ Խ. Արուվյան, Վերջ Հայաստանի, Պետհրատ, Երևան, 1939, էջ 143—144:

¹ Խ. Արուվյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 172:

Աստված երա բունյաթն միշտ հազար տարի
Հայիմ, դադրմի անպակաս անի
Հազար մեզ մեզ հազար փորձանքից,
Հազար շառից, շրից մեզ ազատ պահի:

Գրականության նոր շրջանի արշալույսը հայ իրականու-
թյան մեջ, որի ամիսաբերն ու ամենակարգապես դեմքը
Աբովյանն է, նույնպես պայմանավորված նոր հարաբերու-
թյուններով Այդ նոր պայմանների ծնունդն է նաև Քրիլի-
սիում բացված Ներսիսյան դպրոցը, որը, ի դեպ, նշանակա-
լից գեր է խաղացել հայ և վրաց ժողովուրդների փոխադարձ
ճանաչողության ու գրական-կուլտուրական մերձեցման
հարցում: Ավելորդ չենք համարում այստեղ նշել, որ այդ
նույն դպրոցում մայրենի լեզվի հետ դասավանդվել է նաև
վրացերեն լեզուն: Ներսիսյան դպրոցում աշխատել են վրաց
հայտնի պատմաբան-հնագետ Պլատոն Իոսելիանին, ինչ-
պես նաև Սուխանովը: Ներսիսյան դպրոցի այդ նախաձեռ-
նությունը չի պարփակվել իր պատերի ներսում: Եղած փաս-
տերից հայտնի է, թե ինչպիսի ջանքեր են թափել ոմանք,
այդ թվում ստանձնապես Աբովյանը, Իրպեսզի դավառական
դպրոցում սովորող այլազգի մանուկները առաջին դասարա-
նից սովորեն իրենց մայրենի լեզուն: Աբովյանը անշափ սի-
րել է մանկավարժական աշխատանքը և ոչ մի ջանք չի խնա-
ջել պատշաճ բարձրության վրա դնելու մանուկների կրթու-
թյան ու դաստիարակության գործը:

«Մանուկների կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է
ի՞նձ համար, — դրել է Աբովյանը, — և դեռ ավելի, քանի որ
սրանց մեծագույն մասն իմ ազգակիցներից են, իսկ մյուս-
ները՝ վրացի ու թաթար իմ երկրակիցները»¹:

Արդեն նշվեց, թե ինչպիսի հարազատություն է արտա-
հայտվել Աբովյանը «Երկրակիցների» մասին, որոնց նա չի
չոկել ազգակիցներից: Աբովյանի տեսչության շրջանում
Քրիլիսիի զավառական դպրոցում հայ և այլազգի մանուկ-
ների կողքին սովորել են նաև վրացիներ, որոնցից մի քանի-

— ի ազգանունները ավելորդ չի լինի հիշատակել: Բարրաձե
Միճեռն, Զափարիձե Պետրե, Ծանշին Ալեքսանդր, Կերեսե-
լիձե Իվան և այլն: Ահա այս մանուկների հոգսով է մտահոգ-
վել Աբովյանը, երբ գրել է.

«Դավառական դպրոցիս աշակերտների ծնողները, ընդ-
հանրապես ամենքը, խնդրում են ինձ, որ դպրոցիս նաև
առաջին դասարանում դասավանդվի իրենց որդիներին իրենց
լեզունները՝ հայերեն և վրացերեն: Նրանց այդպիսի ցանկու-
թյան կատարումը բխում է բարի նպատակներից, քանի որ
բարձր դասարան փոխադրված աշակերտները հետո դժվա-
րանում են հաշտություն սովորել իրենց լեզուն, որովհետև
նրանք սովորած չեն լինում այդ լեզուն առաջին դասարա-
նում»²: Այնուհետև, մեծ մանկավարժն ու մեծ քաղաքացին
համակիր լինելով ծնողների և «ամենքի» արդարացի պա-
հանջին, խնդրում է թույլ տալու մայրենի լեզվի դասավան-
դումը նաև առաջին դասարանում:

Աբովյանի ստեղծագործական կյանքը բազմաթիվ կող-
մերով շոշափում է հայ և վրաց ժողովուրդների ելքայու-
թյան ու համագործակցության գաղափարները: Հեռաքրքը-
րական է այն հանգամանքը, որ իր անմահ վեպով առաջ է
քաշել այնպիսի հարցեր, որոնք արժարժվել են նաև վրաց
մի շարք գրողների և այդ թվում Իվանե Արքայազնի, Ա. Ըավ-
ճավաձեի և Ն. Բարաթաշվիլու կողմից: Մինչև այժմ հայ և
վրաց բանասերների ուշադրությունից վրիպել է հատկապես
Խ. Աբովյանի և «Կալմասի» հեղինակ Իվանե Արքայազնի³
ստեղծագործական ու գաղափարական այն ընդհանրությու-
նը, որ դրսևորվել է նրանց պայքարի ու երկասիրությանե-
րի մեջ:

Աբովյանը, ինչպես նաև Իվանե Արքայազն, անհաշտ
պայքար են մղել տղիտություն ու խավարի դեմ:

Աշխարհարար լեզվով հյուսած և աշխարհիկ թեմաներով
զրված գիրքը հրամայական պահանջ էր դարձել հայ և վրաց
ժողովուրդների համար: «Ինչ կա եկեղեցու վրա յա, ասածու

¹ Խ. Աբովյան, երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 175:

² Գիվան Խ. Աբովյանի, 1940, էջ 111:

¹ Գիվան Խ. Աբովյանի, հ. 2, 1948, էջ 222:

² Իվանե Արքայազն Երեկո 2-րդի թռն ու Գեորգի 12-րդի որդին
էր (1768—1830):

ու սրբերի», — գրել է Արսլանը «Վերջ Հայաստանի» վեպի առաջաբանում: Հասկանալի է, որ «շեղքի» ու «բազաբացի» հարիւր հազարները ոչինչ չհասկանալով գրարարով գրված գրքերից, իրենց սրտին մտաւ, իրենց հուզող ուրիշ շարժանքով աշխտեց, պահանջել են իրենց համար հասկանալի լեզվով շարադրած գրքեր, որոնց մեջ արտացոլվեց իրենց կյանքը, աշխատանքն ու պայքարը:

Արսլանը հաղթահարելով գրքայնութունը և կենսակա- նորեն զգալով նոր գրականութեան անհրաժեշտութունը, գրել է.

«... Հույս ունեմ, որ ամեն մարդ էնդուր համար ավելի հալեալով կարգաւ, շունքի մեկ դժար բառ չկա միշտեմք՝ բո- լորը աշխարհաբար ա: Մախտուս ևս լեզվովը գրեցի, որ գե- ղըցիք էլ հասկանան, քաղաքացիք էլ: Միթե գեղըցիք մարդ չի՞, չի՞ ուզի՞՝ որ մեկ նոր բան էլ նա լսի, կամ կարգա՞՛ւ:»

Ինչպես Արսլանը, նույնպես և Իվանե Արքայազնը իրենց ստեղծագործութունների մեջ խարազանել են ոչ միայն ար- տաքին, այլև ներքին թշնամիներին, մասնավորապես տգի- տութեան ու խավարի ներկայացուցիչներին՝ պորտաբույժ հո- գևորականութեանն ու խավարամուլ կղերին:

Թե «Կալմաստայի» և թե «Վերջի» մեջ արտացոլված է ժողովուրդների պայքարը իրենց ֆիզիկական գոյութեան և անկախութեան համար:

«Կալմաստայ» երկի մեջ անարգանքի սյուներն է դամվել, մերկացվել ու ծաղրվել «անիծյալ Շահ-Աբրաքս», որը ավելի ու կոտորած է բերել Վրաստանին և բազմաթիվ վրացիներ գերնվարել իրան: «Կալմաստ» հեղինակը, տաղանդավոր գրող լինելուց բացի, նշանավոր զորավար է եղել և բազմաթիվ ան- գամներ ղեկավարել վրաց հեծելազորը կենաց մահու ճակա- տամարտերի: Նա մասնակցել է 1795 թվականի վրաց- պարսկական, ինչպես նաև երեք տարի անց վրաց-թուրքա- կան պատերազմներին: 1800 թվականին Կարսեթիա ներխու- ժած Օմար-խանի հրոսակախմբերի դեմ կոլովոլ ուսուսական հետևակի կողքին ճակատամարտ է տվել նաև վրաց հեծելա-

զորը Իվանեի ղեկավարութեամբ: Արքայազնի մտավոր կարո- ղութունների և գրելու ձիրքի մասին հանգամանորեն խոս- վում է ուսական ինքնակալութեան պաշտոնական անձանց՝ Կովոլինսկու, և Բուտկովի գեկուցագրերում:

«Կալմաստայ»-ն վրաց մոռաց իրականութեան արտացո- լումն է, իսկ մի անգ հեղինակը ուզակիրորեն իր գիրքը հա- մարում է «Վշտի ձայն»: Միաժամանակ այս արժեքավոր եր- կը ներծծված է շերտ հայրենասիրութեամբ և ազատասիրա- կան դադափարներով:

Հեղինակի վկայութեամբ Վրաստանում թագավորել է գունհլութունը և պետական պաշտոնյաների կամայականու- թյունները: Թե սրբան հետամնաց էր երկիրը, թե սրբան թըշ- վառ կյանք էին վարում մարդիկ, այս ամենը հրաշալի կեր- պով արտացոլված են «Կալմաստ» մեջ:

Արսլանի «Վերջը» պատմական իրադարձությունների վրա է խարսխված: Հեղինակը ականատես է եղել իր ժողո- վրդի անլուր տառապանքներին ու խոշտանգումներին: Նա տեսել է հայ շինականի դառն կյանքը ու լսել նրա մորձաքը օտարի բիրա կրնկի տակ: Աղասու, ինչպես նաև այլ հերոս- ների գործունեության մեջ հեղինակը խնայքել է պարսից սարկացուցիչ լծից վերջնականապես ազատագրվելու հայ ժո- ղովրդի բուռն ցանկությունն ու պայքարի անհազ տենչը: «Կալմաստ» նույնպես ճշմարիտ պատմություն է այն ամենի մասին, որին մասնակցել կամ տկանատես է եղել հեղինա- կը: Գրվածքի մեջ տեղ գտած գեմքերն ու դեպքերը իրական են, տիպական՝ ժամանակաշրջանի համար: «Կալմաստ» մեջ պատկերված են թագավորի որդիներն ու թոռները, վրաց ֆեոդալ բարձրաստիճան տների ներկայացուցիչները, ազնու- վականները, Լքիսթավները, հոգևոր հայրերը, պաշտոնական անձիք, վարչական պաշտոնյաները, մի շարք ազնվագարմ տիկիներ և այլ թվում նաև Իմերեթիայի թագուհի Աննան: Ճորտ գյուղացիները նույնպես բավականին ընդարձակ տեղ են գրավել այդ երկի մեջ: Աղոթութեամբ վրացի կալմասների կողքին նկարված են նաև հայ և թուրք կալմասներ Զարուր:

Քաճարաշվիտու և Քարաշի դեմքերը: Վերջիններիս աղջային պատկանելիությունը վկայում է պատմաբան Պլատոն Բոսե-լիանին:


Լեզուն այդ գրվածքի մեջ ուժեղ կերպով արտահայտում է 18—19-րդ դարերի անցման շրջանի վրաց լեզվի զարգացման առանձնահատկությունները: Այդ ժամանակ ժողովրդական կենդանի խոսակցական լեզվի նորմաները զգալիորեն տարբերվել են դեռևս սիրապետող հին գրական լեզվի նորմաներից: Իվանև Արքայադևի ստեղծագործության մեջ տարերայնորեն ներխուժել է ժողովրդական լեզուն՝ մասնակի (առավելապես արևելյան — վրացական) բարբառային առանձնահատկություններով: Նույնահենչուն մոտիվներ, միևնույն դատողություններն ու եզրահանգումները, առավելապես լեզվի հարցում, գտնում ենք թե՛ Աբովյանի և թե՛ «Կալ-ճափ» հեղինակի ստեղծագործություններում:

«Կերք Հայաստանին», ինչպես նաև «Կամասորան» իր ժամանակի ամենաառաջավոր գաղափարներ արտահայտող, ամենաակտուալ քաղաքական-գեղարվեստական երկերն են եղել: Քրական լեզվի աշխարհականացման համար մղած պայքարում անգնահատելի ծառայություն են մատուցել Աբովյանը հայ, և Իվանևն՝ վրաց ժողովուրդների համար:

Աբովյանի «Կերքին» ձայնակցում են նաև Ա. Ծավճավաձեի «Գյոթըա լիճը» և Ն. Քարաթաշվիտու «Բեդի քարթլիսա» (Քարթլիի քախտը) ստեղծագործությունները:

Ա. Ծավճավաձեի մանկությունը, պատանեկությունն ու հասուն շրջանի մի մասը անց է կացել Պետերբուրգում, ռուսական առաջավոր կուլտուրայի ներկայացուցիչների շրջապատում: Ռբալես ռուս-ֆրանսիական պատերազմի (1813—1814) մասնակից եղել է Փարիզում և այնուհետև երկար տարիներ բարձրատեման ղեկավորականի կոչումով ծառայել ռուսական բանակում: 1828 թվականին նշանակվել է Պարսկաստանից աղատագրած հայկական նահանգների կառավարիչ և միաժամանակ կատարել այդ երկրամասում գտնվող զորամասերի հրամանատարի պարտականությունները:

Հայաստանում գտնված ժամանակաշրջանում (մեկ տա-



«Վարենավորի» հայերեն առաջին թարգմանությունը «Կուռեկ» անսագրում

բուց մի քիչ ավելի) ոչ միայն շրջել է հայաստանի վայրերում,
ժանոթացել հայ գյուղացիների նիստ ու կացին, այլև ժր-
քան նախաձեռնություն է հանդես բերել գյուղատնտեսական
կուլտուրաների (բամբակ, չալթու, ցորեն և այլն) լայն տա-
րածման ուղղությամբ¹։ Բացի դրանից, Միսիսանա գյուղի
մոտ հայանաբերված պղնձի հանքերից հանքաքարի նմուշ-
ներ է ուղարկել Թբիլիսի ուսումնասիրության համար։ Այս
բոլոր առիթներով հեռանալով Երևանից և շատ ավելի ծանո-
թանալու նպատակով շրջագայելով Հայաստանի գեղեցիկ
ընկերության գրկում, իր աչքերով տեսել է շքնաղ Սևանը, որը
տաղանդավոր պոետին ցավատանջ մատուցների ու հուզող
խորհրդածությունների մեջ է գցել։ Պոետի աչքերի առջև վեր
են խոյացել հայ ժողովրդի անցյալի փառքը հիշեցնող սքան-
չելի կոթողները, մարդու ստեղծարար ձևերիով բարեբեր
դարձած այգիներն ու դաշտերը։ Այդ բոլորը մի պահ որպես
հուշ վերակենդանացել են պոետի աչքերի առջև, որից հետո
ենդոզ իրականությունը սթափեցրել է նրան, տեսանելի դարձ-
րել պարսից տիրակալության երախից մազապուրծ եղած հայ
շինականին՝ ավերակների ու անմշակ դաշտերի մոռալ ֆո-
նի վրա։

Հայ և վրաց առաջավոր գործիչների, այդ թվում նաև
Աբովյանի, Ա. Ծավճավաձեի, Ն. Բարաթաշվիլու ստեղծա-
գործություններում իրենց գեղարվեստական արտացոլումն են
գտել հարևան ժողովուրդների վիճակը, նրանց լավագույն ցան-
կությունները։

Այդ ստեղծագործություններից հիշենք Աբովյանի երկու
գործը² և Ն. Բարաթաշվիլու «Քարթլիի բախտը» պոեմը։

18-րդ դարի քառասունական-չոթանասունական թվա-
կաններին Արևելյան Վրաստանը պետական նշանավոր գոր-
ծիչ և զորավար Էրեկլե 2-րդ թագավորի գլխավորությամբ
ազատագրվում է պարսից դաժան տիրակալությունից և վաս-

¹ Հայաստանի կենտրոնական արխիվ, № 1595 (Ծավճավաձեի գրու-
թյունը Պատկերաբան)։

² Խոսքը վերաբերում է 1795 թվականի դեպքերի մասին Աբովյանի
բերած երկու գրաքար գործերին, որոնք տպված են «Երեկերի լիակատար
ժողովածուում», հ. 4, էջ 229—230։

սալահան ազդեցութեան տակ առնում հարևան Անդրկովկաս-
յան՝ Երևանի, Գանձակի, Նախիչևանի և Ղարաբաղի մու-
սուլման խանութիւնները:

Հայաստանը և հաջ ժողովուրդը ժշտապես եղել են վրաց
առաջավոր մտածողների ուշադրութեան կենտրոնում: Վրաս-
տանում բնակութիւն հաստատած հայերը իրենց զործարար
չանասիրութեամբ և անշահախնդիր նվիրվածութեամբ լավ
անուն էին վաստակել և վրաց ժողովրդի ուշադրութիւնն ու
օգնութիւնը հրավիրել հանդեպ պարսից և թուրք յաթաղա-
նի տակ դեռևս հեծող հայութեան մի սովոր մասի գոյու-
թիւնն ու ճակատագիրը:

Վրաց պատմիչների ու աշխարհագիրների թողած աշխա-
տութիւնների մեջ բազմապիսի տեղեկութիւններ կան
ինչպես հայերի, նույնպես և նրանց զբաղեցրած բնակավայ-
րերի, զբաղմունքի ու ժողովրդական տրամադրութիւնների
մասին: Հետաքրքիր է վրաց անանուն մի աշխարհագրի
(18-րդ դար) տված տեղեկութիւնները Երևանի ու նրա բը-
նակչութեան մասին, որ բերում ենք պրոֆ. Լ. Մելիքսեթ-Քե-
կի թարգմանութեամբ:

«Երևանը Իրանի (Երանի) մասն է՝ բեգլարբեգութիւն, ուր
առաջնորդում եղել է հայոց արքայի գահը (Յախտը): Այստեղ
նստած է բեգլարբեգ, սակայն ո՛չ ժառանգաբար: Եվ այստեղ
է հայոց կաթողիկոսի գահը (Յախտը): Սա (Երևանը) ունի
և՛ սար, և՛ դաշտ շատ, և պտղավետ-բերքավետ է: Այստեղ
բնակվում են շատ քրիստոնեւաներ, գավանութեամբ հայեր:
Սրանց (երևանցիների) իրկիրը մի տասը-տասնևհինգ տարի
սրանից առաջ վնասված էր լեզգիներից և ղուբաշներից, մին-
չև որ մեր (վրացիներիս) ձեռքը ընկան: Այժմ, կրք մեր ձեռ-
քի տակ ընկան, ամեն ինչից ապահով են և մեզ են ծառա-
յում, սակայն անշեն տեղեր ևս շատ ունեն: [Երևանը] գրո-
նրվում է հարավային կողմում, Քարթլիի և Բայազետի մի-
ջև: Մեր երկրի (Քարթլիի) և այստեղի ասորիներն իրար հետ
շփվում են: Մեր (Քարթլիի) և նրանց (Երևանի) միջև այն-
պիսի լեռ կա, որով սաք և քարավան է անցնում: Եվ [Երե-
վանը] ի վիճակի է գուրս հանելու երկու հազար ռազմիկներ,

սակայն սրանք ևս պատերազմներում ու մարտերում վախ-
կոտ են, անզեն են և մանավանդ անսիրտ:

Երևանի բնակչութիւնը Յալանի, գերութեան ու անմարդ-
կային հայածանքի է մասնված եղել պարսից նվաճողների
ու այլազգական այլ հարստահարիչների կողմից: Պատմիչնե-
րի երկերում երբեմն տեղ գտած առանձին մի բառ կամ ար-
տահայտութիւն շատ բան է ասում այդ ժողովրդի ըմբոստ
ոգու ու վրիժառութեան մասին:

Այս խմատով հետաքրքիր է վրաց պատմիչ Դավիթ Քաղ-
բատիոն արքայազնի ակնարկն այն մասին, թե ինչպես 1781
թվականին Երևանի Հուսէյն-Ղուլի խանի մահից հետո երեկ-
լե թագավորը խան է նստեցրել նրա որդի Ղուլամանին: Վեր-
ջինս, սակայն, ըստ պատմիչի վկայութեան, թեթևամիտ է
եղել և սպանվել է երևանցիների ձեռքով: Սպանութեան
փաստը շատ բան է ասում, սակայն պատմիչը բավարար-
վում է միայն այսքանով և հետո ավելացնում, որ թագավորի
հրամանով Երևան է մեկնել մեզ տրդեն հայտնի Միրզա
Գուրգինսա էնիկոյոյի աշխիլին՝ նոր խան նշանակելու նպա-
տակով:

Ուշադրով տեղեկութիւններ է հաղորդում նաև Բագրատ
Բագրատիոն արքայազնը Երևանի բերդը վրաց թագավոր
երեկլեի գործի կողմից պաշարվելու և մեծ թվով հայեր տե-
ղահան անելու ու վրաստանում, մասնավորապես Քրիլիսիի
արվարձան՝ Հավարարում բնակեցնելու մասին: Երևանի հա-
յերի մի մասի գաղթը Վրաստան կազմակերպված բնույթ է
կրել, որի նպատակն է եղել գոնե այդ ձևով ամոքելու նրանց
գառն վիճակը: Այսպէս նրանց մի մասը վրաց գործի կտ
բաշվելուց հետո ոչնչացման էր դատապարտված: Պարսիկները
չէին կարող ներել հայերի՝ հանդեպ վրացիներն ունեցած
չեքմ վերաբերմունքը, մանավանդ նրանց օգնութիւնը վրաց
զորքին: Իսկ վրաց գորքը երեկլե թագավորի գլխավորու-
թեամբ սաստել է պարսից նվաճողների ոտնձգութիւնները
և այդ կերպ ապահովել վրաց թագավորութեան անկախու-
թիւնն ու օգնութիւնը հարևան հայութեանը: Այդ նույն ժա-
մանակաշրջանում Արևմտյան Վրաստանում թուրքերի դեմ

հաջողութեամբ պաշարել է Իմերեթիայի թագավոր Սոլոմոն 1-ինը: Այդ ժամանակավոր բարենպաստ վիճակը երկար չի շարունակվել: Եվ Քուրբիան, և Պարսկաստանը անվերջ ասպատակել են վրաց հողերը, իսկ Գաղստանից ներխուժող ավազակաբարո խմբերը պարբերաբար ավերվածութեան ու թալանի են մատնել սահմանակից դաշտավայրի վրաց բնակչութեանը: Այդ հարձակումներն ուղեկցվել են գերեվարութեամբ: Այդ կերպ որպես դերի Գաղստան է ընկել, անհասարատապանքներ կրել և ի վերջո իրախուստով ազատվել նաև վրաց անվանի բանաստեղծ Գավիթ Գուրամիշվիլին: 18-րդ դարի վերջին տասնամյակներում, սակայն, Վրաստանի գրութունը շատ ավելի է վատացել: Անբարենպաստ արտաքին դրութունը կովկասը դարձրել էր թատերարեմ հարևան հողը պետութունների (Ռուսաստան, Քուրբիա, Իրան) ընդհարման համար: Վրաց ֆեոդալական միապետութունը իր մաշրամուտն է ապրել: Այդպիսի անզորացած մի երկրի պակաս վնաս չեն հասցրել նաև այն ռեակցիոն օտարամոլ տարրերը (գերազանցապես հակված լինելով դեպի Քուրբիան կամ Իրանը, իսկ ոմանք էլ քաղաքական կուրսությամբ անտեսելով երկրի խարխուլ ու անսլաշտպան վիճակը, ցանկացել են ինքնուրույն, անկախ քաղաքականութուն վարել՝ դիմադրելով շրջապատող բոլոր տերութուններին), որոնք ներսից խարխուլ են միասնութունը, դավաճանութունների ու մատնութունների դնով ցանկացել են վերջնականապես ստրկութեան մատնել սեփական երկիրն ու ժողովրդին:

Դարեր շարունակ ճորտացված վրաց աշխատավորութունը, ավեր ու թալանի հետ միատեղ, անտանելի շահագործման ու կեղեքման է ենթարկել անվերջ խրախճանքների մեջ ու անաշխատ կյանքով ապրող կալվածատերերի ու ամեն դուրսի հարկահավաքների կողմից:

Արյունաքամ եղած երկիրը ստիպված է եղել արտաքին օգնության դիմել: Երկրի վիճակին քաջատեղյակ ու նրսաբախտին ցավակից հեռատես մարդիկ, այդ թվում նաև և առաջին հերթին, էրեկլե 2-րդ թագավորը, արտաքին օգնության հարցում նախապատվութունը տվել է միայն Ռու-

սաստանին: Մի քանի անհաջող դիվանագիտական փորձերը վերջնականապես համոզել են վրաց կառավարող շրջաններին, որ Վրաստանը Արևմտյան Եվրոպայից որևէ սպասելիք չունի:

Այսպիսով Վրաստանի սուղև կանգնած էր մի աշտերնատիվ, կամ վերջնականապես կորցնել ինքնուրույնութունը, ստրկանալ մուսուլման տերութունների կրնկի տակ, այնչանալ, կամ թե չէ մտնել մեծ Ռուսիայի հովանավորութեան տակ, ռուս ժողովրդի աջակցությամբ ամոքել վերքերը, ճանապարհ հարթել երկրի էկոնոմիկայի ու կուլտուրայի զարգացման համար:

Իրանի շահ Աղա Մահմադ-խանը հնարավոր ամեն միջոցի դիմում է Վրաստանը ռուսական հովանավորութունից դուրս կորզելու և իր ազդեցության տակ գցելու համար, սակայն ապարդյուն: 1795 թվականին հսկա բանակի ղեկավանցած մուսուլման է վրացական սահմաններին՝ վերջնականապես հողի հետ հավասարեցնելու այն ամենը, ինչ վաշտում էին վրաց դուրսութունն ու անկախութունը: Կրճանիսիում տեղի ունեցած ճակատամարտերը թեև ավարավում են վրաց դրոբի ջախջախումով, սակայն Վրաստանը մնում է անընկճելի ու անպարտ: Վրաց անկախ դուրսությամբ մտահոգվել են ոչ միայն վրացիները, այլև հայերը, որոնք (հատկապես Թբիլիսիում և մի քանի այլ բնակավայրերում՝ Թելավի, Գորի, Սղնախի), դարեր շարունակ ապրելով այդտեղ, գտել էին իրենց երկրորդ հայրենիքը և տեղական բնակչության հետ սերտորեն մերվելով, առանց խտրականության հովանավորվել են կառավարող շրջանների կողմից:

Թբիլիսին շատ ավերածութուններ է տեսել, սակայն այն, ինչ նա տեսել է 1795 թվականին, գերազանցել է ամենին: Աղա Մահմադ-խանի մեծաքանակ հրոսակախմբերը ամբողջովին ավերել ու հրի են մատնել քաղաքը, սրի քաշել բնակչութեանը, գերեվարել երիտասարդութեանը: Այդ կոտորածներին ականատես ու քաղաքի պաշտպանութեանը մասնակից հայ բանաստեղծ Շամշի-Մելքոն այսպես է ներկայացնում այդ իրադարձութունները իր խաղերից մեկում:

Էճա ու հարգելի շրգա
 էն թաճուր դաման քաղաքիս.
 Հարիր հազար մարթով էկավ.
 էս Գուրջիստան քաղաքիս
 Պարսից մե անխնայ դուրս քնդավ
 դուշման քաղաքիս
 Մամմազ խանը էկավ տրվավ
 մի նիզամներ էս քաղաքիս.
 Եսիր անազ, կրրակ այնոզ
 չէր մե դաման քաղաքիս.
 Հարիր հազար մարթով էկավ,
 չկարաց ասնել քաղաքիս:

Բաղկենեն տարած եսիրն
 վո՛ւրն Աբարատան է հասի.
 Վո՛ւրն Եաքի, վո՛ւրն Եիրվան,
 վո՛ւրն Դաղխատան է հասի.
 Վո՛ւրն Ղուրա, վո՛ւրն Բաքի,
 վո՛ւրն Դարբանդ է հասի.
 Վո՛ւրն Քավրիզ, վո՛ւրն Փեշրուս,
 վո՛ւրն Խորասան է հասի.
 Նրանց նաչար հերըն ու մերըն,
 վո՛ւր մեկը վայ տան քաղաքիս:

Յիս մե տան դայիմացա,
 հենց գիզացի հերըն տարան.
 Մերըն ձեռնեմես խըլիցին,
 չուխտ քուր, չուխտ ախպերըն տարան.
 Հորըն թուփ ըսպանեցին,
 եսիր արին մերըն՝ տարան.
 Եամչի-Մելիզն շատ լաց էլավ,
 ասավ՝ վուրթիս ձեռես տարան.
 Վից զբզրուաշ ըսպանեցի,
 մին էլ մե մեծ խան քաղաքիս:

Թրիլիսարնակ հայերն ու վրացիները հավասարապես տուժել են այդ կոտորածից ու դերեվարությունից, ժամանակակիցների թողած պատմագրական աշխատություններում մեծաքանակ հիշատակություններ կան այն մասին, թե ինչպիսի հերոսական ջանքեր են թափել նրանք քաղաքի պաշտպանության արյունալի մարտերում: Դավիթ Բաղրատին արքայազնի գրի առած պատմության մեջ ուղղակի ասված

է. «...Տիգրիսի ավերման պահին նահատակվեցին... շատ տղամարդիկ և կանայք՝ ինչպես վրացիք, նույնպես և հայեր...»: Մի այլ տեղ նշում է թե ինչպես «... լեզղիները զարմանում էին վրացիների սիրազորություններից»: Պատմությանը հայտնի են նաև բազմաթիվ հերոսական այլ գեպքեր, երբ հայերն ու վրացիները քաղաքի պարիսպների ներսում անձնագոհաբար դիմադրել են պարսից և այլազգի զորաբանակներին և միայն իրենց դիակների վրայով թույլ տվել առաջ շարժվելու թշնամիներին: Մեծ փորձություններում է կոփվել հայ-վրացական բարեկամությունը, իսկ այն, ինչ անդի է ունեցել 1795 թվականին, ավելի անխախտ ու ամրակուռ է դարձրել նրանց դարերի պատմությունը ունեցող անբակտելի կապն ու անկաշառ եղբայրությունը: Նրանց՝ վրացիների ու հայերի համար հավասարապես սիրելի ու թանկ է եղել Թրիլիսին, Վրաստանն ու ժողովուրդների բարեկամությունը: Նրանց պատմության, հոգևոր ստեղծագործությունների ու երգերի մեջ բարձր է հնչել մարդկայնության և բարեկամության վեհ գաղափարը: Եվ որքան նրանք սիրել են բարին, գեղեցիկն ու մարդկայինը, նույնքան ատել են շարը, կեղծիքն ու դավաճանությունը:

Կենաց և մահու այդ ճակատամարտերում դուժմել են նաև դավաճաններ ու մատնիչներ, որոնք իրենց քամենլի արարքներով ճանապարհ են հարթել թշնամու համար: Դրանք եղակի դեմքեր են, վերնախավին պատկանող անձնավորություններ, որոնք իրենց անձնական շահերով ու փոքրագիտությամբ կուտակած անձնական վիրափորանքները վեր են գասել ժողովուրդների բախտից ու ճակատագրից: Այս երևույթը նույնպես չի վրիպել հայ և վրաց ժողովուրդների այդ դեպքերին ժամանակակից կամ հեռագա սերունդներին պատկանող լրջախոհ ներկայացուցիչներից:

Եամչի-Մելիզոի այդ իրադարձություններին նվիրած բանաստեղծության մեջ ահա թե ինչ է ասվում այդ մասին.

Մելիզ-Մելիզումն շուն դառնա,
 Զավազ-խուրք պատի քուչի,
 Քաղաքը վերանա արին,
 Տեղը շինեցին բաշուշի.

Այս պատմա-բանասիրական էքսկուրսից հետո միանգամայն հասկանալի է դառնում հայ և վրաց ստեղծագործողների (Արովյան, Բարաթաշվիլի) այն ջերմ վերաբերմունքը, որ նրանք արտահայտել են հանդեպ հայրենիքի անկախության համար անձնազոհության ելած հերոս ժողովուրդը և այդ ժողովրդի գլուխ անցած հերոսամարտերը ղեկավարող էրեկլի 2-րդը: Արովյանը գրաբարով գրած «Վերջին հրաժարական քաջազոր Արքային Հերակլի» բանաստեղծությանը և մի այլ գործով անհուն կակիծով պատմում է անհամար ոճիրների, այն ողբերգության մասին, որ սպրեկ է Քրիչիսիի բնակչությունը:

Ձայն աղազակի որոց և այրեաց փակի զլսելիս.
Դգրդայ Տփիսիս. ծփան բնակիչք ի հեղեղ արեան
Աբբայն Հերակլես քաջ նիզակակցօք յողբածայն լալիս
Քողու գիտ սթղա՝ Կախեթեան լանտառս լինի արասաան:

Ի դառն տագնապի հայր գորգի, զտուն մոռանայ թաղի.
Եւ սուր սեղանոն գառնաշունչ պարսկաց կառաղի անհարս
Ձորդի ի ծնողաց, զհարսն յառագաստ վարել իւր գերի
Աղայ Մահմադ-խան անսիրտ բռնավորն անողորմարար:

Ի տանկ ի տուն մաանեն դահիճք՝ մերկեայ զտուեր
Կոծ հեծեծանաց՝ զբարինս զալարէ՝ մանկանց, տղաչոց:
Լեռինք Տփիսիսայ հեկեկեն ի ցով բնակչաց անտեր,
Այլ անօրէնին սիրտ արենարբու ոչ շարժի յողբոց:

Գանձք, հարստութիւնք, կարուածք թանկագինք արա հարկանին.
Ապարանք շքեղ, զահուք փարթամաց թաղին ի մոխիր
Ջոր ձեռք մահարերք կործանել կամ խել անդ ոչ կարացին,
Անչազ հրեհին եղև կերակուր և անդարձ ոճիրն:

Արովյանի բառերով ասած՝ «շունչը բերանը հասած» հայրենան ժողովուրդների կրած տառապանքներն ընդհանուր են

1 Չամչի-Մեյիքի բանաստեղծություններից մեջբերումները, ինչպես նաև վրաց պատմիչների ասույթները քաղել ենք պրոֆ. Լ. Մեյիքեթ-Քեկե աշխատություններից:
2 Խ. Արովյան, Սրիկի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 229:

եղել թե՛ հայրի և թե՛ վրացիների համար: Մենք գիտենք, թե ինչպիսի սիրով է նա գովերգել ուսական փրկարար գեները, այն ուժը, որը փրկություն է բերել Անդրկովկասի ժողովուրդներին: Արովյանը մեծ հույսեր է կապել սուսների տիրապետության հետ և ցանկացել, որ նա իր «բարի ստղ» աշխարհից չկտրի, որպեսզի մեծ լուսավորչի հայրենիքն էլ ազդեցուն, մեծանա, դարդերը մոռանա:

«Հերակլես քաջի» գլխավորությամբ մղած վրաց ժողովրդի մահու և կենաց պայքարին նախած գրաբար ստեղծագործությունները թեմատիկ և իգեական առումով ձայնակցում են ն. Բարաթաշվիլու «Քարթլիի բախտը» պոեմի նյութին և գաղափարական սկզբունքներին: Ի դեպ հետաքրքրական է նաև հայ և վրաց ստեղծագործողների վերը հիշած երկերի գրվելու տարեթվերը: Արովյանը իր տողերը գրել է 1838 թվականին, իսկ Բարաթաշվիլին իր պոեմը՝ 1839 թվականին:

Բարաթաշվիլու պոեմի մեջ առաջին հայացքից թվում է, թե հեղինակը գրվածքի մեխը դարձրել է թաղավորի ու վրաց կառավարող շրջանների առանձին մարդկանց մեծարումն ու փառաբանությունը: Սակայն այդպես թվում է միայն առաջին հայացքից: Ըստ էության պոեմի խոր ուսումնասիրությունը այլ համոզման է բերում: Արվեստագետի ամբողջ ուժով հեղինակը ծավալում է գործունեության և հերոսամարտերի մի լայն ասպարեզ, որտեղ որոշող դեր է հատկացված հայրենիքի անկախության համար անձնազոհ պայքարի ելած ժողովրդին: Էրեկլե 2-րդը և այն մարդիկ, որոնք բաժանել են նրա կարծիքները, իրականացրել են այդ ժամանակաշրջանի համար բնորոշ ամենաառաջդիմական գաղափարները:

Այս իմաստով միանգամայն հասկանալի և ընդունելի են դառնում, թե՛ Արովյանի և թե՛ Բարաթաշվիլու ստեղծագործական պոլիարալի այն ոտմանտիկ գույները, որոնցով նրանք նկարել են թաղավոր-գորավորի համակրելի գեները: Էրեկլե 2-րդը մշտապես հայացքը հասած է եղել ղեպի ստաները, նրանց օգնության կանչել, նրանց օգնությամբ

պաշտպանել խարխլված վրաց պետականության սահմանները:

«Վաղուց էր, վաղուց սիրուն Երակելի
Արզեն սրռել բախար Քարթլիի», — գրել է Քարաթաշվիլին:

Վրաց պալատում բոլորը չեն, որ քաղաքական հեռատեսությամբ բաժանել են թագավորի հայացքները Ալյապես օրինակ, պատմությունից նույնպես մեզ հայտնի է, որ ազադ խորհրդատու Սոլոմոն Լեոնիձեն (ինչպես այդ ճշմարիտ կերպով պատկերված է նաև Քարաթաշվիլու պոեմի մեջ) հակված է եղել անկախ քաղաքականություն վարելու կողմը և մերժել ռուսների հովանավորությունն ու օգնությունը այդ գործում: Իր երկրի անխուսափելի կործանման վտանգի գիտակցումը թագավորին մղել է վճռական միջոցառումների, որոնք արտահայտվել են ռուսների հետ ծավալված սերտ համագործակցության մեջ:

Յհա թե ինչ է ստում էրեկչեն Սոլոմոնին.

Իսկ արդ, Սոլոմոն, ժամանակն է որ
Վրաստանն ապրի խաղաղ ու անզոր
Եվ հովանու տակ մեծ Ռուսաստանի՝
Վրեժ կուժի նա Պարսկաստանից:

Բայց մի մտանա իմ այս խոսքերը:
Այսօր թե վաղը Քարթլուն անպայման
Ռուս պետությունը կը կանգնի պաշտպան²:

Եվ իրոք, ռուսական պետությունը ոչ միայն պաշտպան է կանգնել Անդրկովկասի բախտակից և եղբայրական ժողովուրդներին, այլև վերջնականապես փրկել է նրանց գլխովին շախչախվելու, անխուսափելի կորստյան վտանգից, մի վտանգից, որը դարձրել շարունակ դամակլլան սրի պես կախված է եղել այդ ժողովուրդների գլխին:

Դարձյալ անդրադառնալով Արովյանի, Իվանե Արքայազ-

նի, Քարաթաշվիլու, Ա. Ճավճավաձեի ստեղծագործական ու գաղափարական ընդհանրությունների ու մտախկության հարցերին, կարծում ենք, որ ինչպես հայագիտության, այնպես էլ վրացագիտության համար դրանք կարևոր օղակներ են՝ երկու ժողովուրդների գրական-հասարակական համագործակցության դարերով ձգվող շղթայի մեջ: Միաժամանակ համոզված ենք, որ վերը թված մեծանուն դարձիչների կյանքի և պայքարի ներդաշնակությունը պայմանավորված է ոչ այնքան նրանց անձնական շփման, միմյանց հաղորդակից լինելու փաստերով (որոնք, դժբախտաբար, առ այսօր երկվան չեն հանված), որքան 19-րդ դարի առաջին տասնամյակների համար բնորոշ այն ցնցող իրադարձություններով, որոնք վերաբերում էին հավասարապես և՛ վրացիներին, և՛ հայերին:

1 Ն. Քարաթաշվիլի, Հատընտիր, Քրիիսի, 1946, էջ 60:

2 Նույն տեղը, էջ 54—55:

Հասարակական-քաղաքական մեծ իրադարձություններով հարուստ 60-ական թվականները աննախընթաց բեկման տարիներ են հանդիսացել նաև ուսական պետության ծայրամասերում ազրոզ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի և վրացիների համար: Այդ ժամանակաշրջանում Պետերբուրգի և այլ ուսական քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ և վրաց ուսանողությունը իր լուսման է մտցրել այն հզոր շարժման մեջ, որի գլուխ էին կանգնած մեծ մտածողներ Չերնիշևսկին, Գորբուչուբովը և ուրիշները: «Սովրեմեննիկի» շուրջը համախմբված ուսույցություն գեմոկրատների դադափարական ուժեղ ազդեցության տակ էին նաև ուս և այլազգի երիտասարդների հետ մեկտեղ հայ և վրաց «Թերթգալեույինները» (Թերթքից ջուր խրճողները — վրացերեն), այն երիտասարդները, որոնք սովորելու նպատակով Ռուսաստան էին մեկնել և կրթություն ստանալուց հետո դադափարապես և հոգեպես վերածնված հայրենիք վերադարձել՝ աննահանջ պայքար մղելու հասարակական կյանքի առաջընթացին խոչընդոտ հանդիսացող բոլոր կրեույթների դեմ: Չերնիշևսկին, ինչպես նաև իր գինակիցները ուսույցություն ոգի են ներշնչել և ուժեղ կերպով ազդել բոլոր քաղաքական իրադարձությունների վրա: Նրանց նպատակն է եղել գյուղացիական ուսույցության միջոցով տարալեզ բնակավայրական պետությունները: Ոչ թե վերևից թեևազրված «Նորտափրական կարգերի վերացում», այլ

գյուղացիական մասսաների կազմակերպված ապստամբություն, ուսույցիա, հին կարգերի խորասկում, գյուղացիության ազատագրում ներքևից: Առ այժմ հայտնի փաստերով ապացուցվում է Չերնիշևսկու մոտ (իսկ երբեմն նաև անձնական) հարաբերությունները հայ և վրաց երիտասարդների հետ: Հայ ուսույցիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանի կյանքի և քաղաքական-գաղափարական պայքարի պայծառ ուղին գեղեցիկ կերպով զուգակցվում է առաջին մասժողովների ուսույցիոն ուղուն: Որ Մ. Նալբանդյանը անձամբ ճանաչել է Չերնիշևսկուն, ոչ ոք չի փորձում ժխտել, սակայն դեռևս չեն գտնվել այն նյութերը, որոնք վերջնականապես ապացուցեին նրանց մտերմական հարաբերությունների փաստն ու առտիճանը: Այս դեպքում եթե ոչ փաստաթղթերը, գոնե իրողությունների առողջ տրամաբանությունը այլ բան չի ապացուցում, քան այն, որ նրանք անպայմանորեն պիտի որ հանդիպած լինեն միմյանց: Վրաց 60-ականների մասին (այդ կապակցությամբ) բավականին շատ փաստաթղթեր են մնացել: Նրանցից ոմանք անձամբ ծանոթ լինելով Չերնիշևսկուն, հաճախակի եղել են նրա տանը: Այդ վրաց երիտասարդներից հայտնի են Ն. Նիկոլաձեի, Գ. Մեքեթելու, Բ. Գորբերեժձեի և ուրիշների անունները: 1861 թ. Պետերբուրգում տեղի ունեցած ուսանողական ցույցի մասնակիցների թվում հիշվում են՝ նաև վերը թված անձինք:

Չերնիշևսկու մոտ են եղել ոչ միայն ուս, վրացի, այլև ուրիշ ազգությունների պատկանող մարդիկ, որոնց միավորել և դեպի այդ նշանավոր անձնավորությունն է ձգել դադափարական ներդաշնակություն ու ուսույցիոն պայքարի անհրաժեշտության գիտակցումը: Ն. Նիկոլաձեի հիշողությունները՝ մեջ հետաքրքիր տեղեկություններ կան Չերնիշևսկու, նրա տան հավաքույթների և այդ հավաքույթների մասնակիցների մասին:

1 «Հոլովոր»-ի 1861 թ. № 114-ում տղազրված է ցույցին մասնակցած և բանասերված ուսանողների լիվ ցուցակը:

* «Каторга и ссылка», 1927, кн. 5, Н. Николадзе, Воспоминания о шестидесятих годах.

Չերնիշևսկու հմայքը մոգական զորութեամբ զեպի իրեն է քաշել բոլոր այն մարդկանց, որոնց համար թանկ է եղել հայրենիքն ու ազգային լեզվի, գրականության ու գիտության ծաղկումը: Չերնիշևսկին նրանց ուսուցանել է պայքարել սոցիալական և ազգային բոլոր ճնշումների դեմ: Հասկանալի է, թե ինչու նրան շրջապատող մարդիկ այնպիսի վստահությամբ ու հավատով են ներշնչվել զեպի մեծ անույուցիոն զեմոկրատը և նրա նկատմամբ տաժաժ սերն այն աստիճանի զորեղ ու հմայիչ է եղել, որ նույնիսկ ոմանք բնագործակել են նրա խոսքերովն ու առողանությունը¹:

Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում բազմաթիվ այլ ազգությունների պատկանող ուսանողների հետ միասին սովորել են բավականին թվով հայեր և վրացիներ: Նրանց համատեղ ուսումնասիրությունը ուսական միջավայրում և այն ամբողջ աշխարհը ցնցող իրադարձությունները, որոնք արտահայտվել են ստրուկների շարժմամբ Ռուսաստանում², խիստ բարերար ազդեցություն են ունեցել հայ և վրաց պրոգրեսիվ երիտասարդության պաշտպանական զարգացման վրա: Նրանք ուսումնական մասնաճյուղների շրջանում պատասխան էին փնտրել այն բոլոր հարցերին, որոնք կենսականորեն ծառայել էին իրենց ժողովուրդների ներկան ու ապագան բախտորոշող ուղիների առջև:

Հայ և վրաց զեմոկրատները ուսական անույուցիոն զեմոկրատների գաղափարական լույսի տակ զործունեություն լայն ծրագրեր են կազմում հասարակական կյանքը վերափոխելու նպատակներով: Այդ գաղափարները գլխավորապես սկսում են խմորվել և աստիճանաբար հասարակական լայն շրջաններ ընդգրկել Թբիլիսիում և ապա Անդրկովկասի այլ մասերում: Թբիլիսին, հայ և վրաց մտավորականության «լուսավորության կենտրոնը», հիմնականում համբարական-

արհեստավորական այդ քաղաքը առաջնակարգ զեր է խաղացել Անդրկովկասի գաղափարական զարթոնքի և ապա հետագայում նաև անույուցիոն պայքարի զործում:

* * *

Հայ և վրաց ժողովուրդների գրական-կուլտուրական կյանքի մերձեցման, համագործակցության նշանակալից երևույթները նույնպես սկիզբ են առել անցյալ դարի 60-ական թվականներից: Մինչ այդ թվականները և դաժ առանձին փաստերը, որոնք նույնպես նշանակալից են և անժխտելի, չեն ունեցել այն թանձրությունն ու որակը, որ մենք տեսնում ենք հետագա տասնամյակների բնթացքում: Հասարակական նոր հարարությունները արմատապես փոխել են երկրի սոցիալական գեմքը և գաղափարական նոր հարցեր դրել գրականության, լեզվի, արվեստի և մյուս բնագավառների զարթիչների առջև:

Արվեստի ու գրականության մեջ հաղթանակել է ժողովրդական ոգին ու սոցիալ-հասարակական տարրը: Նոր խմաստով է դիտակցվել արվեստն ու գրականությունը, կսթեղական նոր սկզբունքներով են կազմավորվել արվեստի ու գրականության անցյալ և ներկա ստեղծագործությունները: Արվեստն ու գրականությունը, հաղթահարելով կղերական-պահպանողական ռեակցիան և դուրս գալով հասարակական լայն ապարեղ, ամբողջ զեմքով դարձել են զեպի կյանքը, զեպի մարզը, նրա սպրեկակերպն ու երազանքները:

Հայ և վրաց պրոգրեսիվ մամուլն ու զործիչները հսկայական զեր են խաղացել իրենց ժողովուրդների կուլտուրական կյանքի զարթոնքի ու հետագա զարգացման, ինչպես նաև զարավոր հարեանների փոխըմբռնման ու ստեղծագործական արժեքների փոխադարձ ճանաչողության զործում: Պատահական երևույթ չէ բժ. Սարգիս Բատումյանի նամակիչ և այնուհետև «Կարենավորի» թարգմանության հրատարակումը «Կոունկ հայոց աշխարհին» ամսագրի էջերում: Հայ

¹ Լ. Պանտելևի իր «Из воспоминаний прошлого», СПб., 1903 թ. գրքի 149 էջում գրում է. «...Тогда вообще замечалась несколько паяная подражательность. Напр., многие говорили а la Чернышевский, с постоянными ну-с, да-с, однообразной интонацией, как зачастую говорил Чернышевский, когда вероятно, думал о чем-нибудь совершенно стороннем».

² Մարքո-Էնգելս, 4, 1, Պետհրատ, 1936, էջ 197—198:


և վրաց առաջավոր մարզիկ գիտակցել են գեղարվեստական երկերը հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանելու հույժ պահանջը: Այս իմաստով շախազանց ուրախալի էր «Վազրենավորի» հայերեն թարգմանության երևան գալը հայ իրականության մեջ: Թարգմանության հեղինակը հետազոտիչը ձևով է մեկնարանում իրադարձությունը և այն շարժառիթները, որոնք ստիպել են իրեն կատարելու այդ շնորհակալ դործը: Ահա թե ինչ է գրել նա «Կռունկ հայոց աշխարհին» խմբագրությանը.

«Հաղորինը մէ գամ կու պատահի, որ մեր փայլ Թոուժը Եահմայի կամ օրագուլ բնուի, հազրենը մէ գամ կու պատահէր, որ զտնուիլ էր հայ՝ գրարար լեզու իմացող: Ատուած Երևի կամեցել էր, որ թիֆլիզեցեորու պապերը ու նրանց սերունդը կարգան ու շնասկանան բանի զօրութիւնը, գրեն ու շնասկանան, թե ի՞նչ են գրում. ժամումը շարականներ անգիր ասեն ու չիմանան իրանց ասածը»¹:

Մարգիս Բաստամյանի այս ուշադրության արժանի խոսքը լավագույն ձևով արտահայտում է ժողովրդական լայն մասսաների տրամադրությունները, տրամադրություններ, որոնք շատ ավելի վաղ են դրսևորվել և հանձին Արոյանի գտել իրենց քաջակորով ու անձնուրաց հեղինակին: Սակայն, մեծ լուսավորչի ազատատենչ գաղափարներն ու տաղանգավոր երկերը համաժողովրդական լայն արձագանք են գտել ու ասպարեզ նախնի դարձյալ 60-ական թվականներից քուկրսած հետագա տասնամյակների ընթացքում:

«Վազրենավորի» թարգմանության փաստը ինքնին նշանավոր երևույթ էր հայ և վրաց ժողովուրդների գրական կապերի պատմության մեջ: «Վազրենավորը» խոշոր դեր է խաղացել վրաց գրողների հետագա սերունդների ստեղծագործական կյանքի մեջ:

Վրաց ժողովրդի մեծանուն պոետ Եոթա Ռուսթավելին զենես 700 և ավելի տարիներ առաջ իր անմահ ստեղծագործության մեջ քանդակել է ժողովուրդների բարեկամության վեհ գաղափարը: Այդ մեծարժեք պոեմը հյուսված է մարդու



Իփա ճավճավաճե

¹ «Կռունկ հայոց աշխարհին», 1860, № 6:

ազատութեան ու բախտավորութեան, գեղեցկութեան հաղթանակի, բարու և արդարութեան, սիրո և հավատարմութեան, կամօքի և արիութեան, մարդասիրութեան ու հայրենասիրութեան հոգիչ մտախնայեցող: Ռուսթավելու «Վազրենավորը» իրապես ժողովրդական մի ստեղծագործություն է, վրաց ժողովրդի նվիրական զբաղմունքների հանրագիտարանը: Վրաց պոեզիայի հետագա ներկայացուցիչները, բոլորն էլ անխրտիթ ուսանել են նրա բարձր արվեստը, փորձել են հասնել նրան¹, սակայն այդ ոչ ոքի չի հաջողվել և նա մնացել է ամենազորեղ ու փայլուն աստղը վրաց պոեզիայի երկնակամարում: «Վազրենավորի» հմայքը տարածված է եղել ոչ միայն վրաց, այլև վրացերեն իմացող հայ հասարակության մեջ մինչև նրա թարգմանվելը: Սարգիս Բաստամյանը վկայում է, որ Քիֆ-լիսի բնակիչ հայերը սիրել և գնահատել են այդ նշանավոր ստեղծագործությունը: Ահա թե ինչ է գրել նա այս կառուցուցութեամբ իր նամակում. «Էս թղթի հետ կուրերեն մէ կուր բան, որը որ թարգմանված է վրացերենից: Գիրը, որակից վեր է առած էս կուր բանը, ասում է «ցցեծոս Եցեռեծոս», այսինքն՝ «Մարդ բնձու մորթին հազած»: Սրա գրողն է Եսթա Ռուսթավելը: Էս մարդը էնքան հարգեոր է էլի վրացիներու մեջը, որ վեց հարիւր տարի է սրա շինած բանը էստեղ կարգաւում է, ինչպես Հոմերոսի շինածները կարդաւում են ուրիշ ազգերի մեջ: Քիֆիլիզեցի հայքը միշտ սիրել են Ռուստավելի գեածները...»²: (Ընդգծումը մերն է — Մ. Զ.):

Եվ իրոք, Ռուսթավելին եղել է հայ մտավորականության սիրված հեղինակը, իսկ նրա անմահ պոեմում մեծ քանակութեամբ սփռված ափորիզմներն ու ժողովրդական իմաստութեան անսպառ դանձարանից անսփռված թևավոր խոսքերն ու արտահայտությունները լայն տարածում են գտել վրաստանում քնակված հայության արհեստավորական-աշխատավորական խավերում:

¹ Վրաց թագավոր-բանաստեղծ Քեյմուրազ առաջինը (1589—1663) իր «Վարդ քուրդիանի» պոեմի մեջ փորձել է իրեն բարձր դասել Ռուսթավելուց, սակայն Սուլի երկրորդ (1647—1713) թագավոր-բանաստեղծը «Քեյմուրազի և Ռուսթավելու վեճը պոեմի մեջ ընդունում է Ռուսթավելու «նեթառի մեծությունը»:

² «Նոսնիկ հայոց աշխարհին», 1860, № 1, էջ 493—494.

Եթե բարեկամութիւնն է «Վազրենավորի» գաղափարական ողնաշարը, ապա անձնուրաց հերոսութիւնն ու անսահման սիրն են սղեշնչում հերոսների հայրենասիրական գործունեութիւնն ու պայքումները:

Ահա վասիլ մի երկտող բարեկամութեան մասին.

ցեց սրձոյ մարտալու հոնն շքեցա Նեղա Մըրուս
ցնեց մոյցարցես սր ցմեքս, օջո տացոնի մըրուս.

Այս երկտողը Գ. Ասատուրի թարգմանութեան մեջ այսպէս է հնչում հայերէն.

Ձինատանում կա մի առած, գրված մի հին բարի վրա,
«Ով չի փնտրում բարեկամի՝ նա թշնամին է ինքն իրա»:
Կամ վերջնենք հերոսութեան մասին այս քառատողը.

«Մե՛նչ ավելի վատ այն մարդուց, որ կովի մեջ հետ է
նայում.

Որ երկմտում ու վախենում, մահվան մասին է մտածում
Վախկոտ մարդը ինչո՞վ է լավ կնոջից, որ թիւ է մանուկ.
Բարձր է ամեն վաստակից՝ վաստակել մի աղնիվ անուն»:

«Կորյունը կորյուն է, լինի էդ, թե արու» արտահայտու-
թիւնը լավագոյն ձևով դրսևորում է Ռուսթավելու ժամանա-
կակիցների վերաբերմունքը հանդեպ կինը: Կնոջ պաշտա-
մունքն ու կնոջ մեծարումը վրաց վերածննդի շրջանի բնորոշ
հատկանիշներից է և, հասկանալի է, «Վազրենավորը» լինե-
լով մի ամբողջ գարաշրջանի լավագոյն իղձերի ու ցանկու-
թիւնների, ռեալ հարաբերութիւնների գեղեցիկ մարմնացու-
մը, չէր կարող իր վրա չհրավիրել հետագա դարերում Վրաս-
տանում բնակութիւն հաստատած հայութեան մեծ ուշադրու-
թիւնն ու սերը:

Ս. Բաստամյանի «Կուռնիկ հայոց աշխարհին» գրած նա-
մակը մի կողմից ցույց է տալիս, որ դեռևս անցյալ դարի
կեսերին (կամ թերևս շատ ավելի վաղ) հայ մտավորականու-
թիւնը Հոմերոսի կողքին հիշատակել է Ռուսթավելու անունը,
և մյուս կողմից, որ վրաց բանաստեղծը սիրված ու գնահատ-
ված է եղել թրիլիսաբնակ (չեն բացառվում նաև հայաբնակ
վրացական մյուս քաղաքները) հայութեան մեջ: Ուշադրով է

նաև այն երևույթը, որ թարգմանիչը փորձել է բացատրել նաև
«Վազրենավորը» հայերի կողմից սիրվելու պատճառները: Այս
մի հատիկ փաստն արդեն բավական է ցույց տալու հայ-
վրաց ժողովուրդների գրական-կուլտուրական մերձեցման
ուղղութեամբ կատարած առաջին համարձակ քայլը, որը հե-
տագա տարիներին շատ ավելի հաստատուն ու բազմաբու-
վանակ է դառնում: «Վազրենավորի» հայերէն թարգմանու-
թիւնը՝ իրոք որ մեծարժէք և պատիվ բերող գործ էր հայ
մամուլի համար, սակայն այնտեղից չպիտի ելրակացնել, որ
մինչ այդ ոչինչ չի գրվել և խոսվել վրաց ժողովրդի ու նրա
կուլտուրական արժեքների մասին հայ մամուլի մեջ: Հայու-
նի են «Կովկաս» թերթում լույս տեսած մի շարք հոդվածները
և ուսումնասիրութիւնները վրաց կյանքի վերաբերյալ: Վրաս-
տանում և մասնավորապես Թբիլիսիում տեղի ունեցած իրա-
դարձութիւնները դեռևս անցյալ դարի 40-ական թվականնե-
րին հայ մամուլի ուշադրութեանն են արժանացել:

Այսպէս օրինակ՝ հայկական թերթում կարդում ենք վրաց
տաղանդավոր բանաստեղծ և զորավար Ալեքսանդր Ժալալա-
ձեի ողբերգական մահվան մասին¹: Նույն թերթում տպվել է
նաև հոդված վրաց Արքայորդի Թեյմուրազի մասին²: Այնու-
հետև մի լուրջ ուսումնասիրութիւն է լույս տեսել «Ճպագրու-
թիւն ի Վիրս առ ժամանակոք թագաւորաց իրեանց»³ վեր-
նագրով:

Արանք, իհարկէ, փաստեր են, եզակի երևույթներ և ժըլ-
տնէլ անհնար է, սակայն ինչպէս վերը հիշածները, նույնպէս
և այդ կարգի ալլ երևույթներ, իրավունք չեն տալիս հաստա-
տապես ասելու, որ զոյութիւնն է անեցիկ որոշակիորեն ծրա-
գրված և նպատակաւոր աշխատանք՝ երկու ժողովուրդների
կուլտուրական մերձեցման ուղղութեամբ: Որքան էլ դրանք
դրական երևույթ համարենք, իսկ այդպէս գնահատելու բոլոր

¹ «Կուռնիկ հայոց աշխարհին», 1860, № 6, էջ 494—495, № 8, էջ
665—667, № 9, էջ 755—757, 1861, № 10, էջ 781—783, 1862, № 2, էջ
159—162, № 7, էջ 557—566, № 11, էջ 830—840:

² «Կովկաս», 1846, № 45:

³ Նույն տեղում, № 47:

⁴ Նույն տեղում, № 49:

տվյալները ակնբախ են, այնուամենայնիվ, թե՛ քանակապես և թե՛ որակապես (վերջինս շատ ավելի օրոշող ու կարևոր է) այդպիսիք հեռու են այն ամենից, ինչ տեսնում ենք հետագա ասանաձյաղների հայ-վրացական գրական կադիրը բնութագրող նյութերն օտումնասիրելու ընթացքում: Այդ ուղղությամբ կատարված լուրջ ձեռնարկումների սկիզբը պետք է համարել անցյալ դարի 60-ական թվականները, իսկ «Վազրենավորի» վրացերենից հայերեն կատարած թարգմանությունը՝ այդ գործի հիմնարարը: Թարգմանությունը կատարված է բնագրից և ամենայն պատասխանատվությամբ ու բարեխղճ-ճոթյամբ: Լեզուն բարբառային է, վիրահայոց խոսակցական լեզվի նորմաներին համապատասխան: Սարգիս Բաստամյանը տիրապետել է նաև գրական հայերենին, սակայն, ինչպես իր ժամանակակիցներից շատերը, նա նույնպես նպատակ է ունեցել վրաց տաղանդավոր բանաստեղծի ստեղծագործությունը իր ժողովրդին մատուցել նրան շատ ավելի հասկանալի լեզվով: Մի՞թե հասկանալի չէ, թե ինչու նույն թվականներին Քրիլիստիան ստեղծագործող բազմաթիվ հայ մարդիկ նույնպես գրել են բարբառով: Գրանցից հիշենք թեկուր Միքայել Տեր-Գրիգորյանին, Նիկողայոս Փուլինյանին կամ շատ ավելի նշանավոր դեմք՝ մեծատաղանդ Գաբրիել Սունդուկյանին:

Քրիլիստայ բարբառը և վրաց լեզուն իշխող խոսակցական լեզուներն էին հայ արհեստավորության և մտավորականության ամենալայն շրջաններում ու կենցաղում: Գրական լեզուն թեև արդեն մտադ էր գործել, սակայն տիրապետող չէր, իսկ ոմանց համար մնում էր դեռևս քիչ հասկանալի, անգործագրելի լեզու: Այս մեկը կարևոր հանգամանք էր, որպեսզի հայ մտավորականությունը լրջորեն հաշվի առներ հասարակության լեզվական կարողությունները: Ինչ վերաբերում է «Վազրենավորի» թարգմանության լեզվին, ապա պիտի նկատենք, որ այդ գործում ոչ պակաս դեր է խաղացել մի ուրիշ բան ևս. ինչպես հայագիտության, այնպես էլ վրացագիտության մեջ անցյալում և ներկայումս քիչ թվով մարդիկ չեն զբաղվել երկու լեզուների համեմատության հարցերով: Այդ լեզուների մեջ շատ ընդհանրություններ կան (առավելա-

պես բառամթերքում) և այդ ընդհանրությունները շատ ավելի ակնբախ են դառնում, երբ համեմատության ենք դնում վրաց լեզուն և Քրիլիստայ բարբառը: Այդ բարբառի վրաց գործը է վրաց լեզվի ազդեցությունը: Այս առումով էլ, հասկանալի է, շատ ավելի դյուրին էր վրացերենից թարգմանել Քրիլիստայ բարբառով, քան գրական լեզվով: Լեզվական բառային ընդհանրությունների առկայությունը, այս դեպքում, անհամեմատ կհեշտացնեք թարգմանչի գործը:

Նեղվա-բառային ընդհանրություններն ու ոճական նմանությունները իրենց լայն տարածումն են գտել ոչ միայն առօրյա խոսակցությունների, այլև գերազանցապես ժողովրդական ստեղծագործությունների մեջ, որոնք ծնունդ են առել հայարնակ վայրերում և մասնավորապես Քրիլիստի արվարձան հանդիսացող Հավարբարում (Իսանի): Միանգամայն ուշագրավ են այդ ստեղծագործությունները և բաղմանշանակ:

Այսպես օրինակ, չիլիկ խաղ-երգի՝ «Հալալո, սամարթալո» բառերի հետ մեկտեղ հանդիպում ենք նաև
«Երեյան ջան, Էրեյան,
Գինի իմեմ գերանամ.
Խաղող ուտեմ զօրանամ»

երգին:

Վերջինս պերճախոս վկայությունն է նրանց նախկին քնակավայրի՝ Երեանի մասին ունեցած դեռևս թարմ հիշողության: Իսկ որքան ընդհանրություններ են հանդիպում հաներևույթ-շուտասելուկների, օրհնանք-բարեմաղթությունների, անեծք-հիշոցների, ողջույն-շնորհավորանքների, կենաց խոսքերի, կատակների, աշխատանքային բացականությունների, անական անունների, ոճերի և դարձվածքների մեջ:

Այժմ մի քանի օրինակ Հավարբարի (և Վրաստանում բնակվող հայության այլ համավածների) բնակչության մեջ դեռևս անցյալ դարերում շատ տարածված ու զործածական ոճական արտահայտություններից, առանկրից ու ասացվածքներից:

«Խնձորը կես անես, դրուստ իր մամեն է»: Ուզում են առել ճիշտ և ճիշտ իր հոր նման է: «Մամա» վրացերեն հայր

կնշանակի: Մուրթեղի պես կպիլ է, չէ պուկ զալի: Մուրթե-
լա (վր.) — ազրուկ: Որեւէ մեկի կովարարությունը ցույց տալու
համար ասում են «կուլի մամիզա է», մամիզա (վր.) — հորա-
քույր:

Մաղրածու մարդու մասին ասում են «կուլի կպցնող
օրմին է»: Այստեղ նույնպես մի բանը վրացիքին է, «կուլի»
(վր.) — պոչ: Կամ մի այլ հետաքրքիր երևույթ, ասենք՝ «Մա-
կըսվո», երբ միեւնույն բանը և՛ հայերին և՛ վրացիքին է, սա-
կայն բառակազմական մասնիկները «սա» և «ո» վրացիքինից
են: Այսպիսով, «Մակուլո» բառի արմատը հայկական է, իսկ
բառակազմությունը՝ վրացական: Այս բանը դործ է անվում
«ինչ ունեմ սակուլո» արտահայտության մեջ: «Երեխի լեզուն
դեղին կու իմանա», «դեղա» (վր.) — մայր: «Մերը ծերին
ծիլի ինք հասցնում», «ծիլի» (վր.) — հագիլ:

Նրբամե վրացական ամբողջական ոճեր ու դարձվածքներ
են ներմուծվել վրաստանի հայության խոսակցական լեզվի
մեջ: Հինքնք օրինակ՝ «վիս էկազրեքա» արտահայտությունը,
որի հայերեն թարգմանությունը կլինի՝ ինչ վայել է ինձ:

Ինչ որքան անական անուններ, անեծք-հիշոցներ, ող-
ջույն-շնորհավորանքներ և այլ դարձվածքներ են ստեղծվել
նույն սկզբունքով և գործածության մեջ մտել:

Դժվար է, երբեմն էլ անհնար բացատրել այն կամ այն ան-
ձական անվան կամ ազգանվան ծագման շարժառիթները: Մի
բան պարզ է սակայն, որ դրանք հայերի և վրացիների համա-
կեցության արդյունք են՝ մի կողմից և մյուս կողմից ցույց
են տալիս հայերին և վրացիքին լեզուների, մասնավորապես
խոսակցական արտահայտությունների իմաստաբանական-
ոճական մոտիվությունը:

Այսպես, օրինակ՝ «Գիլիրձինք» կամ «Կարսուկանինք» ան-
ձական ազգանունները ծագել են «Գիլա» (վր.) — առավոտ և
«Րձե» (վր.) — կաթ բառերից, ինչպես նաև Կարսուկանինք-ը՝
«Կարի» (վր.) — դուռ, «ուկան» (վր.) — ետեից բառերից:

Հավանաբար մեկի խայթող, կծող հատկությունն են նկա-
տի ունեցել, երբ նրա տղային կոչել են ձինձարի տղա. «Ձին-
ձարի» (վր.) — եղինջ. կամ ասենք՝ Ճիրվեուլ Սոյումոն «Ճիր-
վեուլի» (վր.) — կամակոր: Մեկ ուրիշի առնականության բա-

ցակառուցյունն ընթացելու նպատակով կոչել են վիրավորա-
կան Գեղալ նագոր անունով: «Գեղալի» (վր.) — էգ: Մեկ այլ
ուրիշին վիրավորելու, թե շոյելու նպատակով կանչել են Մա-
միս իմեզո անունով, այս դեպքում երկու բան էլ և «ձամա»
(վր.) — հայր, և «իմեզի» (վր.) — հույս, ապավեն, վրացի-
քեն են:

Փվենք մի քանի այլ անուններ ևս. Գամծվարո, Քեթրո,
Ճիանո, Յիերո, Կովլի և այլն, որոնք բոլորն էլ վրացիքին են:

Մի այլ հետաքրքիր երևույթ ևս, վրացիքինից փոխ առած
բառերն ու դարձվածքները, եթե ոչ ամբողջովին, ապա դոնե
մեծավ մասամբ վրաստանի հայության խոսակցական լեզվի
մեջ են մտել ոչ զրական վրացիքին լեզվից: Սա նույնպես
հասկանալի է և հազիվ թե հարկ լինի բացատրության: Հա-
րևան-տրիպոլիսի խոսակցական լեզուների հիմքում ընկած
էին բարբառները, որոնք և շատ ավելի հարադատորեն էին
արտահայտում նրանց սլատիերացումներն ու ըմբռնումները:

Քաղաքային ֆուլկլորում և մասնավորապես հեթիաթներում
մեծ թիվ են կազմում վրացիքինից փոխ առած բառերն ու ար-
տահայտությունները: Ամենուրեք հեթիաթներում և զրույցնե-
րում հանդիպում ենք «ղիզիփուլիք»՝ խորթ մոր փոխարեն և
«քուշաուր»՝ փոսփուլավոր բառերի փոխարեն: Իսկ որքան են
զործ անված՝ գենացվալե, բուշա, ուփրո, մոգոնած, կիղեվ և
այլ բազմաթիվ բառեր:

Այդ ամենը իր մեծ մասով տեղ գտավ նաև Թբիլիսիի բար-
բառով դրված նախասունդուղյանական և հենց հայ մեծ գրա-
մատուրգ Գ. Մունդուկյանի կողմից գրած գրամատիկական
ստեղծագործություններում: Հայ արհեստավորությունը վրաս-
տանում և մասնավորապես Թբիլիսիում իր մեծարժեք լուծան
է մուծել քաղաքային ֆուլկլորի ստեղծման և զարգացման
գործում: Արհեստավորության աշխատանքի բնույթն ինքնին,
մինչ արդյունաբերական կապիտալիզմի զարգացման շրջա-
նը, համապատասխան ձևով պայմանավորել է արհեստավո-
րի ոչ միայն ժամանակն ու համեմատաբար բարեկեցիկ վի-
ճակը, այլև հնարավորություն է տվել ուրախ ժամանցի ու
ստեղծագործության: Եվ զարմանալի չէ, որ աշուղների, ինչ-
պես նաև այլ կարգի ստեղծագործողների մի զգալի մասը ար-

հետազոտական-աշխատավորական ծագում ունեն: Այդ աշուղները կամ պարզապես երգասածները, որոնց լայն տարածում գտած երգերը միշտ չէ, որ իրենց հորինածն էին, այլ նաև ժողովրդից, կատարել են բազմաթիվ գործեր հայ-վրացերեն կամ հայ-վրացերեն-թուրքերեն լեզուներով:

Ահավասիկ մի նմուշ հայ-վրացերեն հյուսած երգերից.

Երթի քալի, երթի վածի շուրջ զնում է օ:

(Վր. մեկ աղջիկ, մեկ տղա)

— Քալո, կոկա միդմա դադե, մեկ պաշ անիլ տու օ:

(Վր. աղջիկ, կուժո մի կողմ դիր)

— Քա ևար կարած, էգ ինչ ասիր, դեղես կու ծծն օ:

Մակրատելի խելթ ուժիրամս, մաղս կու կտրե օ:

(Վր. մկրատը ձեռքին ունի բռնած)

Շատ ավելի հետաքրքիր են այն երգերը, որոնք ստեղծված են երկուսից ավելի լեզուներով: Պիտի նկատել, որ երկ-լեզվյան և մյուս երգերը անխտիր բոլորն էլ լիբիկական երգեր են և սիրաչին թեմա ունեն: Մի այլ բացատրություն նս. յուրաքանչյուր տող ամբողջական միտք է պարունակում, սակայն, ասենք, այդ տողի մեջ եղած 8 կամ 10 բառերից մի խումբ բառեր հայերեն են, մի այլ խումբ՝ վրացերեն և երրորդ խումբը՝ մի այլ լեզվով:

Մի հատված էլ բերենք երեք լեզուներով հորինած Գյուրգար-Սողու հինգ տանից բաղկացած երգից.

Երբ որ բեզ տեսա, իմով դգեսա,	Ման սովորմ սանա
(Վր. հենց նույն օրը)	(Յուրբ. ևս սիրեցի թեզ)
Եչիեդ վառվեցի, խում դամեցի,	Չյուում դիվանա
(Վր. արձագանքիր)	(Յուրբ. դարձա խելագար)
Պատկերդ կրակ է, մե դամե դազ է,	Նեջա փարվանա
(Վր. ինձ վառեցիր)	(Յուրբ. փյուծիկի նման)
Չանդ ուրուլի սիարուլի,	Թանգար ջեղրանա
(Վր. ուրախ)	(Յուրբ. կնաման եղնիկին)
Փու հատն ո՞վ է, վերա վրպովն,	Գյազդըմ հար յանա ¹ :
(Վր. շգտա)	(Յուրբ. ման եկա ամեն կողմ):

¹ Գ. Տեր-Աղեքսանյան, Քիֆլիսեցոյ մտավոր կյանքը, մասն Ա., քանաստեղծությունը, Քիֆլիս, 1885:

² Հայ աշուղներ, Երևան, 1937, էջ 61:

Գեղարվեստական երկերին զուգահեռ հայ պարբերականներում նույն թվականներին հանդիպում են վրաց ժողովրդի կյանքի հետ կապված այլ հարցերի լուսաբանություններ ու մեկնաբանություններ: Հայ մտավորականությունը հետաքրքրել է վրաց ժողովրդի պատմությունը, նրա անցյալի հետնական դրվագները, օտար նվաճողների դեմ նրա մղած կենաց-մահու ճակատամարտերը, նրա ազատասիրական ուղին ու մարդասիրական վերաբերմունքը հարևան և այլ ժողովուրդների նկատմամբ: Այդ պատմությունը միաժամանակ հշուժված է բախտակից հայ ժողովրդի պատմության հետ ունեցած բազմաթիվ դեպքերի և դեմքերի սերտ համագործակցության և ընդհանրությունների նրանցներով: Այս իմաստով հետաքրքրությունից զուրկ չէ ուսանողներից թարգմանված և «Մեղու Հայաստանի» մեջ տպված «Համառոտ տեսություն Վրաստանի» աշխատանքը¹:

Նույն պարբերականում Մ. Ք. Մ. ստորագրությամբ լույս է տեսել մի այլ ուսումնասիրություն՝ «Ընդհանուր բառեր հայ և վրաց լեզուների մեջ» վերնագրով:

Վրաց առաջավոր մտավորականությունը նույնպես հետաքրքրել է հայ աշխարհը, հայ ժողովուրդը, նրա կուլտուրան, մամուլն ու գրականությունը: 1860-ական թվականներին լույս տեսնող վրաց մամուլում, այսպես օրինակ՝ «Գուլիսի դեդա», «Յիսկարի», «Սաքարթվելոս Մոամբե» և այլ պարբերականներում հանդիպում են բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ, տեղեկություններ, հաշտարարություններ և նույնիսկ բանաստեղծություններ, որոնց մեջ արտահայտվում են աշխարհաբար լեզվի «օրինական հաղթանակը», նրա հույժ կարևորությունը հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման հետագա առաջընթացի համար², Քրիլիսիում կազմակերպված հայերեն բնագրությունների, հայ թատերասեր հասարակության մեծ ոգևորության մասին, այն մասին, թե ինչպիսի սիրով ու հաճույքով է հաճախում կամ մասնակցում հայ հասարակությունը այդ ներկայացումներին³: Վրաց մա-

¹ «Մեղու Հայաստանի», 1860, № 21:

² «Սաքարթվելոս Մոամբե», 1863, № 6, էջ 46—48:

³ «Յիսկարի», 1863, № 1, էջ 147—151:

մուսուլման զետեղիված են նաև գրախոսականներ Կիրակոս Գան-
ձակեցու¹ և Ներսես Լամբրոնացու² աշխատութիւնների վրա-
ցերեն թարգմանութիւնների մասին և այն կարեւորութեան
մասին, որ նրանք ներկայացնում են վրաց ժողովրդի պատ-
մութիւնն տառամասիրողների համար:

Տպված են բազմաթիվ նամակներ ու տեղեկութիւններ
Հայաստանի այլևայլ վայրերից, եղանակի, բերքի³ (հրաշտ,
ձորիխ, կարկուտ) մասին, ինչպես նաև հայ մամուլի⁴, հայ-
կական դպրոցների⁵, ապագրութեան և բազմաթիվ այլ բնա-
դավաններից: Արտակից բարեկամութեան արտահայտութիւն
է նաև «Յիսկարի»-ում տպված Իվանէ Սոմխիէի «Քիերքի և
Արագի գրույցը» բանաստեղծութիւնը⁶:

* * *

Յուրաքանչյուր ժողովրդի հոգևոր կյանքի արթնացման ու
հետագա զարգացման գործում մեծ և անգնահատելի է այն
զեքը, որ խաղացել են թատրոնն ու դպրոցը: Մասնավորապես
գարոցն է եղել այն հիմնական օջախը, ուր տարիներ շարու-
նակ տասնչակ ու հարյուրավոր սերունդներ են կրթել իրենց
միտքը, դաստիարակել կամքն ու ձևավորել աշխարհայացքը:
Այս իսկ տեսակետից միանգամայն հասկանալի է, թե ինչու
գարոցի՝ լավագույն սկզբունքներով կազմակերպման և նրա
բովանդակութեան հարցերը միշտ էլ եղել են դարի առաջա-
վոր մտածողների ամենալուրջ ուշադրութեան կենտրոնում:

Մանկավարժական մտքի, որպես գիտութեան, զարգացման
գործում մեծ և անգնահատելի է ուսու նշանավոր մանկավարժ
Կ. Դ. Ուշինսկու ներդրումը: Ուշինսկին իր առաջավոր ման-
կավարժական հայացքներով հակայական հեղաշրջում է կա-

տարել ամբողջ Թուսիայի կրթական ողջ սիստեմի մեջ: Նրա
համարձակ նախաձեռնութիւնները, որոնք ներթոփած էին ուսու-
լուցիոն ղեմնկրատների լուսավոր գաղափարներով, լայն
արձագանք են գտել նաև Ռուսաստանի ծայրամասերում ապ-
րող ժողովուրդների մեջ: Հանձինս Յա. Գոգեբաշվիլու ու Ղ.
Աղայանի հայ և վրաց ժողովուրդներն ունեցել են իրենց
լավագույն մանկավարժ ու գրող ուշինսկիները, որոնք 60-ա-
կանների պայծառ գաղափարներով զինված, հակայական դեր
են խաղացել մի կողմից նոր դպրոցի կազմակերպման ու
կրթական ողջ սիստեմի բարելավման գործում, մյուս կողմից
կրթական ու քառասիրակալական բարձր նպատակներ հետա-
պնդող գեղարվեստական երկերի ստեղծման գործում: Թե՛
Յա. Գոգեբաշվիլին և թե՛ Աղայանը իրենց մտավոր զարգաց-
մամբ պարտական են ուսական առաջավոր միջավայրին և
այն ամենին, ինչ գալիս էր 60-ական թվականներից, դարի
ղեմնկրատական գաղափարներից: Աննշան տարբերութեամբ և
Յակոբ Գոգեբաշվիլին (1840—1912) և Ղազարոս Աղայանը
(1840—1911) նույնչափ տարիների կյանք են ունեցել, իսկ
նրանց գրական-մանկավարժական գործունեութիւնը բազմա-
թիվ կողմերով համընկնում է:

Ինչպես Գոգեբաշվիլին է նկատել, Անդրկովկասում ապրող
հայրենասերների գործողութիւնները զնայել են ազգային
այն ուղիով, ինչ Չերնիշևսկու կողմից նախագծվել էր ուկ-
րաինացիների համար, այսինքն՝ ազգային լեզվի, գրականու-
թեան և գիտութեան ծաղկման ուղիով: Ղ. Աղայանը Մոսկվա-
յում և ապա Փետերբուրգում զտնված տարիներին անմիջակա-
նորեն հաղորդակից է եղել ռուսացիոն ղեմնկրատների գաղա-
փարներին: Մասնավորապես Միքայել Նալբանդյանի հետ
ունեցած նրա հանգիպումները (Թբիլիսիում և Մոսկվայում)
անջնջնչի հետք են թողել նրա ոչ միայն գաղափարների ձև-
վորման, այլև գրական-մանկավարժական առողջ սկզբունք-
ների ստեղծման վրա: Աղայանը նույնպես ընդունել է, որ իր
կրթութեամբ ու զարգացմամբ պարտական է «Փետերբուրգի
մտավոր վերածնութեան շրջանին» և այնուհետև ավելացրել
է, որ ինքը զանվելով այդ միջավայրում «Ձէր կարող շփոխ-
վել», լվերափոխվել, քանի որ «Ռուսաստանի հայ բանասեր-

¹ «Սարգսիկյու Մասրե», 1862, № 9, էջ 58—75:

² Նույն տեղը, 1866—67, էջ 176—211, էջ 233—254:

³ «Գուժնիս զեղա», 1862, № 17, էջ 122, 1867, № 7, էջ 27 և այլն:

⁴ «Յիսկարի», 1864, № 9, էջ 35—59:

⁵ Նույն տեղը, 1862, № 6, էջ 78—83:

⁶ Նույն տեղը, 1865, № 1, էջ 22—26:

ներք ալ կերպ մտածել չէին կարող, քան որ մտածում էին իրանց ժամանակակից ուսու բանասերները¹։ Աղայանի վկայութեամբ ներնիսյան դպրոցի աշակերտները սրտատրոսի քապասել են «Հլուխափայլի» համարներին՝ Կոմս Էմմանուէլի գրվածքները կարդալու, կամ ինչպես Աղայանն է ասում՝ «Ճառագղի» մրուրի փոխարեն «նալրանդայանի կովական գոչունը»² լսելու Գ. Աղայանը «Էմ կյանքի գլխավոր դեպքերը» մեմուարային աշխատութեան մեջ իր՝ Մոսկովայում դաճած կարճատև տարիները համարում է ուղղակի իր «մտաշար դարգացման ոսկեդարը»³։

Ինչպես Գոգերաշվիլին, նույնպես և Աղայանը տարիներ շարունակ գրական-մանկավարժական դործունեութիւնը ծավալել են Քրիլիսի քաղաքում։ Նրանք սկզբնական շրջանում եզակի են եղել, փայլուն դեմքեր, մասնավորապես այն միջավայրում, ուր գերազանցապես թաղավորել է կղերա-պահ-պանողական ուսուցիչին միայն, իսկ դպրոցական դործը, շնչին քացառութեամբ, գտնվել է տեր-թողիկյան տիպի տղան ու խափարածոլ «մանկավարժներին» կործանարար իրավասութեան տակ։ Նրանց երկարամյա գրական-մանկավարժական գործունեութիւնը սերտորեն միահնչուվել է հասարակական լայն գործունեութեան հետ, և այդ ամենը միասին որպես մի ամբողջութիւն ներկայացնում է նրանց՝ ստեղծագործող-քաղաքացու համակրելի ու արժեքավոր դեմքը։

Թե՛ Գոգերաշվիլու և թե՛ Աղայանի մանկավարժական-գրական նորարարութիւնը հանդիպել է շինտվնիկական ապարատի, ուսուցիչին գրականագիտութեան, հոգևորականութեան և տգետ ուսուցչութեան ուժեղ դիմադրութեանը։

Գոգերաշվիլին իր ողջ գործունեութեան ընթացքում, մազաչափ անգամ շնորհակալ իր քնտրած դժվարին ուղուց, աղնըվորեն ծառայել է իր ժողովրդին, ասելով՝ «Սա ամեն ինչ ստացել եմ ժողովրդից, և այն ամենը, ինչ ես ունեմ, պատկանում է նրան»։ Հենց միայն այն հանգամանքը, որ նա ոչ

միայն հետո է կանգնել նացիոնալիստական կործանարար ամեն մի մտայնութիւնից, այլև քաղաքացու և ստեղծագործող իր անմար եռանդով պայքարել է ժողովուրդների ոգուն խորթ օտարատեցութեան և նրա բոլոր գրականութեան դեմ, խոսում է նրա մեծութեան և իր ժողովրդի լավագոյն զավակը լինելու օգտին։ Դեռևս 1876 թվականին «Երկրի» թերթում «Էմ չէինք երեկ փերնագիրը կրող հողավածում՝ կարգում ենք. «Պարտք եմ համարում հիշեցնելու, որ հայերի և վրացիների՝ հնում երբեմնի ունեցած մի զավանանքի ու համերաշխութեան շնորհիվ, Հայաստանն էլ ու վրաստանն էլ հզոր էին ու անվեհեր»։ Եվ այնուհետև խոսելով հարևան ժողովուրդների սերտ համագործակցութեան մասին, ցավով նկատել է նրանց ոչ բավարար մոտիկութիւնը։ Հատկապես քննադատել է եկեղեցուն, որը դարեւ շարունակ փորձել է թրջնամանք սերմանել նրանց միջև։ Տասնյակ տարիներ շարունակ նա հետևողականորեն պաշտպանել է ժողովուրդների բարեկամութեան զարգացումը։ Ի դեպ նշենք, որ այս թիմայով արտահարուվել են նաև հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը², Իլիա Ծավճավաճեն, Ակակի Մերեթեյի և ուրիշները։ Հայտնի են նաև Գոգերաշվիլու ջանքերն ու սրբակալի միջոցառումները ուսաց լեզուն վրացական դրոշմներում և ընտանիքներում արմատավորելու ուղղութեամբ։ Շատ բարձր գնահատելով ուսաց լեզվի դերը վրաց ժողովրդի կուլտուրական առաջընթացի գործում, նա գտել է, որ առանց այդ լեզվի վրաց ժողովուրդը չի կարող հարգորակից լինել ուսու և եվրոպական կուլտուրային։ Վրաց անվանի մանկավարժը տասնյակ տարիներ շարունակ անդրադարձել է ուսաց լեզվի ու գրականութեան ուսումնասիրութեան կարևորութեանը, ընդգծել, մասնավորապես, ուսաց լեզվի դերը վրաց ժողովրդի զարթոնքի ու հետագա զարգացման մեջ։ Ուշագրավ է, որ Գոգերաշվիլին ուսաց լեզվի տիրապետման երևույթի մեջ տեսել է ժողովուրդների փոխադարձ ճանաչողու-

1 Այս հոդվածը, ինչպես նաև մի շարք այլ հոդվածներ առանձին գրքով լույս են տեսել 1892 թվականին, Քրիլիսիում։

2 Տե՛ս, «Հոգիան», 1915, № 238.

1 Գ. Աղայան, Երկեր, հ. 3, էջ 247։

2 Պ. Ք. Թ., Աղայանի արխիվ, «Պետք չի հավատալ»։

3 Այս, ինչպես նաև վերջ եղած մեջբերումները կատարված են Սիմ կյանքի գլխավոր դեպքերը մեմուարային աշխատութիւնից։

թյան ու բարեկամության կարևորագույն ֆակտորներից մեկը: Մի տեղ ուղղակի ասում է. «Մեր գյուղացիներն ու բանվորները զգում են, որ առասց լեզվի իմացությունը նրանց դուրս կրերի նեղ շրջանակներից, կրնդլայնի գործունեության ասպարեզը, կմոտեցնի ուրիշ ժողովուրդների հետ»¹:

Այսպիսով, միանգամայն պարզ է դառնում, որ Ցակոբ Գոգեբաշվիլին՝ առաջնորդվելով ժամանակաշրջանի առաջավոր գաղափարներով, հակալական դեր է խաղացել ոչ միայն վրաց մանկավարժական մտքի զարգացման պատմության մեջ, այլև խոշոր ներդրում կատարել ժողովուրդների բարեկամության կարևոր գործի մեջ:

Գպրոցների ժողովրդայնացման հարցը եղել է ինչպես առաջավոր մտածողների, այդ թվում նաև Ուշինսկու և ուրիշների, այնպես էլ հայ և վրաց անվանի գրող-մանկավարժների՝ Գոգեբաշվիլու և Աղայանի ամենալուրջ ուշադրության կենտրոնում:

«Մեր ժողովուրդը, — կարդում ենք Գոգեբաշվիլու մոտ, — հաստատապես հավատում է, որ դպրոցը պետք է լինի իսկական կրթության օջախ և ծառայի նրա արթնացմանը, դարգացմանն ու բարօրությանը»²: Եվ այնուհետև, շարունակելով խոսքը, այն միտքն է հայտնում, որ ժողովրդի անտարբերության հետևանքով դպրոցը կթառամի ճիշտ այնպես, ինչպես ծաղիկը ցրտից ու լույսի բացակայությունից: Գպրոցը ժողովրդի սիրուն ու ուշադրությանը կարծանանա այն ժամանակ միայն, — ընդդեմ է վրաց մանկավարժը, — երբ նա, այսինքն դպրոցը, կանգնած կլինի մանկավարժական հաստատուն, ազողջ, ժողովրդի պահանջներից բխող հիմքերի վրա:

Նույն հարցը նույն սրույնամբ կանգնած է եղել նաև հայ դեմոկրատական մանկավարժական մտքի առջև Ղազարոս Աղայանը, պայքարելով հին վանական կրթության ու նրա շատագույնների դեմ, այն միտքն է հայտնել, որ անհրաժեշտաբար պետք է վյանքի կոչել դպրոցը, նրա առջև դնել հանրագոտ խնդիրներ: «Վյանքը և դպրոցը մի ուղղությամբ շեղվում

ընթանում, — վրդոված բացականչում է Աղայանը, — դպրոցում լավածը հերքվում էր կրանքի մեջ»³:

Գոգեբաշվիլին և Աղայանը, հետևելով Ուշինսկուն, տարբական ուսուցումը համարել են այն հիմնականը, որի վրա կառուցվում է ժողովրդական կրթության ամբողջ սխառնը: Իսկ տարրական կրթության հիմքում դրել են մայրենի լեզվի ուսուցումը: «Այն դպրոցը, որտեղից արտաքուղում է մայրենի լեզուն, — գրել է Գոգեբաշվիլին, — նա այլևս դպրոց չէ, այլ բանտ՝ մանկան նուրբ բնության համար»:

Գոգեբաշվիլու՝ տարրական դպրոցի լավ կազմակերպման կարևորության մասին հայտնած մտքերի հետ խիստ ներդաշնակորեն է հնչում Աղայանի «Մտան արմատից կղալարի կաճի, ուսումնարանն էլ չուր նախակրթարանից»⁴ թևավոր խոսքը:

Թե՛ Գոգեբաշվիլին և թե՛ Աղայանը ոչ միայն ստեղծական մանկավարժներ ու ստեղծագործողներ են եղել, այլև ժամանակակիցների ու հաջորդ սերունդների կողմից զնահատված տարրական դպրոցի հիմնալի դասագրքերի հեղինակներ:

«Դեղա էնա», «Բուններխ կարի», «Կոնա», «Մուսակոյի պոլո» դասագրքերը պատկանում են Գոգեբաշվիլուն: Այդ բոլորի մեջ (և առհասարակ վրաստանում լույս տեսած բոլոր դասագրքերի մեջ) «Դեղա էնա»-ն առանձնակի և պատվավոր տեղ է գրավել: Այդ այբբենարանը դպրոց է մտել 1876 թվականին և մինչև մեր օրերն էլ մասնակի փոփոխություններով (որոնց մեծ մասը պատկանում է հեղինակին) համարվում է անգնահատելի դասագիրքը առաջին անգամ դպրոց սուք դնող մանուկների համար: «Դեղա էնան» 45 անգամ վերահրատարակվելով հիմնականում պահպանել է իր նախկին կերպարակվելով հիմնականում պահպանել է իր նախկին կերպարանքը: Վրաց լեզվով լույս տեսած շուրջ 13 այբբենարանների մեջ Գոգեբաշվիլու «Դեղա էնա» (մայրենի լեզու) դասագիրքը ոչ միայն ամենալավագույնն է իր նյութերի թարմությամբ, լեզվական մաշիկությունով, այլև կառուցվածքով, որի հիմքում ընկած էր Ուշինսկի-Գոգեբաշվիլի գրաձևաչափայն ամենալավագույն մեթոդը: Մինչ «Դեղա էնան»

¹ «3B», 1940, № 236:

² Նույն տեղում, № 251:


³ «Մի կես մեր նոր պատմությունից», էջ 26:

⁴ Աղայանի մանկավարժ, 1941, «Մտան արմատից կղալարի», էջ 63:

ձգած ալքրենարանները մեծերի կամ տնային կրթութեան հաճար էին: Մենք թերևս այսքան կանգ չառնեինք Գոգերաշվիչու վրա, եթե ի նկատի չունենայինք այն հակայական դերը, որ նա և նրա դասագրքերը խաղացել են վրաց հասարակական կյանքի կուլտուրական վերելքի գործում: Քավական է թեկուզ շատ փաստերից բերել մեկը և ցույց տալ, թե ինչպիսի բարձր արժանիքներ են տեսել նրա դասագրքերում և առաջին հերթին «Ալքրենարան»-ում 19-րդ դարի 2-րդ կեսի նշանավոր և առաջադեմ մարդիկ: Վրաց կլասիկ, մեծամե դասիստ գրող էզնաստ Նինոշվիլին Յակոբ Գոգերաշվիլուն դրած նամակում ասում է «Մի՞թե մենք բոլորս չենք աճել Ձեր կազմած ձեռնարկը... ուսումնասիրելով՝ մի՞թե նրանով չենք մենք բոլորս սովորել վրացական գիրքը Այլ Գուք ստիպեցիր մեզ նոր ձևով սիրելու մեր հայրենիքն ու նրա լեզուն»¹:

Անցյալ դարի 60-ական թթ. Գոգերաշվիլին գրաճանաչութունը տարել է ալքրենական կարգով, սակայն 70-ական թթ. սկզբից փոխել է այն, առաջնորդվելով հեշտից դեպի դժվար սկզբունքով: Ալքրենարանի 1-ին հրատարակությունը կցած «Նեմուցիչներին» առաջարանի մեջ Գոգերաշվիլին քննադատելով սինթետիկ մեթոդը, պարզաբանում է անալիտիկ մեթոդի առավելությունները առաջինի համեմատությամբ: Գոգերաշվիլին մշտապես որոնումների մեջ է եղել նրան լիպես չի բավարարել նաև անալիտիկ մեթոդը: Եվ հետևելով ռուս առաջավոր մանկավարժներին, առաջին հերթին՝ Ուշինսկուն, Գոգերաշվիլին սկսել է կիրառել անալիտիկ-սինթետիկ մեթոդը:

Անգնահատելի է Ղ. Աղայանի ծառայությունը հայկական դպրոցների կրթական սիստեմի բարելավման գործում: Մասնավորապես տարրական դպրոցում իր երկարամյա պրակտիկ գործունեության ընթացքում Աղայանը քրտնաջան կերպով ճշտել ու հաստատուն է դարձրել իր իսկ կողմից մշակված մանկավարժական-մեթոդական սկզբունքները: Նա ևս, Գոգերաշվիլու նման, հետևելով ռուս առաջավոր մանկավարժ-



Գ. Աունդուկյան

¹ էզնաստ Նինոշվիլի, Երկիր, 1950, «3B», № 2, էջ 212 (ուսու.):

ների քաղաքներին, գտել է, որ նախնական կրթութիւնը ամենակարեւորն է, որի վրա և հրավերել է հայ մանկավարժների ամենալուրջ ուշադրութիւնը: Իր սկզբունքներին համապատասխան կազմած իր դասագրքերը ապահովել են դպրոցը կյանքին մոտեցնելու լավագույն ցանկութիւնների իրականացումը: Այդ սկզբունքներով կազմած դասագրքերից «Ուսումն մայրենի լեզվի աչքբենարան մասը» 1882 թվականից սկսած մինչև 1903 թվականը 18 հրատարակութիւն է ունեցել: Այս հանդամանքն ինքնին վկայում է դասագրքի կարևորութիւնն ու պիտանիութիւնը դպրոցների համար:

Այն դասագրքերը, որ դպրոցին են տվել հայ և վրաց մանկավարժները, իրենց մեջ պարունակում էին մանկան մտքի ու հոգու հետ խոսող, դյուրըմբռնելի, միանգամայն հասկանալի լեզվով շարադրված, ժողովրդի կյանքից և բնութիւնից առած հետաքրքիր պատմութիւններ, շոտասելուկներ ու ոտանավորներ:

Պարզութիւնը, ինչպես նկատել է Գոգեբաշվիին, «ուսուցման սպին է», որովհետև պարզութիւնը հնարավորութիւն է տալիս մանուկ աշխարհին ամեն կողմից և ամբողջ էութեամբ ճանաչելու առարկան և հրեւոյթները: Աղայանը նույնպես գտել է, որ ուսուցման հին մեթոդները և ձեռնարկները այլանդակել են երեխաներին, որ անհրաժեշտ է արժատապես փոխել ուսուցման եղանակները, քանի որ «Ուսուցումը պետք է լինի զննական, դիտակցական և սյարզ, որ հասկանալի լինի»¹:

Մայրենի լեզվի, և ընդհանրապես լեզվաշինարարութիւն հարցը ոչ պակաս տեղ է գրավել Գոգեբաշվիու և Աղայանի մանկավարժական-գրական գործունեութեան մեջ: Այդ նշանավոր մարդկանց դասագրքերը, ինքնուրույն մշակումները, գեղարվեստական երկերը, մամուլում հրատարակած այդ թեմայով գրած բազմաթիվ հոդվածները լրջագույն ներդրում են հանդիսացել ժողովրդական-գրական լեզվի համար մղած պայքարի մեջ: Պայքար գրական նոր լեզվի համար — պայքար էր ժողովրդի մտավոր վերածննդի համար: Մի կողմից իլիա

¹ Ղ. Աղայան, Երկեր, հ. 4, էջ 218:

Ճավճավաձձեի ու Ակակի Մերեթելու, Մյուս կողմից Արովյանի, Նալբանդյանի և հայ խոշորագույն շատ գրողների լեզվաշինարարական սկզբունքները մշտավառ փարոսի նման լուսավորել են Գոգեբաշվիլու և Աղայանի այդ ուղղութիւնով մղած պայքարի դժվարին ուղին:

Պայքար բռնութեան դեմ, աշխատանքի գովքը, ինչպես նաև բնութեան գովերգումը Աղայանի մանկական ստեղծագործութեաների հիմնական նյութն են կազմել: Նույն բանը տեսնում ենք Գոգեբաշվիլու ստեղծագործությունների մեջ: «Ինչ արավ օրորոցի երգը», «Ասպինձայի ճակատամարտը» և այլ ստեղծագործությունների մեջ Գոգեբաշվիլին անցյալի հերոսական գրվազների օրինակներով վարակել է մանուկներին (և մեծերին) մարդասիրության, աշխատասիրության և հայրենասիրության արմատի գաղափարներով: Իդեական առումով նույնպես երկու մեծ մանկավարժ-գրողների գեղարվեստական ստեղծագործությունները (մանուկների համար գրած) համահնչուն են և բխում են երկու բախտակից ժողովուրդների լավագույն ցանկություններից:

Այն ամենը, ինչ արել են իրենց ժողովուրդների համար Գոգեբաշվիլին և Աղայանը աննկատելի չի մնացել ցարական գաղութարարների, խավարամուլ մարդկանց աչքերից: Զարմանալիորեն ներդաշնակ նրանց կյանքն ու գործունեությունը միշտ էլ, որ ընթացել է խաղաղ ու ապահով ճանապարհներով: Հայանի էլ, որ Գոգեբաշվիլին որպես «անհանգիստ» մարդ հետապնդվել է կիզարխի և օխրանկայի կողմից, որի հետևանքով ստիպված է եղել միառժամանակ կտրվելու իր սիրած աշխատանքից ու գրադոմենցից: Որպես «անբարեհույս» Աղայանը նույնպես հետապնդվել է, գատապարտվել և նույնիսկ արտորվել: Սակայն նրանց ոչինչ չի ընկճել, չի հուսահատեցրել: Գարձյալ վերադառնալով աշխատանքի, նույն ոգով շարունակել են իրենց պայքարը հասարակական կյանքի անարդարությունների դեմ:

Հենց թերևս այն հանգամանքը, որ նա՝ Գոգեբաշվիլին սիրով արձագանքել է 1905 թվականի սեպտեմբերին իրադարձություններին, խոսում է նրա պայծառ մտքի և իր ժողովրդի նկատմամբ ունեցած լայնախոհ մարդասիրության մասին:

Ռուսական առաջին սևայուցիայի օրերին, երբ վրաց աշխատավորությունը նույնպես ահաբեկ պայքարի է ելել ցարական ինքնակառավարման և տեղական շահագործողների դեմ, Գոգեբաշվիլին կոչ է արել օգնել Ռուսաստանին, երբ նա շանտեմ էր ազատվել ցավից և բռնակալ կարգերից, քանի որ այդ է պահանջել իր ժողովուրդի ապագա նրջանկությունը¹:

Այլևս չխոսելով վրաց մամուլի և առանձին գործիչների (Ի. Ճավճավաձձե, Ա. Մերեթելի և ուրիշները) բազմաթիվ դրական կարծիքների մասին, նկատենք, որ հայ մամուլը նույնպես իր որոշակի դրական վերաբերմունքն է ունեցել հանդեպ Գոգեբաշվիլին և նրա դասագրքերը: Այսպես օրինակ, «Մուրճ»² ամսագիրը, իսկ նրանից առաջ դեռ «Մշակը»³ տարբեր առիթներով խոսել են Գոգեբաշվիլու մասին և միշտ էլ պահանջություններ արձանագրել նրա կատարած բեղմնավոր և շնորհակալ աշխատանքները: 1912 թվականին, Գոգեբաշվիլու մահվան կապակցությամբ, «Մշակ», «Հովիտ»⁴ և հալ այլ պարբերականներում լույս են տեսել ընդարձակ հոդվածներ, որոնց մեջ բաժանելով վրաց ժողովրդի կրած ծանր վիշտը, ցավով են նշել ակնաւոր գործչի և գրողի ծանր կորուստը: Այդ ամբիվ գրած հոդվածներից մեկում կարդում ենք. «Գոգեբաշվիլու մահով վրացիները զրկվում են զեղեցիկ Վրաստանի մեծագույն զավակից, որն իր ամբողջ կյանքն ու կարողությունը նվիրաբերեց իր սիրելի ժողովրդին: Նրա մահով վրաց գործիչների պլենադան զրկվեց արժանավոր մարդուց, իսկ Վրաստանը՝ անձնվից գործչից: Ծանր է կորուստը, նամանավանդ վրացի երիտասարդության համար, որովհետև նա կորցրեց իր հայտնի և արժանավոր ուսուցչին: Մեր խորին ցավակցություներ վրացի եղբայրներին: Հովիտյան անմահ կմնա նրա հիշատակը»⁵:

¹ «ՅԵ», 1940, 251:

² «Մուրճ», 1904, № 2:

³ «Մշակ», 1898, № 203:

⁴ «Հովիտ», 1912, № 22:

⁵ «Մշակ», 1919, հունվ. 19:

Հայ, ինչպես նաև վրաց ժողովուրդների թատրոնի պատմությունը սերտորեն միասնույնացված է հայ ժողովուրդների գաղափար կուլտուրայի պատմության հետ:

Հայ և վրաց թատերական արվեստի ժողովրդական դրսևորումները իրենց պարզ ու անպաճույճ արտահայտությունն են գտել տանակատարությունների՝ մասսայական պարերի, խմբական զինավարժությունների, սպորտային խաղ-մրցումների մեջ¹, որոնցից շատերը որոշ ձևափոխությունների ենթարկվելով, կատարվում են նաև մեր օրերում: Գրանցից հիշենք թեկուզ բարեկենդանի արարողությունները, անցյալներում Քրիստի հասարակության կողմից շատ սիրված դեյնորան, վրացական գյուղական աշխատավորության մեջ շատ տարածված լեյուն և աչլն: Այդ բոլորը, ինչպես նաև շատ-շատերը, որոնք մոռացության են մատնված և միայն ազգագրական ամպարներում կամ ուսումնասիրություններում են հիշատակված, ներկայացնում են թատրոն հասկացողության վաղ մանկությունը, նրա առաջին քայլերը:

Սակայն հայ և վրաց թատրոնների իսկական գարգացումը տեղի է ունեցել Անդրկովկասը Ռուսաստանին միանալուց հետո Պուշկինը և Գրիբոյեդովը, Գոգոլը և Բելինսկին սուս ժո-

¹ Այս մասին տառնված հիշատակություններ կան Օթարթլիս ցեղովբերաս-ի 1-ին և 2-րդ մասերում, ինչպես նաև «Իվերիաս», 1885, № 1-ում լույս տեսած «Հին վրացական ժամանցը» հոդվածում:

ղովրդի այն հանճարեղ զավակներն էին, որոնց հարուստ գրական ժառանգությունը հսկայական գրական գեր է խաղացել հայ, վրաց և ադրբեջանական կուլտուրաների զարգացման գործում:

Վրաց խոշորագույն գրական-հասարակական գործիչներ Ի. Շավճավաձեի և Ա. Մերեթելու ջանքերով անցյալ դարի 70-ական թվականներին վերածնված վրաց պոեզիան ստացավ թատրոնի գործունեությունը սերտ կերպով միասնույնացված է Քրիստոսի կազմակերպված հայ թատրոնի գործունեության հետ: Իսկ այդ հարևան և բարեկամ թատրոնների վերածնունդն ու բեղմնավոր աշխատանքների մեջ մեծ ու անգնահատելի ներառիք ունի Գրիբոյեդովի, Գոգոլի, Բելինսկու և մյուսների գրական-թատերական առաջավոր կուլտուրայով սնված հայ խոշորագույն դրամատուրգ Փարթիլ Սունդուկյանը:

Մինչ Սունդուկյանի հանդես գալը, 1858 թվականից Քրիստիանոս Երկրորդի խմբի ուժերով հայերեն բեմադրություններ են կազմակերպվել: Այդ շրջանում բեմադրվող պիեսները զերազանցապես պատմական բնույթ ունեին և զրված էին դրամայի, գրաբարայտան աշխարհաբար լեզվով: Այդ պիեսների բեմադրությունները ոչինչ չասելով հայ հասարակության հոգուն և մարին, մեծապես պաշտպանություն էին գտնում արխատիրատական-կղերական շրջաններում: Այնուհետև հանդես են գալիս նոր դեմքեր, որոնց դրամատիկական ստեղծագործությունների թեման գերազանցապես ընդգրկում են լայն հասարակայնության կենցաղի, բարքերի, կյանքում տեղ գտած աշխարհայությունների մերկացումներն ու խարազանումը:

Այդ շրջանում գրվել են և խաղացվել անչափ շատ պիեսներ, դրանք գերազանցապես կատակերգություններ, ողբերգություններ, ֆարսեր են եղել: Շատ փոքր թիվ են կազմել դրամաները: Գ. Սունդուկյանի մուտքը գրական-ստեղծագործական բնագավառը կենդանացրել է և մի նոր աստիճանի վրա դրել հայ և վրաց բեմերը, քաջալիրել անթիվ ու անհամար դժվարություններից հուսահատված մարդկանց, շարժել գրական միտքն ու զգացմունքը, լայն հասարակայնության ակտիվ ուղարկությունը հրավիրել դեպի թատրոնը և նոր ավանդ մու-

եկէ հարեան ժողովուրդների փոխադարձ ըմբռնման ու բարեկամութեան կարևոր գործի մեջ:

Ուշագրաւ է այն հանգամանքը, որ հայ առաջաւոր գործիչները ճեղք միասին, նույն շերտութեամբ Գ. Սունդուկեանին մեծարել և գնահատել են նաև վրաց հասարակական-թատերական գործիչները: Հայ տաղանդավոր դրամատուրգին հղած ընդարձակ ողջունի մեջ նշանավոր վրաց դերասան և թատերական գործիչ Կոտե Դիփիանին Սունդուկեանի անվան հետ է կապել վրաց թատրոնի նոր, բեղմնավոր գործունեութեան շրջանը: Իրականում, իրոք Սունդուկեանի գրական ասպարեզ իջնելուց հետո, վրաց գրականութեանը (մասնավորապես դրամատուրգիան) ևս նկատելի տեղաշարժ է ապրել: Ետտ կարճ ժամանակամիջոցում մեկը մյուսի հետևից հանդես են եկել ինքնուրույն պիեսների հեղինակ դրամատուրգներ, թարգմանիչների մի ամբողջ խումբ, որոնք հետևելով հայ նշանավոր ստեղծագործողին, նրա անմիջական օղնութեամբ, իսկ երբեմն էլ անձնական մասնակցութեամբ նոր, ռեալիստական ամուր հիմքերի վրա են դրել վրաց դրամատուրգիան: Հայ և վրաց ժողովուրդների մեծանուն գործիչներ Ի. ԶափճաՎաձեան, Ա. Մերեթեիին, Գ. Սունդուկեանը, Ա. Յագարեիին, Գ. Զմշկեանը և շատ ուրիշներ թրիլիսիում հիմնադրված հայ և վրաց թատրոնների առջև դրել են ազգային կուլտուրան զարգացնելու պատվավոր պարտականութենք, դիտելով այդ հաստատութիւնները որպէս ազգային լեզվի մշակման, լուսավորութեան և կուլտուրայի, հասարակական մտքի արթնացման ու նաստիարակութեան կարևոր օջախներ: Հայ և վրաց թատրոնների գոյութեանը, սակայն, կապված է եղել բաղձաթիփ խաչընդոտների հետ: Հենց միայն այն հանգամանքը, որ թատրոնական գործին նվիրված մարդիկ ապրել են տնտեսական և բարոյական մշտապես անապահով ու զրկված պայմաններում, խոշոր շափով արգելակել է գործը, կաշիանդել մարդկանց ամեն մի նախաձեռնութեանը ու երազանքը:

Թրիլիսիի ազնվականութեան ու վաճառականութեանը ոչ միայն չեն օժանդակել թատրոնական գործին, այլև ամեն կերպ վարկաբեկել և արհեստական դժվարութեաններ են ընտելծել: Միանգամայն հասկանալի է, որ հասարակութեան

այդ խափերին բոլորովին դուր չեն եկել այն ներկայացումները, որոնց մեջ ծագրվել ու մերկացվել են խաբերա վաճառականները, ծուլ ու բթամիտ ազնվականները, նրանց կամակատար, խաբդախ ու խաբերա ծառաները, բախտախնդիր միջնորդները, այլ խոսքով աշխատավորութեան վզին ու նրա զրկանքների գնով ալորոզ շահագործողներն ու հարստահարողները՝ տարբեր ազգութեանների պատկանող ու տարբեր ազգանուններ կրող լիմզիմուսներն ու զամբախուսները: Հայ և վրաց թատրոնների մշտական հաճախորդներն ու իրենց ուժերին ներածին շափով օժանդակող մարդիկ մեծ մասամբ արհեստավորներ ու հասարակութեան բարոյական վիճակով մտահոգված ինտելիգենցիան է եղել: Քաղաքային աշխատավորութեանը սիրով է ունկնդրել և երբեմն էլ մասնակցել այդ ներկայացումներին, իսկ վերնախավը իր երկնքներն անց է կացրել գաստրոլների եկած իտալական օպերետային կամ բալետային խմբերի թեթև, անարվեստ ու վուլգար խաղերն ունկնդրելով «Անհնարին է երևակայել, — գրել է Բաֆֆին, — թե որքան դժվարութեանների դեմ մարտնչով, մեր դերասանները կարողացել են պահպանել հայոց բեմը: Նրանք ստիպված էին պատերազմել ժողովուրդի նախապաշարձունքի դեմ, որ դերասանի վրա նայում է, որպէս մի «օխրաղի» վրա, և ոչ որպէս կրթութեան սպասավորի վրա: Նրանք ստիպված էին պատերազմել քաղցածութեան դեմ, որովհետև այդ արհեստը հաց չէր տալիս»¹:

Հայ թատրոնի համեմատութեամբ վրաց թատրոնը փոքր ինչ տանելի պայմաններում է աշխատել: Հայ մամուլում երբեմն տպվել են հոդվածներ, որոնց մեջ հողվածազիրները արդարացի կերպով հայ հասարակութեան ուշագրութեանն են հրազիրել թատրոնի վրա և պահանջել միջոցներ ու իրախոսանք բեմի քրտնաշան մարդկանց համար: Այս իմաստով շափազանց ուշագրավ փաստ է Գ. Զմշկեանի ելույթը հայ մամուլում: «Վրաց բեմը սատար տաներկու տարի դարձրից հետո՞ նորից ստացավ դեյութեան, — գրել է Զմշկեանը, — այս

¹ Բաֆֆի, Երկնքի ժողովածու, հ. 9, էջ 464:
² Հողվածազիրը զազար անելով ի նկատի ունի Գ. Երիսթավի թատրոնի փակումը 1855 թվականին: Այստեղ նկատենք նաև, որ այդ զազարը

անգամ ժողովրդի արդմամբ և ներկայումս գտնվելով նրա հո-
վանալորության և պահպանության ներքո շարունակում է իր
գործը անընդհատ և հաստատ քայլերով¹։ Այնուհետև նկա-
րագրելով հայ թատրոնի վառթար վիճակը, այն բացատրում
է նրանով, որ թատրոնի նկատմամբ անտարբեր վերաբեր-
մունք են ցույց տալիս «պենվոդ» ինտելիգենտ երիտասար-
դությունը և հայ փոճառականությունը։ Չհամաձայնվելով
Գ. Չմշկյանի վերջին բացատրության հետ, այնուամենայնիվ
գտնում ենք, որ նա ճշմարիտ է, երբ վրաց թատրոնի հա-
մեմատարար բարձր վիճակը բացատրում է վրաց հասար-
ակությունից առաջվոր խավերի շահագրգռվածությունը և
օժանդակությունը «Կր գտնե՞ք դուք արդյոք մի ինտելիգենտ
վրացի, — գրել է նա, — որ թատրոնական գործը իր սեփական-
նը չհամարի և պահանջ եղած ժամանակը պատրաստ չլինի
յուր բոլոր ուժը նվիրելու գործին»։ Իրոք, վրաց ազնվական
ինտելիգենցիայի շրջանում նա (այս դեպքում պետք է նկատի
ունենալ ինտելիգենցիայի առողջ, գործունյա և առաջադիմա-
կան մասը) վրաց թատրոնը մեծ հետաքրքրություն էր առաջ
բերել։ Վրաց բեմի նշանավոր գործիչների մի զգալի մասը
ազնվական դասին է պատկանել։ Բայց երբ Գ. Չմշկյանը խո-
սում է հայ թատրոնի մասին, այստեղ արգեն նա վրզովմուն-
քով է հիշատակում իր կողմից ղեկավարած գործի ծանր դրու-
թյունը։ «Իսկ մե՞նք, — շարունակում է նա իր հոդվածի մեջ, —
մեր ազնվականի որդին, ուսումնավարտ քաղցած փորով
պատռոլ շրջմուխի օրիորդը, համաձա՞յն են բեմ դուրս գալ,
օգնել գործին...»։ Եվ պատասխանում է՝ ոչ։ Հասկանալի է, որ
առանց զրամական միջոցների, առանց դերասանների կյանքի
ապահովության ու գործի քաջալերության, մանավանդ ա-
ռանց բավարար բանակի կանացի դերակատարների հնարավոր
չէր թիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծել հայ թատրոնի
գործունեության համար։ Մի՞թե մեզ թիչ փաստեր² են հայտ-

շատ ավելի է տեղի, քան թե հոդվածագիրն է նկատում։ Վրաց թատրոնի
երկրորդ մոտոպր սեղի է ունեցել 1879 թվականին։

¹ «Նոր դար», 1887, № 95, «Վրաց և հայ թատրոնական բեմը» հոդ-
վածից։

² Այս մասին տե՛ս Գ. Չմշկյանի «Եմ հիշատակարանը» գրքում։

նի այն մասին, թե ինչպես կանացի դերերում հաճախ ստիպ-
ված են եղել հանդես գալու տղամարդիկ։

Չնայած թատրոնական գործի այդ փասթար պայմաննե-
րին, այնուամենայնիվ բեմին նվիրված մարդիկ գրկանքներ
կրելով, համառ կերպով շարունակել են իրենց հանրօգուտ
գործը։ Վրաց պրոֆեսիոնալ թատրոնի կազմակերպման ու
գործունեության նախաձեռնությունը պատկանել է Ի. Ճավ-
ճավաձեին, Ա. Սերեթեյուն, Սիրգեյ Մեսխիին, Նիկո Ավալիշ-
վիլուն, Գավիթ Էրիսթավիլին, Գեորգի Թումանիշվիլուն և
ուրիշներին։ Այդ նոր հավաքագրված դերասանական խմբի
մեջ են եղել Նատո Գաբունիան, Մակո Սափարովան, Բարո
Ավալիշվիլին, Վասո Աբաշիձեն, Կոսե Գիփիանին, Կոսե
Մեսխիին, Ավրանտի Յաբաբելին (որը հետագայում հայտնի
դարձավ որպես անվանի դրամատուրգ) և ուրիշները։ Վրաց
թատրոնն իր աշխատանքներն սկսել է Բ. Զորջաձեի «Ինչ էի
փնտրում, ինչ գտա» պիեսի բեմադրությունից, իսկ երկրորդ
ներկայացումը որս խոշորագույն դրամատուրգ Օստրովսկու
«Եկամտավոր պաշտոն» ներկայացմամբ։ Թրիլիսիի պրոֆե-
սիոնալ թատրոնների գործունեությունը վարակել է նաև այլ
քաղաքների ու բնակավայրերի հայ և վրաց թատրոնասեր հա-
սարակությունը։ Չհաշված ինքնադարձ խմբակները, որոնք ա-
մենուրեք, երբեմն ընդհատումներով, ներկայացումներ են
կազմակերպել, Քուլթայիսիում, օրինակ, կազմակերպվել է
պրոֆեսիոնալ մշտական թատրոն, որը պակաս զեր լի խա-
ղացել այդ քաղաքի հայ և վրաց բնակչության կուլտուրական
սպասարկման, իսկ առավելագույն նրանց սերտ բարեկամու-
թյան էլ ավելի ամրապնդման գործում։

Հայ և վրաց թատրոնների ռեալիստական սկզբունքները,
որոնք համարձակորեն իշխել են բեմերում, եկել է ռուսական
թատերական կուլտուրայի օջախներից։

Հայտնի է, որ Գ. Մունդուկյանը, որի ստեղծագործությունե-
ները նշանակալից դեր են խաղացել անդրկովկասյան ժողո-
վուրդների կուլտուրական կյանքում, Պետերբուրգում գտնված
տարիներին հաճախ է դիտել Ելեպիկինի, Մարտինովի և այ-
լոց հիասքանչ դերակատարումները։

Թրիլիսիի թատերասեր հասարակությունը արտակարգ

նորազեռի մեջ է եղել: Հայ և վրաց բեմերը անօրինակ հան-
դիսավորութեամբ են դիմաւորելու ռուս հռչակավոր դրամա-
տուրգ Ա. Ն. Սատրովսկուն: 1833 թվականի հոկտեմբերի 22-ին
վրաց թատրոնում կազմակերպվել է երեկո թանկագին հյուրի
պատմին: Բեմադրվել են մեկական գործողութեամբ՝ ռուս
դրամատուրգի «Եկամտավոր պաշտոն», վրաց դրամատուրգ
Ավքսենտի Յագարելու «Այլ են այժմ ժամանակները» և
հայ դրամատուրգ Գարրիել Սունդուկյանի «Գիշերվա սարբը
խեր է» պիեսները: Անօրինակ խանդավառութեամբ է տիրել
գահչիճում, ուր հավաքվել են Քրիլիսիի տարբեր ազգու-
թյունների պատկանող մարդիկ: Նրանք փայլուն կերպով ցու-
ցադրել են այն սերն ու նվիրվածութեամբ, որ Անդրկովկասի
ժողովուրդները տածել են հանգեալ ռուս առաջավոր կուլտու-
րան ու նրա մեծատուն ներկայացուցիչները: Միաժամանակ
փայլուն կերպով արտահայտվել է հայ և վրաց թատրոնների
ստեղծագործական կապը ռուսական կլասիկ թատրոնի հետ:

Այդ նույն երեկոյան, Քրիլիսիի բազմաթիվ հանդիսական-
ների (ռուս, հայ և վրացի ազգութեաններին պատկանող) աշ-
քերի առջև տեղի է ունեցել երեք նշանավոր մարդկանց (Սա-
տրովսկի, Սունդուկյան, Յագարելի) պատմական հանդի-
պումը վրաց բեմի վրա, որը սիմվոլիկ ձևով արտահայտել է
երեք ժողովուրդների անբախտելի կապն ու բարեկամութեամբ:

Ինչպես այդ երեկոյին, նույնպես և հայ, վրացական թատ-
րոնների հերթական ներկայացումներին, մշտապես սիրով
ու ջերմութեամբ ներկա են եղել երկու հարևան ժողովուրդնե-
րին պատկանող հանդիսականները և իրենց ներկայութեամբ
ու օգնականներով ոգևորել բեմի անձնակազմը գործիչներին: Եր-
կու ազգութեանների պատկանող մարդկանց թատրոնների
շուրջը համախմբելու, միմյանց օժանդակելու, միատեղ նույն
ներկայացումները դիտելու փաստը որքան ուրախալի, նույն-
չափ և կարևոր գործոն է հանդիսացել նրանց դրական-կուլ-
տուրական համագործակցութեան մեջ: Այդ բանը հնարավոր
է դարձել միայն այն պատճառով, որ Քրիլիսիանակ, ինչպես
նաև վրաստանում երկար ապրիներ ապրած հայերը հիանա-
լի աիրապետել են վրացերեն լեզվին: Նույն բանը, մի քիչ
պակաս չափով կարելի էր ասել նաև վրացիների մասին:

վրաց բազմաթիվ քննադատներ, որոնք ապրել են հայաբնակ
քաղաքներում և այլ բնակավայրերում (Գորի, Միղնախի, Թե-
լավի, Քրիլիսի Հավլարարի թաղամասը և այլուր) ազատ
կերպով խոսել են հայերեն և իրենց առօրյա գործունեության
մեջ օգտագործել ինչպես վրացերեն, նույնպես և հայերեն
լեզուները:

Լեզուների իմացութեամբ կարևոր հանգամանք է նրանց
սերտ համագործակցության գործում: Հայերեն և վրացերեն
լեզուներին աիրապետելով՝ նրանք հնարավորութեամբ են ու-
նեցել ճանաչելու միմյանց դրական-կուլտուրական արժեք-
ները, ճանաչելու միմյանց և ստեղծելու արժեքներ, որոնք և
ազգային էին իրենց կոլորիտով և՛ քննահանուր-ժողովուրդական՝
ձրտումներով ու իդեաներով:

Գ. Սունդուկյանի ստեղծած անմահ պիեսները նույն հա-
ջողութեամբ բեմադրվել են ինչպես հայ, նույնպես և վրաց
թատրոններում: Հայտնի է, որ մինչ վրաց պրոֆեսիոնալ
թատրոնի կազմակերպումը, Քրիլիսիի տարբեր վայրերում
թատերասեր մարդկանց ուժերով տրվել են ներկայացումներ,
որտեղ խաղացել են նաև Սունդուկյանի պիեսները: Այդպիսի
մի ներկայացման ժամանակ վրաց ժողովուրդի ազգային պար-
ծանքը հանդիսացող բանաստեղծ Ակակի Մերեթելին «էլի մեկ
դոհի» մեջ կատարել է Միքայելի գերը: Այս դեպքում նշա-
նակալից է ոչ միայն Սունդուկյանի պիեսի բեմադրութեամբ
վրաց բեմում, այլ և՛ Սերեթելու դերակատարումը: Վրաց
ժամուր հիացմունքով է արտահայտվել այդ երեկոյի մասին,
արձանագրելով այն անզուսպ հետաքրքրութեամբ ու ոգևո-
րութեամբ, որ տիրել է գահչիճին: Այդ օրը, ինչպես նշել է
Քերթը, հանդիսականների առջև մարմնացել են երկու մե-
ծութեաններ, մեկը որպես ստեղծագործող, մյուսը՝ կատարող,
որոնց բարեկամական զաչինքն անչնչելի տղավորութեամբ է
լցրել բոլոր ներկա եղողների սրտերը:

Գ. Սունդուկյանի պիեսները առաջին անգամ բեմադրվել
են Քուլթախի սիրողների, իսկ կարճ ժամանակից հետո նաև
Քրիլիսիում գործող վրաց անվանի դերասանների ուժերով:
Ժամանակակից վրաց ժամուր մեծ թվով հողվածներ է նվի-
րել առաջնորդող դրամատուրգին և նրա անմահ ստեղծագոր-

ծուլություններին, Անհամար հողավածներ են տպվել առանձին բեմադրությունների, պիեսների գեղարվեստական արժանիքների, ինչպես նաև դերակատարների խաղի և ներկայացումների ձևավորման մասին: Իսկ ամենից շատ այդ հողավածներում շոշափվել են երկու ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործի կարևորությունն ու այդ ուղղությամբ ձեռք բերած զգալի նվաճումները: Վրաց պրոզայի վերջիններից մեկը, այսպես օրինակ, նկատել է, որ Սունդուկյանի պիեսները «միացրին նրկու հարևան ազգերին՝ արվեստի հիման վրա»¹: Սունդուկյանն այսպիսով ոչ միայն կյանքի է կոչել հայ ահալխոտական թատրոնը, այլև իր անմահ պիեսներով ստեղծագործական համագործակցության կամուրջ գցել երկու ժողովուրդների կուլտուրական օջախների միջև:

«Ճնորհս փուրցելի» թերթում տպագրված մի հողավածում կարդում ենք. «Մեր ստուած և մեռելություն սիրահար թատրոնում տեղի ունեցավ կիրակի օրը մի կենդանի և մարդու սիրտը տաքացնող տեսարան: Խաղում էին Սունդուկյանցի «Խաթարալան»: Ներկայացման վերջում բեմ հրավիրեցին ծերունի հեղինակին և նրան այնպիսի ջերմ ծափահարությամբ ու ցուլցերով պիմավորեցին, որոնց նմանը ինձ շատ քիչ է պատահել տեսնել որևիցե տեղ: Մեր ազգի ամեն մի բարեկամի սիրտը բերկրությամբ կլցվեց, տեսնելով այդ միասիրտ, անկեղծ, հափշտակված շնորհավորական ցուլցը: Բոլոր հանգիստականները փամփուրեցին դրամատուրգին՝ կարծես մի մարդ դարձած և, ինչ խոսք, ոչ ոքի մտքովը չէ անցել այդ բուպերին, որ Գարբիել Սունդուկյանցը վրացի չէ»²: Այս հողավածն անմիջապես թարգմանաբար տպագրվել է «Մուրճի» 1903 թվականի № 11-ում: Վրացի հանդիսականները վրացիներն լեզվով դիտել են Սունդուկյանի «Պեպոն», «Խաթարալան» և այլ պիեսները, և երբևր նրանց մտքով չի անցել, որ դրանք թարգմանություններ են, իսկ նրանց հեղինակը՝ հայ: Իրապես և ոչ մի լրջամիտ վրացի չի կասկածել, որ հայ խոշորագույն դրամատուրգը որպես ստեղծագործող, գրող և

¹ «Կվալի», 1901, № 2.
² «Ճնորհս փուրցելի», 1903, № 2311.

քաղաքացի նաև վրացի է: Նա հավասարապես անհրաժեշտ ու թանկ է եղել թե՛ հայ և թե՛ վրաց ժողովուրդների համար: Նա ճշմարտության երգիչ է, իսկ ճշմարտությունը՝ ճեղքերով աղբային նեղ շրջանակները և միախորհրդով ժողովուրդներին, հետապնդում է որոշակի նպատակներ՝ բոլոր ազգությունների շահադրդոված մարդկանց ի մի համախմբել այդ նպատակների իրազորման համար: Այս ոգով են արտահայտվել նաև հայ դեմոկրատական թերթերն ու ամսագրերը, երբ տարբեր առիթներով անգրագարծել են Սունդուկյանի պիեսներին ու հեղինակի ստեղծագործական կյանքի այլևայլ հանդամանքներին: Ինչպես տեսնում ենք, հայ և վրաց մամուլը նույն կերպ են պատահաբար մեծ դրամատուրգին: Ի՞նչն է Գ. Սունդուկյանին այդպիսի ջերմությամբ կապել հայ և վրաց ժողովուրդներին: Ո՞րն է այդ մեծ սիրո պալանիքը: Այդ նախ և առաջ այն ահալխոտական մեծ վարպետությունն է, որի հիմքում ընկած է կյանքի խոր ու բազմակողմանի ճանաչողությունը:

Ինչպես վրաց թատերական գործիչներն են նկատել, նրա երկերի ճնշողավայրն այն քաղաքն էր իր հասարակական կյանքով ու կենցաղով, որտեղ ապրել ու ստեղծագործել է գրամատուրգը: Իլիա Զուրաբիշվիլին արտահայտել է այն միտքը, թե «Սունդուկյանի հերոսների գործունեության միջավայրը Քիֆլիսն է, այս սահմաններից նրանք հեռանալ չեն կարող»: Վրաց մամուլում նաև այն կարծիքն է հայտնվել, թե Քիֆլիսեցիք շատ ավելի լավ են հասկանում Սունդուկյանի ստեղծագործությունների իմաստն ու բովանդակությունը՝ եթե «Քիֆլիսեցիք» բառի տակ հասկանանք (ինչպես նաև հասկացել են այն ժամանակ բոլորը) Քիֆլիսիում բնակվող հայերին ու վրացիներին, ապա ճշմարիտ է, որ հատկապես անցյալ դարի 70—80-ական թվականներին Սունդուկյանի ստեղծագործությունների խոր իմաստը շատ ավելի շոշափելիորեն նկատելի կլիներ պեպոնների ու դիմզիմուլների շրջապատում գտնվողի, քան մի այլ տեղ ապրող մարդկանց համար: Այս իմաստով «առավել Քիֆլիսեցիք են հասկանում

¹ «Կվալի», 1901, № 21:

նրա նշանակութիւնը տողերը, որ մենք կարգում ենք վրայ
թերթում, կրկին անգամ խոստով են հօգուտ վերն ասած-
ներին:

Սունդուկյանի անձի ու գրական-ստեղծագործական գոր-
ծունեության հետ կապված է նաև մի շարքից անց ուշադրաւ
երևույթ, որ ոչ պակաս զիւր է խաղացել հարեան ժողովուրդ-
ների գրական-բարեկամական հարաբերութիւնների գոր-
ծում:

Սովորական երևույթ է եղել հայ գերասանների խաղը
վրաց և վրաց գերասանների խաղը հայ բեմում: Քրիստի
հայ թատրոնի բազմաթիւ գործիչներ հիանալիորեն տիրա-
պետել են վրացերեն լեզվին (Գ. Չմշկյան, Գեղեղոս Միրազ-
յան, Քեթևան Արամյան, Սաթևնիկ Չմշկյան և ուրիշներ),
ինչպես նաև վրաց գերասանների մեջ հայերեն իմացող
մարդիկ (Իոսեփ Էլիոզով-Էլիոզիշվիլի և այլն): Ահա այս
պատճառով նրանց համար որեւէ դժվարութիւն չի ներկա-
յացրել հանդես գալ նաև հարեան ժողովրդի բեմում՝ գերա-
զանցապէս Սունդուկյանի կերտած դերերի կատարմամբ:

Գ. Չմշկյանը պատմում է այն մասին, որ ինքը ոչ միայն
ուժեղացրել է արեւել վրաց թատրոնում, այլև խաղացել
է Պեպոյի դերը: Այդ ներկայացումը տեղի է ունեցել 1875
թվականին, որի մասին վրաց «Դրսերա» թերթը տպել է գո-
վեստներով լի մի քննադատական հոդուած: Անմեն իմ բեմ մասնիւ
և զուրս զայս կատարյալ օւղացիա էր²:

Մտաւորապէս մեկ տարի անց նույն Չմշկյանը գլխի մեկ
զոհի մեջ վրացերեն լեզուով խաղացել է Բրիտանաոսովի դե-
րը: Վրացերեն ներկայացումներին իր ակտիւ մասնակցու-
թիւնն է հանդես բերել նաև Գ. Չմշկյանի կիներ՝ Սաթևնիկ
Չմշկյանը, Հայանի են նաև այլ անուններ, որոնք հանդես
գալով թե՛ հայ և թե՛ վրաց բեմերում (Միրաչի Բեհբության,
Քեթևան Արամյան, Սմբատ Կարինյան), իրենց լուսան են
մուծել երկու ժողովուրդների կալուստերական մերձեցման կա-
րևոր գործի մեջ: Ոմանք հետադաշում իրենց ամբողջովին
նվիրել են վրաց բեմին (Քեթևան Արամյան), երբ 1873 թը-
վականին առաջին անգամ կազմակերպուած է «Քանդած
օջախի» հայերեն բեմադրութիւնը, Փարսիդի դերում հան-
դես է գալիս վրաց սիրող-դերասան Իոսեփ Էլիոզովը:

Արդեն խոսվեց այն մասին, թե որքան կարևոր հանդա-
մանք էր հայ և վրաց բեմերի համար միմյանց լեզու իմանա-
լը մակ առաջին հերթին և ամենակարևորն այն է, որ թե՛ հայ
և թե՛ վրաց թատերական գործիչներին ու գրողներին ի մի էր
համախմբել և նույն նպատակի իրագործմանն ուղղել նրանց
գաղափարական մտտիկութիւնը: Դեմոկրատիզմն է եղել տի-
րապետող սկզբունքը Սունդուկյանի, Չմշկյանի և մյուսների
ու վրաց մեծանուն գործիչների Ի. Ճալալովաձեի, Ա. Մերե-
թիու ու, անմիջականորեն, բեմի հետ կապված մարդկանց
գործունեության բոլոր դրսերումներում: «Պետերբուրգյան
հովերի» տեր մարդկանց ոգևորել է իրենց ուսուցիչների՝ ոտա
60-ականների անձնուրաց ու անդիջում պայքարը հասարա-
կական կյանքի բոլոր բնագավառներում: Սունդուկյանը հայ
և Ճալալովաձեին ու Մերեթիւն վրաց իրականութեան մեջ,
իրենց շարքը համախմբած տասնյակ մարդկանց հետ միա-
սին Թրիլիսիում պայքարել են անցյալի իպեալականացման
բոլոր փորձերի դեմ: Առաջին պլանի վրա մղելով կյանքի ճըշ-
մարիտ պատկերման անալիտական մեթոդը, մերժել են
կլասիցիզմը ու ոտմանախօսը: Հասարակական ամենացարժա
հարցերի լայն ու խոր ընդգրկումները, ինչպես նաև ժամա-
նակաշրջանի առաջավոր զաղափարներով ազդարարած Կրկերի
ստեղծումը համապատասխանել է եղբայրական ժողովուրդ-
ների՝ հայերի, վրացիների սոցիալ-հասարակական պայման-

1 Այս իմաստով լափազանց հետաքրքիր է մի փաստ. հայտնի է, որ
Գ. Սունդուկյանը նամակադրութեամբ կապված է եղել Վիկտոր Հյուգոյի և
Ալեքսանդր Դյումա-որդու հետ: Հայ գրամատուցը մեծ ակնկալութիւննե-
րով «Պեպոյի» ֆրանսերեն թարգմանութիւնն ուղարկել է Ֆրանսիա Դյու-
մա-որդուն՝ նրա աշակցութեամբ Փարիզի բեմերից մեկում բնագրելու հա-
մար. Ինչպես Սունդուկյանին ուղարկած պատասխան նամակում կարգու
ենք Ալեքսանդր Դյուման այդ պիեսի հետ ծանոթանալուց հետո գրել է, որ
Փարիզի հասարակութեան համար անհասկանալի կմնա «Պեպոյի», ուստի և
լի արժանանա այն զնահատականին, որին նա արժանի է: «Պեպոյի ստեղծա-
գործութեան նուրբ մանրամասները կիրառելի մեր բեմի վրա» — գրել է
Դյումա-որդին իր պատասխան նամակի մեջ:

2 Գ. Չմշկյան, Իմ հիշատակարանը, էջ 108:

ների հրամայական պահանջներին: Լիբերալ-բուրժուական գործիչների մտայնությունն այն մասին, թե անհրաժեշտ է ոչ թե ժխտել, մերկացնել, ծաղրել ու ոչնչացնել բուրժուական այլասերված բարքերն ու այդ բարքերը կրողներին, այլ վերադաստիարակել նրանց, սթափեցնել նրանց խիղճը, ցույց տալ նրանց այլանդակությունները և օգնել քաղկեալ գործած անթիվ ու անհամար մեղքերը, միանդամայն խորթ է Ազել հայ և վրաց գեմեկրաաններին: Վերջիններս անողորմաբար մարտահրավեր են կարդացել հասարակության այն խափի-րին, որոնք խավար են սերմանել և հնազանդության մղել ժողովուրդներին: Նրանք գրականությունն ու բեմը դարձրել էին կյանքի հայելին և այդ հայելու մեջ արտացոլել հասարակության առաջընթացին խանգարող ամեն ինչ ու ամեն հրե-վույթ: Միամամանակ գրականությունից ու բեմից դուրս շը-պըրտելով գրաբար ու կիսագրաբար լեզուն, պայթարել են ժողովրդական խոսակցական լեզվի գրական մշակման ու հարստացման համար: Իլիա Ճավճավաձեն բազմիցս անդ-բաղանալով լեզվի հարցերին, այն միտքն է արտահայտել, թե որքան էլ տաղանդավոր լինի հեղինակը, երբ երես է թե-քում կյանքից ու փակվում իր աշխատասենյակում, ոչինչ չի քամի իր սրտից: Նրա կարծիքով լեզուն «ժողովրդի սրտի ու ոգու արտահայտությունն է»:

Ճորտատիրական կարգերի վերացումը Ռուսաստանում, ինչպես նաև Անդրկովկասում մեծապես օգնել է հասարակական նոր հարաբերությունների կապիտալիստական հա-րաբերությունների զարգացման գործին:

Նոր սոցիալ-հասարակական պայմանները ոչնչով չեն թե-թևացնում աշխատավորության օր-օրին ծանրացող կյանքի պայմանները: Անցյալ դարի 60—80-ական թվականների առևտրական կապիտալիզմը նոր եզանակներով ու նոր ձևե-րով շարունակում է ժողովրդական լայն մասսաների շահա-գործումը: Ենթադրվեց հորտատիրությունը և լույս աշ-խարհ եկավ «ազատ կապիտալիստական» հասարակությու-նը, — գրել է Վ. Ի. Լենինը, — միանգամից դրսևորվեց այն, որ այդ ազատությունը նշանակում է աշխատավորների ճշնչ-



Ա. Մերեթի

ման ու շահագործման նոր սխեման¹։ Անդրկովկասյան ժողովուրդները հետեւելով ուրա ատաշափոր մարդկանց գաղափարներին, իրենց լավագույն գավակներին ղեկավարութեամբ պայքարել են բոլոր տեսակի սոցիալական ու ազգային ճշմունքների ու շահագործման դեմ։ Այդ ամենի լավագույն ցուցադրումը հանդիսացավ Քրիլիսիոս 1865 թվականին ծափաված համբարական մասսայական շարժումը, որի մեջ ղեկավար ու անմիջական մասնակցություն են հանդես բերել Սունդուկյանը՝ հայ և Ն. Նիկոլաձեն՝ վրաց ատաշափոր շատ մտածողների հետ միասին։ Այդ շարժումը իր էությունը սոցիալական բնույթ է ունեցել և ամբողջովին ուղղվել է բուրժուազիայի քայքայիչ գործունեության ու ցարական ինքնակալության՝ հանդիպ բուրժուազիան ցուցաբերած հովանավորող քաղաքականության դեմ։ Հարկային քաղաքականությունը քայքայման դուռն է հասցրել Քրիլիսիոսի (և ոչ միայն Քրիլիսիոսի) արհեստավորությանը։ Այդ շարժումն անհետեւանք չի անցել։ Գ. Սունդուկյանն ու իր բարեկամ վրաց ստեղծագործողները գաղափարական ու հասարակական նոր վերելք են ապրել։ Ե՛վ «Խաթաբալան», և՛ առավելապես «Պեպոն» ու նրա մյուս ստեղծագործությունները հայ իրականության մեջ, Ա. Մերեթելու «Մուշա», «Գարուն» և բազմաթիվ այլ բանաստեղծությունները վրաց պոեզիայում անմիջականորեն արձագանքել են սոցիալ-քաղաքական այդ խմորումներին և ուղենշել հարևան ժողովուրդների գրականության ու կուլտուրայի զարգացման հետագա ատաշընթացը։

«Պեպոն» ոչ միայն հայ, այլև վրաց հասարակական-թատերական կյանքում պարզապես ու արդյունավետ դեր է խաղացել։ Այստեղ շնորհանք հիշել, որ դեռևս հեղինակի կենդանության օրոք, բացառությամբ «Եվայն կամ նոր Դիոգենես» ստեղծագործության, նրա բոլոր երկերը թարգմանվել են վրացերեն և բեմադրվել։ Սունդուկյանի պիեսների թարգմանության գործին հեղինակին ամենայն սիրով աջակցել ու անմիջական մասնակցություն են ունեցել դերասաններ՝ Կոտե Ղիֆիանին, Ասիկո Քարաձեն, Վասո Արաշիձեն և

¹ Վ. Ի. Լենին, Իրկեր, հ. 19, էջ 81

ուրիշները: Մասնավորապես «Պեպոյի» թարգմանութեանը կատարել է ինքը հեղինակը՝ վրաց նշանավոր պոետ Ռափայի էրիսթավիի օգնութեամբ 1874 թվականին: Մեկ տարի անց, 1875 թվականին «Պեպոյի» բնագործութունը վրաց թատրոնում ղեկավարել է հեղինակը, իսկ Պեպոյի դերում խաղացել է հայ թատրոնի սյուններից մեկը հանդիսացող Գևորգ Զմշկյանը:

«Դրոսեա» թերթը՝ Ստանդուկյանի ստեղծագործութունների վրաց բնագործութունների առթիվ գրել է.

«Այս վերջին տարվա ընթացքում մեծապատիվ Սունդուկյանը մտա է դառնում մեր բեմի վրա: Առաջին անգամ Քուսիսի ծանոթացրեց այդ տաղանդավոր հայ դրամատուրգին: Առաջինն այնտեղ խաղացին նրա հրաշալի «Պեպո» կոմեդիան: Ապա նրա մյուս դրաման՝ «էլի մեկ զոհը», որ երկու անգամ ներկայացրին այնտեղ և հիմա, ինչպես ասում են, նրա երրորդ դրամատիկական գործի բնագործմանն են պատրաստվում: Թրիլիսին այս դեպքում Քուսիսիին հետքերով է գնում. այստեղ էլ վերջերս երկու անգամ ներկայացրին «Պեպոն», իսկ անցած հինգշաբթի՝ ներկայացրին «էլի մեկ զոհը»¹: «Պեպոն» ոչ միայն բնագործելի, այլև հրատարակվել է վրացերեն թարգմանութեամբ, նախ «Եվերիսյում»², ապա և առանձին գրքով 1880 թվականին: Սունդուկյանի կերած կերպարների բնական կատարմամբ հանգես են եկել Կ. Ղիփիանին, Վ. Աբաշիձեն, Նատո Գարունիան, Մակո Սափարովա-Աբաշիձեն, Ն. Գոցիթիձեն, Ա. Ցագարելին, Ա. Մերեթելին, Կ. Մարջանիշվիլին, Ռ. էրիսթավին, Ա. Ղազբեգին, Ռոս Իմերելին, Ի. Բաբրաձեն և ուրիշները: Հատկապես Պեպոյի դերում իրենց փայլուն ընդունակութունները փորձել են Մաչարելին, Աժդուրելին, Գամկրելիձեն և նույնիսկ վրաց դրամատուրգ Ավրսենտի Ցագարելին:

«Պեպոյի» մեջ Ղիմզիձեի դերը մեծ հաջողությամբ խաղացել է Վ. Աբաշիձեն: Վրաց հասարակության լուրջ ուշա-

դրութեանն է արժանացել նաև Գիբոյի դերակատարումը Կ. Ղիփիանիի կողմից:

Դերասանուհի Ե. Չերքեղիշվիլու բնական գործունեության 10 տարվա հորելյանական երեկոյին՝ հոգեկարի ցանկությամբ ներկայացվել է «Քանդած օջախ» պիեսը: Հորելյանական երեկոներից հիշենք նաև Նատո Գարունիայի բենեֆիսը «էլի մեկ զոհ» պիեսով:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, Սունդուկյանի գործերը, շնչին բացառությամբ, բուրն էլ բնագործել են վրաց բեմերում և տարիներ շարունակ մնացել են հասարակության սիրած պիեսների ցանկում: Թեև ուղ միայն «Պեպոն» 1900-ական թվականներին Թրիլիսիում բեմագրվել է 20 անգամ: Այս թիվը չափազանց շատ բան է ասում, եթե նկատի ունենանք, որ հազվագյուտ պիեսներ են այս բախտին արժանանում: Մեծ հաջողություն են գտել վրաց բեմերում նաև «Քանդած օջախը», «Նաթաբայան» և մյուս պիեսները: Այս ամենը մի ավելորդ անգամ ապացուցում է անմահ Սունդուկյանի գերն ու նշանակությունը ոչ միայն հայ, այլև վրաց բեմերի գործունեության մեջ, թեև որքան բարձր գնահատության է արժանացել Սունդուկյանը իրեն ժամանակակից վրաց դրական-հասարակական գործիչների ու թատերասեր արհեստավորական-աշխատավորական խավերի կողմից, կարողում ենք այն անթիվ ու անհամար ելույթներում ու հողվածներում, որ չույս են տեսել վրաց մամուլում³:

Թրիլիսիի արհեստավորությունն ու ինտելիգենցիայի կենսունակ ու գործունյա մասը ոչ մի ջանք չի խնայել թատրոններին օգնելու գործում: Նույնիսկ այն քանից հետո, երբ 1874 թվականին հրդեհի ճարակ է դարձել Քամամշի բարձանսարան և այդ թվում թատրոնական շենքը, և փաստորեն թատրոնները մնացել են առանց մի հարմար անկյան ու միջոցների, թատերասեր մարդիկ ավելի մեծ ջերմությամբ են

¹ Այդ երկու տեղի է ունեցել 1896 թվականի դեկտեմբերի 11-ին Դոնա Եվալի, 1896, № 52, էջ 927—928):

² «Եվերիս», 1877, № 6, № 8, № 14, 1879, № 5—6: «Քաարի», 1886, № 44, № 45, № 47, 1887, № 5: «Եվալի», 1896, № 52, 1901, № 18, № 37, № 38 և այլն:

³ «Դրոսեա» պրոգրեսիվ թերթը, հիմնադրված 1866 թվականին, խրատագրել է նշանավոր փիլոսոփ և հասարակական գործիչ Գ. Մերեթելին:

² «Դրոսեա», 1876, № 6:

³ «Եվերիս», 1888, № 3, էջ 205—288:

չբջապատել բեմի կնուզգիաստ գործիչներին: Այլևս զրկվելով թատրոնական շենքից, շունենալով ամենամիհրիմալ պայմաններ նորմալ գործունեության համար, թատրոնական հասարակայնությանը սկսել է ամենայն սիրով կազմակերպել երեկոներ, համերգներ, հանդիպումներ, որտեղ մասնակցել են շատ զորոզներ, դերասաններ և այլն: Այդպիսի երեկոներից մեկում, ինչպես հիշատակում է Ի. Գրիշաշվիլին, կարգացվել է նաև Պեպոյի մենախոսությունը: «Երոբրա» թերթը հանդամանորեն անգրագարծել է թատրոնական շենքի հարցին. նա գրել է. «Պետք է թատրոն կառուցել երկու ժողովուրդների՝ վրացիների և հայերի համար... Մենք և հայերը եղբայրներ ենք... Ո՞վն երկու ժողովուրդները միմյանց նեցուկ չենեն, այդ դեպքում թատրոնի շենք կառուցելը կճնշտանա»:

Կարողալով անցյալ դարի վերջին տասնամյակներին հայ և վրաց մամուլը, պարզ է դառնում այն անժխտելի իրողությունը, որ հանձին Գ. Սունդուկյանի հայ և վրաց բեմերը գտել են իրենց ոչ միայն տաղանդավոր դրամատուրգին, այլև այդ երկու հարևան օջախները հանգուցող, փոխադարձ օգնությունը խրախուսող հասարակական-գրական մեծ գործչին:

Որպես սրտաբուխ ու ճշմարիտ ասված խոսք հիշենք մի հատված Կ. Ղիֆիանիի ելույթից, որ նա ունեցել է «Պեպոյի» 30-ամյակի առթիվ կազմակերպված հանդեսին.

«... Սվ ահա հանդես եկաք Դուք ու վրացական թատրոնի համար բացվեց մի այլ շրջան: Ակսվեց նոր կյանք: 25 տարվա լիթարգիական քնից հետո եկավ նրա վերածնության շրջանը: Այս վերածնության համար մեր թատրոնն ամբողջովին պարտական է Ձեզ, բանի որ Դուք, Ձեր դրամատիկական ստեղծագործությամբ նորից շունչ տվիք և թատրոնի մարած զարկերակին հնարավորություն տվիք նոր ուժով բաբախելու: ... Դուք ոչ միայն դրամատուրգ եք, այլև բանաստեղծ, բանաստեղծ, որ ստեղծագործում է ոչ թե շափած և ոչ էլ հանգավոր, այլ մեր կենդանի խոսքով:

Ձեր կերտած տիպերին մենք բուրբ հանդիպում ենք կյանքի հանապարհին, նրա յուրաքանչյուր քայլափոխին... բայց ոչ մեկը մեզանից ուշադրություն չէր դարձնում, մինչև

որ Դուք մարմնավորեցիք նրանց Ձեր դրամաներում և կատակերգություններում, մինչև որ դրանով մեր աչքերը բաց արիք շրջապատի նկատմամբ... Այդպիսի քանքարով Դուք թարմացրիք մեր հասարակությանը և մեզ մոտ երևան եկավ դրամատուրգների, ինքնուրույն հեղինակների ... մի ամբողջ պլեադա և այդպիսով Դուք առաջ մղեցիք մեր դրականությունը: Ձեր երկերի շնորհիվ մեզ մոտ առաջ եկավ դերասանների և դերասանուհիների մի ամբողջ պլեադա... Մի՞թե կարող են մոռացվել Ձեր Զամբախովի, Օսեփի, Զիմզիմովի, Պեպոյի, Կակուլու, Գիբոյի, Էփեմիայի, Օսկան Պետրովիչի, Իսաիի, Մասիսյանցի և Մարգարիտի տիպերը»: Նշանակալից փաստ է վրաց մեծ բանաստեղծ Ակակի Մերեթելու և հայ դրամատուրգ Գարբիել Սունդուկյանի անձնական ամենաանկեղծ մոտիկությունը: Ակակուն և Սունդուկյանին միմյանց կապող սերն ու հավատարմությունը երկու ժողովուրդների սիրո ու նվիրվածության խորհրդանիշն է: Վերևում արգեն ասվել է այն մասին, որ Ա. Մերեթելին նույնպես խաղացել է իր մտերմի պիեսներից մեկում: «Երոբրա»¹ թերթում գրախոսված է Ակակու խաղը, որտեղ հոգվածագիրը դերակատարումից դժգոհ մնալով, այն բացատրում է դերակատարի վատ տրամադրությամբ, որի մեջ նա գտնվել է այդ օրը: Ուստի և Միքայիլի աղերք («էլի մեկ զոհ»-ի մեջ) ստացվեց վատ ու անսիրտ»:

Ինքը՝ Ակակի Մերեթելին շատ բարձր կարծիքի է եղել Սունդուկյանի ստեղծագործությունների մասին: Հատկապես «Պեպոն» նա անվանել է «որք մարգարիտ»: «Պեպոն» ետեխում բեմադրվելու կապակցությամբ Ա. Մերեթելին գրել է. «Որք մարգարիտը որտեղ էլ ուզում է լինի, իր արժեքը չի կորցնում, հարուստի մետաքսյա հագուստին կարած լինի, թե ցնցոտի վրա»²:

Ակակի Մերեթելին երեք բանաստեղծություններ է նվիրել Սունդուկյանին (այդ թվում մեկը գրված մահվան առթիվ), որոնց մեջ իր և հայ դրամատուրգի անշահախնդիր բարեկա-

¹ «Երոբրա», 1876, № 6:

² «Վեբրա», 1901, № 170:

ժուժջան օրինակով երկու եղբայրակից ժողովուրդներին վա-
րակում է հայրենասիրության և մարդասիրության վսեմ գա-
ղափարներով: Ազգամիջյան կոտորածներ հրահրողների, թըշ-
նամանք սերմանողների դեմ ասված նրա կրքոտ խոսքերը
պատիվ են բերում ինչպես իրեն, նույնպես և այն ժողովրդ-
դին, որին պատկանում է նա: «Նախ և առաջ, — ասել է Մե-
րեթեյին, — ես վրացի եմ, քանի որ վրացի եմ ծնվել, բայց
այդ չի նշանակում, թե ես պիտի լինեմ շովինիստ, որպեսզի
ես ձգտեմ իմ ժողովրդի երջանկությունը կառուցել մի այլ
ժողովրդի գծախառնության վրա:

Իմ իղձն է հանդիսանում փոխադարձ բարեկամության
վրա հիմնված բոլոր ժողովուրդների համընդհանուր երջան-
կությունը:

1900 թվականին, վրաց թատրոնի հոբելյանական օրե-
րին¹, վրաց տաղանդավոր դրամատուրգ Ավքսենտի Յագարե-
լու հետ միասին Գաբրիել Սունդուկյանն ընտրվել է վրացա-
կան Գրամատիկական ընկերության պատվավոր անդամ:

Հայ և վրաց ժողովուրդները մեծ սիրով պատրաստվել են
նշելու ալեղարգ ստեղծագործողի «Պեպոյի» երեսնամյակը,
որը, փաստորեն, վեր է ածվել հեղինակի հոբելյանի, իր հաս-
ցեով տարբեր ժողովուրդների գրական-թատերական գործիչ-
ների կողմից մեծ քանակությամբ ստացված հեռագրերին,
ուղերձներին և ուղղությունի խոսքերին: Բազմապատակ հոբելյա-
րը պատասխանել է խմբագրությունը գրած մի նամակով,
որի մեջ ասվում է. «Աշխատելով երկու հայրենակից, ինձ մե-
ծապես սիրելի վրաց և հայ բեմերի համար, պատկերացնե-
լով ընդհանուր մարդկային զգացմունքներ ու դադափարներ,
ես շափազանց զգացված եմ ինձ ուղղած խոսքերով ու ճառե-
րով, ստացածս շնորհավորական նամակներով, հեռագրերնե-
րով և ուղերձներով»²:

Սունդուկյանի գլխավորությամբ հայ և վրաց թատրոննե-
րը գործունեության շատ ավելի մեծ շրջաններ են ընդգրկել
անցյալ դարի 90-ական թվականներից սկսած:

¹ 1900 թվականին լրացավ վրաց առաջին պրոֆեսիոնալ թատրոնի
կազմակերպման 50 տարին:

² «Տարազ», 1901, № 16:

19-րդ դարի վերջին քառորդում Անդրկովկասում արագ
թափով սկսում է զարգանալ կապիտալիզմը, որը արագորեն
փոխում է ոչ միայն երկրի էկոնոմիկան և հասարակական
հարաբերությունները, այլև ժողովուրդների գաղափարական
կյանքն ու սոցիալ-քաղաքական ըմբռնումները: Արդյունաբե-
րական ձեռնարկությունների աննախընթաց աճը, ինչպես
նաև երկաթուղային շինարարության լայն ծավալումը հսկա-
յական թվով բանվորական մասսա է ստեղծում: Կապիտա-
լիզմի զարգացման հետևանքով փոխվում է նաև գյուղի սո-
ցիալական դիմքը: Պրոլետարիզացիայի ենթարկված տաս-
նյակ հազարավոր աշխատավոր գյուղացիներ իրենց քաղաք
են նետում աշխատանք փնտրելու: Միաժամանակ արդյունա-
բերական կենտրոններում աշխատի կուտակումները լայն հնա-
րավորություն են տալիս արդյունաբերողներին՝ անխնա կեր-
պով կեղեքելու, շահագործելու դեռևս անկաղմակերպ բան-
վորական մասսաներին: Արդյունաբերական կապիտալիզմի
արագ զարգացման հետ միասին աստիճանաբար կազմա-
կերպվում են բանվորական մասսաները, որոնք արդեն
90-ական թվականների սկզբներին, մասնավորապես Քրիլի-
սիում, առաջին ելույթն են ունենում՝ իրենց բողոքն ու դժ-
գոհությունը արտահայտելու ստանհարված մարդկային իրա-
վունքների պաշտպանության նպատակով: Քրիլիսիում տեղի
ունեցած մասսայական ցույցերն ու գործադուլները տարած-
վելով արձագանք են գտնում նաև արդյունաբերական այլ
կենտրոններում:

Քրիլիսիի աշխատավորության որոշող դեմքն այլևս համ-
բարական-արհեստավորական խավերը չէին, այլ բանվորա-
կան մասսաները, որոնք արդեն զգացնել էին տալիս իրենց
ներկայությունը և պահանջներ էին դնում պրոպրեսիվ դեմո-
կրատական մտավորականության առջև:

Գ. Սունդուկյանը առաջիններից մեկն է նդել այն մարդ-
կանցից, որոնք իրենց ստեղծագործական կարողություններն
ի սպաս են դրել բանվորական կուլեկտիվների կուլտուրական
կյանքը կազմակերպելու գործին: Ուրախալին այն է, որ այդ
կարևոր նախաձեռնության մեջ հայ մեծանուն գրամատուրգը
քայլել է իր վրաց գաղափարակից ընկերների հետ միասին:

1893 թվականին կազմակերպված բանվորական թատրոնի բեմում (Ավճալում) խաղացել են «Պեպոն»: «Պեպոն» դարձել է բանվոր հանդիսականների ամենասիրած պիեսը: Փաստորեն, «Պեպոյով» է սկսել իր գործունեությունը նաև բանվոր թատերասերների մշտական խմբակը Հավլարքում: Այդ խմբակի աշխատանքները ղեկավարել է վրաց դերասան-անժիտյոր Ի. Իմեղաշվիլին: «Պեպոյի» հորեյական օրերին ալեգորգ դրամատուրգը հանդիպում է ունեցել բանվորների հետ (Ավճալայի սրահում): Վրաց գրողներ Ա. Ցազարեյին և Ս. Մղալոբիշվիլին նույնպես ներկա են գտնվել այդ անմտաց հանդիպմանը: Բանվոր հանդիսականները բուն ցընժությունը են ընդունել «Պեպոյի» մեծատաղանդ հեղինակին:

Կենդանության տարիներին տաղանդավոր դրամատուրգը մշտապես շրջապատված է եղել հայ և վրաց ժողովուրդների սիրով ու գուրգուրանքով: Ինչպես նրա գործունեության, այնպես էլ երկերի բնական կյանքի հորելյանները լայն արձարանք են գտել եղբայրակից ժողովուրդների ամենալայն շրջաններում: Գ. Սունդուկյանի մահը մեծ կորուստ էր ինչպես հայ, նույնպես և վրաց բեմի համար: Վրացական «Թեմի» թերթը, Գ. Սունդուկյանի մահվան առթիվ գրած առաջնորդում, այս կերպ է քննադատում մեծ դրամատուրգին. «Սունդուկյանը իր ամբողջ կյանքով և գործունեությամբ ապացուցեց, թե ինչպիսի սիրով ու հարգանքով էր լեցուն նրա սիրտը դեռևս պատանեկան տարիքից հանդեպ այն ժողովուրդը, որի մայրաքաղաքում ծնվել և մեծացել էր նա»:

Գ. Սունդուկյանը, իրօր, սիրել ու զնահատել է վրաց ժողովուրդին և իր բեղմնավոր կյանքը նա նվիրաբերել է եղբայրական ժողովուրդների սրբազան բարեկամության մեծ ու շնորհակալ գործին:

* * *

Հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը լուրջ խոչընդոտների է հանդիպում անցյալ դարի 80-ական թվականներից սկսած, երբ հայ բուրժուազիան և վրաց ազ-

նրվականությունը, սրպես մրցակիցներ, անհավասար պայքարի մեջ են մտնում միմյանց դեմ՝ երկրի տնտեսության ու կուլտուրայի ղեկավարությունը մեկը մյուսից զրավելու նպատակներով: Վրաց բուրժուականացող ազնվականությունը անկարող լինելով մրցելու հայ խոշոր, արդեն ամրապնդված, բուրժուազիայի հետ, ամեն ճիգ ու ջանք թափում է «իր» սեփական շուկան ունենալու, ազատ ու անկաշկանդ առևտրական-արդյունաբերական գործունեություն ծավալելու համար: Ահա այս շրջանում էլ ծայր են առնում նացիոնալիստական-բուրժուական այն խմորումները, որոնք խորթ լինելով ժողովուրդների ոգուն և վնասելով նրանց բարեկամությանը, իրենց մեջ են առնում նաև Անդրկովկասում ապրող ժողովուրդների հետամնաց խավերին և լուրջ բնույթ ստանում: Հաշկական բուրժուազիան, որ գործունեության լայն ասպարեզ էր գտել Վրաստանում և երկրի տնտեսական կյանքում վճռական դեր էր խաղում, անցյալ դարի 80-ական թվականներից սկսած զգում է նոր բարձրացող, բայց դեռևս թույլ վրացական բուրժուազիայի անհանգստությունն ու նացիոնալիստական ելույթները, որոնք մեծապես խրախուսվում էին ցարական շինովնիկական ապարատի ու նրա պաշտանակած օրգան հանդիսացող «Кавказ» լրագրի կողմից:

Ահա այս պայմաններում է առաջ գալիս հակահայական նացիոնալիզմը, որը նպատակ է դնում թունավորելու եղբայրական ժողովուրդներին և նրանց մղելու ընդհարումների ու կոտորածների: Հայ, ինչպես նաև վրաց բուրժուազիան ու ազնվականությունը, միջոցների մեջ խտրություն չդնելով, անվերջ հերյուրանքներ են թափում միմյանց վրա, ոտնատակ տալիս ազգային ամեն մի արժանապատվություն: Վրաց ղեկավարող ուժերը հայ վաճառականության անմարդկային արարքները, նենդ ու շարամիտ գործելակերպը վերագրում են ամբողջ հայությանը, հայ ժողովուրդին համարելով շահամուլ, դժուր, խարդախ ու դադանարար: Այդ նույն կերպ էլ հայ բուրժուազիան ու նրա զաղափարախոսները վրաց ազնվականության նեխված էությունը, դատարկապարտ կյանքը, առասպելական ժուլությունն ու սրկրամոլությունը հա-

ձարում են ամբողջ վրաց ժողովրդի հատկությունները, նրա ազգային բովանդակության բնորոշ գծերը:

Հայ և վրաց դեմոկրատական ուժերը լուրջ կերպով անհանգստանում են այդ բանի համար: Նրանց համար պարզ է քառնում, որ նացիոնալիզմի թույնը լրջորեն կարող է վնասել հայ և վրաց ժողովուրդների փոխհարաբերություններին և անախտորժ զեպքերի ու իրադարձությունների պատճառ հանգիստանալ: Այս իմաստով հետաքրքրական են վրաց ժողովրդի մեծատաղանգ բանաստեղծ ու հասարակական գործիչ Ակազի Մերեթելու ելույթները «Երոսբա» թերթի էջերում, որտեղ Տեծ հումանիստը գրել է. «Երկուստեղ ասլորում են երեք ազգություն՝ վրացիք, հայեր և թուրքեր. սրանք միմյանց օգնելով կհարստանան — թշնամանալով կաղքատանան: Եթե ենթադրենք, որ այսօր վրաստանում հայերը չլինեին, պետք է հալատացած լինեինք, որ սրանց տեղը վրացի վաճառականները կլինեին, սրոնք նույն ձևով կտանեին առևտուրը, նույն ձևով կօգտվեին հարստից ու աղքատից, նույն ձևով կշահեցնեին փողը: Այդ շարիքի մեջ հայությունը և հայ ժողովրդի հատկությունը չէ մեղավոր, այլ վաճառականության վատ հատկությունն է մեղավոր: Այստեղ ինչ մեղավոր է ժողովուրդը»¹:

Նույն բովանդակությամբ՝ հայ և վրացի ժողովուրդների բարեկամության ամրապնդման նպատակներ հետապնդող այլ հոդվածներ են տպագրվում նաև վրաց այլ պարբերականներում ու թերթերում: Հատկապես 1880-ական թվականներից սկսած այդ շարժումը շատ ավելի խոր ու ծավալուն բնույթ է ստանում: Այսպես օրինակ, պարբերաբար հոդվածներ են լույս տեսնում «Վերիա» թերթի 1887 թ. № 83—88, № 259, 1888 թ. № 241, 1889 թ. № 79, 121, 123 և այլ համարներում:

Հայ մեծ բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը Մոսկվայի հայ ուսանողության հետ ունեցած հանդիպման ժամանակ ճշգրտապես նկատել է, որ «վաճառականությունը մարդկային

գրադճուճքների մեջ ամենն ավելի անբարոյականացնողն է»²: Ե՛վ Պատկանյանը, և՛ Ա. Մերեթելին մոտավորապես նույն թվականներին արտահայտել են այն ճշմարտությունը, ըստ որի ո՛չ թե հայր կամ վրացին են այլանդակվել, ո՛չ թե ժողովուրդներն են կրում այդ արատները, այլ բուրժուազիան, որը ազգություն չի ճանաչում և հավասարապես թալանում ու կեղեքում է մարդկությանը: Ի դեպ նշենք, որ թե՛ Մերեթելին և թե՛ Պատկանյանը իրենց կրթությունն ստացել են Պետերբուրգի համալսարանում, սովորել են միասին և ավարտել միևնույն տարում՝ 1862 թվականին²:

Ոչ միայն վրաստանում գործող անձնավորությունները, այլև Մոսկվայի ու Պետերբուրգի հայ և վրաց ուսանողությունը բարեկամական ջիւղ միջավայր են ստեղծել երկու ժողովուրդների դարավոր կապերն էլ ավելի ամրացնելու, փոխադարձաբար միմյանց ճանաչելու նպատակներով: 1889 թվականին «Մշակ»-ում լույս տեսած մի հոդվածի մեջ կարդում ենք. «... որքան համակրության արժանի է այն ծգտումը, որ այս տարի սկսել է նշմարվել հայ և վրաց ուսանողության լավագույն մասի մեջ: Բանը նրանումն է, որ մի բանի հայեր ու վրացիք տարվա սկզբում կազմեցին մի շրջան, որի անդամների թիվը հետզհետե շատանում է, և որի նպատակն է, կարողության լավ, նպաստել այդ ազգությունների մեջ համերաշխության և բարեկամության գաղափարը տարածելու և հաստատելու: Այդ շրջանի պարապմունքը կհայանա հետևյալ կետերում. 1) նախ ուսումնասիրել ներկա հարաբերությունները երկու հարևան ազգերի մեջ և սրան համեմատ միջոցներ առաջարկել նրանց մոտեցնելու համար. 2) կարճատև կերպով ծանոթանալ միմյանց պատմության և դրականության պատմության նշանավոր փաստերի և զարգացման կետերի հետ. 3) մանրամասնորեն ուսումնասիրել միմյանց ներկա դրությունը թե՛ տնտեսական, թե՛ հասարակական և թե՛ մտավոր, այսինքն գրականությունը, մամուլը և այլն,

¹ Գ. Թ. Պատկանյանի արխիվ, № 230:

² Տե՛ս В. В. Григорьева, Императорскія С.-Петербургскія университет, 1870, стр. 112.

¹ Տե՛ս, 1879 թ. «Երոսբա» թերթի №№ 13—16-ում լույս տեսած Ա. Մերեթելու «Մենք և մեր ժամանակը» հոդվածաշարը:

գրել սեփերատներ այդ հարցերի մասին և տպել թե՛ հայոց և թե՛ վրաց թերթերի մեջ¹։ Նույն նպատակները հետապնդող մի ընկերություն է կազմվում նաև Փրիլիսիոմ, բաղկացած երեք անձից (Մ. Նավասարդյան, Ղ. Միրիմանյան և Գ. Տեր-Դավթյան)։ Այդ ընկերությունը ձեռնամուխ է լինում առանձին գրքերով լույս ընծայելու ինչպես հայերի, նույնպես և վրացիների գեղարվեստական նշանավոր երկերը թարգմանաբար²։

Սկսվում է մի ժրջան և շնորհակալ աշխատանք հայ և վրաց առաջավոր գրական ու հասարակական գործիչների նախաձեռնությամբ։

1891 թվականին «Մուրճ»-ի էջերում³ տպվում են Ի. Ծավճավաճի նշանավոր «Կացիա աղամիանի» (Մարդ է արդյոք աղամորդին) պատմվածքը, որը, ըստ «Մուրճ» ամսագրի վկայության, «մեծ հրճվանքով կարդացվել է հայ ընթերցողներից և որը մեծ պատիվ է բերում թե՛ հեղինակի տաղանդին և թե՛ վրաց գրականության առհասարակ»⁴։ «Կացիա աղամիանի» ստեղծագործությունը, որը զրված է 1859—1863 թվականներին, գունդ կերպով պատկերում է հոգեկան բովանդակությունից զուրկ, անասնական կյանքով ապրող վրաց ֆեոդալ-կալվածատերերին, այն կալվածատերերին, որոնք իրենց գոյություն իմաստը գտել են միայն կուշտ ուտելու մեջ։

Նույն թվականներին հայ այլ պարբերականներում թարգմանաբար տպագրվել են նաև Ի. Ծավճավաճի «էլիզիա»⁵ և «Քուսի ափին»⁶ բանաստեղծությունները։

«Մուրճ», «Տարազ», «Մշակ» և այլ պարբերականներում գրախոսականներ են լույս տեսել Ի. Ծավճավաճի ստեղծա-

գործությունների մասին¹, որոնց մեջ գրախոսողները (Տ. Փիրումյան, Ղ. Միրիմանյան, Գ. Տեր-Դավթյան) շատ բարձր գնահատելով վրաց տաղանդավոր գրողի ստեղծագործական վարպետությունն ու երկերի գեղարվեստական-հասարակական արժեքը, միաժամանակ ընդգծել են հայ հասարակության շերտ վերաբերմունքն ու հետաքրքրությունը վրաց ստեղծագործողի երկերի նկատմամբ։

1890-ական թվականներին հայ մամուլի էջերում տպագրվել են այլ անվանի հեղինակների ստեղծագործությունները։ Այս կերպ լույս են տեսել Ալեքսանդր Ղազրեգիի՝ «էլիսո»², «Բերդիա»³, «էլգուչա»⁴, «Ձորի նահապետ Գոշա»⁵ և այլ ստեղծագործությունները։ Քեորգի Մերեթելուց լույս է տեսել առանձին զրքով (1895, Փիլիս) «Մարդ-Առյուծ» առասպելական պոեման։ Նիկոլոզ Բարաթաշվիլին հայ ընթերցողներին է ներկայացրել⁶ «Նժույզ» անմահ բանաստեղծությամբ։ Նույն ամսագրի մեջ տպվել է Հարություն Միրիմանյանի կողմից զրված անմահ բանաստեղծի համառոտ կենսագրությունը։

Էզնասե Նինոշվիլու երկան դալը հայ մամուլում նոր որակ է մտցնում այդ նախաձեռնության մեջ։ Մեսսեղապիստ գրող, վրաց տաղանդավոր արձակագիր է. Նինոշվիլուց տպվել է «Կարգադրություն» պատմվածքը և ապա նույնը՝ «Հրաման» վերնագրով լույս ընծայվել առանձին հրատարակությամբ (1904, Փիլիս)։

Ա. Ղազրեգիի (Մոշխուբարիձե) ստեղծագործությունները հայերեն թարգմանությամբ տպագրվելու առթիվ լույս տեսած գրախոսականները լայն կերպով մասսայականացրել են հե-

¹ «Մշակ», 1889, № 39, «Նամակ Մոսկվայից» հոդվածից։

² «Տարազ», 1894, № 30, էջ 450։

³ «Մուրճ», 1891, № 4, էջ 439—469, № 5, էջ 588—620, № 6, էջ 711—745։

⁴ Նույն տեղում, 1892, № 3, էջ 506։

⁵ «Տարազ», 1891, № 29, էջ 432։

⁶ «Արար», 1893, գիրք Ա., էջ 116։

¹ «Մուրճ», 1891, № 4, էջ 435—438; «Տարազ», 1893, № 27, էջ 430—432; «Մշակ», 1898, № 52։

² «Մուրճ», 1892, № 3, էջ 369—388, № 4, էջ 552—565։

³ «Տարազ», 1893, № 35, էջ 536—541, № 36, էջ 551—555։

⁴ «էլգուչա», վեպ, թարգմ. Տ. Փիրումյան, Փիլիս, 1893։

⁵ «Մուրճ», 1894, № 1, էջ 9—42, № 2, էջ 181—211, № 3, էջ 340—357։

⁶ «Տարազ», 1893, № 15, էջ 231—233։

դիմակին ու նրա երկերը Այգ կերպ գրախոսվել են «Էլիտա»¹ և «Էլզուշա»² վեպերը:

Հայ և վրաց գրողների մահը արժանի կերպով են նշել եղբայրական ժողովուրդների Քրիլիսիոսմ լույս տեսնող պարբերականները: «Վեպերիան» մի շարք համարներ է նվիրել Բաֆֆուն, լայնորեն լուսաբանել է հայ մեծ վիպասանի կյանքը ու գործունեությունը: Վրաց թերթը մեծ նշանակություն է տվել վրաց ժողովրդին Բաֆֆու հետ ժանոթանալու գործին, ինչպես նաև հիացմունքով խոսել է հայ գրողի թողած գրական ժառանգության մասին: «Մշակի» վկայություններ իմանում ենք, որ «Վեպերիա» խմբագիրը անձամբ ներկա է եղել Բաֆֆու թաղմանը և պսակ դրել նրա գագազին վրա³:

Ա. Ղազմեզի և Նինոզվիլու կյանքերի ավարտը, մեկը՝ հոգևորական հիվանդների մեջ, իսկ մյուսը՝ թոքախտաւորի անկողնում, արժանավայել կերպով նշվել են հայ մամուլի էջերում: Հայ մամուլի նշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Գրիգոր Արծրունու թաղման հանդեսին ընդարձակ ելույթ է ունեցել և իր ժողովրդի ցավակցությունը հայտնել եղբայրական ժողովրդի խոշոր գործիչ, վիպասան ու խմբագիր Գեորգի Մերեթելին: Իր ցավակցական խոսքի մեջ նա մեջբերում է արել Գր. Արծրունու խոսքերը՝ հայ և վրաց ժողովուրդների բարեկամության կարևորության մասին⁴:

Գ. Մերեթելին, առհասարակ, շատ մոտ է կանգնած եղել հայ գրական շրջաններին: Մշակ-մեղվական-նորգարական պայքարը շոշափել է նաև հայ և վրաց ժողովուրդների փոխհարաբերությունների հարցերը: Առաջինները կողմնակից են եղել երկու ժողովուրդների համերաշխության ու համագոր-

ծակցության, իսկ երկրորդները վտանգավոր են համարել այդ և կողմնակից եղել ազգային մեկուսացման: Գ. Մերեթելին մի շարք առիթներով ողջունել է «Մշակ»-ի վարած քաղաքականությունը, որի համար էլ հալածվել է վրաց նացիոնալիստներից⁵:

1894 թվականին «Եվալի»-ի մի շարք համարներում խրատագույն ձևով քննադատվել են «ինքնուրույն» քաղաքականության, այլ խոսքով՝ մեկուսանալու կամ հայ ժողովրդից վրացիներին անջատելու, ապու և հակադրելու քաղաքականության ներկայացուցիչները:

Որքան էլ բուրժուազիան փորձել է անպ խրել երկու ժողովուրդների միջև, հակադրել միմյանց, այդ ժողովուրդների առաջավոր մարդիկ, լուսավոր դործիչները աշխատել են ձեռք ձեռքի տված և, առաջնորդվելով մարդասիրական վեհ գաղափարներով, պայքարել են նացիոնալիզմի բուրժուազիականների դեմ: Լենինը ուսուցանում է, որ «... ամեն մի լիբերալ-բուրժուական նացիոնալիզմը ... «ազգային կուլտուրայի» լոզունգի տակ զորձնակաճում անց է կացնում բանվորների մասնատում, գեմոկրատիայի ուժազրկում, շարժական ղործարքներ ճորտատերերի հետ՝ ժողովրդական իրավունքները և ժողովրդական ազատությունը վաճառելու վերաբերյալ»⁶: Լենինյան այս պայծառ դրույթը ամբողջապես վերաբերում է նաև Անդրկովկասին, մասնավորապես 80—90 թվականներին Քրիլիսիոսմ և այլ վայրերում բորբոքված նացիոնալիստական կրքերի հեղինակներին: Բանվորական-դեմոկրատական ուժերը անցյալ դարի վերջին տասնամյակներից սկսած արդեն զգացնել են տալիս իրենց գոյությունը և աստիճանաբար կազմակերպվում ու պայքարի առաջին փորձերն են կատարում: Հայտնի է, որ Քրիլիսիոսմ գանվող Ջեյցերի Փաբրիկայի բանվորները, որոնք ընչին վարձատրությանը ստիպված էին օրական 16—17 ժամ աշխատել, 1878 թվականին կազմակերպված ղործադուլ են հայտարարում: Այգ

¹ «Մուրե», 1892, № 3, էջ 505:

² Նույն տեղում, 1893, № 9, էջ 1409—1413:

³ «Մշակ», 1888, № 51:


⁴ Ահա այդ մեջբերումը. «Վրացի եղբայրներ, մեր և ձեր վիճակը, թե՛ ուրախության և թե՛ վշտի կողմից, միշտ մեկ է եղել նույնիսկ հին ժամանակներից: Մենք վրացի և ազգակից ժողովուրդներ ենք եղել... պետք է մենք, որպես մամուլի ներկայացուցիչներ, քարոզենք ու զարթեցնենք վրացիներին ու հայերին մեջ սեր և եղբայրություն, որովհետև անկարող ենք առանց փոխադարձ բարեկամության հասնել մեր կատարելության» («Տարազ», 1892, № 50, էջ 658):

⁵ ՅՄՍ Գ. Մ. Туманов, Характеристики и воспоминания, Тифлид, 1913, стр. 14.

⁶ Վ. Ի. Լենին, երկեր, Կ. 19, էջ 436—437:

առաջին գործադուլն է Քրիստիան: Այնուհետև հայտնի են՝ Միրզոնի տեքստիլ ֆաբրիկայի բանվորների գործադուլը (1870—80 թթ.), Քրիստիի երկաթուղայինների (1890 թ.), Մանթաշևի գործարանի բանվորների (Բաթումի, 1892), Բոգաբջյանցի ծխախոտի ֆաբրիկայի բանվորների (1894—1895) գործադուլները և այլն: Այդ մասին հետաքրքրական տեղեկություններ է պարունակում հին ուսուցիչներ Մ. Չոզրիշվիլու ինքնակենսագրությունը², ուր, ի միջի այլոց, զԸՐՎած է, որ Քրիստիում բանվորական շարժումները և միությունները սկիզբ են առել 1877 թվականից սկսած: Հետաքրքիր է նաև այն, որ բանվորական միությունից ծնունդ են առել ինքնուս գրողներ ու բանաստեղծներ (օրինակ բանաստեղծ Իսևեր Դավիթաշվիլին), որոնք հարազատորեն արտահայտել են արհեստավոր-բանվորների տառապանքներն ու իղձերը: 1889 թվականից մինչև 1899 թվականը բնդմիջումներով լույս է տեսել բանվոր արհեստավորների անլեգալ ձեռագիր ամսագիրը՝ երբեմն «ՅՊՅ» (բանվոր), երբեմն էլ «ՅՈՇՈՇՈՇՈ» (արշալույս) անուններով: Այդ ամսագրերի հեղինակները բոլորն էլ բանվոր-արհեստավորներ են եղել: Այսպիսով, դանդաղ, բայց համարձակորեն հասարակական կյանք է մտել մի նոր դասակարգ—բանվոր դասակարգը: Մեղ հայտնի է նաև վրաստանի խոշոր քաղաքների բանվոր դասակարգի ազգային կազմը. վրացիներ, հայեր, ռուսներ և ադրբեջանցիներ: Տարբեր ազգություններից բաղկացած այդ մասսան անցյալ դարում դեռ չի ունեցել իր սեփական ղեկավարությունը և մարտական գաղափարախոսությունը: Այդ իսկ պատճառով գործունեության լայն ասպարեզ է բացվել նացիոնալիստական-բուրժուական ամեն ազդի ու գույնի դադափարախոսների համար:

Չնայած այդ բոլորին, աշխատավորությունը մնացել է գեմակրատիզմի ու մարդասիրության դիրքերում և չի ընդու-



¹ Տե՛ս Փ. Махарадзе, Очерки революционного движения в Закавказье. ГИЗ Грузии, 1927.

² Տե՛ս, «Ռեուլյուցիայի տարեգրություն», 1925, № 1 (11), (վրացերեն):

«Ընենավոր» Տերյանի բարգմանության ինքնագիր անվանաթերթը

Անկ նացիոնալիզմի կործանարար թույնը: Հայ և վրաց առաջավոր գործիչները միահամուռ ջանքերով ձախողել են բուրժուա-նացիոնալիստների բոլոր փորձերը աշխատավորութեան ուշադրութեանը ուղղուցիոն-դասակարգային պայքարից շեղելու, նրա ուժերը ջլատելու և ազգամիջեան կոտորածներ հրահրելու ուղղութեամբ: Հայ, վրաց մամուլի, գրականութեան, թատրոնի, դպրոցի և այլ բնագավառների գործիչներն իրենց ուշադրութեանը բնեւեւ են այդ կարևոր հանգամանքի վրա: Հայ և վրաց ժողովուրդների փոխհարաբերութեանների հարցը դարձել է օրակարգի ամենակարևոր և այսօր հարցերից մեկը:

Գրականութեանը դարձել է այն հիմնական զենքը, որի ուժով Անդրկովկասում ապրող ժողովուրդները սերտ համագործակցութեան ուղիներ են հարթել: Դեռևս 1891 թվականին «Մուրճ» ամսագիրը տպել է Տիգրան Փիրումյանի հոդվածը, որի մեջ, ի միջի այլոց, ասված է. «Այժմ առաջ ունենալով այն անհաճո հանգամանքը, որ Կովկասի երկու ամենաքաղաքակիրթ ժողովուրդները շատ քիչ տեղեկութեան ունեն փոխադարձաբար միմյանց ազգային կյանքի մասին և որ հայ գրականութեան վրաց համար և վրաց գրականութեան հայոց համար՝ երկու անծանոթ աշխարհներ են,— մտադրվեցի ծանոթացնել հայ ընթերցողներին մեր գրացի— վրաց գրականութեան հետ, սկսելով «Մուրճի» սույն համարից տպել հարգելի իշխան Իլիա Ճավճաժաճեի ամենագլխավոր գործը»¹: Իսկ մենք գիտենք արդեն, թե որ գործին է վերաբերում խոսքը: Այդ թվականին, իրոք, տպագրվել է վրաց գրողի «Կապիա-ադամիանի» վիպակը:

Աշուղ Ջիվանին, որ մի շարք տարիներ ապրել է Քրիլիսիում, ջերմ ընդունելութեան է դուրս ոչ միայն հայ, այլև վրաց երաժշտասեր հասարակութեան կողմից: Սանասարյանցի հուղարկավորութեանը մասնակցելու նպատակով Պոլսից Քրիլիսի եկած Տիգրան Արփիարյանը «Աշուղի ճիւղն» վերնագիրը կրող իր հոդվածի մեջ նկատում է, որ «Այդ հայ երգիչը

¹ «Մուրճ», 1891, № 4:

յարգելի է Կովկաս ոչ միայն մերայնոց թով, այլև վրացոց ալ, որք կհամակրեն անոր¹։

Թբիլիսին մեծ տրադիցիա է ունեցել աշուղական արվեստի զարգացման բնագավառում։ Մլխավորապես քաղաքի արհեստավորութունն է կյանք տվել, ունկնդրել և անմահացրել աշուղներին, որոնք մեծ մասամբ ծագումով հայ լինելով, տիրապետել են երեք և ավելի լեզուների, իրենց սքանչելի երգերը հորինել և կատարել են Անդրկովկասի ժողովուրդներին հասկանալի լեզուներով, նրանց սրտին ու մտքին հարազատ թեմաներով։

Թվով մի քանի տասնյակի հասնող հայ աշուղներ են ապրել Թբիլիսիում, երգել ու փառարանել վրաց մայրաքաղաքը նրանց սիրագործ կերպի մեջ որդիական սիրով մարմնացել է և՛ վրաց աշխարհը՝ չքնաղ բնությամբ ու կախարհիչ տեսարաններով, և՛ Վրաստանի «գյողալները» այնքան հրապուրիչ ու զեղեցիատես, և՛ աշխատավորական-արհեստավորական մասսաների խրախուճանքներն ու կենցաղավարութունը։ Վրաց աշխարհը՝ զեղատեսիլ ու հմայիչ, շատ-շատերին է դուրձել, այդ թվում նաև հայ ստեղծարարներին։

Անցյալ դարի հայ աշուղ Շիրինը իր հանրահայտ «Ալգեպուն» տաղի մեջ այսպիսի պատկերացում է տալիս Վրաստանի մասին.

Նուրսը ասում է, թե՛ ջաննաթումը շատ հուրի կա,
Ինչ Վրաստանին է, ջաննաթին էլ չնքան չի լինի...²

Որքան լավ է ասված և որքան ջերմութուն կա այս տողերի մեջ³։ Մի այլ աշուղ՝ Շամշի-Բալին, որ մտավորապես ժամանակակից է Շիրինին, «Թիֆլիս» մուխամմազի մեջ բարձր

ողևորությամբ փառարանել է հայ և վրաց ժողովուրդների համար հավասարապես սիրելի Թբիլիսին։ Ահա այդ երգը.

Ով չի տեսել, չցիտե լաղաթը, համը Թիֆլիսի,
Գիշեր, ցերեկ չի լուսմ սոյքաթը, դամը Թիֆլիսի,
Ջովղ ու սաֆով է անցնում ամեն մի ժամը Թիֆլիսի,
Համ է տալիս մաջլիսին ին սակեմաթը Թիֆլիսի,
Մեյր ու սովդաշի միջին, չես տեսնի դամը Թիֆլիսի,
Գյուլջանեթը թոխուն, երգի ու պարի հազ ունին,
Թովուղի պես զարգարովել, թուրանի պես փարվազ ունին,
Ջահել-ցուհուր ուրախ, համաշա սոյքաթ, սաղ ունին,
Մշտական թալհոն, սթախ, շրտղվան փիանդազ սնին,
Շամշի-Բալին ասում է՝ այդ է սիթամը Թիֆլիսի⁴։

Ոչ միայն աշուղ-քանաստեղծները, այլև 19-րդ դարի հայ նշանավոր գրողներն ու արվեստագետները, որոնք երկարատև բնակվել են Թբիլիսիում, կամ մտափկից ու անմիջակաեորեն ծանոթացել են վրաց աշխարհի հետ, իրենց ստեղծագործությունների մեջ, կամ հրապարակախոսական աշխատություններում մի առանձին սիրով ու քնքրությամբ են արտահայտվել այն քանի մասին, ինչը հավասարապես թանկ է և՛ վրացու և՛ հայի համար։

Բաֆֆին, որի հասունության մեկ տասնամյակից ավելի տարիները անցել էին Թբիլիսիում, իր լավագույն գործերից շատերը գրել է վրաց ժողովրդի մայրաքաղաքում կամ ուղղակի նաև վրաց ժողովրդի կյանքից առած փաստերով։ Թբիլիսին կարևոր դեր է խաղացել նրա կյանքի ու ստեղծագործական աշխատանքի մեջ։ Այդ քաղաքի մասին նա գրել է. «Արդարև, մի քանի եվրոպական քաղաքներում, որոնց թվումն

կանին գրած «Владикавказ—Тифлис» լուսաստեղծության մեջ այսպես է ասում Վրաստանի մասին.

Я знаю:
глупость — эдемы и рай!
Но если пелось про это,
должно быть
Грузию,
радостный край
Подразумевали поэты.

¹ «Հայ աշուղներ», Երևան, 1937, էջ 46։

¹ «Արևելք», 1891, մայիսի 18։

² «Երգարան», Հուլյանոցատ, 1948, էջ, 330։

³ Այս կապակցությամբ ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում ևս մի վկայություն, մեր օրերի մեծագույն բանաստեղծի կողմից երգված, այն մասին, թե ինչպես մեր ժամանակներում էլ բանաստեղծները Վրաստանի մասին արտահայտվելիս այն պատկերում են որպես մի չքնաղ երկիր, զեղեցկության մարմնացում։ Մուսկովսկին 1924 թվա-

է և Քիֆիսը, հայերի ընտանեկան կյանքը նոր կերպարանք ստացավ:

Որպիսի՞նք:

Հայը դուրս բերավ հարեմի դարավոր բանտարկությունից յուր կիներ, նա ձգեց նորա երեսին ծածկապահուստի քողը, նա թույլ տվեց նորա շնորհի խոսել և մտածել օտարների հետ: Եվ սիրախնդիր տղամարդը, որո համար հայ կինը մի ծածկյալ գանձարան էր, պատիվ ունեցավ հանդիպել նորան թատրոններում, պարահանդեսներում, փողոցներում և ամենայն զրոսարաններում¹:

Այսպիսին էր Քրիլիսին և՛ Բաֆթու այնտեղ գտնված տարին, և՛ զրանից առաջ և՛ զրանից հետո: Անդրկովկասյան ժողովուրդների կուլտուրայի ու գրականության զարգացման գործում վճռական դեր է խաղացել այդ քաղաքը, որի գովքը այնքան սրտառու էր երգերով հնչել է հայ և վրաց աշուղների ու բանաստեղծների շուրթերից:

Եվ պարմանալի չէ, որ այդ քաղաքի բախտը այնքան հետաքրքրել ու այնքան նյութ է տվել ոչ միայն հայ մատենագիրներին հին դարերում, այլև անցյալ դարի Քրիլիսիի կյանքը ճաշակած հայ վիպագիրներին ու բանաստեղծներին:

Շատ ճիշտ է նկատել Քրիլիսիի կյանքին ու պայմաններին լավատեսլիկ Հովհ. Թումանյանը, որ այդ քաղաքում, ուր բազմազգ ու բազմալեզու ժողովուրդներ էին բնակվում, յուրաքանչյուրն իրեն զգում էր, ինչպես իր տանը, և ոչինչ ու ոչ մի ուժ ի վիճակի չէր խափանելու նրանց ներդաշնակ կյանքը:

«...էն մի առանձին, յուրատեսակ աշխարհք էր, որի մեջ եկել միացել էին կովկասյան ժողովուրդներն ամենքն իրենց առանձնահատուկ կյանքով ու երանգով,— գրել է Թումանյանը,— և հորինել էին ազգերի մի վերին աստիճանի գրավիչ ու հետաքրքրական խառնուրդ ու կյանք: Եվ որովհետև էդ կյանքին տոն տվողը վրացական զվարթ ոգին էր, էդ պատճառով էլ Քիֆիսը իրարու խորթ տարրերի էտնոգրաֆիական մի ժողովածու չէր հանդիսանում, այլ մի ուրախ

հարսանքատուն, ուր հրավիրված էին կովկասի բոլոր ազգերն ու ցեղերը — քեֆ քաշելու²:

Այս գնահատականի մեջ կարևորը ժողովուրդների միմյանց նկատմամբ ունեցած եղբայրական հարազատ վերաբերմունքն ու նրանց լավատեսական կենսուրախ ոգին է:

«Քիֆիսն իր աշխարհի զրույթունով,— նկատել է Բաֆթին,— ներկայացնում է մի կենտրոն, ուր հանդիպում ենք մեր երիտասարդության բազմատեսակ տիպերին: Այստեղ են գտնվում մեր մտավոր գործության ներկայացուցիչները — մեր ինտելիգենցիան, այստեղ է գործում մեր մամուլը, այստեղ են խմբվում զավառներից մեր նշանավոր ուժերը...»³:

Եվ իրոք, հայ գրականության արեւելահայ հատվածի նշանավոր բոլոր դեմքերը իրենց ստեղծագործական կյանքի մի զգալի մասը անց են կացրել Քրիլիսիում: Իսկ այդ թվում ունենք նաև գրողներ, որոնք ծնվել և մշտապես բնակվել են այդ քաղաքում: Այսպիսով, Քրիլիսին եղել է հայ գրականության կենտրոններից մեկը: Այդ քաղաքի կյանքի ու կենցաղի ամեն ինչը չէ, որ դուր է եկել հայ մեծանուն գրողներին: Դեռևս Բաֆթին է նկատել բարբերի այն վատթարացումը, որ առաջ է Կիկի օտարամուլության հետևանքով:

Հայ մեծ վիպագիրը շափածո մի քառյակի մեջ այս կերպ է բնորոշել երևույթը.

Վատ աղաթներ ներս բերավ
Մեր քաղքումը Եվրոպան,
Քեֆն ու սափեն դիփ կորավ,
Փըլացավ էսպանց օրենք...⁴

Հայ գրականության մեջ բազմիցս փառաբանված վրաց աշխարհն ու Քրիլիսին իրենց զրկի մեջ դարեր շարունակ տեղ են տվել ու հողատարության շրջապատել բնավեր եղած տասնյակ հազարավոր հայ ընտանիքներին և երկրորդ հայրենիքը դարձել նրանց համար: Եվ այս հանգամանքը անհուն երախտագիտությանը է լցրել հայ ժողովրդի հոգին հանդիպ վրաց եղբայրական ժողովուրդը:

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, 1951, հ. IV, էջ 448.
² Բաֆթի, Երկերի ժողովածու, հ. IX, էջ 450.
³ Բաֆթի, «Փունջ», 1874, հ. I, էջ 195.

¹ Բաֆթի, Երկերի ժողովածու, Հայպետհրատ, 1958, հ. IX, էջ 29.
116

IV

«Մի մեծ բան կա՝ էդ ազգերի լավ հարաբերությունն է, որ հիմնված է դարերի պատմության վրա»:

Այս նշանաբանի տակ է գրել և գործել հայ մեծ բանաստեղծը: Բացառությամբ Գ. Մունդուկյանի, անցյալի հայ գրողներից ոչ մեկն աշխարհ չէր մտնում ընդունելություն չի գտել Անդրկովկասում ապրող ժողովուրդների մոտ, որքան Արևիկար տասնամյակներ հարևան հայ և վրաց ժողովուրդների մեջ ապրած Հովհաննես Թումանյանը: Առաջին անգամ Թումանյանը վրաց հասարակությանը ներկայացվել է երկու բանաստեղծություններով:

1893 թվականի ապրիլին մեծ հանդիսավորությամբ կատարվել է Նիկոլոզ Բարաթաշվիլու աճյունի տեղափոխումը Գանձակից Քրիլսի: Ն. Բարաթաշվիլու աճյունը տանող ղիակառքին ուղեկցել է հսկա բաղձություն: Մեծ բանաստեղծի հիշատակը հարգող բաղձության ճշող մեծամասնությունը կազմել է հասարակության միջին խավը՝ աշխատավորական-արհեստավորական խավը: Հիսունից ավելի պոսակների մեջ աչքի են ընկել հայկական մամուլի խմբագրությունների կողմից ուղարկած երկու պոսակը: Գերեզմանատանը դամբանական ճառեր են ասել վրաց նշանավոր գրողներ Ակակի Մերեթելին, Իլիա Ծավձավաձեն, Գեորգի Մերեթելին և ուրիշներ: Իբրև «Մուրճ»-ի ներկայացուցիչ դամբանական խոսք է ասել նաև երիտասարդ բանաստեղծ, հայ ժողովրդի նվիրական զոհացմունքների թարգման Հովհաննես Թումանյանը: Հովհ. Թումանյանի խոսքը շափածո էր, մի սրտառու և գեղեցիկ բանաստեղծություն (տպված «Մուրճ», 1893, № 4), որը բերում ենք ամբողջությամբ.

Միթեթարություն, սգավոր Վրաստան,
Ինչո՞ւ է տխրել դեմքդ այրական.
Ետքված աճյունը հանգած պոստի
Ետքին՝ ց վերստին ցավը թո սրտի.
Քե նորա մըթին գերեզմանը խոր
Որք հոգուդ համար շատ է ահավոր...

Կը թաղես, այս, դարձյալ թո երգչին,
Քայց նորա վառած զոհացմունքներին
Չըկա գերեզման և ոչ էլ վախճան.
Նրանք կենդանի կը մնան հավիտյան,
Յվ դու նրանցով պոստի մի այլ որ
Քաղես թեղ մաշող ցավերը բուրբ.
Յվ թեզ, անցավոր շիրմից շիրմ,
Հեղ ժողովրդի կրգիլ մտերիմ,
Քեզ, որ ասերիս ես անհանդիստ սրտով,
Հավիտենական հանգիստ անվրդով:

Այս բանաստեղծությունը կարդացվել է նաև վրացերեն թարգմանությամբ և մեծապես հուզել ներկա գտնվողներին: Ահա այստեղ է Ի. Ծավձավաձեն մոտիկից ծանոթացել Հովհ. Թումանյանի հետ: Նրանց փոխադարձ մտերմական հարաբերությունները մեծապես օգնել են երկու եղբայրական ժողովուրդների գրական-կուլտուրական մերձեցման գործին:

Ի. Ծավձավաձեն մի անթիթով հայ բանաստեղծի հետ ծանոթանալուց հետո, համակրելով նրան, «Իվերիա»-ի խմբագրությանը պարտավորեցրել է թարգմանաբար տպելու նրա ստեղծագործությունները:

Հովհ. Թումանյանի 1892 թվականին գրած «Հաշտություն» բանաստեղծությունը հայ ժողովրդի նվիրական զոհացմունքների պիեճատեստ տպացույցն է, նրա՝ հանդեպ վրաց ժողովուրդն ունեցած սիրտ ու նվիրվածության անկեղծ արտահայտությունը: Այդ բանաստեղծությունը մի շառառուն ապտակ էր այն մոլի նացիոնալիստների դեմքերին, որանք փորձել են գծառություն զցել հարևանների միջև, արգելափակել նրանց միասնական պայքարը՝ առաջադիմության, կուլտուրայի ու ժողովուրդների լավագույն ապագայի համար:

«Հաշտություն» բանաստեղծությունը, միաժամանակ, փոթորիկներով հղի իրադարձություններին լավատեղյակ մար-

արժեքներին ծանոթանալու ցանկություններից մզված, բազմաթիվ ստեղծագործություններ են հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանվել ու հրատարակվել:

1903 թվականին վրացերեն թարգմանությունք լույս է տեսել Բաֆֆու «եռնիթ» վեպը¹: «եռնիթ» վեպի նյութը, ինչպես մեզ հայտնի է, առնված է 1877—78 թվականների ռուս-թուրքական պատերազմի դեպքերից: Պատմական ու երևակայական կերպարների միջոցով հեղինակին հաջողվել է զգալիորեն շոշափել հայ ժողովրդի ազգային ազատագրության գաղափարը: Ռոմանտիկ իրավիճակներն ու դեմքերը, առանձին անհատների ցայտուն դիմադներն ու հերոսական արարքները ոգևորություն ու թափ են հաղորդել ընթերցողներին: Ազգային ազատագրության գաղափարը վրաց ժողովրդին նույնպես երկար տասնամյակներ հանգիստ չի տվել: Նա նույնպես կերտել է հերոսական կերպարներ, խիզախ անձնավորություններ: Այս կերպ միայն պիտի բացատրել այն մեծ հետաքրքրությունը, որ առաջ է եկել Բաֆֆու անձնավորության ու նրա երկերի նկատմամբ²: Ցավով պիտի նկատենք, սակայն, որ հայ մեծ վիպասանի մյուս նշանավոր երկերը, մասնավորապես նրա մեծածավալ պատմական վեպերը, չեն թարգմանվել վրացերեն: Ավելորդ չենք համարում այս կապակցությամբ բացատրելու նաև, թե ինչու ոչ միայն Բաֆֆու, այլև Պոռչյանի, Մուրացանի և ուրիշների շատ ու շատ մեծարժեք երկերը նույնպես 1900-ական թվականներին չեն հասել վրաց ընթերցողներին: Մեր կարծիքով այդպիսի երկերի թարգմանությունը շատ ավելի երկար ժամանակ և մեծ ծախսեր պահանջելով, հնարավորություն չի տվել մի խումբ վրաց և հայ քրտնաջան գրական մշակների՝ իրականացնելու երկու ժողովուրդների ցանկություններից բխող իրենց փափայած ծրագրերը:

¹ Վրդում լույս է տեսել «Մոամբե» ամսագրի 1902—03 թթ. №-ներում:

² Բաֆֆուց, մինչև «եռնիթ» տպագրությունը, վրաց ընթերցողներին հայտնի էին մի քանի պատմվածքներ, այդ թվում «Յիրդուախ» («Նուրաթի», 1884, № 7—8—9, էջ 357—375) և «Դերվիշ» («Կվալի», 1893, № 25, էջ 12—13, № 36, էջ 12—13):

Այդ պատճառով էլ հայերենից վրացերեն թարգմանած ստեղծագործությունները կամ փոքրածավալ երկեր են, կամ բանաստեղծություններ, վերջիններս, իհարկե, շատ ավելի մեծ թիվ են կազմում:

Վրացերենից հայերեն թարգմանված կամ հանդամանորեն գրախոսված երկերը հայ ընթերցողին մոտավոր պատկերացում են տվել վրաց գրականության մասին: Այդ հանգամանքին մեծապես նպաստել է հայ մամուլը, մասնավորապես «Մշակ», «Տարազ», «Մուրճ» և այլ պարբերականները, որոնց էջերում շարունակաբար տպագրվել են վրաց անվանի գրողների ստեղծագործությունները, ինչպես նաև վրաց կյանքից ու դրականությանից առած թեմաներով հոդվածներ: Այսպես օրինակ, 1900—1920 թվականների ընթացքում վրաց հեղինակներից թարգմանվել և տպվել են՝ Բ. Ճավճավաձեի «Քարուն» (թարգմ. Հովհ. Թումանյան, «Արոր», 1907, № 7), «Էլիզիա» (թարգմ. Հովհ. Թումանյան, «Արոր», 1907, № 7), «Մուրացկանի պատմածք» (թարգմ. Տ. Փիրումյան, Թիֆլիս, 1912), «Ճգնավոր» (արձ. թարգմ. Տ. Փիրումյան, «Աշխատավոր», 1919, № № 211, 212):

Ա. Մերեթելիի բանաստեղծություններից՝ «Սուլիկո», «Նոսվի...», «Մազ անող Գողիան», «Եւ, իմ լուսատիակա», «Մի հեամամի...», «Ով անձա...», «Փոխվեց աշխարհս», (բառացի թարգմ. Գ. Բաշինջաղյան, «Մշակ», 1915, № № 27, 28):

Ա. Ղազարյի «Փաթի» (թարգմ. Ղ. Կ., Ալեքսանդրապոլ, 1904), «Ղաչաղ Արսեն» (թարգմ. Ս. Գորանկարյանց, Թիֆլիս, 1907):

Է. Նինոշվիլու «Հրաման» (թարգմ. Ղ. Կ., Թիֆլիս, 1904), «Գոգիա Ուշվիլի» (թարգմ. Ղ. Կ., Թիֆլիս, 1905):

Վ. Փշավեյալի «Լեռան աղբյուրը» (թարգմ. Ղ. Կ., «Գեղարվեստ», 1909, № 3, էջ 105):

Յակոբ Գոգերաշվիլու «Ի՛նչ արավ օրորոցի երգը» (թարգմ. Ղ. Կ., Թիֆլիս, 1907):

Ե. Արագվիսպիրիլի «Դժբախտ Քաթոս կամ՝ իսկ քամին այդ միջոցին մոնչում, հառաչում և սուլում էր» (թարգմ. Ավ. Բարսամյան, Թիֆլիս, 1902):

Իս էկալաձեի «Լուսնյակ գիշերին» (թարգմ. Ղ. Կ., Թիֆլիս, 1904 թ.):

Անաստ. Մերեթելիի «Շաքրոն մատնեց» (թարգմ. Ղ. Կ., «Հասկեր», 1907, № 5—6, էջ 229—232):

Ն. Նակաշիձեի «Ում քնարեց շունը» (թարգմ. Ղ. Կ., «Հասկեր», 1907, № 7—8):

Ա. Յազարեշու «Միբրական», կոմեդիա (թարգմ. Գ. Միրաղյան, 1908, Թիֆլիս):

Հայ պարբերականներում բազմաթիվ հոդվածներ են տպագրվել վրաց գրողների ու նրանց ստեղծագործությունների մասին:

«Ակսած անցյալ դարի քառասնական թվականներից,— գրում է Տ. Փիրումյանը,— վրաց ազգը ունեցել է շարունակ նշանավոր բանաստեղծներ և վիպագիրներ: Ուրախալի է այն երևույթը, որ ասպարեզից իջնող վրացի տաղանդավոր գրողները թողնում են իրանցից հետո արժանավոր հաջորդներ: Այսպես, մինչև վաթսուներկան թվականները փայլող անդրանիկ բանաստեղծներին հետևում են այնպիսի խոշոր տաղանդներ, ինչպիսիք են՝ Իլիա Ճավճավաձեն, Ակակի Մերեթելին, Այ. Ղազարյին, Ռաֆայիլ Էրեսթավիլին և ուրիշներ. իսկ այդ վերջիններին՝ իննանական թվականներից սկսած՝ մի ամբողջ շարք երիտասարդ, թարմ ուժեր, որոնցից մի քանիսի տաղանդի խոշորությունը արդեն այժմյանից դուրս է ամեն կասկածից: Չէ կայիլի երջանիկ չհամարել վրաց նման մի քուն ժողովուրդ, որ սերունդ սերնդի հոռի շնորհալի ու համակրելի գրողներ է դուրս բերում իրանից»¹:

«Մուրճ» (1904, № 8), «Տարազ», «Մշակ» (1907 № № 100—101) և հայ այլ պարբերականներում տպագրված հոդվածների մեջ բարձր կնահատականներ են տրված Բ. Ճավճավաձեին: Նրա ստեղծագործությունները համարվել են առաջնական բարձր արվեստի նմուշներ, իսկ հայերեն թարգմանությունները՝ կարևոր և շնորհակալ ներդրում երկու ժողովուրդների բարեկամական հարաբերությունների մեջ:

Ակակի Մերեթելու պոեզիայի խոր վերլուծությունը, վրաց մեծ բանաստեղծի զրական գործունեության 50-ամյա հոբելյան

¹ «Մուրճ», 1901, № 3, էջ 233:

յանը, նրա հիվանդությունը և մահը լայն կերպով արտացոլվել են «Աշակ» և «Մուրճ» պարբերականներում:

Նույն պարբերականներում տպագրված / բազմաթիվ հոդվածներից ահավասիկ մի հատված, «...Ակախու քնարը խիստ բազմերանգ է, բայց նրա տիրապետող մոտիվը հուժկու ու թախծալի հայրենասիրությունն է: Հաճախ նա երգում է իր սիրելի Վրաստանը, հանձին մի շքնաղ օրիորդի կամ պճնազարդ, պատվազուրկ տիկնոջ: Նա շի սիրում կրկնություններ և միշտ կարողանում է գանել արտահայտության նոր ձևեր, նոր պատկերներ, նոր համեմատություններ: Նրա տաղանդի մի առանձնահատկությունը կայանում է արտահայտության առասպելականության հասնող պարզության մեջ: Զարմանալի կերպով հաջողվում է նրան քաղցրալուր, անրոնազրոսիկ հանգերի հյուսումը, հանգեր, որ մի ախորժալի մուլդիկայի են վերածում նրա արտադրությունները...»¹ Այս կերպ բարձր գնահատականների են արժանացել և՛ Վաթա Փշավելյան, և՛ Գալիթ Կլդիաշվիլին, և՛ Շիո Արագվիսպիլին և՛ շատ ու շատ վրաց այլ գրողներ, որոնց երկերը նույնպես ըստ արժանվույն զբախտվել են հայ մամուլի էջերում:

Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման համար Թումանյանի, Սունդուկյանի և այլ հայ գրողների հետ ձեռք-ձեռքի տված աշխատել են վրաց ժողովրդի նրբ գրականության կարկառուն ղեմեր՝ Իլիա Շավճավաձեն, Ակակի Մերեթելին, Վաթա Փշավելյան և ուրիշներ:

Գեոևս անցյալ դարի երկրորդ կեսին վրաց մամուլում լույս է տեսել Ակակի Մերեթելու «Մենք և մեր ժամանակը» ընդարձակ հոդվածաշարը², որտեղ անվանի բանաստեղծը խոսում է անդրկովկասյան ժողովուրդների բարեկամության անհրաժեշտության մասին և կոչ անում միացյալ ուժերով ապաքինվելու, ամրանալու թե՛ անտեսապես, և թե՛ կուլտուրապես:

Ակակին ելել է հարևան ժողովուրդների շահերից, նրանց համագործակցության մեջ տեսել է բարիքը և թշնամության մեջ՝ նրանց քայքայումը:

¹ «Մուրճ», 1904, № 12, էջ 128:

² «Դրոսեա», 1879, №№ 13, 16:

1911 թվականին Մերեթելին ժողովուրդների բարեկամության անհրաժեշտության մասին գրել է.

«Մեր նախնիները միշտ էլ եղբայրական հարաբերություններ են ունեցել հայերի հետ... Եստ անգամ են ջրվել Հայաստանի վայրերը նրա կողմնակից և նրա համար անձնվեր վրացիների արյունով... և այս կապն ապացուցվում էր հայ-վրացական միությունը... Նրանց (հայերին — Մ. Զ.) սիրում եմ և ցանկանում եմ, որ մեր մեջ այնպիսի հարաբերություն չինի, ինչպես էր մեր նախնիների օրոք: Ցանկանում եմ, որ սրանից հետո գոնե ձեռք-ձեռքի տված մի ուղիղ համփոփ ընթանանք ղեպի ապագա, թե չէ իրար հետ թշնամությանը ոչ մեկս հետու չենք դնա»:

1901 թվականին «Երեւոյն» № 124-ում, առաջին էջում տպված է Ա. Մերեթելու ութ տողից բաղկացած ոտանավորը՝ նվիրված անժա՛հ դրամատուրգ Գ. Սունդուկյանին: Ահա այդ ոտանավորի մի քառատողը.

Միություն ու եղբայրություն—

Ահա թե ինչ եմ տեսնացել:

Ուժն այդ կապի սիրով անունն

Ես շատ վաղուց եմ հասկացել:

Այդ ոտանավորն ավարտվում է բազմանշանակ այն արտահայտությամբ, թե «Թշնամությամբ իրար կվնասենք և թշնամուն կծիծաղեցնենք»: Ո՛վ էր թշնամին, ո՛վ էր պլտորում ժողովուրդների բարեկամության պարզ և վճիռ ջուրը: Այս հարցին նույնպես պատասխանել են մեծանուն բանաստեղծները:

20-րդ դարի արշալույսին բանվորական և ապա գյուղացիական շարժումները տեղի են ունեցել շատ ավելի կաղմակերպված, նպատակասլաց և որոշակի քաղաքական և տրնտեսական ծրագրերով: Բանվոր դասակարգը Անդրկովկասում ուներ իր մարտական-քաղաքական ավանգարդը — սոցիալ-դեմոկրատական կաղմակերպությունը: 1900 թվականի հունվարի 1-ին գործադուլ են արել Քբիլիսիի ձիակառքերի (կոնկա) բանվորները, որին մասնակցել են բոլոր կառայանները ու տոմսավաճառները: Դրանց հաջորդել են քաղաքի արդյունաբերական բոլոր օբյեկտները՝ տպարանը, մեխանի-

կական գործարանները, ծխախոտի ֆաբրիկաները և այլն: Նույն տարվա օգոստոսին ընդհանուր գործադուլ է հայտարարվել Քբիլիսիի երկաթուղային արհեստանոցներում և դեպոյում, որտեղ շուրջ 4000 բանվորներ են աշխատել: Այդ գործադուլի պատկերը շատ ուղեղի պարզ դարձնելու նպատակով, նկատենք, որ այդ ժամանակաշրջանում սոցիալ-դեմոկրատական դեկավար ուժերը մեծ մասամբ գործել են Քբիլիսիի երկաթուղային արհեստանոցներում և դեպոյում: Գործադուլների ալիքը տարածվել է նաև մյուս քաղաքները, ընդգրկել գաղափարներն ու դուրական շրջանները: Սկսվել են աշխատավորների պարբերական ելույթներն ու մանիֆեստացիաները:

Աստիճանաբար գործադուլներին հաջորդել են ցույցերը և նույնիսկ դինված ընդհարումները ուստիկանություն ու զորամասերի հետ: Ցարական ինքնակալությունը ելք է փնտրել այդ գրոթյունից դուրս գալու և ռևոլյուցիոն շարժումները խեղդելու, կազմակերպությունները ջլատելու համար: Այդ նպատակին հասնելու համար նա դիմել է իր կողմից փորձված միջոցներին՝ պրովոկացիաներին ու ժողովուրդներին միմյանց դեմ լարելու ստոր ճանապարհներին: Այդ կերպով ցարական վարձու ազնետներին հաջողվել է ընդհարումներ առաջ բերել հայերի և ադրբեջանցիների միջև (1905 թվականի դեպքերը Բարվում, Քբիլիսիում և գավառներում):

Ցարական կառավարության կազմակերպած ուս-ճապոնական պատերազմը նույնպես ոչնչով չի օգնել ինքնակալությանը, ընդհակառակը, դրսևորել է նրա նեխած վիճակն ու շատ ավելի նպաստել աշխատավորության քաղաքական գիտակցության արթնացմանը:

Անդրկովկասյան ժողովուրդները ստոր պրովոկացիաներին ու օր-օրին ուժեղացող ճնշումներին պատասխանել են բարեկամության էլ ավելի ամրապնդմամբ¹, դրական-կուլտու-

¹ 1905 թվականի հունիսին Քուբայիսում վախճանվել է լավադուլի բուլշևիկ բոցաշունչ ռևոլյուցիոններ, մարքս-լենինյան գաղափարների հիանալի պրոպագանդիստ ու ագիտատոր Ալեքսանդր (Սաշա) Մուլուկիձեն:

Քաղման հանգստին մասնակցել են բազմահազար մարդիկ, վրացի, հայ, ռուս և այլ ազգությունների պատկանող: Քաղման ժամանակ ռևոլյուցիոն ճառեր են ասվել վրացիներ, հայերին, ռուսներին լեզուներով:

բական համագործակցության է՛լ ավելի լայն ծավալմամբ: Ա. Մերեթելին 1905 թվականի ռևոլյուցիայի ժամանակաշրջանում թարգմանել է «Ինտերնացիոնալը» և մարտական բանաստեղծություններ գրել ինքնակալության դեմ: Հայտնի է նրա «Կուրչի անպատվության կառավարությունը» կոչ-բանաստեղծությունը:

Հովհ. Թումանյանը, որի կյանքը մի հրաշալի մարդատաշար է ժողովուրդների բարեկամության վսեմ գաղափարներով հյուսված, իր ամբողջ ջանքերը նվիրել է պրովոկացիայի ենթարկված մարդկանց խաղաղիցնելու, ժողովուրդներին միջև խաղաղություն և բարեկամություն հաստատելու գործին:

1906 թվականին Ֆիլիպ Վարդադարյանին գրած նամակում Հ. Թումանյանը տասում է. «... Ես այնքան գոհ չեմ, որ գրականության մեջ մի որևէ բան եմ արել, որքան գոհ եմ, որ ակներև կարողացա իրար դեմ կանգնած ժողովուրդների սրերը պատշան դնել տալ և շատ ու շատ անմեղների ազատել այս գազանական կոտորածից»¹: Եվ այնուհետև շարունակելով նամակը, դրում է. «Մենք այս ցած ու տմարդի կովով միանգամայն դուրս մնացինք Թուսաստանի աղատագրական մեծ կովից»²:

Իլիա Եմվեզովաձեն նույնպես շատ առիթներով արտահայտվել է հարևան երկու ժողովուրդների փոխադարձ ճանաչողության ու լավ հարաբերությունների մասին: «Ինչ որ թըշնամությունը քար ու քանդ է արել, սերն է այն վերաշինելը, հաճախ սիրել է կրկնել բանաստեղծը: Իր «Ուրվական» պոեմի մեջ մեծ բանաստեղծը քարոզել է կովկասյան աղջությունների եղբայրություն և անխախտ միություն:

¹ Են ռևոլյուցիոնների թաղումը լավագույն դեմստորացիան էր Անդրկովկասյան ժողովուրդների ինտերնացիոնալիստական համաժամբարձության և նրանց բաղարտեան-ռևոլյուցիոն գիտակցության բարձր մակարդակի (Այս մասին տե՛ս Փ. Махарадзе, Очерки рев. движ. в Закавказье, 1927, стр. 183):

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, Հայպետհրատ, 1945, էջ 296:

¹ Նույն տեղը, էջ 299:

Իր հրապարակախոսական գրվածքներից մեկում Ի. Ծավ-
ճավաձենն անդրադառնալով պատմական անցյալին գրել է.

«Վրաստանի նշանավոր թագավորները և պետական պաշ-
տոնյաները հասկանում էին Հայաստանի և Վրաստանի սերտ
կապի կարիքն ու անհրաժեշտությունը»¹:

Ի. Ծավճավաձենն խորապես համոզված է եղել այն բանում,
որ «Հայաստանի անկախ գոյությունն առհավատչյա է Վրաս-
տանի նույն տեսակի գոյությանը»²:


Պատասխանելով մի շարք վրաց գործիչների, որոնք փոր-
ձել են «պատմականորեն» արդարացնել հայերի և վրացիների
միջև ծագած տհաճ երևույթները, սքողելով բուրժուազիա-
յի ու ցարական ինքնակալության նողկալի դերը այդ ամենի
մեջ, Իլիա Ծավճավաձենն քաջատեղյակ իր ժողովրդի պատ-
մությունն ու հողերը, նյութական կուլտուրայի արժեքներին,
գրել է. «Ոչ մի գրականության և հասարակացության մեջ,
ևույնիսկ մի օրինակ չեն կարող ցույց տալ, որ վրացին վատ
հիշեր ամբողջ հայությունը, նրա ինտելիգենցիային, որի վրա
հիմնված է հայության ամբողջ արդարացի հույսը... Մեզ մոտ
ու մեր կողմից ամբողջ հայությունը որպես ազգ հրեք ո՛ւ
կշտամբվել է և ո՛չ էլ վատ է հիշվել: Ընդհակառակը, օրինակ-
ներ շատ կան, որ հայերի լավ գործին պատվով են վերաբեր-
վել վրացիությունն ու նրա ինտելիգենցիան: Սրա ապա-
ցույցը կարելի է գտնել ինչպես մեր գրականության, այնպես
և կյանքի մեջ»³:

Ի. Ծավճավաձենն սերտ կերպով կապված է եղել հայ գրա-
կան ինտելիգենցիայի հետ, նրա մամուլի ու հրատարակչա-
կան օրգանների հետ: Կարգալով և ուսումնասիրելով Ի. Ծավ-
ճավաձենի գրական-հրապարակախոսական ողջ ժառանգու-
թյունը, այն համոզման ենք զալիս, որ նա սիրել է հայ ժո-
ղովրդին, գնահատել նրա ստեղծագործական ունակություն-
ները: «Ուղևորի նամակներ»-ի մեջ նա մեծ սիրով է խոսում
հարևան ժողովրդի մասին, միաժամանակ քննադատում է,
մերկայնում հայ բուրժուազիային: Այդ «նամակներ»-ի մեջ

¹ Ի. Ծավճավաձեն, Երկեր, Կ. 2, էջ 201:

² Նույն տեղը, էջ 479:

³ Ի. Ծավճավաձեն, Երկեր, Կ. 9, էջ 302:



Հովհ. Յուզանյան

և ազրել է. «Յանկանում եմ հայերին հաջողություն և հզորություն: նրանց հզորությունը նույնպես և մեր հզորությունն է»:

Նա հայերի մասին արտահայտվել է բազմաթիվ առիթներով և միշտ էլ կոչ արել համերաշխ գործունեության, բարի դրացիական հարաբերությունների: Ի, Ճավճավաձենին հրքեմն փորձել են մեղադրել այն բանում, որ նա իր ժողովրդի շահը (ի նկատի ունենալով վրաց բուրժուազիա և ազնվականություն) վեր է դասել ամեն ինչից, երբեմն նույնիսկ ի վնաս հարևան մյուս ժողովուրդների շահերի: Այս բանի դեմ նա առարկել է և բազմաթիվ առիթներով նորից անդրադարձել այդ խնդրին:

«Մի քառասուն-վաթսուն տարի առաջ ո՞րտեղ էր մեր միջև առեւտրություն: Մենք իրար չէինք ջոկում, թեև դանազան ցեղի ու դավանության էինք պատկանում: Հայերի կողմից դեպի վրացիները առեւտրություն և վրացիների կողմից դեպի հայերը առեւտրություն գոյություն չունեք. դա պատիվ էր բերում երկուսի բախտավորությանն ու անվանք»¹:

Ե՛վ թումանյանը, և՛ Մերեթեւին, և՛ Ճավճավաձեն և՛ շատ ու շատ ուրիշներ դեռևս անցյալ դարի վերջին տասնամյակներից սկսած հավատացել են, որ կգա մի լավ օր և ժողովուրդները կազատագրվեն սոցիալական ու ազգային ճնշումներից: «Ես հավատում եմ,— գրել է թումանյանը,— գալու է այն օրը, երբ բոլոր շովինիստների շանքերին հակառակ, հաղթանակելու է ժողովուրդների միության ու եղբայրության գազափարը, ազատության մեջ ավելի ու ավելի են ամրանալու մեր դարավոր եղբայրական կապերը, և մեր ինքնուրույնությունը չքեղ ու ինքնատիպ ծաղկելու է մեր գեղարվեստի ու գրականության մեջ:

Եվ վրաստանը, որ չքնաղ է եղել նույնիսկ իր դժբախտության օրերում, ազատ կովկասի, ազատ ժողովուրդների եղբայրության մեջ պետք է դառնա ավելի չքնաղ ու ավելի սիրելի»²:

Վրաց լեոնաշխարհի դյուխական երգիչ Վաժա Փշավկյան

¹ Ի. Ճավճավաձե, Երկեր, հ. 9, էջ 199:

² «Գրական թերթ», 1946, № 6:

շատ կողմերով հիշեցնում է մեր թումանյանին: Այդ մեծ բա-
նաստեղծի ստեղծագործական ոգին լի է եղել սիրով ու շեք-
մուխյամբ հանդեպ հարևան ժողովուրդը: Հիվանդ ժամանակ
Վաթա Փշավիլյան իրեն տեսակցության եկած թումանյանին
հայտնել է իր վազեմի ցանկությունը՝ գրել մի պոեմ ժողո-
վուրդների բարեկամության թեմայով: Այդ պոեմը պիտի կոչ-
վեր «Հայոս և Քարթլոս»: Հայ բանաստեղծին նա նույնիսկ
պատմել է պոեմի թեման ընդհանուր գծերով: Վրաց պոետի
իղծք մնացել է անկատար: Մահը խանգարել է այդ բանին:

Ակակի Մերեթելի, Հովհ. թումանյան, Վաթա Փշավիլյա,
գրանք երկու հարևան ազգություններին պատկանող այն մե-
ծագույն ստեղծագործողներն են, որոնց մայր ստեղծագոր-
ծողը, կենարար ու ժողովուրդն էր, նրա հոգևոր կյանքը
ժողովրդական բանահյուսությունը, էպիկական գրույցներն
ու հեքիաթներն են եղել այդ գրողների կերտած հրաշագեղ
ստեղծագործությունների «հարազատ հոգն ու պատվանդանը»:
Թումանյանի նման Ակակին նույնպես մեծ ուշադրություն է
նվիրել ժողովրդական լեզվի օգտագործման հարցին: Նա հո-
ւարձակ կերպով մի կողմ է նետել պաշտոնական-ազնվա-
կան գրքային լեզուն և իր ստեղծագործությունները գրել ժո-
ղովրդին շատ ավելի հասկանալի, ժողովրդի լեզվական գան-
ձարանից առած, բայց վարպետությամբ հղկած, մշակած մի
լեզվով, որով առավել հարազատությամբ երգել է մարդկա-
յին զգացմունքները, աշխատանքն ու պայքարը:

Բանաստեղծը, նրա կարծիքով, պիտի լինի «մարդկանց ու
հշմարտության միջնորդը»: Ըշմարտություն — ահա այն նշա-
նաբանը, որով առաջնորդվել են եղբայրական ժողովուրդների
գրական մեծանուն գործիչները: Ըշմարտ իրողությունները
միաժամանակ նրանք հաղորդել են այնպիսի պարզությամբ
ու զունազնդությամբ, որ ներգաշնակել է ժողովրդական ստեղ-
ծագործությունների ոգուն: Այս իմաստով էլ հասկանալի է
զառնում այն լայն ժողովրդականությունը, որ վաչելել են
նրանք՝ թե՛ իրենց ժողովրդի և թե՛ հարևան ժողովուրդների
կողմից: Ակակին միշտ էլ սիրված ու գնահատված է եղել
հայերի մեջ, ինչպես թումանյանը վրաց հասարակության
կողմից: Եվ եթե կան գրողներ (իսկ դրանք մեծ թիվ են կազ-

մում), որոնց անցյալներում հարեանները չեն ճանաչել և
գնահատել, ապա այդ էլ թարգմանությունների սակավությամբ
է բացատրվում: Քիչ է թարգմանվել անցյալում, եղած թարգ-
մանություններն էլ պատահիկներ են, որոնք հնարավորու-
թյուն չեն տվել ամբողջական պատկերացում կազմելու ա-
ռանձին գրողների, կամ նրանց ստեղծագործությունների մա-
սին: Մի ամբողջ քսանամյակի ընթացքում (1900—1920)
հայերենից վրացերեն թարգմանված երկերից հիշեք օրինակ
թումանյանի «Սուտասանը» («Նակագուլի», 1908, № 1,
թարգմ. Ղազար Կարապետյան), «Բարեկենդանը» («Ջեյիլի»¹,
1911, № 3, թարգմ. Ղ. Կ.) և մի քանի այլ ոտանավորներ:

Ավ. Իսահակյանի ստեղծագործություններից վրաց ժողո-
վրդի սեփականությունն են դարձել «Արևի մոտ» («Նակա-
գուլի», 1909, № 11, էջ 15—19), «Ամենապիտանի բանը»
 («Նակագուլի», 1909, № 14, էջ 10—13), «Երգի հրապույրը»
 («Նակագուլի», 1909, № 16, էջ 10—12) պատմվածքները՝
Ղազարոս Կարապետյանի թարգմանությամբ:

Հայ գրողներին վրաց ընթերցողների հետ ծանոթացնելու
գործում շնորհակալ դեր են խաղացել թբիլիսաբնակ հայերը,
որոնք մայրենի լեզվի շափ տիրապետել են վրացերենին: Այդ
մարդկանց մեջ աչքի են ընկնում Հարություն Միրիմանյանը,
Ղազարոս Կարապետյանը, Հովհաննես Գավթյանը և ուրիշ-
ներ:

Միմյանց ճանաչելու և շատ ավելի մոտ հարաբերություն-
ների մեջ գտնվելու հանգամանքը մշտապես (իսկ 20-րդ դա-
րում առավել բան) անհանգստացրել է անդրկովկասյան ժողո-
վուրդների առաջավոր մարդկանց, այդ թվում նաև գրողնե-
րին: Ենչով կարող են երկու ազգությունները միմյանց ու-
սումնասիրել և ճանաչել, եթե ոչ իրանց մտավոր բերքերով
եվ որն է այդ բերքերից ամենամեծը, — եթե ոչ գրականու-
թյունը, — հուզմունքով գրել է Ալեքսանդր Երվանդյանը՝
«Մենք լսել ենք և լսում ենք տեղական ոտու լրագիրներից, —
շարունակում է նա, — որ մեր հարևաններն ունեն Օրբելիանի»:

¹ «Նակագուլի» (վտակ) և «Ջեյիլի» (ծիլ) վրացական մանկական
ամսագրեր էին:

Քարաթաշվիլի, Ճավճավաձե, Մերեթելի և մի շարք ուրիշ հանգուցյալ և կենդանի բանաստեղծներ, անսահման հարգված իրանց ազդից և գնահատված: Բայց մինչև այսօր մենք չունենք հայերեն թարգմանություններ և ոչ մեկի գործերը, բացի մի քանի մանր-մունք կտորներից, որոնցով իհարկե, ոչ մի հասկացողություն չի կարելի կազմել վրաց բանաստեղծության մասին: Անկասկած վրացիները նույնչափ գուցե ավելի պակաս տեղեկություն ունեն մեր Աբովյանի, Գաբրիելի, Պեշիկիշաշվյանի, Բաֆֆու, Գամառ Քաթիպայի մանավանդ նորերի մասին»:

Եվ իրոք շատ քիչ բան է թարգմանվել հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն: Վերոմ արդեն խոսվել է թարգմանված երկերի քանակի և այն գրախոսականների մասին որոնք լույս են տեսել և վրաց պարբերականներում:

Ինչ վերաբերում է թարգմանությունների որակին, ապա պիտի նկատենք, որ այն այլևս չի բավարարել օր-օրին աճող հայ և վրաց ընթերցողների գրական-էսթետիկական ճաշակին: Թարգմանությունները մեծ մասամբ կատարվել են հապճեպ և արտահայտել միայն ստեղծագործության բովանդակությունը: Եթե արձակի հարցում գրությունը թերևս մխիթարական է եղել, նույն բանը չի կարելի ասել գեղարվեստական շահածոյի թարգմանության որակի մասին: Մի՞թե սրա լավագույն ապացույցը չէ այն, որ հաճախ լիարժեք թարգմանության փոխարեն հրամցվել է փոխադրություն, իսկ վատագույն գեղարվեստը որևէ շահածո գործի արձակ թարգմանությունը (որպես օրինակ բերենք հետևյալները. Գ. Մերեթելու «Մարդ-Առյուծ» առասպելական պոեմի փոխադրությունը, Ա. Մերեթելու «Մարդն ու արջը» լեգենդի ազատ վերապատմումը, նույն հեղինակի մի շարք սրանչիլի երգերի բառացի թարգմանությունը և այլն):

Իհարկե եղել են նաև սքանչելի թարգմանություններ, որոնք բնագրին հավասար որակով են կատարված, սակայն սրանց թիվը քիչ է և, հասկանալի է, դրանք որևէ բանով չեն փոխել ընդհանուր առմամբ որակի ոչ մխիթարական վիճակը: Թարգմանությունների լավագույն նմուշներից հիշենք մի քանիսը. օրինակ՝ Իլիա Ճավճավաձեի «Գարուն» և «Էլեգիա»

ստեղծագործությունները, որոնք տաղանգավոր կերպով թարգմանել է Հովհ. Յումանյանը: Ահա այդ թարգմանություններից մեկը.

Գ Ա Ր Ա Ի Ե

Կանաչ է նորից,
Միժուռը երգում,
Վազը հրճվածից
Կայիս է այգում:

Հովիտ ու լեռներ
Մաղկել են պես պես,—
Իսկ դու, հայրենիք,
Ե՛րբ պիտի ծաղկես...

Ահա և մյուսը.

Է Լ Ե Գ Ի Ա

Լուսինն աղոտ լույս է փռում
Ի՞մ աշխարհին մայրենի,
Կույ է գնում կապույտ հեղձում
Ճերմակ շարքը լեռների:
Ձեն չի գալիս ոչ մի կողմից,
Վրաստանը մոթն ու լուս.

Վրացին է հաղթված քնից
Տընքում տանջված ու տխուր
Մեծակ եմ ես քնած է ես,
Քնած շուրջս ու հոտու...
Ախ աստված իմ, քնած, քնած
Ե՛րբ է արդյոք դարձեալու...

Յումանյանը բացի գրանցից ծրագրել է թարգմանել «Վազրենավորը», Շոթա Ռուսթավելու այդ անմահ ստեղծագործությունը: Գեոն 1910 թվականին Շիրվանզադեն հայ մամուլում գրել է «...Հայոց հրատարակչական ընկերությունը առաջարկել է մեր բանաստեղծ Հովհ. Յումանյանին թարգմանել Շոթա Ռուսթավելու «Ընձի մորթը» նշանավոր գրեման: Այդ դասական երկը վրաց հին և նոր գրականության գլխավոր պարծանքն է, որի մասին այնքան լսել ենք և կարդացել»:

Միայն Յումանյանը կարող էր կատարել այդ գործը: Երբ, «վրաց հին և նոր գրականության գլխավոր պարծանքը», «Վազրենավորը» ոչ ոք, հայ բանաստեղծներից, այնպես չէր հասկանա և թարգմանի, ինչպես մեր անմահ պոետը, որի կատարած թարգմանությունները ինքնուրույն ստեղծագործություններին համարժեք գործեր են: Հայտնի է Կով-

կասի Հայոց Հրատարակչական Ընկ. վարչության զիմուք թումանյանին և թումանյանի պատասխանը այդ առթիվը Հովհ. թումանյանի գրած պատասխանի մեջ կարդում ենք հետևյալը. «Ի պատասխան հարցելի վարչությանդ և խմբագրական մասնաժողովի իրան ժողովի № 56 գրությամբ ինձ տրած առաջադիմ, թե քանի ժամանակում և ինչ պայմաններով հայերենի կթարգմանեմ Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» հուշակավոր վիպագրությունը, պատիվ ունեմ հայտնելու, որ թարգմանությունը կանեմ հինգ տարվա ընթացքում, յուրարանչուր տողին կանեմ մի սուրլի, գործը կմնա սեփականություն ընկերությունը»¹:

Այդ թարգմանությունը չի կատարվել: Հովհ. թումանյանի արխիվում ոչ մի հետք չկա այդ մասին: Ամենայն հավանականությամբ բանաստեղծը հնարավորություն չի ունեցել իրականացնելու հայ պրոզիստի մտավորականության իզմերը:

Թումանյանը խորապես հասկացել է վրաց կյանքի պոեզիայի ոգին, ըմբռնել նրա բարձր արվեստն ու հուզաթափախ էությունը: Թարգմանության պրոցեսում ապրել է այն, ինչ ապրումներով ներշնչված գրել է վրաց պոետը, ասենք՝ ճակճավաձևն:

«Ու իբրև մի բանաստեղծ մարդ, անհունորեն սեր տածելով առհասարակ դեպի ժողովուրդները, — գրել է թումանյանը, — առանձնապես ուժեղ սիրել եմ մեր հղբայրակից վրաց ժողովուրդը, որի մեջ անց եմ կացրել իմ կյանքի մեծագույն մասը և որի հետ կապված եմ շատ թանկագին խոր ու ամուր կապերով»²:

Մեծատաղանդ ու բեղմնավոր բանաստեղծները միաժամանակ մեկից ավելի կյանք են ունենում: Նրանք ապրում են և՛ գրականության մեջ, և՛ երաժշտության մեջ, այնպես, ինչպես արձակագիրներից ոմանք փայլում են թե՛ գեղարվեստական գրքերի էջերում և թե՛ թատերական բեմերի վրա: Այս տեսակետից և՛ թումանյանը և՛ թե Ակակի Մերեթելին պատ-

կանել են այն փոքրաթիվ արվեստագետների թվին, որոնց «տեղծագործությունները երկրորդ կյանքի իրավունք են ստացել երաժշտական աշխարհում»:

Նրանց ստեղծագործություններն այնքան երաժշտական են, այնքան մեղոգիկ, որ հեշտությամբ ձայնագրվում ու երգ են դառնում: Հայտնի են Հովհ. թումանյանի «Անուշ», «Քրմկաբերդի առումը» պոեմների հաղթական մուտքը օպերային արվեստի բնագավառը: Տաղանդավոր կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանի և Ա. Տիգրանյանի հիասքանչ մեղեդիները թումանյանի խորապես ժողովրդական արվեստով կերտված պոեմներին տվել են կյանքի օպերաների («Ալմաստ», «Անուշ») կերպարանք:

Վրաց իրականության մեջ Ակակի Մերեթելին է արժանացել թումանյանի բախտին: Արդեն ասվել է այն մասին, որ նրա բանաստեղծություններից շատերը («Ցիցի Նաթելա», «Սուլիկո», «Մուշուրի», «Զոնգուրիս սիմբի») երգվել և երգվում են Վրաստանի բոլոր անկյուններում և Վրաստանի սահմաններից դուրս նույնպես կատարվում են մեծ սիրով ու երգվում բազմաթիվ լեզուներով:

Վրաց տաղանդավոր կոմպոզիտոր Սուլխանիշվիլին Ա. Մերեթելու շափածո գրամայի տեքստի հիման վրա ստեղծել է «Պատարա կախի» (Փոքրիկ կախեթցին) օպերան:

Վրաց օպերային երաժշտության զարգարանքն է կազմում ժողովրդական Տրեբրի-ն (նենգ Դարեշան), որի տեքստը նույնպես պատկանում է Ա. Մերեթելուն: Այս օպերայի երաժշտությունը գրել է կոմպոզիտոր Մ. Բալանչիվաձեն:

Հայ և վրաց դրողներին հետաքրքրել է հարևան ժողովրդի ոչ միայն ներկան, այլև պատմական անցյալը: Նրբամի նրանք իրենց ստեղծագործությունների մեջ անդրադարձել են նաև հարևանների կյանքին, կենցաղին ու օտար նվաճողների դեմ մղած պայքարին: Այս խմաստով հետաքրքրական է Ա. Մերեթելու «Նաթելա» պոեմը: Ա. Մերեթելին հիանալիորեն տեղյակ է եղել ոչ միայն իր ժողովրդին, այլև ամբողջ Արևելքի պատմությանը: Հայաստանի անցյալի պատմական իրադարձություններին նա նույնպես բաշտածանոթ է եղել: Այդ պոեմի մեջ, ի միջի այլոց, խոսվում է Բագրատունյաց և հյուսիսա-

¹ Հ. թումանյան, Երկերի ժողովածու, 4. 5, էջ 336:

² «Երական թերթ», 1933, № 12:

ին Հայաստանի մայրաքաղաք Անիի մասին, որ մոնղոլները գրավել են ու դարձրել իրենց բանասարկությունների վայր:

Սակայն հարևան ժողովուրդների գրական-կուլտուրական գործիչներին ամենից շատ դրազեցրել է իրենց և հարևան ժողովուրդների ներկան: 1908 թվականին «Ամիրանի» թերթի № 53-ում լույս է տեսել մի հոդված այն մասին, որ վրացական դպրոցներում այլևս արգելվում է մայրենի լեզվի դասավանդումը: Այս լուրը արձագանք է գտել հայ մամուլում: Առաջին հերթին «Մշակ» թերթն է¹ լրջորեն անհանգստացել: այդ բանով: Հայ մամուլը վրդովվել է, որ ոչ միայն մայրենի լեզուն է դուրս վտարվել դպրոցից, այլ առհասարակ վրացական դպրոցներն են փակվելու վտանգի առջև կանգնած:

«Ժողովուրդները,— գրել է Քումանյանը,— ունենում են հազար ու մի դարդ-ցավ, այրող-մաշող խնդիրներ: Սակայն կան խնդիրներ, որոնք համաժողովրդական են և որոնք իրենց հաստատուն կնիքը դնում են գրականության վրա»²:

Ըստ «Մշակ»-ի տված տեղեկությունների, Կիևի մի խումբ հայրենասեր ուսանողների նախաձեռնությամբ ստեղծվել է գրական ֆոնդ՝ բանվոր դասակարգի շարքերից դուրս եկած զրոգ-բանաստեղծներին օգնելու համար: Այդ նախաձեռնությունը նվիրված է եղել մեսամեդախստ զրոգ էզնասի նինդալիու մահվան 20-ամյակին³:

Հայ պարբերականների էջերում բազմաթիվ տեղեկությունների ու վերլուծական հոդվածների ենթ պատահում վրաց կյանքից ու գրականությանից առած թեմաներով: Համառոտակի թվարկենք մի քանիսը.

«Վրաց թատրոնի հիանալի» («Տարազ», 1900, № 1, էջ 17), «Վրաց բեմ» («Թատրոն», 1900, № 1, էջ 153), «Վրաց գրականությունից» (այդտեղ խոսվում է «Մոսկոն» ամսագրի և «Կվալի» շաբաթաթերթերի 1900 թվականի առաջին համարների մասին. «Մուրճ», 1901, № 6, էջ 283—288), «Վրաց մամուլը» («Մուրճ», 1901, № 4, էջ 120—133, № 5, էջ 172—184), «Վրաց կյանքից և գրականությունից» (որ-

Գ. Քումանյանի Կիևից գրած
շաբաթ «Մուրճ»
Հավաստե՛ք Քումանյանին
Վրաստանի արևմտյան վրացացի
թերթ է գրող զեմբուր աջակցել
Հարկում և ծեսը հազար՝ պատրի
Հարկից վրաստի զուր և սրտ
Ի՞նչ էրա զԹաք զԹոյնիւն և սր
ոգի և զայս հանք զայս է տեսար
Կա Քաղաք այն զարհիւր և Իրգիւ
Քայք հայտ յսուած զԳրգիւրի Ի՞նչ

*) Կարգույան Նոյնի 26-ի և 27-ի սրբապատկար
հոգեւորական ընտրութիւն:

Հ. Քումանյանի «Կարաբաշվիու դարձակի վերս»
բանաստեղծության ինքնագիրը

¹ «Մշակ», 1905, № 102:

² «Քումանյանը թննագրոս», էջ 111:

³ «Մշակ», 1914, № 148:

տեղ խոսվում է վրաց գրականության ապագայի, վրաց գրական լեզվի հարցերի մասին. «Մուրճ», 1901, № 6, էջ 237—246), «Պեպոս»-ի հորեկյանը վրաց բեմի վրաց (խրմբագրական, «Մշակ», 1901, № 92), «Ռաֆայել Գավիղովի էրիսթով» (մահվան առթիվ. «Տարազ», 1901, № 7, էջ 62), «Վրաց թատրոն» (սխառմական ակնարկ և վ. Աբաշիձեի մասին՝ նրա բեմական գործունեության 25-ամյա հորեկյանի առթիվ. «Քատրոն», 1903, № 1, էջ 91—95), «Վրաց կյանքից» (միմյանց ճանաչելու անհրաժեշտության մասին. «Մշակ», 1908, № 60), «Մարիա Գեմուրիա» («Նակագուլի») (վտակ մանկական ամսագրի խմբագրի մահվան առթիվ. «Տարազ», 1910, № 1, էջ 10), «Ն. Գալուսիա-Ցաղարի» (վրաց ակաեմիոր դերասանուհու մահվան առթիվ. «Տարազ» 1910, № 6, էջ 82), Գիգո Տաթիշվիլու մահվան առթիվ. Ի միջի այլոց այդտեղ խոսվում է այն մեծ ծառայության մասին, որ վրաց նկարիչը մատուցել է նաև հայ ժողովրդին՝ ձևավորելով և նկարագրելով հայ թերթերն ու առանձին զրբեր. «Տարազ», 1911, № 78, էջ 94), «Վրաց լեզվի դասավանդումը հայ դրպրոցներում (ողջունում է այդ երևույթը. «Մշակ», 1915, № 297), «Եկատերինե Գարաշվիլի» (վրաց տաղանդավոր կին միպասանի ծննդյան 65-ամյակի առթիվ. «Համբավաբեր», 1916, № 8, էջ 246—247) և այլ վերնագրերի տակ համատուե ընդարձակ բազմաթիվ տեղեկություններ, որոնք վկայում են հայ և վրաց առաջավոր գործիչների բարեկամական փոխհարաբերությունները:

1914 թվականին արձան է կանգնեցվել Սալթ-Նովայի շերեղմանի վրա: Այդ գործի նախաձեռնողը Հովհ. Քումանյանն է եղել: Անմիջական մասնակցություն են հանդես բերել նաև վրաց զրողներ Ի. Գրիշաշվիլին, Կոտե Մաղաշվիլին, Նինո Նակաշիձեն, Ի. Իմեղաշվիլին և ուրիշներ: Սալթ-Նովայի արձանը սիմվոլիկ ձևով արտահայտել է եղբայրական ժողովուրդների ստեղծագործական մոտիկությունը: Գ. Գիաամիձենը զրած նամակի մեջ Քումանյանը ասում է. «...Սո էրբեք շեմ կասկածել, որ հայն ու վրացին, Վրաստանն ու Հայաստանը ամենալավ հարևանները պիտի լինեն, ավելի

լավ քան երբևիցե, և նրանց գրականություններն էլ իրենց միջի ամենավսեմ կապը»¹։

Հայ մեծանուն նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը նույնպես նշանակալից ներդրում ունի հայ և վրաց ժողովուրդների բարեկամության մեծ գործի մեջ։ Նա ոչ միայն սոսկ նկարիչ է եղել բառիս նեղ իմաստով, այլև բանասիրական պրպտում-ների հեղինակ, գրող, հրապարակախոս և հասարակական եռանգուն գործիչ։ Նա շուրջ քառասուն տարի գրադվել է նկարչությանը։ Լիբիական խառնվածքի տեր նկարիչ վարպետ վրձիներ կենդանություն է հաղորդել կովկասյան բնությունը և կերպավորել մեծ ու փոքր կտավների վրա։ Նրա երգած բնությունը ներշնչված է ժողովուրդների բարեկամության սգով։

Հայ աեալիստական պեյզաժի հիմնադիր Գ. Բաշինջաղյանը լայնախոհ մարդասիրությամբ է ուսումնասիրել հարևան ժողովուրդների կուլտուրան² ու կենցաղը, ինչպես նաև շերմ սիրով կերպավորել հարադատ բնության գեղատեսիլ վայրերը։ Բավական է միայն թվել նրա կտավներից մի քանիսը, որպեսզի ժողովուրդների անկաշառ բարեկամի գործը ներկայացնենք իր ներդաշնակ ամբողջականության մեջ։ «Սևան», «Արուվյանի տունը Քանաքեռում» և այլ նկարների կողքին հիշենք «Փոստի կայանը Ռադմավիրական ճանապարհին», «Իտրի գետը լուսնյակ գիշերին», «Կապեկ», «Գիշերն Օրթա-ճալալում», «Քուռը գիշերով», «Մանգլիսի շրջակայքը», «Քու-

¹ Հովհ. Քուստանյան, Երկերի ժողովածու, 1945, հ. 5, էջ 443—444.

² Գ. Բաշինջաղյանի ուշադրությունից չի վրիպել Շ. Ռուսթումյանի 4 նրա անմահ պոեմ «Վաղրենավորը»։ Ինչպես «Մախալիստ ստեղծելու վրաց թերթն է վկայում, նա սզնախնայի հայ լինելով, սվրաց հիմ գրականությունն աեխպես լավ գիտի, որ շատ վրացիներ հենց ուղղակի պետք է քննօրինակեն նրան»։ Այդ նույն թերթում, ինչպես նաև «Մշակ»-ում (1889 թ. 76) հոդվածներ են տպվել այն մասին, որ Գ. Բաշինջաղյանը նկարել է մի տեսարան «Վաղրենավոր»-ից։ Նկարն արտահայտել է հեռախոսի Փաթման պարտեզում գրունդին նկատում է ավին մտտեցող մի տաղան։ Այդ տաղանի վրա գտնվում էր առեանգված Նեոտոն-Դարելանը Գ. Բաշինջաղյանը խոստացել է դարձյալ անտարաններ նկարել այդ թեմա-լով, սակայն, ինչպես վերը հիշած նկարը, նույնպես և այլ նկարներ, կամ լույսագներ, մեզ չեն հասել և առայժմ կորած են համարվում։

որ ավեր», «Քորժումի շրջակայքը», «Առավոտը Կոշորում» և բազմաթիվ այլ կտավները, որոնք վրաց ժողովրդի գեղեցիկ բնության վարպետ կերտվածքներն են։ Այսպիսով մենք տեսնում ենք, թե ինչպիսի հարազատության մեջ է նա նկարել թե՛ հայ, թե՛ վրաց և թե՛ աղբբեշանական ժողովուրդների բնաշխարհը։

Նկարչության զխավոր նպատակը,— գրել է Գ. Բաշինջաղյանը,— նույնն է, ինչ որ գեղեցիկ գրականության և քանդակագործության, այսինքն՝ արտահայտել ճշմարտությունը...»¹։ Ռեալիզմը Բաշինջաղյանի ստեղծագործական մեթոդն է, նրա բովանդակալից կյանքի ուղեկիցը²։ Նա գտել է, որ ս...ինչպիսի յերակայության տեր էլ լինի նկարիչը, նրա ստեղծագործությունը չի կարող լինել ճշմարտացիորեն գեղարվեստական, եթե նա առողջ մտքի սահմաններից դուրս լինի և եթե նա չհամապատասխանի իրականության օրենքներին»³։ Գ. Բաշինջաղյանը իր կյանքի մեծ մասը անց է կացրել վրաց ժողովրդի մեջ։ Մայրենի լեզվի շափ տիրապետելով վրացերենին, բարեկամական կապերի մեջ գտնվելով հայ և վրաց արվեստի ու գրականության առաջավոր գործիչների հետ, վրձինով, հրապարակախոսական ու բանասիրական հոդվածներով, վրաց և հայ կյանքի թեմաներով հյուսված գողարիկ պատմվածքներով, գեղարվեստական հուշերով օգնել է հարևան ժողովուրդների բարեկամության ամրա-

¹ Գ. Բաշինջաղյան, Նկարչի կյանքից, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 145.

² Վրաց կերպարվեստի աշխարհում աեալիզմ տիրապետող մեթոդ է եղել 19-րդ դարի 2-րդ կեսին Վրացի (Գիգո Դաբաշվիլի, Ալեքսանդր Երեմյան) ինչպես նաև Վրաստանում ապրած հայ նկարիչների վրա մեծ ազդեցություն են ունեցել առաջնորդները Ռուս նկարիչներից օմանց կարճ կամ երկար ժամկետներով գտնվել են Վրաստանում։ Այսպես օրինակ, երկար ժամանակ ապրել ու ստեղծագործել է ժանրիստ և պեյզաժիստ Ժ. Սեդուլովը, Քրիլիսիի ուսումնարաններից մեկում տարիներ շարունակ աշխատել է Վ. Վ. Աբեղջաղինը։ 1880-ական թվականների կեսերին Վրաստան է եկել քանդակագործ Ս. Ա. Կանսերեն, նույն տարիներին Քրիլիսիում են գտնվել նաև Մակովսկին, Ռեպինը, Սամոյլովը, Ռուրան և այլն։ Բացի Ռեպինից, մյուսները տարիներով ապրել ու ստեղծագործել են Վրաստանում։

³ Գ. Բաշինջաղյան, Նկարչի կյանքից, Հայպետհրատ, 1950, էջ 143.

գեղձանք: Ի դեպ նշենք, որ նա պատմվածքներ է տպագրել ոչ միայն հայ, այլև վրաց պարբերականներում¹:

Գ. Քաշինջաղյանը բավականաչափ հոգվածներ ունի հայ մամուլում տպագրված: Այդ հոգվածները մեջ արժարժել է հայերին և վրացիներին հավասարապես հետաքրքրող հարցեր:

1912 թվականին «Մշակում»² լույս է տեսել «Վրաց-հայ ազգի բանաստեղծները» վերնագրով հոգվածը: Այդտեղ նա խոսում է Սայաթ-Նովայի, նրան հետևող հայ և վրացի աշուղների և մասնավորապես Սկանդար-Նովայի (Գևորգ Սկանդարյան) և Գրիգոր Շարուրյանցի մասին: Վերջիններս ոչ միայն հավաքել և կազմել են գեղեցիկ գրքեր հայ և վրաց աշուղների վրացերեն ասած երգերից, այլև իրենց սեփական ստեղծագործություններն են ունեցել հայերեն և վրացերեն լեզուներով: Մի այլ հոգվածից³ իմանում ենք, որ «Սայաթինո ազգանդարի» (Սերախուսթյան սաղանդար) երգարանը կազմող Սկանդար-Նովան սիրվել ու դնահատվել է Գ. Սունդուկյանին, Ի. Ընվճավաձեի, Ա. Մերեթելու և շատ ուրիշների կողմից:

¹ Գ. Քաշինջաղյանի կյանքն ու գործունեությունը լիապես իրավունք են տալիս նրան դասելու հայ նշանավոր արվեստագետների շարքում: Հայ մեծանուն նկարիչը կյանքը վերաբաղեցրել է և՛ վրձինով և՛ գրչով: Նրա բնակարանները լայն ճանաչում են դասել արվեստասեր հասարակության Կոլմեցի: Ինչ վերաբերում է նրա գրական-գեղարվեստական գործերին, որոնց մեծ մասը տպվել են հեղինակի կենդանության տարիներին, ապա դրանք գեղեստանհրատեչյտ ուշադրության չեն արժանացել, և բոտ ամենայնի խորագրեն չեն ուսումնասիրվել: Իրան կարելի է դումարել նաև այն, որ մի շարք պատմվածքներ, որոնք Գ. Քաշինջաղյանը գրել է վրացիներն և լույս ընծայել վրաց պարբերականներում, առ այսօր ի մի չեն հավաքվել և չեն թարգմանվել ու հրատարակվել հայերեն լեզվով:

Իրապես մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա այն պատմողվածքները, որոնք վրաց կյանքի թնամներով են հյուսված, վրաց բնախոսարժն են այդպիսով և վրաց կալվածասիրող ու հոտարակ գյուղացու կենցաղն ու հոգեբանությունն են կերպավորում: Նրա մի շարք պատմողվածքները գրված են նուրբ հումորով, լավատեսության առողջ միտումով և վրաց կյանքի կողորոտային երանգավորումներով (սենթիպայած տանտեքք, ճիշտան Վաչեաձեի ազգարկում» և այլն):

² «Մշակ», № 232, էջ 2:

³ «Մշակ», 1917, № 74, էջ 2:

Գ. Սունդուկյանը ժամերով նստել ու զրուցել է նրա հետ, գրչխավորապես Սայաթ-Նովայի մասին: Գ. Ախվերդյանը նույնպես բազմիցս խորհրդակցել է նրա հետ, երբ աշխատել է իր «Սայաթ-Նովա» գրքի վրա:

Առաջին անգամ Գ. Քաշինջաղյանն է, որ հայերին ծանոթացրել է Սայաթ-Նովայի վրացերեն երգերի հետ:

«Լուսող եմ ասել հաստատապես նրա նման հեղինակավոր մի սայաթնովագետ չկար հայերի մեջ»,— գրել է Լեոն: Գ. Քաշինջաղյանը վրացերենից հայերենի է թարգմանել (բառացի) Ա. Մերեթելու հանրահայտ երգերից յոթը: Նա անգիր է իմացել հայ և վրաց շատ պոետների ստեղծագործությունները: Անձնական մտախկություն է ունեցել այն երգիչների հետ, որոնք երգել են Քբիլխիի ճաշարաններում (օրինակ՝ Հազիրին)⁴: Նա ցանկացել է Սայաթ-Նովայի երգերը (երեք լեզուներով) հրատարակել մի հատորով, միաժամանակ արձակ թարգմանություններով հասկանալի դարձնել հարևան ժողովուրդներին մեծ բանաստեղծ-երգչի անմահ երգերը: Նրա այս ծրագիրը չի իրագործվել:

20-րդ դարի սկզբներին վրացական թատրոններում բեմադրվել են Շիրվանզադեի դրամատիկական երկերից «Պատվի համար», «Նամուս» և «Ծվգինե» պիեսները: Վրթանես Փափաղյանի «Ժայռ» դրաման նույնպես բեմադրվել է վրաց բեմում: «Ժայռ» դրաման, չնայած ցաղափարական թերություններին, սոցիալական լուրջ պոթիկումներով գրված գործ է, որտեղ բացահայտորեն ներկայացված է դասակարգային պայքարը գյուղում: Այս պիեսը դրական դեր է խաղացել և սիրով է ընդունվել վրաց հասարակայնության կողմից: Վրաց գյուղը ոչնչով չի տարբերվել Փափաղյանի պատկերած գյուղից: Նույն կերպ կեղերվել ու շահագործվել են գյուղացիները ազգություն մը վրացի Գրիգոր աղաների, ամեն կարգի պետական պաշտոնյաների և ազնվական-կալվածատերերի ձեռքից: Այս իմաստով «Ժայռ»-ը իր գաղափարական բովանդակու:

¹ «Մերհրդային Հայաստան», 1926, № 2:

² Հազիրին (1871—1922) Սայաթ-Նովայի աշուղական վրաց գրչոցի վերջին ներկայացուցիչն է, երգել է գլխավորապես վրացերեն, ունի նաև հայերեն երգեր:

Թյամբ ձայնակցել է վրաց աշխատավոր գլուղացիության պայքարի կողին: Վրացական Թատրոնը, այս առումով, մեծ կարևորություն է սովել Վ. Փափազյանի դրամայի բեմադրությանը: Բավական է ասել, որ Ալեքսանդրի բարդ հոգեբանական զերում հանդես է եկել վրացական բեմի ականավոր գործիչ, տաղանդավոր զերասան Լուդո Մեսխիշվիլին:

Վրաց զերասաններից ոմանք խաղացել են հայկական Թատերական կուլեկտիվների հետ: Այսպես օրինակ՝ Վաստ Աբաշիձեն, Նիկո Գոցիրիձեն, Ա. Աղամիձեն բարեգործական նպատակներով կազմակերպված հայկական ներկայացումներին մասնակցել են հայերեն դերակատարումներով, առաջինը՝ «Գիշերվա սարքը խեղ է», երկրորդը՝ վրացերենից հայերենի թարգմանած «Քրիստինե» և երրորդը՝ «Օրթաճալաչի քեֆը» պիեսներում:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ հարևան ժողովուրդների 19-րդ դարի բեմական լավագույն տրադիցիաները շարունակվել են նաև 20-րդ դարում:

Մ'վ գրողների հոբելյանները, և՛ նրանց մահը լայն արձագանք են դտել նաև հարևան ժողովրդի մեջ:

1908 թվականին վրաց հասարակությունը մեծ հանդիսավորությամբ նշել է Ակակի Մերեթելու գրական գործունեության 50 տարին: Հայ գրական հասարակայնությունն ու մամուլը ջերմորեն արձագանքել է վրաց ժողովրդի մեծ ուրախությանը: «Մշակը» գրել է, «...Այսօր, երբ տաղանդավոր բանաստեղծի գործունեության հանրագումարն է դրած մեր առաջ, երբ նրա երկարամյա, ամբողջ 50 տարի շարունակվող ստեղծագործական աշխատանքի հոբելյանն է կատարվում, վրաց և ընդհանրապես կովկասյան հասարակության համար թանկ է այն մեծագույն գրական գանձը գնահատել, որ նա սովել է իր ժողովրդին, նվիրելով նրան իր ամբողջ հոգեկան էությունը և իր բոլոր մասձողություններն ու զգացմունքները»:

Նույն թերթի նույն համարում սովվել են զերասան և գրականագետ Գեղեոն Միրադյանի ողջույնի նամակը «Պետ

Ակակին» վերնագրով, ինչպես նաև Գ. Բաշինջաղյանի թարգմանությամբ հոբելյանի «Յիցի նաթելա», «Մի սիրաշույր» «Սուլիկո» և մի քանի այլ բանաստեղծությունները: Մի քանի օր շարունակ Ակակին մնացել է հայ մամուլի սիրալիք ուղադրության կենտրոնում: «Մշակի» վկայությամբ կովկասում ոչ մի գրական անձի հոբելյան այնպիսի շուքով չի նշվել, ինչպես վրաց բանաստեղծին: Հոբելյանական նիստում ճառերով և ողջույններով հանդես են եկել վրացի, հայ, ռուս, աղբյուրակցների բանվորներ, արհեստավորներ և այլ խավերի ներկայացուցիչներ:

1913 թվականին Ա. Մերեթելին ղնացել է Մոսկվա: Վրաց գաղութն ու ուսանողությունը հանդիսավոր կերպով են ընդունել վաստակավոր բանաստեղծին: Այս մասին սրտաշարժ հիշողություն է գրել Վ. Տերյանը: Այդ հիշողության մեջ Տերյանը հայանում է նաև այն մասին, որ ինքը այդ ժամանակ ոչ միայն վրացերենին չի տիրապետել, այլ նույնիսկ չի իմացել, թե ինչ է դրել Ակակին: Այդ «մեղքը» նա կարճ ժամանակում քաղել է. ոչ միայն վրացերեն է սովորել «Վազրենավորը» հասկանալու և զիտականորեն տեքստի վրա աշխատելու համար, այլև Ա. Մերեթելու «Կինտո» բանաստեղծությունը թարգմանել է հայերենի: Նա թարգմանել է նաև «Վազրենավորի» նախերգանքը: Մոսկվայի գրական-գեղարվեստական խմբակը կազմակերպել է բանկետ, որին մասնակցել են նաև Ա. Մերեթելուց բացի, Վ. Բրյուսովը, Ի. Իվանովը, Սումբատով-Յուսիկը և շատ այլ մարդիկ: Ներկաների վրա ցնցող տպավորություն է գործել հայ բանաստեղծ Ա. Մատուրյանի ուղեառթիվ գրած նամակը, որի մեջ նա գրել է. «Ստեղծագործ ձաքի արժիվ Ա. Մերեթելուն ծնող ժողովուրդը իրավունք ունի հպարտանալու իր հոգևոր ուժերի վեհությունը և հարստությունը...»:

Ակակին միշտ էլ լավատեսությամբ է տոգորված եղել իր ժողովրդի ապագայի նկատմամբ: Այդ հավատի ուժը Ակակին, ինչպես և Քումանյանը քաղել են ժողովրդից, նրա ըն-

¹ «Մշակ», 1908, № 271:

¹ Այդ հիշողությունը կրում է Ակակի Մերեթելին Մոսկվայում գերեզմանը: Տե՛ս, «Մշակ», 1915, № 55:

գերբից: Նա լավ է ճանաչել ժողովրդին, նրա խոհերը, իր ձեռքը, հասկացել է, թե ինչ ուժ է թաքնված նրա մեջ:


Այս մշտապես եռանդուն մարդու կյանքն ու գործունեությունը վարակիչ օրինակ է հանդիսացել իր շրջապատի համար: Բոլորի ահանջին հնչել է նրա քաջալերանքի խոսքը.

Ոչ, թող ծաղկի հույսը իմ,
 Ինձ չի ընկճի մազն ալիխան,
 Հերոսներին է ձայն տալիս
 Իմ հնչուն ծափն ու նաղարան:

1915 թվականին վախճանվել է Ակակի Մերեթելին: Հայ ժողովուրդը անկեղծորեն բաժանել է վրաց ժողովրդի մեծ վիշտը: Այս առթիվ «Մշակի» առաջնորդողում գրված է. «Վրաստանը, վրաց ժողովուրդը այսօր սգի մեջ է: Նա կորցրել է իր ձեռագույն դաշակներից մեկը... Երկրորդ փայլուն ներկայացուցիչը Շոթա Ռուսթավելուց հետո...»¹: Նույն թերթի մի շարք համարներում (4, 18, 19, 20, 21, 24, 25, 26) լայն հաղորդումներ են տպվել մեծ պոետի հիվանդության, նրա մահվան և մամուլում ու հասարակական հաստատություններում տեղ գտած արձագանքների մասին: «Ճարադի» մի ամբողջ համար² նվիրված է Ակակի Մերեթելու հիշատակին:

Այս օրերին հայ թերթում տպվել է Ալեքսանդր Սատուրյանի հոդվածը, որի մեջ հայ բանաստեղծը իր անկեղծ վիշտ է հայտնում վրաց բանաստեղծի մահվան առթիվ: «Վշտացած եմ,— գրել է Սատուրյանը,— գրչի վաստակավոր եղբայր բանաստեղծ Ակակի Մերեթելու մահվամբ. այս խորապես նշանակալից, պատմական, ծանր փորձությունների պայծառ հույսերի և ակնկալությունների օրերին մեռավ նա, որի ոգևորված հոգը ձայնը կոչ է անում դեպի լույսի և ազատության հաղթանակը: Լուսն վրաց ժողովրդական ոգու մեծ նրբիչը, ասպետական Վրաստանի լավագույն ավանդությունների, պայծառ իդեալների պաշտպանն ու պահպանը: Անձա՛հ է ստեղծագործական ոգին»³:

¹ «Մշակ», 1915, № 28.
² «Ճարադ», 1915, № 2.
³ «Մշակ», 1915, № 22:



«Անձեռնադրվել» Վ. Տերյանի բարձրամտության լեցնազարեղից մի քառասուն

Վրաց մամուլը նույնպես անդրադարձել է հայ դրական-հասարակական կյանքում տեղի ունեցած նշանակալից դեպ-քերին:

Այդ տարեթիվերի վրաց պարբերականներում հանդիպում են հայ խաչոր գրողների նկարներ և բնութագրումներ: Որպես օրինակ հիշենք «Թևատրի դա ցխովրեբա» շաբաթաթեր-թը, որի շապիկի վրա 1916 թվականին տպված է Հովհ. Թու-մանյանի, Պերճ Պոռոջյանի և Ղազարոս Աղայանի խմբանկա-րը: Նկարի տակ Թումանյանի մասին գրված է. «Հայ հռչա-կավոր բանաստեղծ, հայ գրողների ընկերության նախա-դահ»: Պոռոջյանի մասին գրված է. «Հայ հայտնի վիպագիր», Ղ. Աղայանի մասին՝ «Մանկավարժ, մանկական գրող, ուղ-ղագրության հիմնադիր»:

«Թևատրի դա ցխովրեբա»-ի (Թատրոն և կյանք) նույն թվականի № 45-ում տպված է Իոսեբ Արեմաթեկլիի ընդարձակ հոդվածը՝ նվիրված Պետրոս Ադամյանի և Սուրեն Սպանդար-յանի հիշատակին:

Եթե 1917 թվականի սեպտեմբերին մեծ իրադարձություննե-րը որոշակի աշխուժություն մտցրին հայ-վրացական գրա-կան աշխարհներում, ապա նույն բանը չի կարելի ասել այն ժամանակաշրջանի վերաբերյալ, երբ Անդրկովկասում կա-ռավարության գլուխ են անցնում նացիոնալիստական պար-տիաները, որոնք իրենց անմարդկային ու ազգակործան քա-ղաքականությանը ոչ միայն վերջնականապես քայքայում են էկոնոմիկան, այլև անկման դուռը հասցնում կուլտուրան ու գրականությանը: Վրաց մենշևիկների տիրապետության տարիներին (1918—1920) Թբիլիսիում մեռնում է գրական կյանքը: Այդ տարիները ոչ մի նոր գրող կամ գրական ար-ժեքավոր երկ չեն տալիս: Վրաստանի մայրաքաղաքում բնակ-վող հարևան ժողովուրդների դեմօկրատ գրողները (Հովհ. Թումանյան, Նար-Դոս, Դավիթ Ալզխաշվիլի, Իոսեբ Դրի-շաշվիլի, Շալվա Դադիանի, Սանդրո Շանշիաշվիլի և այլն) գրական յուրատեսակ մի ճգնաժամ են ապրում: Եվ չնայած այդ ծանր օրերին, այնուամենայնիվ նրանք չեն դադարում գործելուց, շարունակում են ժողովուրդների բարեկամության ամրապնդման աշխատանքները, որոնց արդյունքը լինում է

Վրացի ազգերի կուլտուրական միությունն և հայ ու վրացի ժողովուրդների քրանաստեղծների եզրայրությունն կազմակերպությունների ստեղծման նախաձեռնությունը: Միաժամանակ շարունակվում է հայ և վրաց գրողների (Քու- մանյան, Գրիշաշվիլի և այլն) գրական-ստեղծագործական հարաբերություններն ու անձնական կապերը: Եվ այնուամեն- նայնիվ, ազգային փոխհարաբերությունների միջնորդությամբ շի- կացած է մնում: Չնայած բոլշևիկյան պարտիայի և դեմոկրա- տական մի շարք կազմակերպությունների լայն ագիտացիոն- գործնական աշխատանքներին, նացիոնալիստական պարտիա- ներին, այնուամենայնիվ, հաջողվում էր առանձին թույլ օղակ- ներում տանելու իրենց ստորազգակործան աշխատանքը, հը- բահերելու ընդհարումներ, տարածել պրոպագանդաներ: Անդրը- կովկասյան ժողովուրդների գրական-կուլտուրական ինտելի- գենցիան իր գերազանց մասով չի վարակվում այդ կործանա- բար ախտով, ընդհակառակն, եզրայրական ժողովուրդների այդ առաջավոր և լուսավոր, բայտ ամենայնի իրենց ժողովուրդ- ների ուսուցիչ շահերը գիտակցող և քաղաքական առողջ եզրա- կացությունների հանդուր գործիչները պայքար են կազմակեր- պում նացիոնալիզմի բոլոր դրսևորումների ու նրա վտանգա- վոր հետևանքների դեմ: Այդ կարևոր պայքարում Քումանյա- նը կանգնած է լինում առաջամարտիկների շարքերում, իր կողքին ունենալով վրաց և հայ մտածողների մի ամբողջ խումբ:

Եվ Հովհաննես Քումանյանը, և բոլոր նրանք, որոնց հա- մար թանկ է լինում ժողովուրդների համեմատականն ու բարեկամական փոխհարաբերությունը, հասարակության առաջավոր խավերի զույս անցած պայքարի են ելնում բուր- ժուական ազգակործան նացիոնալիզմի դեմ: Հովհ. Քումանյ- յանը՝ այդ մեծագույն ստեղծագործողն ու լայնախոհ հումա- նիստը երկարատև տարիների փորձով եկել է այն պարզ հա- մոզման, որ նացիոնալիզմը շարիք է ընդհանրապես և կոր- ծանարար՝ հարևան ժողովուրդների, հայերի և վրացիների համար՝ մասնավորապես:

Եթե մի հայացք ձգենք հարևանների փոխհարաբերության վրա ամբողջ աշխարհում, — դրել է Քումանյանը, — մենք չենք

կարող չխոստովանել, որ վրացին, իբրև հարևան, ամենալա- վերից մեկն է եղել: Եվ դա պատմական ճշմարտություն է: Իրոք, հայերի և վրացիների բարեկամական հարևանությունը դարերի վտորկություններին է դիմացել և հետզհետե, ամեն- օրյա ու անմիջական շփման հետևանքով անբախտելի ու ամ- րակուս դարձել:

1919 թվականին, երբ անհամեմատ ավելի ազդեցիվ էր դառնում ազգային բուրժուազիան, երբ շատ ավելի շիկա- նում, վտանգավոր բնույթ է ստանում քաղաքական միջնորդ- սուր Անդրկովկասում, Քումանյանը կան կրիպիանուն հղած նամակում գրում է.

Քուրք երկյուղով եք նայում էն անդունդին, որ փորել են մեր ժողովուրդների մեջ մեր կառավարող շրջանները: Սա- կայն չէ՞ որ ժամանակն աշխարհքին նոր լուսունդ է տվել, — էդ տեսակ դեպքերում երես դարձնել կառավարող շրջաննե- րից և նայել հասարակ ժողովուրդին, ամեն մի ազգի ընդհան- բությունը, և իսկույն ձեռք երկյուղը կանցնի... Ես ձեռք մի կոնկրետ օրինակ բերեմ նորանցյալ հայ-վրացական դժբախտ ընդհարումից: Ականատեսներն են պատմում:

Ղոռու ձորում մի կամուրջ կա: էդ կամուրջի մի ծերի՞ն- կանգնեցրել են հայ պահակ զինվորին, մյուս ծերին վրացի: Նրանք երկուսն էլ հրացաններն ուսներին բռնած՝ համառ նայում են իրար: Բանից դուրս է գալիս ընկերներ են, կոյի զաշտում տարիներ շարունակ կուլել են միասին, միասին տառապել, միասին ուրախացել, միասին կերել ու միասին քնել: Այժմ բերել են իրար դեմ կանգնեցրել իբրև երկու թըշ- եամու և հրացաններն ուսներին բռնած նրանք համառ նա- յում են իրար:

Մեկ էլ դիմում են իրենց կողքին գտնվող գյուղացիներին և խնդրում են տեսնել ու իրենց հայտնել, թե արդյոք իրենց մեծավորներից մտտիկ կան թե չէ, հսկում են իրենց քն՝ չէ:

Երբ իմանում են՝ որ չկան՝ վազում են, գալիս կամուրջի մեջտեղը, դրկվում, համբուրվում, նորից նա վազում իրենց

գեղերը: կանգնում ու գարծյալ հրացաններն ուսներին հա-
ճառ նայում են իրար»¹:


Մեծ լուսեցին հասարակ ժողովրդից առած իր բնորոշ օրի-
նակով է հուսադրում վրաց իր ընկերոջը, իսկ որքան նման-
օրինակ ղեկավարի է սկանստես եղել նա, որքան ընդհարում
ներ է ձախողել իր անձնուրաց ու անմիջական միջամտու-
թյամբ:

Բուրժուական բարքերին այնքան քաջածանոթ մի գրող,
որպիսին Եիրվանդան էր, չէր կարողացել անտարբեր անց-
նել այն ամենի կողքով, ինչ կատարվել է 1910—20-ական
թվականներին Անդրկովկասում: Պարբերականներում նացիո-
նալիստական ոգով գրված մի շարք հոդվածներ ընթերցելուց
հետո նա դաշրույթով գրել է. «Նորերս ահաճութուն ունեցա-
կարգալու երկու քիչ զգացված և ավելի պակաս մտածված
հոդվածներ, որոնք խորապես զայրացրին ինձ մեր այս բա-
ցառիկ ժամանակում, երբ զայրացուցիչ երևույթներն այնքան
անհամար են»:

Եվ այնուհետև խոսելով նացիոնալիստական պարտիանե-
րի հորչորչած «ղեմոկրատիայի» մասին, շարունակում է.
«Դուրս է գալիս, որ թե՛ վրացի ղեմոկրատիան և թե՛ հայ ղե-
մոկրատիան երկնային պատիժ են յուրաքանչյուրն իր ազգի
համար»²:

Գեռես 1910 թվականին, Ալ. Եիրվանդանը շփոթելով հայ
և վրաց գրական ու թատերական գործիչների հետ, խորապես
գիտակցելով անդրկովկասյան ժողովուրդների մերձեցման
կարևորությունը, գրել է, որ եթե կա մի գաղափար, որ այսօր
ամենքի համար տարրական մի բան է և որի իրագործման
համար սակայն մենք ոչինչ կամ գրեթե ոչինչ չենք արել—գա-
հաչերի և վրացիների համերաշխության դադափարն է:

Հայ և վրաց ղեմոկրատ գրողները 1905 թվականի ուն-
լլուցիայի և հաջորդող տասնամյակի ընթացքում շատ բան
են սովորել և շատ փորձ ձեռք բերել կյանքում: Այլևս նրանց



Ա. Մերեթյու «Մի կինտո են» բանաստեղծության Վ. Տերյանի
թարգմանության ինքնագիրը

¹ Հովհ. Քամանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 416—417:

² «Մշակ», 1916, էջ 224:

համար անտարակոսեի է եղել ազգամիջյան կուտորածներ
կազմակերպող նացիոնալիստական-բուրժուական պարտիա-
ների և նրանց կեղտոտ գործը հրահրող ցարական նեխված
ինքնակալության էությունն ու գործելակերպը: Այդ տարի-
ներն ըստ էության վճռական ու շրջադարձային տարիներ են
հանդիսացել նրանց քաղաքական հասունացման ու դադա-
փարական վերադիման համար: Հայ և վրաց պրոլետարա-
կան ավազազույն գրողները՝ Հ. Հակոբյանի, Ս. Էսլու, Արա-
զու և ուրիշների հետ միասին իրենց բողոքի ձայնն ու եր-
բեմն էլ սևույնուցիոն գործունեությունը ծավալել են հայ և
վրաց առաջավոր դիմոկրատ գործիչներ Հ. Փումանյանը, Ա.
Սերեթելին, Ծ. Դադիանին, Ավ. Խաչակյանը, Ի. Էվրոզվիին,
Լ. Քիաշելին և ուրիշները:

Բուլշևիկյան հին գվարդիայի ակառնավոր ներկայացուցիչ-
ներ, բոցաշունչ սևույնուցիոններներ, անդրկոլկասյան պրոլե-
տարիատի մեծ պայքարի կազմակերպիչներ Ի. Մաալինի, Ս.
Շահումյանի, Ա. Մուկուկիձեի, Կեցիուվելու, Ս. Սպանդարյա-
նի, Ս. Օրջոնիկիձեի և շատ ուրիշների անձնական մտերմու-
թյունն ու դադափարական սերտ համագործակցությունը լա-
վազույն օրինակն է այն բանի, թե ինչ փոխհարաբերություն-
ների մեջ պետք է լինեին հայ և վրաց ժողովուրդները, ում դեմ
պետք է ուղղեին իրենց միասնական պայքարը և հանուն ին-
չի: Հայ և վրաց ժողովուրդների այդ լավագույն զավակների
գործունեության ուղորտն ընդգրկել է հասարակական կյանքի
բոլոր բնագավառները, այդ թվում նաև զրականության, կուլ-
տուրայի և արվեստի բնագավառները: Նրանց ղեկավարու-
թյամբ և նրանց ջանքերով անդրկոլկասյան ժողովուրդների
առաջավոր մտավորականությունը զաղափարապես աստի-
ճանարար վերադիմելով, ընդհուպ մտեցել է պրոլետարա-
կան սևույնուցիայի անհրաժեշտության գաղափարին: Փաստ է,
որ սովետական կտրգերի հաղթանակը Անդրկոլկասում այդ
մտավորականության կողմից ընդունվել է ցնծության դեկ-
լարացիաներով: Իսկ այնուհետև նրանց ակտիվ մասնակցու-
թյունը նոր կարգերի ամրապնդման գործում զարձայլ խոստում
է վերն ասածների օգտին:

Անդրդիվկասյան սեփականորէն ստիճանական կարգեր հաստատվելուց հետո անցած տարիները հանդիսացել են լենինյան ազգային քաղաքականութեան հարթանակի, ժողովուրդների անխախտ բարեկամութեան էլ ավելի ամրապնդման ու ստեղծագործութեան տարիներ:

Երկար ու ձիգ տարիների ընթացքում Անդրդիվկասի բազմաշարշար ժողովուրդները ո՛չ եվրոպական իմպերիալիստական տերութուններից և ո՛չ էլ օտար զավթիչների ագենտները հանդիսացող բուրժուա-նացիոնալիստական պարտիաների (մենշեիկներ, մուսավաթականներ, ղաշնակներ) կարճատե, տիրահազակ ռեպրեսիվութուններից ոչինչ չեն ստացել՝ ազգամիջյան կոտորածներից, սովից ու ֆիզիկական բնաջնջման անխոտապիւնի վտանգից քացի:

«Այդ նացիոնալիստական կառավարութունները, — գրել է Ի. Վ. Ստալինը, — իրենց նացիոնալիստական քաղաքականութունը վարելով, աշխատավորութեան մեջ ազդեցիվ նացիոնալիզմի ոգով աշխատելով, վերջապես, բանն այնտեղ հասցրին, որ այդ փոքրիկ երկրներից չուրաքանչյուրը շրջապատվեց թշնամական նացիոնալիստական միջուկաբաշխողով...»¹

Վրաց մենշեիկյան կառավարութեան, այսպես կոչված «վրացական ազգային խորհրդի» կործանարար քաղաքակա-

նութեան մասին տրված գնահատականը ամբողջութեամբ վերաբերում է նաև հայ ժողովրդի թշնամի ղաշնակցութեանն ու նրա «կառավարութեանը», մի կառավարութուն, որի տիրահազակ տիրապետութունը ազնուալի հետևանքներ է ունեցել հայ ժողովրդի համար:

Մեծաշուք հանդիսավորութեամբ ու բազմաթիվ անգամներ հոլովված շարահասարկ «Հայկական հարցը» միլիոնավոր հայերի կորստյան, անսպասելի թշվառութունների պատճառ է դարձել մի կողմից, և մյուս կողմից անսահմանորեն բորբոքել իմպերիալիստական տերութունների առանց այն էլ կատաղութեան աստիճանի հասած նվաճողական փոթորակը:

Ռուս հերոսական պրոլետարիատը չենինի ստեղծած հերոսական բուլշեիկյան պարտիալի գլխավորութեամբ փշրեց ռուսական իմպերիալիզմի ու ցարական կառավարութեան լուծը և ազատագրեց ոչ միայն իր ժողովուրդին, այլև, նախկինում ցարական տիրապետութեան տակ հեծող, բազմաթիվ ժողովուրդներին, շահելով նրանց համակրութունն ու աջակցութունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեւոլյուցիայի հերոսամարտերի, ինչպես նաև հետագա տարիներին արտաքին ու ներքին թշնամիների դեմ մղած պայքարի ընթացքում:

Հայ և վրացի ժողովուրդները Սովետական Մեծ Միութեան ժողովուրդների համերաշխ բնուանիքում և ռուս մեծ ժողովրդի օգնութեամբ պատմական կարճ ժամկետում հսկայական նվաճումներ են ունեցել տնտեսութեան, պետական շինարարութեան, կուլտուրայի ու գրականութեան բնագավառներում:

Սովետական կարգերի գոյութեան ավելի քան երեք տասնամյակների ընթացքում հայ և վրաց ժողովուրդների ստեղծած գրական արժեքները ամենափայլուն ու պերճախոս ապացույցներն են սովետական մարդու ոչ միայն նշուխական, այլև հոգեոր վերածննդի: Սակայն հայ և վրաց պրոլետարական-ռեւոլյուցիոն զաղափարներով տողորված գրողների փոխադարձ կապերը սկսվում են դեռևս ցարական ինքնակալութեան տիրապետութեան մասը տարիներից: Այս տնտեսական շարժումը ուղղորդվել է հատկանշական է մի

¹ Ի. Վ. Ստալին, Երկեր, հ. 5, էջ 107:

նդելութիւն, որը վերնաբերում է հայ պրոչետարական պոետի հիմնադիր Հակոբ Հակոբյանին:

1912 թվականին Հ. Հակոբյանը որպէս ագիտատոր շարքում է վրացական գյուղերում և, ահա, մի գյուղում տեղի է ունենում այսպիսի մի դեպք.

— Ով է ագիտատորը, որ այսքան շիգրով է խոսում, — հարցնում է Մալաբին մի պատկանելի ծերուկ:

— Ակակի Մերեթելս իցնո՞ք (Ակակի Մերեթելուն՝ ճանաչում ես), — իր հերթին հարցնում է Մալաբին ապավորութիւնն ուժեղացնելու համար:

— Վիցնոր (ճանաչում եմ), — պատասխանում է ծերուկը:

— Էսեց սոմխերիս Ակակիս (սա էլ հայերի Ակակին է):

— Հոտո, — ծոր է տալիս գյուղացին և ներքին գոհունակութիւնը նայում աչքերիս մեջ, որ բախտ ունի «հայ Մերեթելուն տեսնելու»¹:

Ոչ պակաս նշանակալից է մի այլ կարևոր վավերաթուղթ, ժողովուրդների բարեկամութեան անխախտ կապի գործում իր նշանակութեամբ մեծ, գեղարվեստական խոսքի մի նմուշ: Այդ հուզող գործը բանաստեղծական խոսքի մեծ վարպետ Ավետիք Իսահակյանի «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքն է՝ 1906 թվականին գրված:

1905 թվականի ունուցիտն իրադարձութիւնների մի հուզիչ տեսարան է նկարագրում հեղինակը և պատմում ապրտամբ գյուղացիութեան վճռականութեան մասին՝ պայքարելու, իսկ անհրաժեշտութեան դեպքում նաև մեռնելու ազատութեան դրոշի ներքո: «... Եվ համատեմ է ժողովուրդը, թե նորից պիտի ծածանի իրավունքի և եղբայրութեան գորշակը հարկենիքի այս թախծապատ լեռների և զլխիկոր կաղնիների վրա և պիտի դուրս էլնի գերեզմանից սիրելի և ազնաժուր Շաքրոն՝ նորից բռնելու հեղափոխութեան սրբազան գորշակը...»:

1926 թվականին Ավ. Իսահակյանը արտասահմանից հայրենիք վերադառնալիս, Բաթումից գնացք նստելով անցնում

է Վրաստանի չքնազ բնութեան հիասթափելի վայրերով, ունկընդրում սուղեկից վրացիների զվարթ զրույցներին, որոնց հընչունները հարազատ են թվում հայ բանաստեղծին: Անսահման կարտոով ու հաճույքով է լսում նրանց Ավ. Իսահակյանը, սակայն խոսակցութեան բուն իմաստը անհասկանալի է մնում նրան և նա մեղադրում է իրեն այն բանի համար, որ չի սովորել «մեզ զարավոր դրացու լեզուն»: Հայ բանաստեղծի հիշողութեան մեջ արթնանում են իր երիտասարդական տարիների անջինջ հիշողութիւնները կապված վրաց աշխարհի հետ, «Երևակայութեան մեջ իրականանում են շատ դեմքեր»: Բանաստեղծի հիշողութեան մեջ արթնանում ու աչքերի առջև կենդանանում են «... ոտմանտիկ հովիտների վրացուհիները՝ աշագեղ և սլացիկ, և նրանց պարերը եղնիկի քայլերի նման թեթև...»:

Եվ այնուհետև հայ մեծանուն բանաստեղծը գնացրում հանդիպում է վրաց գուսանին և ունկնդրում նրա հուզաթաթազ երգը Սովետական Վրաստանի մասին:

«Սիրտս ուժգին տրտփեց. վաղուց էր, շատ վաղուց, աշուղ էի տեսել, սազի նվագ չէի լսել», — պատմում է Ավ. Իսահակյանը:

«Շատ հուզեց ինձ ժողովրդի երգչի այս խանդավառ երգը: Երբ տարիներ հետո վերհիշում եմ այն պահը, նորից ապրում եմ այն քաղցր հուզմունքը, որ տվեց ինձ ժողովրդի սրբտից բխած այս անկեղծ երգը: Այսպես է ավարտել հայ բանաստեղծը «Վրաց գուսանի երգը» գողտրիկ ստեղծագործութիւնը:

Այս փոքրիկ պատմվածքը որքան դազափարապես համահընչում է «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքին, նույնքան էլ արտահայտում է ժողովուրդների իղձերի ու ցանկութիւնների այն գեղեցիկ իրականացումը, որի առհավաաչան հանդիսաշաղ սովետական կարգերի հաստատումը Անդրկովկասում:

Վրաց ժողովրդի, մասնավորապես Թրիլխախի բնակչութեան մեջ լայն ժողովրդականութիւն է վայելել բանվոր—աշուղ եթիմ Գյուրչին:

Նրա երգերը բերանից բերան են անցել և հավասարապես դուր եկել հային ու վրացուն: Նա նույնպես երգել է հարևան

¹ Հակոբ Հակոբյանի արխիվ, գործ N 102:

երկու ժողովուրդների՝ հայերի ու վրացիների բարեկամությունը: Եթիմ Գյուրջու ստեղծագործությունների մեջ մեծ թիվ են կազմում երգիծական ժանրի նրդերը, որոնց մեջ մի կողմից գովերգում է ժողովուրդների ինտերնացիոնալ կապերը, և, մյուս կողմից, մերկացնում հասարակական կյանքում տեղ գտած շահագործումն ու աչանդակ բարքերը:

Ժողովրդական աշուղ Եթիմ Գյուրջին, որ իր մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել Քրիլիսիի չքավոր դաբաղի (կաշեգործի) ընտանիքում, իսկ հասուն տարիները՝ Քարվի նավթահանքերի բանվորների մեջ, ակտիվ կերպով մասնակցել է 1905 թվականի ռևոլյուցիային և նրա պարտությունից հետո բանտարկվել ու քստրվել է Սիբիր: Միայն 1917 թվականի փետրվարյան ռևոլյուցիայից հետո հնարավորություն է ստացել հայրենիք (Վրաստան) վերադառնալու: Վերադարձից հետո գրած իր անդրանիկ երգի մեջ ողջունում է իրեն հավասարապես սիրելի հայ և վրաց ժողովուրդներին: Ահա այդ երգի մի քառատողը.

Հայոս-Քարթլոսի իմ բյուր եղբայրներ,
Դուք իմ տանջանքիս կենդանի վիս,
Ինձ վաճառեցին կեղծ բարեկամներ,
Ողջույն, ձեզ կարոտ եթիմը եկավ:

Մինչև սովետական կարգեր հաստատվելը, հայ և վրաց ժողովուրդների գրական հարաբերությունների մեջ բացակայել է ծրագրային աշխատանքն ու հետևողականությունը: Փոխադարձ կապերն արտահայտվել են առիթից-առիթ տպագրված հոդվածներով և զեղարվեստական ստեղծագործությունների թարգմանություններով: Ինչ հնարավոր չէր անել ցարական ինքնակալության, իսկ առավել քան մենշևիկների ու դաշնակների տխրահույս տիրապետության պայմաններում, հնարավոր դարձավ միայն սովետական կարգերի հաստատման շնորհիվ: Ինտերնացիոնալ դաստիարակության մեջ իր կարևոր տեղը գրավեց սովետական ժողովուրդների, այդ թվում՝ հայ և վրաց եղբայրական ժողովուրդների գրական ստեղծագործությունները մասսաների սեփականությունը դարձնելու գործը:

Ինչպես պրոլետարական գրականության հիմնադիր Մաքսիմ Գորկին է նշել¹, սովետական ժողովուրդների գրողները ստեղծագործում են ոչ միայն իրենց ժողովրդի, այլև Սովետական Միության բոլոր ժողովուրդների համար և, ուստի, պատմությունը նրանց վրա դնում է այն նույն պարտականությունը, ինչ պարտականություն որ դրված է բոլոր սովետական գրողների վրա առհասարակ: Այլ խոսքով, հայ և վրաց գրողները իրենց ստեղծագործությունների մեջ լուծում են նույն խնդիրները, ինչ խնդիրներ որ քննարկում են ռուս, ուկրաինացի, տաջիկ և սովետական մյուս ժողովուրդների գրողները: Հատկանշալի է, որ այսպիսի լայն հնարավորությունները և նպատակառաց միջոցառումները առավել բնագծում են գրականության դերն ու նշանակությունը և բարձրացնում ստեղծագործողների պատասխանատվությունը:

Նույն միտքը դարգացրել է նաև Մ. Ի. Կալինինը 1940 թվականին, Քրիլիսիի ինտելիգենցիայի համաքաղաքային ժողովում արտասանած իր ճառի մեջ²:

Մ. Ի. Կալինինը խոսելով նաև վրաց գրողների հերթական անելիքների մասին, ընդգծում է այն պայմանները, որ ստեղծագործող մարդկանց պարզեցել է Սովետական իշխանությունը: Ինչ ազգային էլ պատկանի գրողը, եթե արժեքավոր երկ է ստեղծել, ապա նրա գործը անուշադրության չի մատնվի, ինչպես այդ տեղի է ունեցել անցյալներում, և թարգմանվելով կտարածվի սովետական ներկրի բոլոր անկյուններում և կըզառնա բոլոր ժողովուրդների սեփականությունը:

Հայկական և վրացական ռեսպուբլիկաների գոյության տասնամյակների ընթացքում բազմաթիվ զրբեր են փոխադարձաբար թարգմանվել և հրատարակվել: Հայ և վրաց մամուլը, այդ թվում հատկապես գրական մամուլը առանձնապես, բոլոր միջոցներով լայն կերպով պրոպագանդում է սովետական գրականությունը, սխտեմատիկաբար անդրադառնալով հարևան ժողովրդի գրական-ստեղծագործական կյանքին:

¹ Տե՛ս Մ. Գորկի, Ժողովածու, Գրականության մասին (տոս.), Մոսկու, 1953, էջ 723:

² Մ. Ի. Կալինինի ճառը տպված է «3B» թերթի 1940 թվականի հունիսի 29-ի համարում:

Անհամեմատ ծանր է եղել աշխատանքը Սովետական Միության առաջին տարիներին: Դեռևս իրեն զգացնել է տվել անդրկովկասյան ժողովուրդների մեջ որոշ շահույթ տեղ գտած նացիոնալիստական տրամադրությունը: Այդ տրամադրության հետևանքով անվստահության զգացում է առաջացել դեպի հարևան ալլադգի բնակչությունը: «Ակներևորեն նացիոնալիստական կառավարությունների երեք տարվա զոչությունը Վրաստանում (մենշևիկներ), Ազրբեջանում (մուսավաֆականներ), Հայաստանում (դաշնակներ) զուր չի անցել»¹, — պարզարանել է Ի. Ստալինը:

Հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը իր կրանքը անց է կացրել Քբիլիսիում և իրավացիորեն այն անվանել է «օջախ հարազատ, երկրորդ հայրենիք»: Բուշնիկ պոետը հարազատի սիրով երգել է Քբիլիսին և իր ստեղծագործություններով եղբայրական համագործակցության կոչել սովետական հայ և վրաց ժողովուրդներին: Ահավասիկ նրա «Քիֆլիս» էպոպեայից մի հատված.

Օ, սիրուն Քիֆլիս, օջախ հարազատ, երկրորդ հայրենիք,
Երբ ուրա դրի առաջին անգամ հողդ դեզանի՝
Ինձ ողջուն տվեց զոգանդն ուրախ ձիաքարշերիդ,
Եվ հիացք բերող թռիչքն հարսիկ կանգուկտորներիդ:

Ազմկալից էր ամեն ինչ այստեղ, փողոցն ու շուկան,
Եվ կայտառ, զվարթ, թարախք գլխին կինտան իսկ անգամ:
Մեծն Աղամյան այստեղ էր — բեմից առաջին անգամ
Ներշնչեց իմ մեջ ճշմարտի ոգին և դեղեցկություն:

Օ՛, իմ հայրենիք, խրտումների, ևս չեմ մոռանալ,
Թե ինչպես մի օր դասի ժամանակ Հադոն² էն խիզախ
Դաշունը մխեց դեկան-էրզարխի սիրտը բռնակալ...
Ու այդ օրից էր, որ իմ պատանյակ սիրտը խրտուն
Ազրեց մի անուշ, մի լավ զգացումը... կարծես թե Հադոն —

¹ Ի. Ստալին, Նրկեր, հ. 5, էջ 106—107:

² 1885—86 թվականներին Քբիլիսիի հողերը Սեմինարիայի սեկտորի է եղել մի վերին աստիճանի ազգատյաց, ցարական դադուֆային քաղաքականության ժողի պաշտպան Չուգնիցիին: Նա ասել է ոչ միայն փոքր ազգությունների պակասն ու օւսանողներին, այլև տանել չի կարողացել նրանց լեզուն, կուլտուրան ու կենցաղը: Սեմինարիայից վտարված Ս.

Դա իմ վրեժն էր, որ լուծվեց մահովն դատան սեկտորի...
Ը՛հ՛ որ ևս ես գիտեալից զՂամ Սեման զո՛ւ էի՛:

Սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին, ինչպես հայտնի է, Հակոբ Հակոբյանն աշխատել է Վրաստանի լուսժողովատուում: Մեկ հայտնի է նաև այն սերտ կապերի մասին, որ նա ունեցել է նույն վարչության մեջ աշխատող վրաց անվանի դրամատուրգ Շավա Դադիանու հետ: Նրանք երկուսն էլ նշանավոր ու ճանաչված դեմքեր լինելով, զեկավարել են մեկը՝ թատերական, իսկ մյուսը՝ գրականության (ըստ Շ. Դադիանու արտահայտության՝ բանաստեղծության) (ըստ Շ. Դադիանու կերպ նա կապված է եղել նաև վրաց մյուս շատ ու շատ զրույների հետ, առանձնապես վրաց պրոլետարական պոետ Սանդրո Էուլու հետ: Սանդրո Էուլու «Դարբնոցում» բանաստեղծությունը թարգմանվել է Հակոբ Հակոբյանի կողմից (պրոլետար ստորագրությամբ) և տպագրվել հայ պարբերականում²:

«Կարմիր ասող» թերթում տպագրված են հայ բանաստեղծի հոդվածները, մեկը՝ «Իլիկո Մղելածն — Քյոո-Օղլի» (մահազրի փոխարեն) և մյուսը՝ «Ընկեր Մղելածն — Քյոո-Օղլու թաղումը»³ վերնագրերով: Այդ, ինչպես նաև մի շարք այլ հոդվածների մեջ, Հակոբ Հակոբյանը եղբայրական սիրով ու անմիջականությամբ իր վերաբերմունքն է արտահայտում վրաց ժողովրդին հուզող իրադարձությունների, քաղաքական-գրական զեպքերի նկատմամբ: Վրաց հասարակության կողմից ճանաչված ու սիրված հայ գրողներից մեկն էլ եղել է Հակոբ Հակոբյանը:

Հայ պրոլետարական պոեզիայի վետերան և ռևոլյուցիոնիստ աննկուն մարտիկ Հ. Հակոբյանը անկեղծ ու ջերմ տողերով է երգել բուշնիկյան պարտիայի հին ղվարդիայի հայ և վրաց ներկայացուցիչներին:

Հայ պոետը համակված պրոլետարական ինտերնացիոնա-

Ջիբլածն 1885 թվականին հրապարակորեն ծեծել է նրան, իսկ մի տարի անց վտարված Լադո Լադիաշվիլին սպանել է գաշունով:

¹ «Գրական թերթ», 1933, № 15:

² «Դարբնոց», 1922, № 1:

³ «Կարմիր ասող», 1921, № 153—159:

լիզմի ու երախտագիտութեան վառ գրացմունքներով, լիբի-
կական անմիջականութեամբ ու ճշմարտորեն է նկարել Ս.
Շահումյանի («Ստեփան Շահումյանին»), Բ. Գրապետյանի («Բա-
սանվեց կոմի-
սարներին»), Մ. Յիսակյանի («Միխայիլ Յիսակ-
յանին»), Ա. Մյասնիկյանի («Այնպես որ Մյասնիկյան-
ին»), լեգենդար հերոս Կամոյի («Կամոյին»), Ս. Օրջոնիկի-
ձեի («Օրջոնիկիձեին») և շատ ուրիշների անզուգական
ու հմայիչ կերպարները: Բոլշևիկյան պարտիայի հին գվար-
դիայի մասին գրել է.

Նրանք նման հսկա կաղնու հաղթ գագաթին,
Նրանք նման հեղեղ քերթող գարնան գետին,
Նրանց կյանքը չէր անհամատ ու անհամարույր,
— Բուրդ վարդը շորացած էլ տալիս է բույր!...

Վերիկական շնչով է տվել սովետական ժողովուրդներին
անչափ սիրելի, անմահ կենիւնի զինակից Սերգո Օրջոնիկիձեի
կենսուրախ բնութագիրը.

Քո ժպիտը—արև է ջերմացնող,
Եվ խոտը քո թարմ-տափուտի ցող,
Ով քեզ հանդիպում՝ նա մտանում է
Ամեն վերջ ու ցավ եկող ու անցնող:

1923 թվականին Հակոբ Հակոբյանի գրական զործունեու-
թյան 30 տարին լայն կերպով նշել է վրաց գրական հասա-
րակայնությունը: Այդ նույն տարին Վրաստանի լուսժողովու-
րամատի որոշմամբ Թբիլիսիի № 76 աշխատանքային դպրոցը,
ինչպես նաև Ախալքալաքի մանկատունը կոչվել են հայ նը-
շանավոր պոետի անունով: Հրապարակվել է նաև վրացական
Սեշ ժողովումխորհի որոշումը՝ Հակոբ Հակոբյանին «Հանրա-
պետության ժողովրդական բանաստեղծի կոչում տալու մա-
սին»:

Վրաց գրողները մի ջերմ ուղերձով դիմել են բանաստեղ-
ծին, նրան համարելով ոչ միայն հայ, այլև վրաց ժողովրդի
սիրելի դավակն ու պայքարի աննկուն զինվորը:

Հայ ժողովրդի անմահ պոետ Հովհաննես Թումանյանը
Սովետական կարգերի հաստատվելուց հետո էլ շարունակել
է իր լայն գործունեությունը ժողովուրդների գրական-կուլ-
տուրական միջոցառման, նրանց համատեղ ստեղծագործական
ջանքերը կազմակերպելու բնագավառներում:

«Թումանյանին մենք ճանաչում էինք,— գրել է Սիկո Փա-
շալիշվիլին,— իր մեծ անվան պատճառով, սակայն նրա զըր-
վածքներից, բացի մի երկու նմուշից, ոչինչ չէինք տեսել, այս
երևույթը պատահական չէ, այլ դժբախտ պայմանների ար-
դյունք»:

Ս. Փաշալիշվիլին իրավացի է: Թումանյանից վրացերենի
թարգմանած մի քանի բանաստեղծությունները աննշան և
նրա ստեղծագործական տաղանդի համար ոչ բնորոշ պատա-
ռիկներ էին մեծ բանաստեղծի երկերի համեմատությամբ:
Նրա լավագույն շախմոս և արձակ ստեղծագործությունները
միայն սովետական տարիներին են թարգմանվել և դարձել
վրաց ժողովրդի սեփականությունը:

Այդ շնորհակալ ու անզնահատելի գործը կատարել է վրաց
մեծանուն բանաստեղծ Իոսեբ Գրիշաշվիլին:

Հովհ. Թումանյանի և Իոսեբ Գրիշաշվիլու ծանոթությունն
սկսվում է 1914 թվականից, Սայաթ-Նովայի գերեզմանի վրա
արձան կանգնեցնելու նպատակով այնտեղ հավաքված հայ և
վրաց մտավորականության ներկայացուցիչների ջերմ ու սի-
րալիր միջավայրում: Այնուհետև այդ ծանոթությունը տարի-
ների ընթացքում վեր է ածվել սերտ մտերմության: Գրիշաշ-
վիլին դարձել է Թումանյանի «կրտսեր եղբայրն» ու «վերնա-
տան» մշտական հյուրը:

«Ինչո՞ւ մենք միմյանց չենք թարգմանում», հաճախ է այս

Վրաց լիրիկ բանաստեղծ Սիկո Փաշալիշվիլին Թումանյանի կողմից
գնահատված ստեղծագործողներից մեկն է: Հայանի է, որ վրաց գրողները
Թումանյանին նույնպես հարգել և ցանկալի հյուր են համարել իրենց հա-
վաքույթներում: Այդպիսի հավաքույթներից մեկում պոետ ջնարկվեց Գ.
Փաշալիշվիլու ստեղծագործությունը, որին հրավիրված էր մասնակցելու
եւս Հովհ. Թումանյանը, սակայն հիվանդության պատճառով չի կարողա-
նում գնալ և ուղարկում է հետևյալ նամակը.

«Փանկագին բնկիր

Ս. Փաշալիշվիլի.

1 Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. I, Երևան, 1955, էջ 148.

2 Նույն տեղում, էջ 206.

հարցով թուամայանը դիմել Գրիշաշվիլուն, Ինքը՝ թուամայանը՝ մեծ արժեք տալով թարգմանչական աշխատանքին, լրջորեն ծրագրել է հայ ժողովրդի սեփականությունը դարձնել ոչ միայն Հոմերոսի, Ֆիրդուսու և Ռուսթավելու, այլև վրաց ժամանակակից գրողներին, այդ թվում հատկապես Գրիշաշվիլու, ստեղծագործությունները:

Գրիշաշվիլին պատվով է կատարել իր խոստումը և ահա 1924 թվականին, թուամայանի մահվանից մեկ տարի անց, լույս է տեսել հայ բանաստեղծի «Ընտիր երկեր»-ը վրացիներն թարգմանությամբ:

«Ընտիր երկեր»-ի առաջաբանում Ի. Գրիշաշվիլին գրել է. «Լիմ նպատակն էր հանգուցյալի հիշատակը հավերժացնելու: համար տված խոստումս պարզորեն կատարելը (մի անգամ գրույցի ժամանակ ես և թուամայանը խոստացանք իրար թարգմանել մեր երկերը):

Եվ ցանկանում էի, որ Հովհ. թուամայանին, վրաստանի ամենալավ բարեկամին, վրաց ժողովրդին ներկայացնեի իր իսկական պատկերով: Ել չէինք կարող մտնել նրա ընտանիքը բացձակատ՝ և ոչ էլ նրա կենաց բաժակը գատարկել հան-

Շաա եմ ցածում, որ ինձնից անկախ պատճառներով այսօր չեմ կարող ներկա լինել Ձեր երեկույթին:

Սեղմում եմ Ձեր ձեռքը և հավաստիացնում, որ որքան ինձ համար թանկ են վրաստանն ու վրացական հողին, նույնքան էլ թանկ են և այն ժարդիկ, որոնք հանդիսանում են կրողներն ու մեկնարանները այդ հողու: Ինքը վրացին պոետ է, իսկ վրացական պոետը—էդ կրկնակի պոետ է: Ամբողջ հողով ցանկանում եմ, որ ողջ լինեք միշտ կրկելու վրաստանի երջանկաբեյութան ու նրա շուսապայծառ օրերը:

Ընկերական բարևներով՝ Հովհ. թուամայան:

Ի. Գրիշաշվիլին հաճախ է այցելել թուամայանին և օրով ընդունվել է ամբողջ ընտանիքի կողմից: «...Բարձրանում էր նախկին վոզնեսենսկի փողոցը,—պատմում է Գրիշաշվիլին,—զգույշ թակում էի դուռը, նրա աղջիկ նվարդը ինձ ուղեկցում էր հոր մոտ և նա էլ սովորական ժպիտով,—այն ժպիտը մի բանաստեղծություն արժեք—հարց ու փոքձ էր անում, թե ինչպես է ընթանում իմ աշխատանքը»:

«Մի անգամ,—շարունակում է վրաց բանաստեղծը,—Հովհաննեսը հիվանդ էր, սպասում էր բժշկի և ես հանկարծ դուռը բացի.

— Ինչ կունիմ հեքիմն,

Ինչ կունիմ ջարեն,



Ալ. Բաբանյան և Գ. Լենկին

գիսաւոր երեկուլիներին: Այս թարգմանութիւնը հոգեթաս
լինի այն թանկագին հանգուցչալի համար, որի հիշատակը
զեն չի մարել մեր սրտում:

Ես խոստումս կատարեցի»¹:

Այդ տարեթիւից սկսած Թումանյանը մտել է վրացական
դպրոցների ծրարի մեջ և իր արժանի տեղը գրավել նաև դա-
սագրքերում: Թումանյանը իր վեհութեամբ ու պատկառանք
ազդող երկերով խոսեց վրաց ընթերցողի հետ՝ նրա սրտին
մտաւ և հարազատ զգացմունքներով: Թումանյանը խոսեց
վրացերեն: Այդպիսին է Գրիշաշվիլու կատարած թարգմանու-
թիւնը: Քիչ է ասել՝ հաջողված թարգմանութիւններ. հայ
մեծանուն բանաստեղծի «Շունն ու կատուն», «Մի կաթիլ
մեղրը», «Անբախտ վաճառականները» և շատ այլ ստեղծա-
գործութիւններ, թվում է, ոչ թէ թարգմանութիւններ են «Ըն-
տիր երկեր»-ի մեջ, այլ պարզապես Թումանյանի վարպետ
գրչով վրացերեն գրված ստեղծագործութիւններ: Բնագրին
հավասար թարգմանութիւններ են զրանք, որոնք պատիվ են
բերում և՛ հեղինակին, և՛ նրա վրաց գրչակցին:

Ո՞րն էր Գրիշաշվիլու հաջողութեան գաղտնիքը:

Ստեղծագործական մեծ վաստակի տեր, գրող-գիտնական
Խոսեք Գրիշաշվիլին (Մամուլիշվիլին) վրաց նորագույն պոե-
զիայի կարկառուն ղեմքերից մեկն է: Թրիլիսին է եղել նրա
պոետիկական օրրանը, իսկ Սայաթ-Նովան և ժողովրդական-
աշուղական երգերը՝ նրա պոեզիայի ակունքները: Գրիշաշվի-
լին, իրեն իսկ խոստովանութեամբ, շատ բան է սովորել
ավագ ստեղծագործողից՝ Թումանյանից: Հայ և վրաց բա-
նաստեղծներին հանգուցող մեծութիւնը սկզբից մինչև վերջը
մնացել է անմահ Սայաթ-Նովան: «Այսպես Սայաթ-Նովան
ճտեղծեց ինձ Հովհաննիսին», — հիշում է Գրիշաշվիլին:

Ի. Գրիշաշվիլին ստեղծագործական աշխատանքի հետ
միասին լուրջ գիտական գործունեութիւն է ունեցել:

Քու տվածն ուրիշ դեղ է,

Ուրիշ դիղ»:

Ինձ դիմաւորեց Սայաթ-Նովայի այս քառատողով» («Պոլեմար»,
1938, № 67):

¹ Հովհ. Թումանյան, Ընտիր երկեր, թարգմ. Ի. Գրիշաշվիլու, Թրիլիսի,
1924, էջ 21:

Վրաստանի ԳԱ-ի իսկական անդամ գիտնական-պոետ Գրիշաշվիլու կարևոր ուսումնասիրություններից են «Սայաթ-Նովա», «Բ. Սունդուկյան», «Ալեքսանդր Ժալճալաձե», «Ալեքսենտի Ցագարիլի» և ուրիշ մենագրությունները, ինչպես նաև ռուս-վրացական կուլտուրական-գրական կապերի ու փոխհարաբերությունների թեմաներով գրված բանասիրական աշխատությունները: Նրա ստեղծագործական կյանքի մեջ կարևոր տեղ է գրավում թարգմանչական աշխատանքը: Թումանյանի ստեղծագործություններից բացի, նա մեծ արվեստով ու սիրով թարգմանել է Հովհաննես Հովհաննիսյանին («Արտավազը»), Ավ. Իսահակյանին («Մե-մոսթ ամպեր ճակտիս գիզվան») և այլն: Նրա թարգմանությունների շնորհիվ վրաց ընթերցողները հնարավորություն են ունեցել ծանոթանալու ազդրեջանական մի շարք պոետների ճեմու: 1951 թվականին Երևանի Պետհրատի հրատարակչամթ լույս է տեսել Ի. Գրիշաշվիլու «Բանաստեղծություններ» գիրքը: Գրքի խմբագիր Ավ. Իսահակյանը իր ներածական խոսքում գրել է.

«Գրիշաշվիլին կովկասյան ժողովուրդների եղբայրացման և իրար ճանաչման հին փորձված ջարեկամն է: Նրա հումանիստ հոգուն խորթ է ժողովուրդներին առելը: Նա սիրով և համակիր զղացմունքով թարգմանել է հայ և ազդրեջանական բանաստեղծներին ծանոթացնելու վրաց ժողովրդին՝ նրա դարավոր հարևանների ապրումների և երազանքների հետ»:

Գրիշաշվիլին սիրում է հայ ժողովրդին և նրա զրախանությունը: Ի. Գրիշաշվիլու անգնահատելի ծառայությունը հայ գրականությանն ու եղբայրական հայ ժողովրդին չեն սպառվում միայն Հ. Թումանյանից կատարած հրապանչ ու ջանաւոր թարգմանություններով: Նրա կողմից կատարած թարգմանությունների ցանկը լի է հայ մեծաբանիկ հեղինակներով և այդ հեղինակների առավել քան բազմաճանաչ ստեղծագործություններով: Նրան հավասարապես հաջողվել է թարգմանել ոչ միայն Թումանյանի բանաստեղծություններն ու պոեմները, այլև արձակը («Գիբոր»), «Ահմադը», «Նեսոյի քարաքղնիսը», «Քաջ Նագար» և այլն):

Ի. Գրիշաշվիլու հաջողված թարգմանություններով վրաց

հասարակության սեփականությունն են դարձել նաև Նաշաղ Հովհաննի, Շիրվանդադեի, Հակոբ Հակոբյանի, Հովհ. Հովհաննիսյանի¹, Նար-Պոսի, Գողթիսյանի, Ազատ Վշտունու, Գուրգեն Մահարու և ուրիշների մի շարք ստեղծագործությունները²:

Հայ բանաստեղծների և մանավանդ անմահ Հովհ. Թումանյանի ղեղեցիկ թարգմանությունների համար Հայաստանի կառավարությունը Գրիշաշվիլուն պատվել է Սովետական Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչումով:

Ի. Գրիշաշվիլին սերտ կերպով կապված է հայ գրական կյանքի հետ: Վրաց տաղանդավոր բանաստեղծը հաճախ է գալիս Երևան և իր ակտիվ մասնակցությունն ունենում գրական-կուլտուրական նախաձեռնություններին: Խ. Արովյանի հորելյանական օրերին Հայաստան է գալիս և ելույթ ունենում այդ առթիվ կազմակերպված հանդիսավոր նիստում: Ահավասիկ նրա շափածո խոսքից մի հատված.

Իս. մաերիմ, դու մեր եղբայր, արդ շողում ես
 փառով անանց,
 Հարգում ենք մենք սիրանք մեծ, խոնարհվելով
 գլխարկ հանած:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, լայն ու տարածուն է իր սերը Գրիշաշվիլու ստեղծագործական ընդգրկումը: Նրան հավասարապես սիրելի ու մոտ են և՛ Պուշկինն ու Իլլիան (Ի. Ժալճալաձե), և՛ Վաթա Փշավիլան, և՛ Զամբուլը, և՛ Ավ.

¹ Ի դեպ նշենք, որ հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը նույնպես հետաքրքրվել է վրաց գրականությամբ: Նրա թարգմանչական մեծ կարողություններն անվիճելի են և հայտնի բոլորին: Հայ բանաստեղծի ազդրությունից չի վրիպել վրաց բանաստեղծ Վաթա Փշավիլան: Հ. Հովհաննիսյանի արխիվային նյութերից պարզվում է, որ նա փորձել է թարգմանել (առայ անհայտ պատճառներով անավարտ թողել) Վաթա Փշավիլանի «Արթվիկ տեսա վիրավոր...» բանաստեղծությունը (Հ. Հ. արխիվ, № 215):

² Այս մասին տե՛ս Առն Մելիքսեթ-Քեկի «Իր սերը Գրիշաշվիլին և հայ գրականությունը» արժեքավոր ուսումնասիրությունն ու լրիվ բերրոգրություն, տպված «Труды Тбилисского Гос. педагогического института» «П. Пушкина», т. XI, 1957 թ.

Իսահակյանը («Անվտոմբ Իսահակյանին») և բոլոր այն ժողովուրդներն ու մարդիկ, որոնց միավորում են սովետական Հայրենիքում ծավալված աշխատանքն ու պայքարը:

Հովհ. Քումանյանը ծանոթությունների ու բարեկամության մեծ շրջան է ունեցել վրաց գրողների ու արվեստի գործիչների աշխարհում: Նա մոտիկ բարեկամական կապերի մեջ է եղել նաև քանդակագործ Յակոբ Նիկողաձեի (1876—1951), վիպասան Դավիթ Կլիաշվիլու (1862—1931) և ուրիշների հետ:

Յակոբ Նիկողաձեն Քումանյանի հետ առաջին անգամ ծանոթացել է 1914 թվականին՝ Սայաթ-Նովայի արձանը կանգնեցնելու առիթով: Վրաց տաղանդավոր քանդակագործը մեծ հիացմունքով է արտահայտվել հայ բանաստեղծի ներբանկատ ճաշակի և այն դերի մասին, որ նա ունեցել է երկու հարևան ժողովուրդների բարեկամության գործում:

ՍՍՍՄ Կերպարվեստի Ակադեմիայի իսկական անդամ Նիկոլաձեն ստեղծագործական մեծ ու բեղմնավոր ճանապարհ է անցել: Նա նույնպես ժողովուրդների մեծ բարեկամության ջատագովներից մեկը լինելով, իր ստեղծագործությունների մեջ հիանալի կերպով արտահայտել է հայ և վրաց ժողովուրդների գրական-կուլտուրական համագործակցությունը: Վրաց բեմի ականավոր գործիչ Լադո Մեսխիշվիլու, Ռուսթավելու, Ա. Մերեթիլու, Էդնատե Նինոշվիլու, Չախրովսաձեի և քաղմաթիվ այլ վրաց գործիչների դիմաքանդակների ու արձանների հետ մեկտեղ, Յա. Նիկողաձեն քանդակել է հայ խոշորագույն վիպասան Ալեքսանդր Շիրվանզադեի (1909—գիպս), Խիզախ ռուլյուցիոներ Կամոյի (1922—քար) և ուրիշների կերպարները:

Քումանյանը մի առիթով գրած իր նամակի մեջ հետևյալ կերպ է բնութագրել մեծ արվեստագետին. «Քեզ, արժանավոր դավակիր Վրաստանի, հոգով բնորոշ ու վեհ Վրաստանի, որ իր համար ընտրել է «չքնաղ» մակդիրը և այդ շքնաղության մեջ դրել ողջ համամարդկայինը և աստվածայինը, Քեզ, որ լցված մեծ մոր ոգով, ընտրելով գեղեցկին ծառայելը՝ զարմանալիորեն կենդանի ձևեր տվիր անձեին և անկյանը քարերի մեջ անմահություն դրիք, Վրաստանի համար

այս հանդիսավոր օրը հղում եմ իմ սրտագին ողջույնը և եղբայրական համբույրը»¹:

«Կեցցե գեղեցիկ Վրաստանի գրականությունը, Կեցցե՛ մեր եղբայրը՝ Դավիթ Կլիաշվիլին»²: Այս տողերով է ավարտել Գ. Կլիաշվիլու գրական գործունեության 30-ամյակի առթիվ վրաց գրողին ուղղված իր նամակը Հովհ. Քումանյանը: Քումանյանը սիրված ու զնահատված դեմք է եղել ոչ միայն հայ, այլև վրաց մտավորականության կողմից:

Սովետական կարգերում, սակայն, Քումանյանի դերն ու նշանակությունը անհամեմատ մեծացել է: Արդեն խոսվել է Գրիշաշվիլու կատարած թարգմանությունների մասին: Մեծ թվով այլ գրողներ նույնպես թարգմանել են վրացերեն: 1925 թվականին «Միթևի սխիվերի» (կարմիր ճառագայթներ) ամսագրում տպվել է Քումանյանի «Տերն ու ծառան» հեքիաթը՝ Գ. Կարապետյանի թարգմանությամբ: Թարգմանողներից հիշենք նաև Վ. Գալիբովի «Մարտ» (1938), Բ. Բեկարովին («Շեքսպիրյաններ»-ի 1-ին գիրքը, 1938), պրոֆ. Մելիքսեթ-Քեկին («Քմկաբերդի առումը» պոեմը, առաջաբանով, 1939), Ս. Ավրյանին («Սասունցի Դավիթ», 1939), Դավիթ Գաշեչիաձեին, Լադո Ասաթիանիին և ուրիշներին: Վրացերեն է թարգմանվել նաև Հովհ. Քումանյանի «Վրաց ժողովրդի մասին» հոդվածաշարը, որ ամփոփված են այն մտքերը, որ նա զանազան առիթներով արտահայտել է Վրաստանի, վրաց ժողովրդի ու վրաց գրականության մասին: Վրաց պարբերականներում մեծ թվով հոդվածներ են տպվել Քումանյանի կյանքի ու գրական գործունեության մասին: Այսպես օրինակ, լույս են տեսել Իվ. Գոմարթելիի «Հովհ. Քումանյան» («Թեատրի դա ցխովերա», 1924, № 17), Ս. Փ-ի «Հովհաննես Քումանյանի ընտիր դրվածքները»-թարգմ. Գրիշաշվիլու («Ախալ-կապկասին», 1924, էջ 134), Սուրբաթիի «Հովհ. Քումանյան, 1869—1929» («Գրոշա», 1929, № 51), Ի. Գրիշաշվիլու «Թարգմանողի հուշեր» («Ախալպարդա կոմունիստի», 1933,

¹ Հովհ. Քումանյան, Երկերի ժողովածու, 6, 5, 1945, էջ 479:

² Նույն տեղը, էջ 445—446:

№ 67), Գ. Զարիձեի «Ազգերի բարեկամության գուսանը» («Մուշա», 1938, № 4), Ս. Աստվածատուրովի «Հովհ. Թումանյան» («Կոմունիստի», 1938, № 67), Իվ. Բեգլարովի և ուրիշների հուշերը, սուսմանախրոթյուններն ու գրախոսականները:

1923 թվականի մարտի 28-ի համարում «Կոմունիստի» վրացական թերթը հաղորդում է տպագրել Հովհաննես Թումանյանի մահվան առթիվ Այդտեղ խոսվում է այն մասին, թե ինչպիսի խոր տպավորություն է թողել բանվորների, գյուղացիների և աշխատավորների կազմակերպությունների վրա «Հայոց հայտնի բանաստեղծ Հովհաննես Թումանյանի» մահը, որը տեղի է ունեցել Մասկվայում: Սգո օրերին վրաց մամուլը, բացի վերոհիշյալից, բողոքներ է հղում տպագրել հայ բանաստեղծի մահվան մասին և այն մասին, թե որքան նա սիրելի ու անդնահատելի անձնավորություն է եղել ոչ միայն հայ, այլև վրաց հասարակայնության աշխատավորական և մտավորական շրջաններում:

Հովհաննես Թումանյանի հիշատակին նվիրած վրաց պոետների ստեղծագործություններից անհրաժեշտ ենք համարում մեջ բերել Ի. Գրիշաշվիլու բանաստեղծությունը՝ Սողոմոն Տարոնցիի թարգմանությամբ:

Եվ սիրտս վշտի դաշտում խոցված՝
Փայտով է հիշում քո գեմը սյուժառ.
Բախար՝ երգերի հրով դրոշմված՝
Հաշվում է կյանքը շաք մահին ախար:

Հերթը ներմակ էր, հասակդ սակայն
Արժավնու պես վեր ու սյուցիկ,
Խնց մեղանից մահը դժնակամ
Թո՛ւ արևաշունչ կյանքը գեղեցիկ:

Արցունքն աչքերիս չի էլ ցամաքում
Ի՛նչ խոսք ասեմ ես, սփոփեմ որի՞ն.
Արցյոք, խորասկզված սիրտ աշխարհքում,—
Կա՞ մարդ, որ զգա իմ ցավը խորին:

Արացվե ծոցը անդրշիրիմյան,
Կթեթի արևն հասկից ավելի.
Եվ քեզ կողջունե փունջն երբորդության,—
Նիրդուսին, Հոմերն ու Ռուսթավելին:

Հայ պոեզիայի կարկառուն դեմքերից մեկ ուրիշ՝ Ավետիք Իսահակյանի քնարը նույնպես բազմաթիվ կողմերով կազմում է վրաց մի խումբ ստեղծագործողների՝ Ն. Բարաթաշվիլու, Ա. Մերեթիլու և Վաթա Փշավելայի հետ: Այս դեպքում նույնպես, ինչպես նկատել ենք նաև Թումանյանի կապակցությամբ, հայ և վրաց պոետների ստեղծագործական հարադատության հիմքում ընկած է նրանց՝ հանդեպ ժողովուրդն ու ժողովրդական ստեղծագործությունն ունեցած շեղմ ու անմիջական վերաբերմունքը:

Ավ. Իսահակյանի ծանաթությունն ու մտափոխությունը վրաց ժողովրդի հետ սկսվել է դեռ նախառևոյացիոն տարիներից: Արդեն խոսվել է նրա 1906 թվականին գրած «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքի մասին, նաև այն մասին, թե երբ և որտեղ են տպվել նրա ստեղծագործությունները վրացերեն թարգմանությամբ: Միաժամանակ նշվել է, որ այդ թարգմանությունները որևէ լսափով չեն ներկայացրել հայ տաղանդավոր բանաստեղծին: Միայն սովետական կարգերի օրոք է հնարավոր դառնում հայ բանաստեղծի մեծածավալ և լավագույն երկերը վրաց ժողովրդի սեփականությունը դարձնել:

1931 թվականին Տիցիան Տարիձեի թարգմանությամբ լույս է տեսնում Ավ. Իսահակյանի «Աբու-լալա-Մահարի» պոեմը (երկրորդ հրատարակությունը՝ 1936 թվականին):

Այդ հրատարակությանը կցած երկտողում հայ մեծանուն բանաստեղծը արտահայտել է այն միտքը, ըստ որի Ն. Բարաթաշվիլու «Մերանի» բանաստեղծությունը «զխախորույս հափրշտակելով» իրեն, նախապայման է հանդիսացել, որպեսզի «Աբու-լալա-Մահարի» քարավանն ընթանա «Պեղասի» հետքով: Միանգամայն հավանական է, որ Բարաթաշվիլու անմահ բանաստեղծությունը ստեղծագործական թափ է ներշնչել հայ բանաստեղծին իր պոեմը ստեղծելու պրոցեսում: Ըշմարիտ է նաև այն, որ այդ բանաստեղծությունը ներշնչման մշտարուխ աղբյուր է հանդիսացել վրաց գրականության հաջորդ սերունդների համար: Շատ ճիշտ ըմբռնելով և բացատրելով «Մերանի»-ի զարգացարական բովանդակությունն ու գեղարվեստական արժանիքները, Ավ. Իսահակյանը, սակայն, ոչ այնքան ճիշտ եզրակացություն է հանգում՝ նույնացնելով

իր և վրաց պոետի ստեղծագործութիւնները: Այդ երկերը, աարբեր դարաշրջանների, սոցիալ-քաղաքական տարբեր պայմանների ծնունդ լինելով, ընդհանուր շատ բան ունենալով հանդերձ, չէին կարող գաղափարական նույն ֆունկցիան կրել, նույն հասարակական տենդենցն ունենալ: Այլ խոսքով՝ նրանք տարբեր ուղիներով ընթացան:

Տ. Տարիձեն «Արու-լալա-Մահարի» պոեմի վրացերեն թարգմանութեան առաջարկում գրել է. «Ինձ համար բոլորովին պարզ էր, թե ինչ խոշոր դժվարութիւնների առաջ էի կանգնած, երբ ձեռնարկում էի այսպիսի մի պոեմի թարգմանութեանը: Թարգմանիչը հայերեն չի իմացել, սակայն հիմնավոր կերպով ծանոթացել և ուսումնասիրել է հայերեն բնագիրը. Թարգմանութեանը կատարված է (թեև ոմանք «կատարված» բառի փոխարեն գործ են ածել «օգտվել» բառը) Վ. Բրյուսովի ուսերեն թարգմանութեանից: Ինչպես ուսերեն, նույնպես և (հասկանալի է) վրացերեն թարգմանութեանները գերծ շեն թիրութիւններից, սակայն, ընդհանուր առմամբ, թե՛ մեկը և թե՛ մյուսը լրիվ պատկերացում են տալիս այդ մեծարժեք պոեմի մասին:

Տիցիան Տարիձեն իր թարգմանութեան առաջարկում՝ Ավ. Իսահակյանին վրաց ընթերցողների հետ ծանոթացնելու նպատակով գրել է.

«Ավ. Իսահակյանը՝ Հայաստանի լավագույն բանաստեղծներից մեկն է. նրա անունը կապված է հույակի հետ (Հովհաննես Հովհաննիսյան, Հովհ. թումանյան և Ավ. Իսահակյան): Այս պոետների զլխավոր ծառայութեանը նրանումն է, որ նրանք գրականութեանը մտեցրին ժողովրդական հիմքերին, մատչելի գործրին լայն մասսաներին, որքան այդ հնարավոր էր իրենց ապրած դարաշրջանում: Այժմ այդ հույակից միայն Ավ. Իսահակյանն է կենդանի և հնարավորութեան ունի իր սեփական աչքերով տեսնելու վերածնված Հայաստանը վերջին տասը տարվա ընթացքում: Այնուհետև կանգ առնելով Ավ. Իսահակյանի ստեղծագործութեանների վրա, թարգմանիչը բացատրում է նրա պոեզիայի մեջ տեղ գրած հուսահատական մոտիվների պատմական շարժառիթները:



Ի. Գրիշաշվիլին Լ. Թումանյանի հետ ծանոթանալու տարին

«նրա ստեղծագործությունները, — գրել է Տ. Տաբիձեն, — պատկերացնում են այն հուսալքությունը, ուղիղորույն վիճակը և հիասթափությունը, որով բռնված էր Հայաստանը ուսուցիչից առաջ, երբ կյանքի բախտը գտնվում էր հայ բուրժուազիայի ձեռքին և իր ավանտյուրիստական քաղաքականությունը վտանգի էր ենթարկում ամբողջ ժողովրդի ֆիզիկական գոյությունը»:

Բացի «Արու-լալա-Մահարի» պոեմից, Ավ. Իսահակյանից մի շարք այլ ստեղծագործություններ նույնպես թարգմանվել են վրացերեն: «Մասունցի Գավիթ» հորելյանական ժողովածուի¹ մեջ տպվել է «Մասմա Մհերը»՝ Հարություն Միրիմանյանի և Միրելի Պատարիձեի թարգմանությամբ:

Այնուհետև թարգմանվել և տպագրվել նև՝ «Արազի ափին բուսաանս լինի»՝ Ա. Միրցխուլավաչի թարգմանությամբ («Լիտերատուրուլի Սաքարթվելո», 1941, № 7), «Գիշերն եկավ զով հովն ընկավ»՝ Ս. Էուլու թարգմանությամբ (նույն տեղը) և «Ես որ մեռնեմ, իմ վերջից»՝ Ռ. Գվետաձեի թարգմանությամբ (նույն տեղը): Նույն թվականին «Սև մութ ամպեր ճակտիս դիզվան» բանաստեղծությունը թարգմանվում է Ի. Գրիշաշվիլու կողմից: Թարգմանվել են նաև «Ռազմակոչը» («Մնաթորի», 1944, № 1—2), «Վրաց գուսանի երգը» («Լիտերատուրուլի Սաքարթվելո», 1945, № 25), «Ի՛նչու, ի՛նչու հիմա այսպես» և «Կտակը» («Մնաթորի», 1945, № 9), «Գիշերն եկավ, զով հովն ընկավ» և «Կուզեմ լինել վշտի ցողեր»՝ Ս. Ավլյանի թարգմանությամբ («Մնաթորի», 1945, № 9), «Մեր պատմիչները և մեր գուսանները» («Մնաթորի», 1946, № 9—10), «Ամենապիտանի քանը» («Պրոնների», 1947, № 7), և այլ ստեղծագործություններ:

Ավ. Իսահակյանը նույնպես վարպետորեն թարգմանել է վրաց գրողներին: Հիանալի են նրա՝ Ակակի Մերեթևուց կատարած² «Ապելացիայի գիտակը», «Քուլթախի», «Արբի պատկերի առաջ», «Հիվանդ գուսանը» և Ի. Գրիշաշվիլուց

¹ Ժողովածուն տպագրված է Քրիտիկի Ստալինի անվան Պետական համալսարանի հրատարակությամբ:

² Ակակի Մերեթևուց, հատընտիր, Երևան, 1940:

կատարած՝ «Ան շորք», «Մեկուցիցիոնների երգը» և «Մարի-
ջանին» բանաստեղծությունների թարգմանությունները:

Ավ. Բաճակյանի կյանքով ու գրական գործունեությամբ
լրջորեն զբաղվել է նաև վրաց գրական քննադատությունը:
Մամուլորագիս 40-ական թվականներին բազմաթիվ հոդ-
վածներ և ուսումնասիրություններ են հանդիպում վրացական
պարբերական մամուլում: Գրանցից հիշենք, օրինակ՝ Արուտի
(«Ախտերատուրուզի Սաքարթվելա», 1940, № 32), Ա. Բարա-
թելիի («Կոմունիստի», 1940, № 296), Միմոն Չիբովանու
(«Ախտ. Սաք.», 1941, № 5), Վանո Սուլուկիձեի («Ախտերատու-
րա դա խելովներա», — գրականություն և արվեստ, 1945, № 25),
Միմոն Չիբովանու («Կոմունիստի», 1945, № 160), Սուրեն
Ավչյանի («Մնաթորի», 1945, № 9) և ուրիշների հոդվածները:

Վարպետը մի շարք առիթներով արտահայտվել է վրաց
ժողովրդի ու նրա կուլտուրայի մասին և միշտ էլ զոհունա-
կալիքով և նրա կուլտուրայի ժողովուրդների դարավոր բարե-
կամությամբ ու համագործակցության փաստերը:

1941 թվականի փետրվարի 10-ին, Վրաստանի գրողների
պալատում, կյանքի 65-ամյակին նվիրված երեկոյին հարե-
լյաբը իր խոսքի մեջ հետևյալ կերպ է բնութագրել հայերի և
վրացիների բարեկամությունը.

«Հայ և վրացի ժողովուրդները դարերի սկզբներից միջա-
կան Մհեր-Ամիրանի շրջաններից եղել են ուղեկիցներ, գոր-
ծակիցներ: Միասին կերտել են՝ յուրաքանչյուրը պահելով իր
ինքնատիպությունը, այն փաստվոր դարմանայի կուլտուրան,
որ բովանդակ Միոսթյան կուլտուրայի մեջ ամենահինն է ան-
վերապահորեն վկայված: ...Հայաստանը վահան է հանդի-
սացել մոնղոլական հրոսակների դեմ, իսկ Վրաստանը հյուր-
ընկալող եղբայրական ապաստան հայերի համար: ...Այս-
պիսի անբաժանելի գործակցությամբ պահել են մեր ժողովուրդները
իրենց ազգային նվիրական զանձերը— ողբի, ոճ, լեզու, ֆոլ-
կլոր, գրականություն»²:

Հայ և վրաց գրողների անձնական մոտիկության ու գրա-

կան համագործակցության օրինակելի արագիցիաները լավա-
գույն ձևով շարունակում են սովետական ավագ ու կրտսեր
գրողները: Անցյալներում հայ մեծանուն գրողները ապրել և
ստեղծագործել են մեծավ մասամբ Վրաստանի մայրաքաղա-
քում՝ Քբիլիսում, վրաց գրողների ու կուլտուրայի գործիչների
հետ ոմեցած սերտ կապերի պայմաններում: Նրանք մոտիկից
տեսել են միմյանց, հանաչել և զնահատել: Մեր օրերում, սա-
կայն, գրական-ստեղծագործական կապերը նոր որակ ու բո-
վանդակություն են ստացել՝ համապատասխան այն նոր պայ-
մանների, որոնք բնորոշում են հարևան ժողովուրդների վիճակն
ու գործունեության շրջանները Սովետական Միության ժողո-
վուրդների մեծ ընտանիքում: Բովանդակությամբ սոցիալիս-
տական և ձևով ազգային գրականության հայ և վրաց ներկա-
յացուցիչները այսօր առավել քան շատ գործ ունեն կատա-
րելու սոցիալիստական ազդերի կոմունիստական դաստիարա-
կության, նրանց բարեկամությունն էլ ավելի ամրապնդելու,
անխորտակելի դարձնելու ուղղությամբ: Այս իմաստով՝ փո-
խադարձ այցելությունները, միմյանց մոտիկից ուսումնասի-
րելը, հարևան ժողովրդի կյանքի ու կենցաղի պատկերումը,
անձնական ծանոթությունները և այլ բազմաթիվ միջոցառում-
ները, շատ ավելի շոշափելի ու նպատակասլաց կդարձնեն
գրականությունը՝ գաղափարական պայքարի բոլոր բնագա-
վառներում: Պարտիայի վերադաս օրգանների մի շարք որո-
շումները անմիջականորեն վերաբերում են գրականությանն
ու արվեստի այլ ճյուղերին: Գրականությունը շարունակում է
մնալ գաղափարական պայքարի առաջավոր զենք, այդ իսկ
պատճառով էլ նրա նկատմամբ եղած և՛ ուշադրությունն է մեծ,
և՛ պահանջները՝ խիստ: Գրական մամուլը պարբերաբար անդ-
րադարձել է հարևան ժողովուրդների գրական կապերի հար-
ցերին: Դեռևս 1934 թվականին «Գրական թերթը» իր առաջ-
նորդումը՝ նկատել է, որ հարևան ժողովուրդները բավարար
չափով տեղեկություն չունեն այն մասին, թե ինչ է կատար-
վում, ասենք, հարևանի գրական աշխարհում, ինչ նոր գրող-
ներ են հրապարակ իջել և ինչ ստեղծագործական հաջողու-

¹ Ի. Գրիշաշվիլի, Բանաստեղծություններ, Երևան, 1951:

² «Սովետ. Վրաստան», 1941, № 36:

¹ «Գրական թերթ», 1934, № 5:

թշուհներ ունեն: Նույն թերթը մի տասնամյակից աճելի տարի-
ներ հետո դարձյալ անդրադարձել է այդ հարցին, այս անգամ
շատ ավելի որոշակի պահանջներ դնելով գրողների ու գրա-
կան կազմակերպությունների առջև:

«Ավելի ամրապնդենք Հայաստանի և Վրաստանի գրական
բարեկամությունը» վերնագիրն ունեցող այդ հոդվածի տակ
ստորագրել են հայ և վրացի մի խումբ գրողներ՝ Գեորգի Առ-
նիձեն, Ստեփան Զորյանը, Գեղամ Սարյանը, Բեսո Ժղեն-
տին: Այդ դիմում-հոդվածի մեջ, ասված է հետևյալը.

«Պետք է սնել ուղղակի, որ մենք, երկու հարևան ժողո-
վուրդներս, քիչ ենք թարգմանում միմյանց... մեր երկու ժո-
ղովուրդների բարեկամության ու փոխադարձ ճանաչողության
լավագույն և զործոն միջոցներից մեկն էլ հանդիսանում է գե-
ղարվեստական գրականությունը»¹:

Սովետական իշխանության անցած տասնամյակների ըն-
թացքում անհամեմատ շատ է թարգմանվել և տպագրվել
1930-ական թվականներից սկսած վրացական գրականությու-
նից հայերենի և թարգմանվել հետևյալ հեղինակներն ու
նրանց երկերը.

Ռուսթավելու «Վազրենավորը» հատված առ հատված, Գ.
Մուրադյանի, Թ. Հուրյանի և Ղլխավորապես Գ. Ասատուրի
թարգմանություններով տպագրվել են հայկական թերթերում
և ամսագրերում, իսկ «Վազրենավոր» պոեմը ամբողջությամբ
(թարգմ. Գ. Ասատուր) առանձին հրատարակությամբ լույս է
տեսել 1937 թվականին: Բարաթաշվիլին իր առանձին բանաս-
տեղծություններով արդեն ծանոթ էր հայ ընթերցողին, երբ
հրատարակվեց նաև «Հատընտիրը» (Քրիլիսի, 1946):

Հայ ընթերցողները վաղուց իրենց գրադարաններում ունեն
Ի. Ճավահիրյանի և Ա. Մերեթելու «Հատընտիրներն» ու «Եր-
կերը»:

1948 թվականին լույս է տեսել Ա. Վազրեգիի «Պատմվածք-
ները»: Վաժա Փշավելյան դեռևս սպասում է իրեն թարգմանո-
ւղին: Նրա լավագույն պոեմները դեռևս ծանոթ չեն հայ ընթեր-
ցողին: Է. Նինոշվիլու պատմվածքները տարբեր տարիներին

¹ «Երական թերթ», 1948, № 20.

տպվել են հայ պարբերականներում, սակայն անհրաժեշտու-
թյուն է ղգացվում ձեռքի տակ ունենալ այդ երկերը մեկ զրբի
մեջ ամփոփված: Զարոնակներ: Այսբանն արդեն բավական
է ջուլլց աալու համար, թե ինչ է կատարված մինչ այսօր և
այն, թե ինչու են անհանգստանում գրողներն ու գրական կազ-
մակերպությունները: Այո, կատարված է ղղուլի աշխատանք,
սակայն այն դեռ չի բավարարում մեր պահանջներին: Քիչ է
թարգմանվում հարևան ժողովրդի գրականությունից և այդ
հատկապես վերաբերում է արձակ մեծածավալ երկերին: Այս-
պես, օրինակ, հայ ընթերցողները սուսերենի օգնությամբ են
կարդում Լ. Քիաշելու «Գվաղի Բիզվա», Ա. Քուսթելու «Երես
առ երես», Ա. Բելիաշվիլու «Բեսիկի», Կոնստանտինե Գամա-
խուրդիայի սովարածավալ և բազմահատոր վեպերը, Սանդրո
Շանշիաշվիլու, Շալվա Դադիանիի, Գալակտիոն Տարիձեի և
շատ ուրիշների ստեղծագործությունները:

Նույնը հավասարապես (եթե ոչ մի քիչ ավելին) մենք
նկատում ենք վրաց իրականության մեջ: Հայ գրականությու-
նից վրացերենի թարգմանված ստեղծագործությունների թիվը
շատ ավելի պակաս է: Այս դեպքում նույնպես թարգմանված
գործերի մեջ մեծ թիվ են կազմում լավածո ստեղծագործու-
թյունները: Եվ եթե նկատի ունենանք, որ անցյալ դարի հայ
գրականությունը դերազանցապես փայլում է վիպագրությամբ
(Աբովյան, Պոռչյան, Մուրացան, Բաֆֆի, Մերենց և այլն),
նաև այն, որ այդ վիպագրությունը հիմնականում դեռևս ան-
ծանոթ է վրաց հասարակությանը, ապա շատ ավելի պարզ է
զատում այն վիճակը, որի համար այդքան անհանգստանում
են հայ և վրաց գրականագետներն ու գրողները: Մի այլ հան-
գամանք նույնպես մեծ դժվարություններ է հարուցում թարգ-
մանական աշխատանքների ըստ ամենայնի ծավալման գոր-
ծում: Բանը նրանում է, որ պրոֆեսիոնալ թարգմանիչների
քանակը խիստ նվազել է, իսկ նրանց շարքերը համարիլու
ուղղությամբ դեռևս գործնական քալ չի արվում: Մեզ հայտնի
են հայերենից վրացերեն և վրացերենից հայերեն թարգմանու-
թյուններ կատարողների անունները: Նրանց մի մասը, ցավոք,
կենդանի չէ: Իսկ նրանք, որոնք դեռևս ընդունակ են այդ կա-
րևոր և շնորհակալ գործը կատարելու, երիտասարդ չեն: Եվ

աճա, կանցնեն տարիներ, և մի օր մենք կանգնած կլինենք դժվարին կացութեան առջև: Հարևան ժողովրդների ինտերնացիոնալ դաստիարակութեան զործում մեծ ու նշանակալից է գեղարվեստական գրականութեան գերու: Ինչպես անցյալում, այսօր առավել քան մեծ նշանակություն է ստանում միմյանց շատ ավելի մոտիկից ճանաչելու, փոխադարձաբար միմյանց հոգևոր կուլտուրային հաղորդակից լինելու հանգամանքը:

Գեղարվեստական գրականությունը եղել է և մնում է այն հիմնական ուժը, որը խթանում է ժողովրդների, իսկ առավել քան սոցիալիզմ կառուցող ժողովուրդների եղբայրական համագործակցության նպատակաւաց գործին:

Սովետական գրական կազմակերպությունները (այդ թվում նաև գրական օրգանները) արժանավայել կերպով նշում են հորելյաններն ու գրական նշանակալից իրադարձությունները: Մոսկվայում կայացած հայ գրականութեան տասնօրյակի կապակցությամբ ջերմ տողեր են գրել վրաց գրողները: Այս իմաստով շափազանց բնորոշ է վրաց սովետական գրող-գրամատուրգ Շալվա Գադիանու հոդվածը¹, որի մեջ ասում է՝ «Սերտ, անխզելի բարեկամութեան կապերը վաղուց ի վեր կապում են հայ գրողներին Վրաստանի գրողների հետ: Օրինակ, ես անձամբ բարեկամ եմ եղել Հովհ. Քումանյանի, Գ. Սունդուկյանի, Շիրվանզադեի հետ: ...Այժմ բարեկամական ամենասերտ հարաբերությունները կապում են մեզ եղբայրական Հայաստանի այնպիսի գրողների և բանաստեղծների հետ, ինչպիսիք են՝ Ավ. Իսահակյանը, Նաիրի Զարյանը, Արազին, Գեմիրճյանը և ուրիշները»:

Նույն առիթով արտահայտվել է նաև վրաց անվանի պոետ Գեորգի Լեոնիձեն, որը հայկական գրականութեան տասնօրյակի մասնակիցների «հսկայական հաջողությունը» բացատրում է «այնքան ուժեղ ու չքնաղ» եղբայրական հայ ժողովրդի կուլտուրայով ու գրականությամբ:

Համաժողովրդական տոնակատարությամբ են նշվել «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակը՝ Վրաստանում և Ռուս-

թավելու «Վագրենավոր» պոեմի 750-ամյակը՝ Հայաստանում:

Նաիրի Զարյանը վրաց սովետական գրողների պլենումում Ի. Ճավճավաձենին նվիրված իր ելույթում նկատել է, որ «Ի. Ճավճավաձեն ծանոթ ու սիրելի է անդրկովկասյան ժողովուրդներին ոչ միայն որպես փայլուն բանաստեղծ ու վիպասան, այլև որպես ժողովրդի ազատագրության մեծ մարտիկ, որպես մեծ հումանիստ: Նրա բանաստեղծությունները, ի տաղ-նապով ու խոր զգայմունքով՝ մեծ Քումանյանի թարգմանություններ խանդավառել են մեզ մանկական տարիներում ժողովրդական ազատության սրբազան սիրով»: Այնպիսի սիրով ու հարգանքով են սոցոբոված հայ և վրաց գրողները հարևան ժողովրդի նկատմամբ: Նրանց արձակ թե չափածո ստեղծագործությունների մեջ իր պատվավոր տեղն է գրավում հան հարևանը, որի կերպարը ցայտուն կերպով գրեկորում է նրանց՝ հանդեպ տվյալ ժողովուրդն ունեցած բարեկամական վերաբերմունքը:

Հայ գրողների Վրաստանին նվիրած հոդվածներից հիշենք Ավ. Իսահակյանի «Վրաստանում սովետական իրավակարգի հաստատման փառավոր 25-ամյակը», Հմ. Սիրասի՝ «Սրտի խոսք», Արազու՝ «Եղբայրակից Վրաստանին», Հ. Հակոբյանի՝ «Խորհրդային Վրաստանին» (Սովետական Վրաստանի 15-ամյակի առթիվ), Հո. Պոլոսյանի՝ «Խորհրդային Վրաստանին» և այլն:

Վրաց գրողներ Գրիշաշվիլին, Լեոնիձեն, Չիրովանին, Նոնելիլին և շատ ուրիշները երգեր են նվիրել Սովետական Հայաստանին, հայ ժողովրդին, Քումանյանին, Իսահակյանին և այլն: Այդ բանաստեղծությունների մեջ հարազատի սիրով զովերգված են գեղատեսիլ Մևանը, մրգառատ Արարտայան գաշտավայրը, «սլանդուխտ մնացած» Արարատը, հայոց կուլտուրան, հայ մարդն ու հայ մեծամուն գործիչները: Այդ երգերի մեջ ուժեղորեն հնչում են սովետական հայ աշխատավորի բախտավոր առօրյան, նրա կենցաղն ու հաղթանակները:

Հայ գրողներն ու բանաստեղծները նույնպես ջերմ տողերով են երգել Սովետական Վրաստանը, նրա նվաճումները, կոմունիզմ կառուցող մարդկանց եռանդն ու հույզերը:

Արձակագիրներից՝ Մ. Պետրոսյանը, Ս. Քոզոմյանը,

¹ «Սովետ. Վրաստան», 1941, № 112:

2. Քոչարը, Սիրանը և ուրիշները պատմվածքներ են գրել վրաց կյանքից: Կամ իրենց ստեղծագործությունների մեջ հայ հերոսների կողքին հանդես բերել նաև վրաց ժողովրդի զավակներին:

Հայ և վրաց ժողովուրդների զավակները իրենց բեմական կերպավորումն են սաացել նաև սովետահայ գրամատուրգիայի մեջ:

Սովետահայ բանաստեղծները Սովետական Հայաստանի 20-ամյակի առթիվ շափածո նամակով դիմել են հղբայրական սեպուրիկաների ժողովուրդներին, որի մեջ վրաց ժողովրդի մասին ասված է.

Մեզ հետ ծնված, մեզ հետ անցած
Մանր ուղին պատմության,
Մեր բախտակից վրաց երկիր,
Մեր դարավոր հարեան...

Մեր հղբայրներ բազմալեզու,
Բազմատարազ, բազմազույն,
Բերքը խառնենք ձեր խինդը նոր,
Մեր խնդության, մեր հողում¹...

Վրաց աշխարհի ու վրացու գովքը մեծ տրագիցիա ունի: Նազաշ Հովնաթանից սկսած մինչև մեր օրերը բազմաթիվ երգեր են ձուլվել հղբայրական ժողովրդին: Սակայն մեր օրերում ստեղծված երգը զաղափարական նոր բովանդակություն է արտահայտում: Այլևս «կախարդական» բնությունը կամ վրացուհիների «արեգնափայլ» տեսքը չէ միայն, որ հմայում է հայ պոետներին: Նրանց նախ և առաջ հետաքրքրում է հարեան ժողովրդի հաղթական առօրյան: Վրաց կուլտուրասականի, բանվորի կամ մտավորականի աշխատանքային նվաճումը հավասարապես հուզում, ուրախացնում է նաև հայ բանաստեղծին:

Վրաստանի գովքը երգած սովետահայ բանաստեղծներից հիշենք Հ. Հակոբյանին, Ծ. Չարենցին, Ն. Զարլանին, Գ. Սարյանին, Հ. Շիրազին, Ս. Տարոնցուն, Գ. Բորյանին և շատ ուրիշներին:



Ի. Գրիշաշվիլի

¹ «Գրական թերթ», 1940, № 32:

Բանաստեղծական մեծ թափով է գրված Ծ. Չարենցի «Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանի խորհրդայնացման 15-ամյակի առթիվ»¹ չափածո խոսքը, ինչպես նաև «Բորիս Զենիաձեն»² բանաստեղծությունը:

Սովետականացման 15-ամյակի առթիվ գրած Ծղիշե Չարենցի «Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանի...» բանաստեղծությունը իր տեսակի մեջ լավագույնն է թե՛ իր գաղափարական բովանդակությամբ, և թե՛ բարձր արվեստով: Սովետահայ հանճարեղ բանաստեղծի ինքնատիպ արվեստն ու քաղաքական վարակիչ պաթոսը իրենց լավագույն ու ներգաշնակ ձևն ու բովանդակությունն են գտել այս ստեղծագործություն մեջ: Ահավասիկ մի քանի քառյակ այդ բանաստեղծությունից.

Երգվում եմ քեզ, արևակեզ տնեշանքների՝ դու երկիր,—
Նույն վիշտն է միշտ գերել թե քեզ, թե բարձրաբերձ իմ երկրին:
Բազուկն է նույն ճգմել հնում թե աշխարհին իմ, թե քեզ—
Եղել ենք մենք միշտ միևնույն կրակների ողջակեզ:—

Անցել ենք մենք՝ բազմակեղիք՝ այսպես դարե՛ր ու դարե՛ր,
Մինչև մտալլ մթնում երկն ծագեց շողշող մի արև,
Հերոսական Հոկտեմբերին նա հյուսիսից ճառագեց—
Եվ մեզ՝ հրկեզ իր ափերից՝ փրկության լո՛ւր առաքեց...

Եվ արդ՝ առած զվարթ քնար և խնդություն բամբ բամբին՝
Հղում եմ քեզ մեզ փրփրագեզ կրքանկության գովքն անգիր,
Տվե՛լ է մեզ կենինը մեծ ուղի անշեղ ու անհուն—
Նույն պողպատյա ղեկավարի ձեռքն է այսօր մեզ տանում...

Եվ ես պոետս երկրի հայոց—հղում եմ խոսք սրտաբուխ,
Երկիր՝ վերձի՛ց, վտեմ գարձիկ գեպի անմար մի գարուն,
Ուր բողբոխ կյանքն է անծի՛ր, անծայրածի՛ր երկարում...

Հայ պրոլետարական գրականության ավագ սերնդի ներկայացուցիչների՝ Հակոբ Հակոբյանի, Ծղիշե Չարենցի և ուրիշների հետ մեկտեղ, նրանցով խանդավառված ու նրանց հե-

¹ Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Հայպետհրատ, Երևան, 1955, էջ 234—236:

² Նույն տեղը, էջ 282—283:

տեկելով եղբայրական զգացմունքներով չի երգեր են հյուսել սովետական ժողովուրդների մեծ բարեկամության մասին նաև միջին և կրտսեր սերնդի սովետահայ գրողները: Նրանց բազմաթիվ երգերում անհուն սեր ու շնրմություն է արտահայտված հանգեպ եղբայրական ժողովուրդը, նրա քրտնաջան անցյալն ու հրաշակերտ ներկան: Անկաշկանդ սեր ու հարստություն է արտահայտված մարդու նկատմամբ: Անսահման հպարտությամբ է դուրսգրված հարևանի աշխատանքային ստեղծարար եռուղևը, նրա բազմաբեզուն առօրյան, ունևոր ու երջանիկ կյանքը, նրան շրջապատող հիասքանչ ընաշխարհը և սերն ու գեղեցկությունն իր մեջ մարմնավորող հարևանուհին:

Սովետահայ գրականության միջին սերնդի ներկայացուցիչ բանաստեղծ Սողոմոն Տարոնցին իր լիրիկական ու խոհական երգերով վաղուց ճանաչում է գտել հայ ընթերցող հասարակության մեջ: Նրա լավագույն ստեղծագործությունների թվին են պատկանում նաև այն բանաստեղծությունները, որոնք հյուսված են հանգեպ եղբայրական ժողովուրդներն ունեցած հավատի ու սիրտ զգացմունքների թեմաներով: Դրանք գողարիկ երգեր են, լիրիկական շնչով գրված, որոնց մեջ բանաստեղծը իր հոգեպարար զգացմունքներն է հորդել և կերպավորել մի հրաշալի աշխարհ՝ նույնքան սիրելի ու հարգատ, որքան Հայաստանը:

«Երգեր Վրաստանին» բանաստեղծությունների շարքի մեջ տեղ են գտել «Վրաստանի լեռներում», «Վրացուհին», «Արցունք և ժպիտ», «Երգ Սամգորիին», «Վրացական գիշեր» ստեղծագործությունները: «Արցունք և ժպիտ» փոքրածավալ բանաստեղծությունը հին ու նոր Վրաստանի, վրացու արցունքոտ անցյալի և ժպտացող ներկայի սեղմ հակադրություն է ու պերճախոս պատկերը:

Հայ բանաստեղծը ուրախալի հիացմունքով է երգում վրաց աշխատավորի ձեռքով նոր կյանք առած Սամգորիին:

Երբ բարձրացան այս ծառերը և այս թփերը փարթամ...
— Սամգորի՛, դու արգեն չահել վրացի ես կարմրաթուղ:
Չկան արգեն ոչ կառուկ, ոչ տատուկ և ոչ էլ փուշ:
Մազկիր ինչպես Կախեթիայի դալարները անթառամ:

Մազկիր, և թող բարի բերքդ ծանր ամեն մի իրենթ,
Ամեն պաշտո, որ կանգուն է հոյաշին և սլոնազարդ:
— Սամգորի՛, դու փշերին դեմ ա՛նա փոզել ես դվարթ,
Վրացական երկնքի տակ աղամանդի պես վեհու:
Այտեղ եկել և դեռ կղան չահել սրտեր նոր բացվող,
Մտուռդիներ, ճամփա՛ ավեր, սոսափեցեր սիրտ կրգ:
Գալար մնաս դու նոր կյանքի, աշխատանքի աշխիվ ձեռք:
— Սամգորի՛, դու կանաչ եղերք, կանաչ հովիտ, կանաչ հող:

Մի այլ բանաստեղծության մեջ, որը «Վրացական գիշեր» վերնագիրն է կրում, Սողոմոն Տարոնցին համարձակ ու գունեղ շտրիխներով պատկերել է «Անհինյան անմարեկի լույսով» հեղեղված վրացական գիշերը, նույնքան լուսավորված ու ժպտերես, որքան սովետական ցերեկը ամենուրեք մեր լայնածավալ Հայրենիքում: Ինչպես հայ բանաստեղծն է պատկերել, մեր օրերի վրացական գիշերը անցյալի սարսափներից ու անորոշություններից իր մեջ ոչինչ չի կրում, չի ծնում թախծոտ, թեև քմրոտ բարաթաշվիլիներ, այլ ստեղծում է էպիկական «Հուզական շքեղ մի երգ» հյուսող լեռնիձեներ և գրիշաշվիլիներ: Իր բանաստեղծության մեջ ընկերական ու ջերմ սողերով մի քանի անգամ դիմում է նուստ Բերուլավային, իր գրչակցին ու բարեկամին, որի հետ մտերմական կապերի մեջ է հայ բանաստեղծը:

Այս բանաստեղծությունը ուշագրտով է նաև այն պոեմով, որ խոհական ու հուզող տրամադրությունների հետ մեկտեղ երևան են գալիս կոնկրետ դեմքեր, մասնավորապես գրական աշխարհին հայտնի անձնավորություններ, որոնց անունների հիշատակությունն ու նրանց ուղղած ջերմ զգացմունքները շատ ավելի անմիջական ու տպավորիչ են դարձնում բանաստեղծի մտահղացումները: Այս կերպ են ստեղծագործել սովետահայ ավագ սերնդի մեծամուն ներկայացուցիչները, և նրանց փորձն ու թեմայի մշակման եղանակը մեծ լավով պարտավորեցնում է մեր օրերի բանաստեղծներին:

«Գյուրջբատանի գյուղախերից» մինչև մեր օրերի «Վրացուհին» թեման բազմաթիվ անդամներ հուզել ու կենսախինջ

1 Ս. Տարոնցի, Բանաստեղծություններ, Հայպետհրատ, Երևան, 1954 թ. էջ 107:

ապրում է հաղորդել անցյալի ու ներկա հայ բանաստեղծներից շատերին:

Նրանց երգերի մեջ վրացուհին գեղեցկության ու կյանքի մարմնացումն է, Վրաստանի չքնաղ բնության ծնունդն ու օգին: Ամեն մեկը յուրովի արտահայտելով իր զգացմունքներն ու մտապատկերումը, բոլորն էլ վրացուհու մեջ տեսել են այն ամեն լավն ու հիասքանչը, որը, ի վերջո, գալիս է Վրաստանից ու վրաց ժողովրդից հայ ժողովրդի ստացած գեղեցիկ ու անմիջական տպավորություններից:

Ահավասիկ Ս. Տարոնցու «Վրացուհի» բանաստեղծության մի քառատողը.

—...Վրացուհի, սիրում եմ անհաս սերդ լեռնային,—
Արարապան շոգից չեքմ, մեր ձմեռվա խառնվածք,
Սիրում եմ քո հույսքը՝ եղջերուի պես նախի,
Սրտագրամ հայացքիդ պայծառությունը անամպ...!

Սովետահայ պոեզիայի մեջ պատկանելի վաստակի տեր Գեղամ Սարյանը, որն այնքան հիասքանչ ու սրտառուչ ստեղծագործություններ է նվիրել Հայրենիքին, երգել անկրկնելի ճրանգներով Արևելքը, իր պոետիկական չեքմ խոսքն է ասել նաև ժողովուրդների եղբայրության մասին: «Բաժակ եղբայրության» բանաստեղծությունների շարքի մեջ մի քանի երգեր նվիրված են Վրաստանին:

«Երգ՝ Վրաստանից» բանաստեղծությունը լիրիկական զգացմունքներից հյուսված մի խոսք է հին ու նոր Վրաստանի մասին, այն մասին, թե որքան ախուր «Որպես դառը սրտի մի վերք» է եղել Վրաստանի անցյալը:

Ու գեղջուկը աչքերը թայ
Աշխատել է երգն այդ շուրթին,
Ու հույսքը վաղվան հառած՝
Սփոփանք է տվել սրտին:

Այն մասին նաև, թե որքան հերոսներ ընկան նոր Վրաստանի համար, որպեսզի չքնաղագեղ Վրաստանը նոր կյանքով ապրի, բազում արեղակներ՝ Զագէս և Ռիոնգէս կյանք տան աշխարհին, գործարանները բաբախեն, համայնական

արտերը ծավալվեն նոր Վրաստանի ուրախ երգերի հնչյունների տակ:

Հագեթով վրացուհու, գյուրջիստանի մարալ աղջկա գովքն է երգում Գ. Սարյանը «Գյուրջի աղջիկ» բանաստեղծության մեջ: Ներկա դեպքում հեղինակի գովերգած աղջիկը ընդհանրապես «վրացուհի» չէ, այլ Վրաստանի համայնական արտերի հերոսուհին, որին «համբուրել էր արևը շեկ»: Այս սրտառուչ երգը իրոք երգ է դարձել և տարիներ շարունակ երգվել հայկական միջավայրում:

Եղբայրության բաժակի զգացմունքներով է գրված «Կենաց» ստանաձորը, որը բերում էնք ամբողջությամբ.

Ամեն մի տոնի, զգացմունքով վառ,
Երկու գինու գավ խփվում են իրար,
Հաշատանք մեր գինով փրփրում
Աշտարակն է իր ձեռքին երկարում.
Իսկ Վրաստանը իրրե գավ լեցուն՝
Կախեթն է ահա իր ձեռքը վերցնում:
Այդպես խփվում են բաժակներ երկու
Երկու եղբայրներ կենաց մեկմեկու
Ու հիմա, երբ որ զգացմունքով վառ
Երկու գինու գավ խփվում են իրար,
Մենք ձայն ենք՝ տալիս խինդով անօհման.
— Պայծառ կենացդ, չքնաղ Վրաստանի:

Եթե մեր հիշատակած նախորդ հեղինակները սրտառուչ խոսքերով ու լիրիկական գեղումներով են արտահայտել իրենց վերաբերմունքը հանդեպ Վրաստանն ու վրաց ժողովուրդը, ապա բոլորովին նոր երևույթ ենք նկատում Սարմենի այդ թեմաներով գրված ստեղծագործություններում: Նրա գրչին պատկանող ստեղծագործությունների մեջ հնչում են «Եղբայրության կամուրջը» և «Եմ ընկեր Սանդրոն» բանաստեղծությունները, որոնք հայ և վրաց ժողովուրդների դարերի խորքից եկող ու մշտապես ամրապնդող եղբայրության թեման են շոշափում:

«Եղբայրական կամուրջը» բանաստեղծության մեջ Սարմենը օգտագործել է Լ. Կիպիանուն զրած Հովհաննես Քուման-

1 Ս. Տարոնցի, Բանաստեղծություններ, էջ 105:

1 Գ. Սարյան, Երկեր, Հայպետհրատ, Երևան, 1956, էջ 205:

յանի նամակում հիշատակված կամուրջի երկու կաղմերում կանգնած հայ և վրացի ընկերների օրինակը, որի մասին արդեն խոսվել է: Հեղինակի ստեղծագործություն մեջ Քումանյանի գրած նամակի սեղմ շարադրանքը կերպավորվել, գեղարվեստական ու գաղափարական բովանդակությունն է ստացել: Քումանյանի գաղափարը շատ ավելի նպատակաուղաց է դարձել, հերոսները կոնկրետացել են իրենց անուններով ու չիրիկական բնութագրով: «Իմ ընկեր Սանդրոն» բանաստեղծության վերջին տողերի մեջ արտահայտված է Սարմենի հայ & վրաց ժողովրդների բարեկամության մասին գրած երկերի գաղափարական հիմքը:

Խորն է արմատը մեր եղբայրության,
Սկիզբ է առնում նա հին դարերից,
Մեկ են սյուններ մեր հայրենի տան,
Ու միշտ խմել ենք մենք նույն ջրերից:
Մեկտեղ ենք պաշտպան կանգնել մեր հողին,
Մեկտեղ ենք կտրել մի մեծ ճանապարհ,
Մեկտեղ ենք դարձել զավթիլ ոստիկն,
Նս՝ Հայոս, իսկ զու իմ Քարթլոս եղբայր:

«Վրաստանը իմ սրտում», այսպես է փերնադրել Վրաստանին նվիրած իր բանաստեղծությունների շարքը Աշոտ Գրաշին: Վրաստանին նվիրած երգերի շարքի մեջ լավագույնը ընդ ձեռքերի մասին» բանաստեղծությունն է, որը Աշոտ Գրաշին նվիրել է վրաց շնորհալի նկարչուհի Փամարա Աբակելիայի հիշատակին: Որքան արտմոթություն ու հույզ կա այս երգի տողերում, նույնքան էլ պատկերավորման նրբին երանդների են հաղորդված վրաց նկարչուհու ստեղծագործական էությունը բացահայտմանը: Գրաշու այս ստեղծագործությունը նրա լավագույն գործերից մեկն է, իսկ սովետահայ պոեզիայում խրախուսանքի արժանի երևույթ:

Փամարայի ձեռքերը երկու քնքուշ շուշան,
Բուսած Վրաստանի դալար հովտում,
Նրկու շուշան, թռչնած մահվան տոթից դաժան,
Նրկու աղափնիներ, թառած կրծքին տրտում:

Մթածմինդս, երբ՛ք, երբ՛ք, շարմանաս,
Քն մի գիշեր այս թաց հողամթմբի վրա
Բուսեն, բուսեն երկու դեղձենիներ երազ,
Սյգ ձեռքերն են գարնան, այդ ձեռքերն են նրա՛...

Այսպես է ավարտել Գրաշին իր այս գողարկի բանաստեղծությունը: «Վրաստանը իմ սրտում», «Քրիստի տաճարը», «Ճամփորդություն Վրաստանում», «Դեղձենու տակ» և մի քանի անվերջապահ այլ երգեր նույնպես տեղ են գտել այդ շարքի մեջ:

Տաղանդավոր բանաստեղծ է Համո Սահյանը: Ժողովուրդների բարեկամության կարևոր ու շնորհակալ թեման Համո Սահյանի գրչից չի վրիպել: Ավելին, այդ երգերը նրա լավագույն ստեղծագործություններն են: Բավական է միայն ցույց տալ մի օրինակ, ասենք «Վրաց ժողովրդին» բանաստեղծությունը, համոզվելու համար, որ իրոք բանաստեղծը ոչ միայն գիտե թե ինչ է ասում, այլև գտել է ամենագեղեցիկ ձևը իր բովանդակալից մտահղացումը բարձր գաղափարայնությամբ ու անթերի արվեստով ընթերցողին հաղորդելու համար: Առաջին հայացքից թվում է, թե այդ բանաստեղծության մեջ ոչինչ նոր չի սովոր, շոշափվում է բոլորի կողմից բաղմիցս երգված բարեկամության գաղափարը: Այդ միայն առաջին հայացքից: Ծշմարիտ է, այդտեղ նույնպես ժողովուրդների բարեկամությունն է, այդ բարեկամության հաղարամյա անխորտակ ու օր-օրին ամրապնդվող հիմքերը, սակայն ճշմարիտ է նաև այն, որ շատերի կողմից երգված այդ թեման Համո Սահյանի մոտ նոր կերպարանք է առել, նոր ուժ ու գրավություն ստացել:

Ահավասիկ այդ բանաստեղծությունն ամբողջությամբ.

Ձեր արտերում բույն են շինում
Արտույտները մեր արտերի,
Մեր ձուրերից շուր են խժում
Նրամները մեր ամպերի:
Ձեր դաշտերից թուած բամիս
Գիշերում է մեր պտուղկում,
Ձեր շինարու ստափյունը

1 Սարմեն, Կարոտի կրակներ, Հայպետհրատ, Երևան, 1957, էջ 59.

1 Աշոտ Գրաշի, Իմ սիրտ պոեմը, Հայպետհրատ, Երևան, 1954, էջ 117.

Մեր բարդին է շարունակում,
 Օրորում է մեր եղնիկին
 Չեր անտառի խորքն ապահով,
 Չեր պախարան մեր սարն է վազում
 Մրտի ուզած ճանապարհով
 Ո՞վ շփոտ արևի տակ
 Որ հայաց հին հորովերին
 Չայնակցել է դարերի մեջ
 Ավանդական ձեր ռիթմուլինս:
 Մեր լեզուն է միայն տարրեր,
 Իսկ դա ինչո՞վ է վնասում,
 Որ մարդկությանն ու դարերին
 Նույն սրտազին խոսքն ենք ասում:
 Եզրայրներ են ծնված օրից
 Աշխարհում հայն ու վրացին,
 Եվ դանուխյուն չի խառնվել
 Երբեք նրանց աղ ու հացինս:
 Մեր սրտերը մեկ են եզել
 Անհիշելի ժամանակից
 Չի բաժանել երբեք նրանց
 Կյանքում ոչ մի սահմանադիմ...
 Մահման չկա մեր արանքում,
 Չկա ոչ մի սահմանապահ...
 Մահմանապահն, ահա, այնակ՝
 Արարսի մտա կանգնած անահ,
 Հսկում է մեր անկզրական
 Հայրենիքի սահմանն անքուն,
 Որ չիմի ոչ մի անգամ
 Ոչ մի սահման մեր արանքում:

Բանաստեղծ Հրաչյա Հովհաննիսյանը սովետական աշխարհի փարթևամ ու պայծառ բնաշխարհը և բնության մեջ պայքարող ու ստեղծագործ մարդուն դիտում է զույնների համահնչուն ներդաշնակության մեջ՝ իր խոհերի ու հույզերի ցայտուն շրջանակներում: Նրա բանաստեղծությունների մեջ բազմիցս երգված ու հայ և վրաց՝ ժողովուրդների հրաշագործ ձեռքերով կերտված բնության ու համայնական դաշտերի դեղատեսիլ ու բարեբեր անկզր տարածությունները թովում են իրենց գրավիչ անմիջականությամբ և մարդու նկատմամբ

1 Համո Մահյան, Միաժանը տափաստանում, Հայպետհրատ, Երևան, 1953, էջ 95-96:

տոշնյն տպածոսել

հսեչրու շնչոցսրծա սրձալո շարո
 շիւն ճոհցու Լանու Եչքու ոչոհեմ.
 ճիւղ, բշիւթոն թձուտ Ենեկչուր,
 սոչրու յերաւչրու յառնուկոյեթմ.

Կարսի, Թիֆու ջոհչրու Եչքու,
 Թլն, սչուրո շո Ենե ճիւթ.
 Լուչքու Եւնեմ, Կոչուկ Կոչուկ,
 Կոչու Լուչքու շո թոշնյն.

տոշնյն Կոչուրո Եւնե յառնյն,
 շո յերու ջոհեմ, շո թոշնյն!
 սոչնայրու Կոչուրու թս Եւչուրոյն,
 շո յեւչյնյն, Կոչու Եւչյն.

Եւչյն, յոչնյն Կոչու Ենեկչուր,
 Կոչու Ենեկչուր Կոչու յոչնյն,
 Կոչու Կոչուրո յոչնյն Կոչուրո
 շիւն յոչնյնու Եւնեկչուր.

յոչնյնյն ու Կոչուրու Կոչու,
